



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2466
2467

Григорий

Полковник

84
—
U-63

С. С. Григорий
1879



կը

ԷՕԺԷ ՍԻԻ

ՔԻՄԻԱԿԱՆ ԲԼՈՒՐ

ԹԱՐՄԱՆԵԱՅ

Ս. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ



ԶՄԻՒՆԻՍ.

Ի ՏԳՍՐԱՆԻ ԵՂԲԱՐՅ ՏԷՏԷՆԱՆ

1879

ԴԻԻԱԲՆԱԿ ԲԼՈՒՐ

ԳԼՈՒԽ ՔԱՆՆԵՐՈՐԴ

2 ՈՒ

Քրուսթիյարի պէս անձի մը գործը չէր երկիւղալի և տխուր մտածումներով երկար ժամանակ պաշարուած մնալ. ինքնիրեն հետեւեալ պատճառարանութիւնն ըրաւ .

— Ինչպէս ամեն ատեն՝ նոյնպէս և այսօր մեծ բան մը չունիմ կորսընցընելու . եթէ յաջողիմ տունէն դուրս ելնելու, միշտ այն խորհրդաւոր միւրրա-դուքսը պիտի կարծուիմ, և հետո իբրև իշխան պիտի վարուին մինչև որ խաբէութիւնս նշմարեն, այնուհետև կ'ըլլամ ինչ որ էի առաջ, և մեծ ծառայութիւն մ'ըրած պիտի ըլլամ այն աղուորիկ Կապոյտ-Մօրուքին որ զիս ծաղրեց, սակայն և կախարդեց զիս, վասն զի չեմ զիտեր թէ ինչո՞ւ այսչափ կը մեղքընամ զինքը, և թերևս արժանի ալ չէ այսչափ համակրութեան . վասն զի իւր աներեւոյթ ամուսնոյն վրայ ունեցած սիրոյն հակառակ՝ կը տեսնեմ որ ցլորսին և միւս մարդակեր գաղանին հետ շատ անուշիկ յարաբերութեան մը մէջ է : Վերջապէս ինչ կ'ուզէ թող ըլլայ . . . եթէ խելքիս այնպէս փշեց որ այս կնոջնուիրեմ անձս, ո՞վ կրնայ խառնուիլ ասոր . այո՞ . . . բայց եթէ ընդ հակառակն չկարենամ այս տեղէն դուրս ելնել, եթէ ֆարայիպը գործին մէջնետաւի, այն ատեն գործը պիտի աւրուի

7876.57 4

. . . Բնաւ տարակոյս չունիմ որ այն թանձրամորթ Հոլանտացին զիս շան մը պէս պիտի սպաննէ : Արդեօք ինչպէս ընեմ որ այս ձախողութենէն օձիքս ազատեմ : Եթէ գաշուեալ որ մարդուն ըսեմ թէ ես իւր փնտուած միւլորտ-գուքսը չեմ . . . ասով թերեւս ազատիմ . . . : Բայց ո՛չ, ո՛չ, ըրածս վատութիւն մը, մահաւանդ անօգուտ վատութիւն մը կ'ըլլայ . վասն զի այս գարեջուրի խեղդը զիս անմիջապէս պիտի ճամբէ . . . որպէս զի տունն իրար չանցընեմ . . . այո՛ . . . չփախչելու համար տուած խօսքիս հակառակ օձիքս ձեռքէն չթողուր : Տէ՛ր Աստուած, այս մարդը ո՛րչափ ծիծաղելի է իւր զաշոյնովը . . . : Բէ՛հ . . . զաշոյն . . . ինչ որ ալ ըլլայ, մէկ անգամ պիտի սպաննէ զիս : Օ՛ն ուրեմն, սի՛րա առ, Քրո՛ւսթիյար, սի՛րա առ . . . և մանաւանդ մի՛ մտածեր, որովհետեւ մտածումը չարիք կը բերէ զլիսուգ . գուն ուրիշ անգամ այնչափ մեծ անձարակութիւն չես ըներ որչափ տրամաբանած ժամանակդ . . . : Կնքվնքդ բողբոջանձնէ՛, դոցէ՛ աչքերդ, ինչպէս որ միշտ այնպէս ըլիք, և յառաջ գնա :

Այս զերեցիկ տրամաբանութեամբ զօրացած, ասպետը յարեց բարձրաձայն .

— Օ՛ն ուրեմն, պա՛րոն, որովհետեւ հոսիէ դուրս ելնելու համար անպատճառ տունէն անցնիլ պէտք է . . . երթանք :

— Տէ՛ր իմ, ըսաւ գնդապետը պահ մը վարանելէ ետեւ, իբր ազնուական խօսք տուիք ինձ որ չպիտի փախչիք :

— Այո՛, պա՛րոն :

— Բայց կրնայ ըլլալ որ սպասաւորներնիդ ձեզ աղատելու զնն :

— Աեանքս ձեր ձեռքն է, պա՛րոն, խօսք ալտուի ձեզ . ասկէ աւելի բան մը չեմ կրնար ընել :

— Այդպէս է, տէ՛ր իմ . . . սակայն ձեզի համար կ'ըսեմ, իմացուցէ՛ք ձեր գերիներուն որ եթէ ինձ դէմ ամենափոքր շարժում մ'ընեն, ձեր արիւնը մտած կ'ըլլան, վասն զի ես ալ երգում ըրած եմ զձեզ ողջ կամ մեռեալ տանելու :

— Յանցանքն իմն չպիտի ըլլայ, պա՛րոն, եթէ երգումնիդ

չբռնէք . . . : Երթանք . . . :

Ասպետն ու գնդապետը յառաջացան դէպ ի տունը : Բիթլէր Քրուսթիյարի թեք բռնած էր իւր ձախ թեկն ներքեւ, և ձեռքն ալ միշտ զաշոյնին վրայ էր, չէ թէ իւր կալանաւորին խօսքին վրայ տարակոյս ունենալուն համար, այլ վախնալով որ չըլլայ թէ Գիւարնակ-Քլուրին գերիներն իրենց տէրն ազատելու զնն : Քրուսթիյար և Բիթլէր տանը քանի մը քայլ մնալով մօտեցած էին, մէկ մ'ալ մութ նրբանցքի մը անկիւնը դարձած ատենին ճերմակ հագած կին մը տեսան, որ յառաջ կու գար : Գնդապետը կանգ առաւ, և իւր կալանաւորին թեկն ուժով մը սեղմելով ըսաւ անոր կամացուկ մը .

— Ո՛վ է այն : Տէ՛ր իմ, իմաց տուէք այս կնոջ, զլուշտցէ՛ք որ չպօտայ :

— Կապոյտ-Վօրուքն է, կորսուեցայ, հիմա սիրամարդի պէս աղաղակներ պիտի հանէ, և ամեն բան երեւան պիտի ելնէ, ըսաւ Քրուսթիյար մտքէն :

Բայց ո՛րչափ զարմացաւ, երբ տեսաւ որ կինը կանգ առաւ և բերանը չբացաւ : Կասքօնը գոչեց .

— Ո՛վ է այն :

— Միթէ այնչափ մութ է, տէ՛ր իմ, որ Միբէթը չէք ճանաչեր, ըսաւ Կապոյտ-Վօրուքին քաջածանօթ ձայնը :

Քրուսթիյար շփոթեցաւ մնաց անձայն : Կապոյտ-Վօրուքն ալ զինքը Տէ՛ր իմ կը կոչէր, և ինքզինք Միբէթ կ'անուանէր :

— Տէ՛ր Աստուած, ըստ ինքնիրեն, ալ բնաւ բան մը չեմ հասկընար, զործը երթալով կը կնձռուտի : Կնչկ'ուղէ թող ըլլայ, հաստատ կենանք և տեսնենք ասոր վերջն ո՛ւր պիտի երթայ :

— Ո՛վ է այդ կինն, ըսաւ գնդապետը կամացուկ մը :

— Այդ կինը . . . այդ կինը կնոջս հաւատարիմ սպասուհին է, պատասխանեց ասպետը :

Անձէլ յարեց .

— Տէ՛ր իմ, Ձեր Ազնուութեան ըսելու եկայ թէ աիկինը քիչ մը անհանդիստ ըլլալով պառկեցաւ . . . և սցս պահուս

քունի մէջ է :

— Գործերնիս յաջող է , տէ՛ր իմ , ըսաւ զնդապետը կամաց մը Բրուսթիյաքին , գքսուհին կը քնանայ , և դուք կընաք մեկնիլ ինքը չիմացած :

Անմէլ , որ մօտեցած էր , յանկարծ նահանջեց և զարհուրած դէմքով մը յարեց :

— Ա՛հ , տէ՛ր Աստուած , այս ի՞նչ է , ձեր Ազնուութիւնն առանձին չէ՞ :

— Տէ՛ր իմ , ըսաւ զնդապետը , եթէ կինը ձայն մը հանէ , ձեր գործը լմնցած է :

— Մի՛ վախնար , Մի՛րէթ , ըսաւ ասպետը , մի՛ վախնար . . . : Երբ դու կնոջս քովն էիր , Պարոնը ներս մտաւ . Ֆօր-Բօսա յալէն կու գայ . . . շատ ստիպողական գործերու համար . պէտք է որ հիմա հետը երթամ :

— Բայց շատ ուշ է , տէ՛ր իմ , չէ՞ք մտածեր . . . երթամ տիկնոջ իմաց տամ :

— Չէ՛ . . . չէ՛ . . . հրաման չունիմ ազոր . բայց իս մտիկ ըրէ , քիչ մը ետքը ձկնորս սեբրուն և իրենց մակուկին պէտք պիտի ունենամ . . . իմաց տուր անոնց :

— Բայց , տէ՛ր իմ . . . :

— Հնազանդէ՛ :

— Այդ դժուար բան մը չէ . . . վաղն առաւօտ բայցը ձկնորսութեան ելնելու օր է , սեբրը մեկնելու պատրաստ ըլլալու են հիմա . . . որպէս զի արևը չձագած Նահանգաց խորըր զանուին , ուր իրենց նաւը խարխիս նետած է :

— Տէ՛ր իմ , ամեն բան նպաստաւոր է մեզ , մեկնիք , ըսաւ զնդապետը ցած ձայնով :

— Չարմանալի բան , Կապոյտ-Մօրուքն ուղածներս ինէ առաջ կը հասկընայ և ի՞նչպէս մեկնելու դիւրութիւններ կը հայթայթէ ինձ , ըսաւ Բրուսթիյաք ինքնիրեն . ասոր մէջ խիստ նորա-նշան բան մ'ըլլալու է . . . : Թերևս քիչ մը իրատունք ունէի զինքը մոզ կամ կախարդ կարծելուս . . . : Յետոյ յարեց բարձր

ձայնով . Մի՛րէթ , զնա՛ գրսի գոները բանա՛լ տուր և սեբրուն ալ հրաման զրկէ որ հիմա պատրաստ ըլլան :

— Ի՞նչ կեցեր ես , յարեց Բրուսթիյաք , տեսնելով որ մանկա-մարդ կինն անշարժ մնացեր է , չլսեցի՛ր ըսածս :

— Շատ աղէկ , տէ՛ր իմ . բայց ի՞նչպէս կընայ ըլլալ , Ձեր Ազնուութիւնն անպատճառ կ'ուզէ . . .

— Տէ՛ր իմ , Խմ Ազնուութիւնս . . . ժամ մ'է ահա որ զիս այսպէս կը կոչես օտարականի մ'առջև , ըսաւ Ասաբօնը զայրայեալ դէմքով մը , վարպետութիւն մը փախցընելու համար . ի՞նչ պիտի ըլլար եթէ Պարոնը մեր գաղտնեաց անտեղեակ և դրսէն մէկն ըլլար :

— Այնպէս է , բայց աղէկ զիտեմ որ այս ժամուս հոն գտնուող այսպիսի օտարականի մ'առջև կընանք այնպէս խօսիլ ինչպէս Ձեր Ազնուութեան և տիկնոջ առջև : Սակայն կարելի՛ բան է , տէ՛ր իմ , անպատճառ պիտի մեկնի՞ք :

— Խորամանկուհին զիս խօսքի բռնելի՛ ուզէ , որպէս զի աւելի աղէկ խաղայ իւր դերը , ըսաւ մտքէն Բրուսթիյաք : Բայց ո՞վ հրահանգ տուեր է իրեն , ո՞վ այս դերն այսպէս որոշ նշանակել է : Անպատճառ այս գործին մէջ կախարդութիւն կայ :

— Բայց , տէ՛ր իմ , յարեց Մի՛րէթ , ի՞նչ ըսեմ տիկնոջ :

— Ըսէ՛ , յարեց Բրուսթիյաք այնպիսի սրտայուզութեամբ զոր զնդապետը խիստ բնական վիշտերու վերագրեց , ըսէ՛ այն սիրելի և ազնիւ կնոջ որ անհանգիստ չըլլայ , կ'իմանա՞ս , Մի՛րէթ , բնաւ անհանգիստ չըլլայ . հաւաստե՛ զինքը թէ՛ ընելիք կարճ ուղեորութիւնս բոլորովին իւր օգտին համար է , ըսէ՛ վերջապէս իրեն որ զիս երբեմն յիշէ :

— Երբե՛մն , բայց ի՞նչ կ'ըսէք , տէ՛ր իմ , տիկնոջ զձեզ կը յիշէ , և միշտ պիտի յիշէ , պատասխանեց Մի՛րէթ յուզեալ ձայնով մը , վասն զի Բրուսթիյաքի խօսքերուն ծածուկ իմաստը կը հասկընար : Հանդարտ եղիք , տէ՛ր իմ . տիկնոջ գիտէ որչափ զինքը սիրել-նիք , և բան մը չմտնար : Բայց վաղը ինքը չարթնցած հոս էք , այնպէս չէ՞ :

— Այո՛, ըստ Բրուսթիյաք, անշուշտ վաղն առաւօտ . . .
օն, Միբէթ, փութա՛, իմաց սուր ձկնորս սեւերուն և կամարին
դուռը բանա՛լ տուր. պէտք է որ անյայտազ մեկնինք :

— Այո՛, տէ՛ր իմ. նաև ձեր սուրն ու վերարկուն սրահակը
սիտի բերեմ, վասն զի զիշերը շատ ցուրտ կ'ընէ լերան վրայ :
Ա՛՛՛՛, քիչ մնաց սիտի մոռնայի, ահաասիկ ձեր շաքարեղէնի տու-
փը զոր միշտ հետերնիդ կը կրէք և տիկնոջ քով թողուցեր էիք :

Այս խօսքերն բսելով, Անժէլ փոքրիկ սուփ մը տուաւ Կաս-
քճնին, աշխուժիւ ձեռքը սեղմեց և աներեւոյթ եղաւ :

— Օրհնեա՛լ է Աստուած, մի՛լորտ-դուքս, գործերն յուսա-
ցածէս աւելի աղէկ յաջողեցան, ըսաւ զնդապետը : Տունը տակա-
ւին հեռո՞ւ է :

— Ա՛՛չ, միայն այս վերջին զառիվայրը սիտի ելնենք :

Քանի մը վայրկեանէն Վիւթլէր և իւր կալանաւորը սրահակը
մտան. Անժէլ հոն կը գտնուէր Մատրասեան կերպասով զլուխը
զարգարած և դեանաքարչ զգեստ մը հագած. որ իւր բոլոր ան-
ձը ծածկած էր. մանկամարդ կինն ասպետին վերարկու մը ցոյց
տուաւ զոր թիկնաթուփ մը վրայ դրած էր :

— Ահաասիկ, տէ՛ր իմ, ձեր կրկնոյն ու սուրը, ըսաւ
Բրուսթիյաք՝ զեղեցիկ սուր մը տալով անոր : Հիմա երթամ նա-
յիմ գերինները պատրաստ են :

Անժէլ դուրս ելաւ :

Այս սուրը նիւթին կողմէն ճոխ և ձեկն կողմէն հետաքրքրա-
կան էր. երախակալը ձոյլ սսկի էր, որուն վրայ արծնած էր
Անդղիոյ թագաւորական զինանշանը. դաստապանը կը ներկայացը-
ներ ոտքի վրայ կեցած առիւծ մը, -զլուխը որ արքայական թագ
մը կը կրէր, գաստապանին գունդը կը կաղմէր. ծանրազին կա-
մարը, որ յաճախ գործածութեան պատճառաւ սակաւ ինչ իւր
փայլը կորուսած էր, վրան բարակ մարդարիտ բանուած կարմիր
թաւշեայ էր, մարդարիտներուն մէջ՝ տեղտեղ Շ. Տ. տառերը յօ-
բինուած էին : Սուրը մէջքը չկապած, Բրուսթիյաք ըսաւ զնդա-
պետին .

— Պարոն, ես ձեր կալանաւորն եմ, կրնամ սուրս կրել :
Ար կրկնեմ խօսքս թէ բնաւ ձեզի գեմ չպիտի գործածեմ զայն :

Տարակոյս չկայ որ զնդապետը ճանչցաւ այս պատմական
զէնքը, վասն զի պատասխանեց .

— Գիտէի որ այս թագաւորական սուրը Ձեր Ազնուութեան
քովն է, և պատուէր արուած է ինձյարդեղ զայն, եթէ յօժարու-
թեամբ հետեիք ինձ :

— Հասկըցայ, ըսաւ Բրուսթիյաք ինքնիրեն, այս ալ Ապոլոյտ
-Վօրուքին խորամանկութիւնն է : Գաղտնածուկ միլորտ-գուքսին
հագուստ ու կապուստին մէկ մասովը զիս այսպէս կը զարդարէ
որպէս զի այս Հոլանտայի արջին սխալն աւելնայ. եթէ վիշտ
մ'ուէիմ, այն ալ անուս չլիանալս է : Թէև գիտեմ որ վիզս
կարէր են, այս ալ բան մ'է, բայց բաւական չէ նոյնութիւնս
հաստատելու, ինչպէս կ'ըսեն փաստարանք : Աւերջապէս ասոր
վախճանն Աստուծոյ գիտեալու բանն է. մեկնելուս պէս անշուշտ
Ապոլոյտ-Վօրուքը իւր ամուսինն ապահովութեան մէջ սիտի գնէ,
այս իւր գլխաւոր գործն է : Հիմա սա կրկնոյնիս մէջ աղէկ մը
փաթթուի՞նք որ ծպտանքս կատարեալ ըլլայ :

Այս հարցուտը մասնաւոր ձև մ'ունէր և զոյնը կապոյտ էր,
վրայէն ալ կարմիր ասուէ ոսկի ժապաւէնով կնդուղաւոր թիկնոցակ
մը ուները կը ծածկէր : Այս կրկնոյնն երկար ասեն գործա-
ծուած ըլլալը յայտնի կ'երևէր : Գնդապետն ասպետին ըսաւ .

— Արանեմ որ Պրայձ-Վաթէրի օրուան յիշատակին հաւա-
տարիմ կը մնաք, տէ՛ր իմ :

— Հըմ. . . հըմ. . . հատատարիմ. . . այո՛, պարտդայից
համեմատ . . . դսնուած արամաղբութեանէս կախեալ է այդ :

— Բայց և այնպէս, տէ՛ր իմ, յարեց զնդապետը, այդ հա-
ղածնիդ այն կրկնոյնն է զոր այն աղէտալի օրը ձեր հրամանա-
տարութեան ներքև արիաբար պատերազմող կարմիր ձիաորսները
հագած էին :

— Ես ալ այդ կ'ըսէի ձեզ. օղին ցրտութեանը կամ տարու-
թեանը նայելով կը հաղնիմ այս կրկնոյնը, բայց միշտ ի յիշատակ

այն ճակատամարտին, յորում կարմիր ձիաւորներն, ինչպէս որ ըսեալք, արիարար կռուեցան հրամանատարութեանս ներքեւ :

Ասպետը սեղանի մը վրայ դրած էր շաքարեղէնի տուփը զոր Կապոյա-Վօրուքն իրեն տուած էր : Առաւ այս տուփը և մերենայարար դիտեց զայն . կտիարիչին վրայ որակներ մը կար, որուն թէ՛ փորագրեալ և թէ՛ դժագրեալ օրինակները շատ անդամ տեսած ըլլալը յիշեց : Քիչ մը մտածելէ ետև գտաւ որ այս պատկերն Անդղիոյ Կարուս Բ. թագաւորին կենդանագիրն էր :

Բիւթէր ըսաւ անոր .

— Տէ՛ր իմ, ներեցէ՛ք ձեր մտածումներն ընդմիջելուս, որոց ինչ ըլլալը գիւրին է գտնել այդ տուփին վրայի կենդանագիրը անտեսելով . ժամանակինս թանկագին է :

Նոյն պահուն Ամէլ ներս մտնելով Քրուսթիլարի ըսաւ .

— Տէ՛ր իմ, սեները պատրաստ են լապտերով :

— Մեկնի՛րք, պահոն, ըսաւ ասպետը՝ մանկամարդ կնոջ ձեռքէն իւր գլխարկն առնելով . այս միջոցին կինը կամացուկ մը ասպետին ըսաւ .

— Աշխարհին մէջ ամուսինէս ետև ամենէն տեւի սիրած անձս դուք էք, վասն զի աղատեցիք զայն . . . :

Ասպետն ու գնդապետը դուրս ելան, որոց վրայէն իսկոյն գոցուեցան Գիւարնակ-Բլուրին ահագին գոները, ասոնց առջեկէն կ'երթային չորս սեները, որոց մին լապտեր մը բռնած էր ճամբան լուսաորելու համար :

Մինչդեռ Բիւթէր գնդապետին բաղյախնդիր կալանաւորը կը մեկնի Գիւարնակ-Բլուրէն, մանք ալ ընթերցողը Կապոյա-Վօրուքին ամենածածուկ յարկը կը տանիք : Այս յարկը խիստ պարզ կերպով զարգարուած և բաւական ընդարձակ էր . տեղակուտախտակամածէն կախուած էին ծանրային զէնքեր : Հանգստեան անկողնի մը վերևը կար Անդղիոյ Կարուս Բ. թագաւորին մէկ գեղեցիկ կենդանագիրը . քիչ մ'անդին հրաշագեղ կին մը ներկայացընող մանրանկար մը : Երեսուսէ շրջանակի մը մէջ մատիտով ճարտարօրէն դժուած բազմաթիւ ստուերագրեր մի և նոյն զէմբը կը

ներկայացընէին . զիւրին էր գուշակել թէ աշխատողին նպատակը յիշատակի համար կենդանագիր մը շինել էր : Շրջանակը գեղաքանդակ արձաթեայ պատասնդանի մը վրայ դրուած էր, որուն ներկայացուցած գամբանական այլարանութեանց մէջտեղն այս թուականը կը կարդացուէր . **15 ՅՈՒԼԻՍ 1685** : Այս յարկին մէջ կը կենար երիտասարդ, բարձրահասակ, նուրբ և կորովեմարդ մը, որ իւր հոյակապ կաղնուածքովը շատ կը նմանէր Փոթորիկ նաւապետին, ցլորս Հոգեկորդին կամ Եուսալէ Քարայիպին :

Եթէ այս մարդուն զեղեցիկ զէմբը Խափշիկին նման պղնձագոյն, Քարայիպին նման կարմրագոյն ներկուէր, կամ ցլորսին թանձր և թուխ մօրտ քովը իւր զէմբին կէսը ծածկուէր, կարծես այս անձը տեսնողը միանգամայն այն երեք անհատները տեսած պիտի ըլլար : Կիսայրենեք ընթերցողին, որ արդէն անշուշտ թափանցած է այս գաղտնիքը, թէ մի և նոյն անձն էր որ հեազհեաէ ցլորսին, ծովասպատակին և Քարայիպին կերպարանքն առած էր, որ նոյն ինքն Կարուս Բ. ի բնական որդին, Յակոբ, Վօնմութի գութն էր, **1685** յուլիս **15**ին Լոնսբայի մէջ Քլեապոս իրրև գտածան հայրենեայ :

Բոլոր պատմիչներն համաձայնութեամբ կ'ըսեն թէ այս իշխանը շատ քսջ, հնգահամբոյր և խիստ վեհանձն էր, իւր զէմբը գեղեցիկութեամբ և անխուսթեամբ կը փայլէր : Սհա այսպիսի վախճան մ'ունեցաւ իշխան մը (կ'ըսէ Հիւմ Վօնմութի վրայ խօսելով) որ իւր բարձր ձիրքերովն արբունեայ զարդ մը պիտի ըլլար, և իւր հայրենեայ լաւ ծառայութիւններ պիտի ընէր : Իւր թագաւոր հօր իւր վրայ ունեցած գորովը, բազմաթիւ կուտակեաց փառաբանքը, և ժողովրդեան սէրը դրաւելու տեսչը իւր կարողութենէն վեր բռնի մը ձեռնարկել տուին իրեն : Իւր բաղդին բոլոր փոխախութեանցը մէջ ժողովրդեան սէրը իւր վրայէն չէր պակսեր . իւր գլխատութենէն վերջն անգամ, իւր կուտակեցները միշտ կը յուսային թէ օր մը դարձեալ զինքը պիտի տեսնեն իրենց գլուխն անցած : ՝

Ետքը պիտի բացատրենք այս իշխանին կուտակեաց տարօրինակ

յուսոյն պատճառները, և Մօնմութի իւր զլխատութենէն ետև ինչպէս զարձեալ ապրիլը: Մօնմութ՝ Քարայրիսի հաղուտը և երեսի կարմիր ներկը հանելով, նարնջայոյն ծաղիկներով կապոյտ սնդուսէ՝ գետնաքարը զգեստ մը հագեր էր, և առջեւ տարածուած բազմաթիւ թղթեր կը կարգար: Բացատրելու համար այն սխալը որուն կամար որհ հղած էր ասպետը, այսչափ կ'ըսենք թէ Քրուսթիյաք թէպէտ շատ չէր նմաներ Մօնմութի, սակայն մի և նոյն տարիքը, մի և նոյն հասակն ունէր, անոր պէս թուխ և նուրբ էր, զքսին քիթն Ասպրօնին պէս բաւական աչքի զարնող, և թուշն ալ դուրս ինկած էր: Եթէ Բիթլէր գնդապետին տեղ, որ Ալլոմ'Օրանժի հետեւելով Միացեալ-Գաւառներէն ելող Հոլանտացի սպայ մ'էր, ուրիշ մէկն ալ ըլլար, մի և նոյն կերպով պիտի սխալէր, մանտանդ եթէ Քրուսթիյաքի ձեռքը տեսնէր այն թանկադին և ծանօթ բաները որոյ Արարչոս Բ.ի որդւոյն ըլլալը կը զիտցուէր:

Գալով Բիթլէրի ընտրութեան, յայտնի է որ այսպիսի ծանրակշիռ պաշտօն մը ի զուտ հանելու համար վտահալութեան արժանի և աներկիւղ մարդ մը պէտք էր, իւր անձը կուրօրէն նուիրող, և ի հարկին դրեթէ մինչև մարդասպան ըլլալու չափ անձնանուէր. և որովհետև Ալլոմ' ատրանժ չէր կրնար դանել այնպիսի մէկը որ այս յատկութիւններն ունենայ, կ'երեւի թէ առկարելի եղած էր իրեն Մօնմութը յանձնէ ճանաչող այնպիսի մարդ մը ձեռք բերել որ այսպիսի բազմալտանդ և գծնակ ձեռնարկութենէ մը յառաջ գալիք սոսկալի ծայրայեղութեանց և ոչ միոյն առջև չկասի: Մօնմութ բոլորովին Անդրիական լրագիրներու ընթերցման զբաղած էր: Յանկարծ իւր սենեկին դուռը բացուեցաւ, և Անժէլ իւր վիզը նետուեցաւ գոչելով.

— Աղատեցա՛ր, աղատեցա՛ր:

Յետոյ արտասուելով, խոզալով և հեծկլալով փոփոխակի, իւր ամուսնոյն ձեռքերը, ճակատն ու աչքերը համբուրելով, ընդմիջեալ ձայնով մը կը կրկնէր.

— Աղատեցար . . . Յակորս . . . աղատեցար . . . սիրա-

կանս . . . : Ալ քեզ համար վտանգ չկայ . . . տա՛րփաւորս, ամուսինս, Մղբայրս: Օրհնեա՛լ է Աստուած, վտանգն անցաւ . . . : Բայց ս'ըջափ մեծ եղաւ սարսափս. ս'հ, դեւ կը դողամ. . . :
Անժէլի չափազանց յուզմունքէն զարհուրելով, Մօնմութ գորովանօք և անձկութեամբ ըստ անոր.

— Ինչեղար, հոգիս . . . ինչ ըսել կ'ուզես: Բայց Անժէլ առանց պատասխանելու գոչեց.

— Հիմա, ամեն բան լընցած չէ, պէտք է փախչիլ, կը ըսես . . . : Անդրիոյ Ալլոմ' թաղաւորը քեզ բռնելու կ'աշխատի . . . վաղը պէտք է որ այս կղզիէն ելնենք: Ամեն բան պատրաստ պիտի ըլլայ. հիմա մեր սեւերէն միոյն հրաման տուի որ երթայ Բալֆ նաւապետին ըսէ թէ Քաճէլձըր առագաստ պարզելու պատրաստ վիճակի մէջ գնէ, նաւը նահանգաց խորշին մէջ կեցած է . . . երկու ժամէն կրնանք Մարթինիքայէն մեկնիլ:

Գ Լ Ա Ի Խ Գ Ս Ա Ն Ե Ր Ո Ր Գ Ա Ռ Ա Ջ Ն Ե Ր Ո Ր Գ

Մ Ա Տ Ն Ո Թ Ի Ի Ն

Մօնմութ զքսին հաւատալը չէր դար լածներուն, անձկութեամբ իւր կնոջ երեսը կը նայէր:

— Ինչ կ'ըսես, գոչեց վերջապէս, Ալլոմ' թաղաւորը զիտէ՞ այս կղզին բնակիլս:

— Գիտէ . . . : Իւր գաղանի գործակատարներէն մին . . . այս զիշեր . . . մեր պարտեղը մտեր է . . . : Բայց հանդարտէ . . . մեկնեցաւ, ալ բնաւ վտանգ չկայ, գոչեց Անժէլ տեսնելով որ Մօնմութ գէնքերն սուսելու կը վազէ:

— Բայց ո՞ւր է այդ մարդը, ո՞ւր է . . . :

— Մեկնեցաւ, կ'ըսեմ քեզ . . . վտանդն ալ անցաւ . . . :

Եթէ այնպէս չըլլար, ես հոս կու գայի . . . : Ա՛չ . . . ա՛լ վախնալու բան չունիս . . . զէթ առայժմ: Բայց դիտե՛ս ո՛վ օգնեց ինձ այս սպառնալից փոթորիկը կարճելու:

— Ա՛յ . . . ըսէ՛, կ'աղաչեմ . . . :

— Այն խեղճ բաղդախնդիրը զոր խաղալիկ ըրած էինք մեզ:

— Քրօսթիյա՞ք:

— Այո՛, իւր մտաց արթնութիւնն աղատեց զմեզ: Օրհնեա՛լ է Աստուած . . . վտանդը հեռացած է:

— Շիտակը, Անձէ՛լ, կարծես երազ կը տեսնեմ:

— Բայց մտիկ ըրէ՛. ժամը կայ որ ինէ բաժնուեցար Եւրօպայէն եկած այս թղթերը կարդալու համար, ես ալ ասպետին հետ պարտեղ իջայ . . . : Գլխունուս փորձանք մը գալիքը կ'զգայի, ախոր և մտախոհ էի . . . կ'ուզէի կարելի եղածին չափ շտաով ճամբել մեր հլորը . . . այլ ևս զինքը ծաղրելու տրամադիր չըլլալով. ըսի իրեն թէ չեմ կրնար իմայրիտ թեանցս գաղտնիքը բացատրել իրեն, թէ բնաւ մէկուն կին չլիտի ըլլամ, և թէ վաղն առաւ կանուխ պէտք է որ այս տունէն մեկնի. այսպէս մեր նպատակին հասած էինք. Ասքօնը հոս տեսածները բնականապէս ստուարացնելով և այնպէս պատմելով, երեք տարիէ ի վեր այս կղզոյն մէջ պտրտող զրոյցներուն աւելի հաստատութիւն պիտի տար, այլանդակ զրոյցներ, բայց անգին, որք մինչև այսօր զմեզ պահպանեցին, զէպքերուն մէջ այնպիսի շիտթութիւն մը ձգելով, որ անկարելի եղած էր ճշմարիտը սուտէն որոշել:

— Անտարակոյս, բայց ի՞նչ չարաշուք եղանակաւ այս զաղտնիքը . . . : Աւարտէ՛ . . . աւարտէ՛:

— Նախ՝ ասպետին իմացուցի որ այլ ևս չկրնար հոս մնալ, յետոյ ըսի որ մեծազին յիշատակ մը կ'ուզէիք տալ իրեն, որպէս զի Գիւարնակ-Բլուրը չմոռնայ: Մեծ եղաւ զարմանքս երբ տեսայ որ մերժեց զայն այնպիսի նուաստացեալ զէմքով մը, որ զուժս

չարժեցաւ վրան: Իւր ս'ըքան աղբաւ ըլլալը դիտնալով, և ցոյց տուած նոյն խի փափուկ զգացմամբ զինքը պարտաւորելու զեղով որ ընծայ մը ընդունի, հոս եկած էի բոլորտիքն ականակուու Զորայէճն մ'առնելու, որուն վրայ անուանս սկզբնատուերը կան, յուսալով որ ասպետը չդիտի մերժէ: Այս ընծայն իրեն տանելու վրայ էի, մէկ մ'ալ երբ մտակցայ այն տեղին ուր զինքը թողուցեր էի, գարատանին ծայրը, աւաղանին մօտ . . . : Ա՛հ, սիւրելիս, դեռ կը դողամ:

Այս ըսելով գեւահաս կինը երկու թևերովը Մօնմութի վզին փաթթուեցաւ, որպէս թէ զայն տա՛կախ պաշտպանելի՛ ուզէր այն անցեալ վտանդին դէմ:

— Անձէ՛լ, կը պաշտոխմ, հանգարտէ՛, ըսաւ Մօնմութ զորովանօք, աւարտէ՛ պատմութիւնդ:

— Երբ աւաղանին մօտեցայ, յարեց կինը, խօսակցութիւն մը լսեցի. սարսփի մ'եկաւ վրաս, ականջ դրի:

— Անչու չա գալանի գործակատար ըսածդ էր:

— Այո՛, սիւրելիս:

— Բայց ի՞նչպէս մտեր է հոս, ի՞նչպէս կրցաւ գուրս ելնել, ի՞նչպէս իւր գիտաւորութիւնը Ասքօնին յայանեց:

— Ասպետը քեզ կարծեց:

— Ասպետը զի՞ս կարծեց, գոչեց Մօնմութ:

— Այո՛, Յովհոր: Անչու չա ձեր հասակի նմանութենէն և Ասքօնին կրնակի հագուստէն խարտած պիտի ըլլայ, այն հագուստէն զոր շինել տաւր իմ մէկ կամչառութիւնս դո՛հ ընելու համար, և զոր երբեմն կը հագնէիք որպէս զի նմանիս այն կենդանադրին որուն վրայ խօսած ես ինձ:

— Ա՛հ, ըսաւ Մօնմութ ձեռքը ճակատին տանելով վշտազին, ո՛հ, գու չես դիտեր թէ այս ամենն ի՞նչ սոսկալի յիշատակներ կ'արթնցնեն յիս:

Յետոյ, երկար հաւաչանք մ'արձակելով և տխրօղին դիտելով արծաթաբանդակ երեսուէ շրջանակը որ կենդանադրի մը ուրուաղիծը կը պարունակէր, գուքը յարեց:

— Բայց ի՞նչ ելք ունեցաւ այս տարօրինակ պատահումը, առպեան ի՞նչ ըսաւ, դու ի՞նչ ըրիր: Յիրախ, եթէ դու հոս չըլլայիր, եթէ զիս ապահովող խօսքերդ չըլլային, ես ինքնին պիտի երթայի . . .

Անժէլ ընդմիջեց գուքսը. — Գարձեալ կ'ըսեմ, իմ ամենասիրելի Յակօբիկս, եթէ այս ժամուս վախնալու բան մ'ըլլար, այսչափ հանդարտ կ'ըլլայի:

— Լաւ ուրեմն, մտիկ կ'ընեմ, բայց զիտես անհամբերութեանս պատճառը:

— Ես ալ շուտ պիտի աւարտեմ: Լսած մի քանի խօսքերէս կրցոյ հասկընալ որ ասպետը, մեր թշամուսն սխալը չճա՛նցընելով անոր, չէր զիտեր թէ ի՞նչպէս այս տունէն դուրս հանէ զայն, վասն զի կը վախնար որ մեր մարդիկը չհնազանդին իրեն: Աստուծոյ հասկացողութեանը վրայ իրաւամբ վստահելով, իրեն ներկայացայ այն պահանքը որ տանը կը մօտենար, և անուղջակի կերպով իմացուցի իրեն որ զիս պէտք է Միքէթը համարի: Երբ նշմարեցի որ Ալեյօմի գործակատարն ասպետը քեզ կարծելով, միջորոհութիւն կամ տէ՛ր իմ կը կոչէր զայն, ես ալ զինքն այնպէս կոչեցի. դռները բանալ տուի, և պատրանքը կատարեալ ընելու համար, սուրբ, կենդանադրի տուփէ, և սիրած այն Տին կրկնոցդ Աստուծոյն տուի:

— Ա՛հ, ի՞նչ ըրիր, Անժէլ, գոչեց գուքսը, հօրս սուրը, մօրս առած տուփը, և այն կրկնոցը որ իւր անձը բարեկամութեան զոհող ամենէն սուրբ և ամենէն հիանալի նահատակինն էր:

— Յակօբս, սիրականս, ներէ՛. կարծեցի թէ աղէկ բան մ'էր ըրածս, գոչեց Անժէլ ցառապին երբ տեսաւ որ Վօ՛մութի գէմքը վիշտ և դառնութիւն կ'արտայայտէր:

— Հո՛գիս, յարեց Վօմութ կնոջ ձեռքերը սեղմելով կաթոցին, չեմ ամբաստաներ զքեզ, բայց այն սուրբ նշխարքն ս'ինքան յարդելի են ինձ, որ խիստ գծապակ բան է ինձ համար՝ ստույգութեամբ մ'անոնց պղծուիլը տեսնել, մինչև իսկ քանի մը վայրկեան: Ա՛հ, դարձեալ կ'ըսեմ, դու չես զիտեր այն սոսկալի յիշատակնե՛ս

Ընթացք

ըր որք մանաւանդ այն կրկնոցին հետ կ'ապուած են . . . ափսո՛ս, ամեն բան ըսած չեմ քեզ:

— Ամեն բան ըսած չե՛ս ինձ, գոչեց Անժէլ ապշած: Երբ Գաղղիա եկար զիս գտնելու յանուն իմ երկրորդ հօրս, բարերարիս, որ պատերազմի գաշտին վրայ մեռաւ — Անժէլ հառաչեց տխրապին — չառաջարկեցիք ինձ որ կեանքերնիս միացընենք, չըսիր ինձ թէ զիս, որ խեղճ որք մ'էի, կը սիրես. մնայածն ի՞նչ փոյթ ինձ: Եթէ խնդիրը քու փրկութեանդ, քու կենացդ վրայ չըլլար, միթէ երբէք մտքէս պիտի անցընէ՞ք քու վիճակդ, քու ծննդեանդ խօսքն ընել: Երբ քեզ առի, դու դատապարտեալ էիր, թշամուսնացի մոլեղին տեսելութեան առջևէն խոյս կու տայիր . . . : Հաս վտանգներ անցուցինք, շնորհիւ կարծեցեալ ամուսնութեանցս և քու զանազան ծպտանացդ, կասկածները փարատեցինք: Հիմա ի՞նչ կրնայ ըլլալ ինէ պահածդ: Եթէ նոր վտանգ մ'է, Յակօբս, բարեկամս, սիրականս, բնաւ չպիտի ներեմ, վասն զի թէ աղէկ և թէ դէ՛շ, ամեն բանիդ մասնակից պիտի ըլլամ: Գու կեանքդ իմ կեանքս է, քու թշամուսնեցիք իմա ալ են: Թէպէտ սո՛յն աղէտալի փորձերնին բարերազրարար ի դերե ելաւ, սակայն հիմա զիտեն քու առանձնարանդ, դարձեալ պիտի սկսին մոլեղնաբար զքեզ հալածելու: Փախչելու է. երկու ժամէն Գա՛մէլէն առաջատար պարզելու պատրաստ պիտի ըլլայ:

Վօմութի միտքը բոլորովին պաշարուած ըլլալով, Անժէլի ըսածները չէր լսեր. մեծաքայլ ժուռ կու գար և կ'ըսէր ինքնիրեն .

— Այս մտին տարակուսելու բան չկայ, ողջ ըլլալս զիտեն: Ինչպէս Ալիօմ'Օրանժ կրցեր է իմանալ այս գաղանիքը, զոր միայն ես և հայր Արիֆօն գիտէինք, որովհետև այն սուրբ նահատակն այս գաղանիքը գերեզման տարաւ, և այս կողմնս վերջին կուտակալը Բրիւսօլ մեռաւ: Երբ կը մտածեմ թէ առելի ապահովութեան համար մինչև անգամ իմ բուն անունս պահեցի այս պաշտելի և անձնանուէր կնոջմէն, ս'վուրեմն մատնած է զիս. հայր Արիֆօն սոսկալի սրբապղծութիւն մը չըներ, վասն զի կուտակալը

խոստովանու թեան դորձմին ներքև յայտնեց անոր այս գաղանիքը :
Քանի մը վայրկեան լուռ կենալէ և մտածելէ ետև , դուքսը յարեց .

— Ի՞նչ միջոց գործածեց ասպետը Աիյով տ'Օրանձի գործակա-
տարին զիտաւորութիւններն հասկընալու համար :

— Գիտաւորութիւնները կ'ըսես , ո՛հ , բա՛րեկամս , այդ մար-
դը չծածկեց զանոնք . լսեցի իւր խօսքերը , զքեզ մտեալ կամողջ
վերցընել և Լոնտրայի Աշտարակը տանիլ կ'ողեր :

— Աշտարակոյ չմնաց . 1688ի յեղափոխութենէն ի վեր կը
վախնան որ չըլլայ թէ զահճընկէց թագաւորին մօտենամ , լրա-
դիրք մինչև անգամ կ'իմացընեն թէ հին կուսակիցներս կը խլրտին ,
ըսաւ Մծմուծ ինքնիրեն խօսելով : Այս գործին մէջ իմ հին բա-
րեկամս Աիյով տ'Օրանձի քաղաքակաւորութիւնը կը տեսնեմ : Բայց
ինչ իրաւամբ կը կասկածի թէ փառասէր նպատակներ ունենամ ,
ո՞վարդեօք Աիյովի մտացը մէջ արթնցոյց այս անիրաւ կասկած-
ները , այս անհիմն երկիւղները : Գարձեալ պահ մը լուռ կենալէ
ետև , Անժէլի ըսաւ . « Օրհնեալ է Աստուած , մերիկն անցաւ ,
սիրելիս , քու շնորհիւ , այն քաջ բաղդախնդրին շնորհիւ : Սա-
կայն և այնպէս չեմ գիտեր թէ , այս պարագային մէջ իւր ցոյց
տուած անձնանուիրութեան հակառակ , կընամ ճշմարտութեան
մէկ մասը յայտնել իրեն . թերևս աւելի խոհեմութիւն ըլլայ բնաւ
բան մը չլիտցընել և զինքը համոզել թէ նոյն ինքն գործակատարն
ալ խաբուած է սուտ տեղեկութիւններէ : Գու ի՞նչ կ'ըսես , Ան-
ժէլ , Խուճալէի գէմքէն տարբեր զիմօք երեկո՞ւ ասպետին , կամ
դու յանձն կ'առնե՞ս այն աղինս անձը տեսնելու և կրկին շնորհա-
կալութիւն յայտնելու հոգը : Այնուհետև իւր ինքնատիրութիւնը
չվիրաւորած զինքը վարձատրելու միջոց մը կը գտնենք :

Անժէլ զարմացմամբ իւր ամուսնոյն երեսը կը նայէր : Մծ-
մուծ աղէկ չէր հասկըցեր անոր խօսքերը , կը կարծէր թէ Կաս-
քօնը կըցեր էր Գիւսարնակ-Բլուրէն հեռացընել Աիյով տ'Օրանձի
գաղանի գործակատարը , բայց իբրև կալանաւոր անոր ընկերացած
ըլլալը չէր գիտեր :

— Ասպետին ե՛րբ վերադառնալը չեմ գիտեր , սիրելիս : Տա-
րակոյ չիայ որ այս սխալը կարելի եղածին չափ երկարելու
պիտի աշխատի , որպէս զի փախչելու ժամանակ ունենանք :

— Ուրեմն ասպետը հոս չէ՞ , գոչեց դուքսը :

— Հոս չէ , սիրելիս , այն մարդուն հետ քու անուամբդ իբ-
րև կալանաւոր մեկնեցաւ : Մեր ձկնորս սեւերն անոնց հետ մինչև
Նհանգայ խորշը պիտի երթան , ուրիկէ գործակատարը ասպետին
հետ մեր մակոյկներէն մէկը պիտի նստի Պարպատ երթալու հա-
մար :

— Կարծես դուքսը լսածին չէր հաւատար :

— Իմ անուամբս իբրև կալանաւոր մեկնեցա՞ւ , ըսիր , գոչեց
նա : Բայց այդ գործակատարը երբ իւր սխալը ճանչնայ , կրնայ
զասպետը սպաննել : Ակայ Աստուած , չեմ կրնար հանդուրժել ա-
սոր . արդէն շատ եղաւ ինձ համար թափուած արիւնը :

— Արիւն , ա՛հ , այդ վախը մի՛ ունենար . ասպետին համար
բնաւ վտանգ չիայ : Թե՛և շահքս մեզ սպառնացող չարիքը հեռացը-
նելէր , սակայն՝ եթէ այս նպատակին հասնելու համար այն վեհ-
անձն մարդը ստոյգ վտանգի մը ենթարկել հարկ ըլլար , այս
բանը երբէք չէի ընէր :

— Բայց , ողորմելի՛ կին , գոչեց դուքսը , դու չես գիտեր թէ
ինչ սոսկալի կարեւորութիւն ունի այն պետական գաղտնիքը զոր
ասպետը գիտէ հիմա :

— Տէ՛ր Աստուած , ի՞նչ կ'ըսես :

— Կրնան զինքն սպաննել :

— Ո՛հ , ի՞նչ ըրի , տէ՛ր Աստուած : Բայց ո՞ւր կ'երթաս , գո-
չեց մանկամարդ կիներ , տեսնելով որ դուքսը գուրս ելնելու կը
պատրաստուէր :

— Երթամ զիրենք պիտի գտնեմ , խեղճ բաղդախնդիրն աղա-
տեմ : Սեւերէն մի քանին հետս պիտի տանիմ : Կասքօնը հազիւ
ինէ ժամ մ'առաջ ելած է :

— Յակիր , կը պաղատիմ , ինքզինքդ վտանգի մէջ մի՛ դնէր :

— Ի՞նչ կ'ըսես , մի՞թէ վատաբար թողնումայդ մարդը որ իւր

անձն ինձի համար նուիրեց, և Կիյովի նուիրակին կրիցը յանձնեմ . . . երբէք: Ա՛հ, դու չցիտես, զժբա՛ղը դառակ, թէ ինչ ինչ զըհողութիւնք խղճի խայթի չափ վշտացուցիչ երախտադիտութիւն մը կը պահանջեն: Կաղաչեմ, դնա՛ Միրէթին ըսէ որ դերինբերէն մէկ քանիին պատուիրէ, պատրաստ ըլլան հիմա անմիջապէս ետևէս գալու: Ասպետը մակընթացութեան պատճառաւ չպիտի կրնայ առտու չեղած ճամբայ ելնել, տակաւին կրնամ հասնիլ իրեն:

— Բայց այդ նուիրակն ամեն բան կրնայ ընել. եթէ ասպետն աղատելու գալը տեսնէ, թերևս զործը հասկընայ, և այն ատեն . . . :

— Ետևնուն վաղըր ոչ թէ Յակոբ Մօնմութ այլ Խափշիկ ծովասպատակը պիտի ըլլայ: Ասկէ զատ, կարծեմասոր պէս ուրիշ վտանգներ արհամարհած ունիմ:

Այս ըսելով, դուքսը իւր յարկին կից խոց մը մտաւ. հոն ծպտելու համար պէտք եղած ամեն բան կար:

Անժէլ առանձին մնալով սկսաւ սոսկալի կերպով տառապիլ. չէր կարծած որ այսչափ աղէտալի պիտի կրնային ըլլալ հետևանքն այն սխալին յորում Կասքօնը ձոցեց զԲիթլէք: Արվանսար նաև որ Մօնմութ իւր ծպտանաց մէջալ ճանչցուի: Այս անձկութեանց մէջ յանկարծ լսեց որ իւր գտնուած յարկին արտաքին դրան ուժգնութեամբ կը զարնէին. այս յարկը տանը բոլոր մարդոց խտիր զոցուած էր: Անժէլ դէպ ի այն դուռը վաղեց և հոն Միրէթը տեսաւ: Խափշուհին ահաբեկ դէմքով մ'Անժէլի ըսաւ թէ հայր Կրիֆօն անպատճառ ներս մտնել կ'ողէ, վասն զի ամենակարևոր բաներ ունի իրեն իմացընելք: Անժէլ հրաման տուաւ Միրէթի որ կրօնաւորն անմիջապէս դեմնայարկի սրահը տանի: Գրեթէ մի և նոյն վայրկենին Մօնմութ բոլորովին անձանաչ իւր սենեկէն դուրս կ'ելնէր Խափշիկ ծովասպատակին կերպարանքովը:

— Միրելիս, զոչեց Անժէլ երբ դեռահաս Խափշուհին մեկնեցաւ, հայր Կրիֆօն եկաւ, ամենակարևոր բաներ ունի մեղայտ-

նելիք: Ի սէր Աստուծոյ, սպասէ՛ և խօսէ՛ հետը:

— Հայր Կրիֆօնը, զոչեց դուքսը:

— Դու ալ դիտես որ միայն ամենամանր պարպոյաներու մջ կու դայ հոս. կաղաչեմ, տեսէ՛ք զինքը:

— Պէտք է տեսնել . . . սակայն ուշացած ամէն մէկ վայրկեանս կրնայ խեղճ ասպետին կեանքը վտանգի մջ դնել, զոչեց դուքսը:

Անժէլի հետ վար իջաւ. հայր Կրիֆօն, գունատ, յուզուած, չափազանց յոդնած, սրահն էր:

— Մէկ քառորդէն հոս են, զոչեց կրօնաւորը:

— Ո՛վ, հայր, հարցուց Մօնմութ:

— Այն թշուառական Կասքօնը, ըսաւ կրօնաւորը:

— Ո՛հ, Յակոբ, ամեն բան յայտնուեր է, կորսուեցա՛ր, ըսաւ Անժէլ սուր ճիչ մ'արձակելով, և Մօնմութի բազկացը մէջ նետուեցաւ: Փախչի՛ք, տակաւին ժամանակ ունինք:

— Փախչինք, բայց ո՛ր կէ. մէկ ճամբայ միայն կայ Գիւաբնակ-Բլուրը գալու և անկէ դուրս ելնելու: Անոնք ետևէս կու գան, պատասխանեց հայրը. բայց հանդարտեցէ՛ք, տակաւին յոյս կայ:

— Ըսէ՛ք, հայր, ի՛նչ կայ, կ'աղաչեմ, խօսեցէ՛ք, ըսաւ Անժէլ:

— Հայր, դուք միայն դիտէք իմ գաղտնիքս, ըսաւ դուքսը ծանրութեամբ, լաւազոյն կը համարիմ անկարելոյն հաւատալ քան թէ վայրկեան մը ձեր սրբութեան վրայ կասկածի երթալ:

— Իրաւունք ունիք այս մասին չկասկածելու, գա՛ւախ . . . այս գործին մջ անմեկնելի գաղտնիք մը կայ . . . որ, հաւատացէ՛ք ինձ, որ մը պիտի յայտնուի. բայց վայրկեաններն այնքան թանկագին են, որ հիմա չենք կրնար ձեզ սպառնացող զժբաղողութեան պատճառը փնտուել: Վաղեցի քովերնիդ եկայ, ուրեմն մատնած չեմ զձեզ, ստիպողականը նայինք: Այդ ծպտանացող մէջ անկարելի է որ զձեն ճանաչեն, ըսաւ ժողովրդապետը: Բայց ասով չլքըննար, անհնարին դրից մէջ կը գտնուիք հիմա:

— Ինչ կ'ըսէք :

— Այս Կասթօնը մասնիչ մ'է, վատ մ'է . . . ներումն կը խնդրեմ Աստուծմէ այսպէս սխալած և զձեզ ալ սխալեցուցած ըլլալուս . . . : Անիծեալ ըլլայ այն չուսուական կեղծաւորը . . . :

— Բայց ընդ հակառակն, գոչեց Անձէլ, ամենէն վեհանաձն մարդն է այն . . . նա իւր անձը կամովին նուիրեց իմ ամուսնոյս համար :

— Այո՛, ձեր անունն առաւ, ըսաւ իշխանին հայր Կրիֆօն, բայց գիտէ՞ք ինչ դարշելի նպատակաւ :

— Ո՛հ, ըսէ՛ք . . . ըսէ՛ք, սոսկումէս պիտի մեռնիմ, գոչեց Անձէլ :

— Մտիկ ըրէք ուրեմն, ըսաւ կրօնաւորը, վասն զի վայրկեանները կ'անցնին և վտանգը կը մօտենայ . այս առաւօտ, Գօրֆօայալէն պարոն Մօրէն նամակ մը զրկեց ինձ Մարուպա, ըստ հրամանին գոր ձեռնէ ընդունած է եկած ամեն նաւերը և իրեն արտաքոյ կարդի երեցած ամեն բան ինձ իմացընելու, յատուկ մարդով մը զրկած էր նամակը որովինձ կ'իմացընէր թէ Գաղղիական Փրքաթօն մը անծանօթ անձ մը ցամաք զրկելէ ետև նաւահանգստին բացը կեցած էր : Այս անձը կուսակալին հետ երկարօրէն տեսնուելէ ետև ուղեկից պահապաններու զլուխն անցած ձամբայ ելած է դէպ ի Գլուաքնակ-Բլուր . վերջապէս հոս կու գայ :

— Գաղղիական նուիրակ, գոչեց Մօնմութ, ալ հիմա ինձ համար վախնալու ինչ կ'ընայ ըլլալ, մինչև անգամ եթէ դադարնիքս Գաղղիոյ արքունեաց ծանօթ ալ եղած ըլլած : Միթէ Գաղղիա Անգղիոյ դէմ պատերազմի մէջ չէ՞ :

— Տէ՛ր Աստուած, ողջրմէ՛ մեզ, գոչեց Անձէլ :

— Մտիկ ըրէք, մտիկ ըրէք . . . : Աճաղարանօք ձամբայ ելայ, յարեց հայր Կրիֆօն, ձեզ իմաց տալու համար, յուսալով որ այն անձէն և իւր ուղեկիցիներէն առաջ հասնիմ հոս, եթէ իւրօք հոս կու գայ : Գժբաղդարար . . . կամ թերես բարեբաղդաբար : Բլուրին ստորոտը այն անձին հասայ : Զղեստէս զիս

ճանաչելով, ինձ ըսաւ թէ Գաղղիոյ թաղաւորին նուիրակն է և պետական պաշտօն մը կատարելու եկած է . յետոյ ինձ աղաչեց որ զինքն առաջնորդեմ և ներս մացընեմ, որովհետև այս սանը բնակիչները կը ճանաչեմ : Եթէ մերժէի կատկածի պիտի երթար . քովը կեցայ . այն ատեն ինձ ըսաւ թէ անունը Պ. ալ Շէմրօ է . երբ կ'սկսէր ձեր և ձեր կնոջ վրայ զիս շփոթեցընող հարցումներ ընել, մէկ մ'ալ յանկարծ, տէ՛ր իմ, մենէ քէշ մը հեռուն զօրաւոր ձայն մը լսեցինք որ կը գոչէր .

«— Ո՛վ է այն :

«— Գաղղիոյ թաղաւորին նուիրակը, պատասխանեց Պ. ալ Շէմրօ :

«— Մասնութիւն, յարեց ձայնը, և խուչեծեծանք մը մինչև մեզ հասաւ այս խօսքով . Մեռայ . . . :

«— Ի վէ՛ն» գոչեց Պ. ալ Շէմրօ սուրը քաշելով և վաղելով դէպ ի մեր երկու յառաջապահ նաաստիները : Ես ալ իրեն ետևէն դայի . . . : Տեսանք որ Կասթօնը ձամբուն մէկ կողմը գետինը փուռած էր, չորս սևեր սարսափահար ծ'դի վրայ եկած էին, մինչդեռ մեր երկու յառաջապահ նաաստիները գետինը զարնելով հաղի կը զսպէին ծովաստի զցեսաով հոսկու մարդ մը :

— Ուրեմն ասպետը վերադարձաւ էր, գոչեց Մօնմութ :

— Քէ, տէ՛ր իմ . թէպէտ շատ չար մարդ մ'է նա, սակայն պէտք է փառք տալ Աստուծոյ որ հրաշալի դիպումով մ'ազատեցաւ : Ծովաստի հաղուստով մարդը, լսելով մեր գնդին շշուկը և Պ. ալ Շէմրօյի՛ Գաղղիոյ թաղաւորին նուիրակը պատասխանելը, այնպէս կարծեր էր թէ մասնուած և դարանի մը մէջ տարուած է . այն ատեն իւր գաղչյնովն այնպիսի կատաղի հարուած մը տուեր է Կասթօնին, որ այն չուսուական բաղլախնդիրն անպատճառ պիտի մեռնէր եթէ գաղչյնին երկաթն անոր մէջքի կամարին հանդիպելով յխորտակուէր : Սակայն և այնպէս բախման ուժգնութենէն գետինն ինկեր և գոչեր է .

«— Մեռայ» և անշարժ մնացեր է : Ահա այս միջոցին էր որ խմբին քով հասանք : Կասթօնն սպաննողը մեզ տեսնելուն պէս,

ուորովը հրեց մեռեալ կարծած մարդուն մարմինը և կատաղութեան ծիծաղով մը զոչեց .

«— Պարոն նուիրակ Գաղղիոյ, ձեր խորհուրդներն իմացուեցան և ահա ի դերև հանուեցան . . . դուք կու գայիք գանել զՅակոբ, Մծնմութ դուքսը, որպէս զի աստամբութեան գրօշ մ'ընէք զայն, գրօշը ջախջախեցաւ . . . վերցուցէք այս դիակը, պարոն . ահա՛ ե՛ս, Բիւթէր, զնդապետ ի ծառայութեան Աիյօմ թագաւորին, զործեցի այս սպանութիւնը :

«— Թշուառական, զոչեց Պ. ար Շէմրօ :

«— Այս սպանութիւնը փառք մ'է ինձ, յարեց զնդապետը : Այսպէս ահա կործանեցի թագաւորին թշնամեացը զարշէլի զիտումները : Փա՛ռք ինձ, վասն զի Աարոլոս Բ. ի սուրը, զոր Յակոբ Մծնմութ իւր մէջքը կը կրէր, այլ ևս չպիտի մերկանայ Անգղիոյ դէմ :

«— Գնդապետ, քանչորս ժամէն հրացանի պիտի բռնուիք, ըսաւ Պ. ար Շէմրօ . . . :

«— Գիտեմ զլիսուս գալիքը, պատասխանեց զնդապետը, դաւաճան մը մեռաւ : Աեցցէ՛ Աիյօմ թագաւորը և հինն Անգղիա :

— Իսկ ասպետը, զոչեց դուքսը :

— Ասպետը երբ Բիւթէր զնդապետին այս խօսքերը լսեց, թեթև շարժում մ'ըրաւ, հառաչ մ'արձակեց, և մինչդեռ պահնորդներէն մի քանին Բիւթէրի ձեռքերը կը կապէին, որ ասպետին մեռած չըլլալը տեսնելով կատաղութենէն կը մռնչէր, Պ. ար Շէմրօ փութաց Ասքօնին օդնելու, և ըսաւ անոր .

«— Տէ՛ր իմ, վերքերնիդ ծածնր է : » Իսկոյն հասկըցայ որ ասպետը ձեր գերը կը խաղար և ձեր անունն առեր էր, թէև չկըցայ սոյն ծպտանայ նպատակը զուշակել . այս սխալէն կրնաւ յինք օգտիլ, լուեցի :

«— Հարուածը հօրս սուրին կամարին վրայէն սահեցաւ, ըսաւ ստամորդին տկար ձայնով մը երբ զինքը կը վերցընէին :

«— Մի՛ լորտ—դուքս, վրաս կը թնեցէք, պատասխանեց Պ. ար Շէմրօ . յանուն տիրոջ, Գաղղիոյ թագաւորին, կու գամ առ

քեզ : Այլ ևս զործը գաղանի պահելու հարկ չկայ : Երկու խօսքով պիտի ըսեմ ձեզ, տէ՛ր իմ, ինչ պաշտօնով եկած ըլլալս, և յետոյ պիտի տեսնէք թէ կարելի եղածին չափ շուտով պէտք է որ Քոր—Քօյալ վերագառնանք հանկէ նաւ նստելու համար :

«— Ականջս ձեզի է, պարոն » ըսաւ ասպետը սակաւ ինչ Անգղիական արտասանութիւն կեղծելով, անշուշտ խըր գերը լաւ ևս խաղալու համար : Քանի մը վայրկեան գաղանի խօսակցութենէ ետև, Ասքօնը բարձր ձայնով ըսաւ .

«— Քանի որ զործն այսպէս է, պարոն, չեմ կրնար կնջմէս բաժնուիլ, և պէտք է որ երթամ Գիւաբնակ—Բլուր, զինքն առնեմ : Նա ալ պիտի ընկերանայ ինձ . . . քանի որ ինձ վերահ պահեալ անօրինութիւնն այդպէս է :

— Թշուառական, զոչեց Անժէլ :

— Յետոյ Ասքօնը յարեց, շարունակեց հայր Արիֆօն .

«— Անկումս թմրութիւն պատճառեց ինձ, պէտք է որ տունս քիչ մը հանդստանամ :

«— Ինչպէս կը փոփաքիք, թնդ պիտիս ըլլայ, տէ՛ր իմ » ըսաւ Պ. ար Շէմրօ : Յետոյ ինձ գառնալով .

«— Ար հաճի՛ք, հայր, երթալ Մծնմութ դքսուհւոյն իմաց տալ թէ դուքսը հիմա պիտի գայ զինքը առնելու . թնդ հաճի շուտ պատրաստուելու, վասն զի պէտք է որ առտուն կանտի Քոր—Քօյալ գանուինք և անմիջապէս նաւ նստելով ձամբայ ելնենք . . . : » Հիմա հասկըցա՛ք, ըսաւ Արիֆօն Մծնմութի, այս մասնչին զիտաւորութիւնը . ձեր անունը կը կրէր կ'ուզէ ձեր կինը յափշտակել : Հիմա դուք պիտի պարտաւորիք կամ մ՛վ ըլլալնիդ յայսնիլ . . . կամ թողուլ որ դքսուհին մեկնի :

— Առաջին կը համարիմ հազար անգամ մեռնիլ, զոչեց Անժէլ :

— Անիծեալ ըլլայ այն Ասքօնը, յարեց հայր Արիֆօն, ես զինքը յիմարի մը սեղ գրեր էի, կեղծաւորութեան հրէշ մ'է եղեր :

— Չյուսահատինք, ըսաւ Անժէլ յանկարծ : Հայր, ինչոքեմ, դուքը Միլեթին հրամայէիք որ Ասքօնն ու նուիրակը եկած ասեանին դուռը բանայ : Մնացածն իմ զործս է :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԳՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԻՐԼԱՆՏԱՅԻ ԵՒ ՍԿՈՎՏԻՈՅ ՓՈԽԱՐԲԱՅՆ

Մինչդեռ Մծնմութ դուքսն և իւր կինը հայր Արիֆօնէն իմանալով Բրոսթիյաքի զղուելի դաւաճանութիւնը, կ'աշխատէին այս նոր վտանգէն ազատելու, մենք ալ կը վերադառնանք բաղալինդրին քով: Սա Պ. տը Շէմրօյի թեկն կը լմնած Գիւարնակ-Բլուրին սեպածե զառիթափներէն վեր կ'երնէր: Բիւթլէր գնդապետը, որ իւր ձեռնարկութեան ի դերեւ ելնելուն վրայ սաստիկ կատղած էր, երկու պահնորդ զինուորաց յանձնուեցաւ որք տարին զայն: Պ. Տը Շէմրօ չէր ճանաչեր զԲրոսթիյաք. բնաւ կասկած չունէր Ասքօնին՝ իւր փնտռած Մծնմութ դուքսն ըլլալուն. Բիւթլէրի գործն ու խօսքը կը հաստատէին իւր սխալը: Գնդապետին վրայ Ալիյօմ'Օրանմի մէկ հրամանագիրը զանուեցաւ Մծնմութ դուքսը բռնելու մասին: Արեմն ինչպէս Պ. տը Շէմրօ կրնար վտահ չըլլալ, երբ կրտսենէր որ Ալիյօմ'թագաորին մէկ նախարհը հրամանագիր ի ձեռին իբրև դուքս կը ճանաչէր զԲրոսթիյաք, և իւր կեանքն ալ վրայ պիտի տար այն կարծեցեալ իշխանը սպաննելու փորձ մ'ըրած ըլլալուն համար:

Բրոսթիյաք տեսնելով որ այս արկածը նոր կերպարանք մը կ'առնէ, աւելի մեծ զղուշութիւն մ'ընելու պէտքը զգաց, որպէս զի յառաջ երեւելու զամ պատրանքը լրացնէ և իւր նպատակին հասնի: Գեթ իւր ներկայացուցած անձին անունը և ինչ աղչեալ ըլլալը գիտէր: Սակայն բաղալինդիրը շատ մեծ օղուտ մը

չիրցաւ քաղել այս տեղեկութիւններէն, վասն զի ժամանակակից պատմութեան բնաւ տեղեակ չէր. բայց զոնէ գիտնալով որ Անդղիայի է այն անձը զոր ինք կը ներկայացնէր, ջանաց իւր Ասքօնեան արտասանութիւնը փոխել և Անդղիայույ մը պէս հնչել. ուստի սկսաւ այնպիսի տարօրինակ արտասանութեամբ մը խօսիլ, որ Պ. տը Շէմրօ յաւիտեան կասկածելիք չունէր իրեն հետ խօսողը Գաղղիացի չըլլալուն: Բրոսթիյաք իւր դերը չվտանդելու համար խոհեմութիւն համարեց լակոնական ոճով վարտիլ: Այս բանը զարմանք չպատճառեց Պ. տը Շէմրօյի, վասն զի գիտէր որ Անդղիայիք երկար չեն խօսիր:

Ասպետին նոր և անհնարին վիճակին վրայ դաղափար մ'ունենալու համար, բուական է փոքր ինչ ականջ գնել այս երկու անձանց խօսակցութեան, որք պահապան զինուորաց գլուխն անցած կ'ուղևորէին զէպ ի Գիւարնակ-Բլուր:

— Տէ՛ր իմ, կ'ըսէր Պ. տը Շէմրօ, երբ ձեր տունը հասնինք, Ձեր Բարձրութեան ցոյց պիտի տամ այն լիազօր իշխանութիւնը զոր Նորին Ահհափառութիւնը տուաւ ինձ:

— Բարձրութեանս, չա՛ր սատանայ, ըսաւ մտքէն Բրոսթիյաք, այս մարդը միւսէն աւելի հաճելի է ինձ. թողո՛ւնք իւր անտանելի դաշոյնին դժպտահալութիւնը, նա միայն Տէ՛ր իմ կամ Ձեր Ազնուութիւնը կ'ըսէր ինձ, մինչդեռ սա՛ Բարձրութեան տիտղոսը կու տայ: Յառաջ երթալու վրայ ենք, դահն ելնելու շատ բան չմնայ:

Պ. տը Շէմրօ շարունակեց.

— Նաև, տէ՛ր իմ, պատիւ պիտի ունենամ Անդղիայէն եկած բաղալինդիւ նամակներ հաղորդել ձեզ, որոցմէ պիտի համոզուիք թէ ապոստամբութեան համար ասիէ աւելի յարմար ժամանակ չկրնար ըլլալ:

— Գիտէի այդ, ըսաւ համարձակօրէն Ասքօնը, Բիւթլէրի խօսքերը յիշելով. կուսակիցներս կը խլրտին, և սանկ ու նանկ չեն խլրտիր:

— Ձեր Բարձրութիւնը կարծածէս աւելի տեղեակ է Եւրո-

սրայի գործերուն :

— Այդ մասին • երբէք զանցառութիւն ըրած չեմ, պարոն, երբէք :

— Այդ խօսքով զիս չափազանց կ'ուրախացնէք, տէ՛ր իմ : Ձեր Բարձրութեան ձեռքն է ապահովել այն փառաւոր զիրքը որ ձեր իրաւունքն է, և զոր կ'ստանաք եթէ վճռական յաջողութիւն մը ձեռք բերէք :

— Ի՞նչպէս :

— Ձեր թաղաւոր հօրեղբօր, Յակօբ Սթուարթի կուսակցաց զլուին անցնելով, և երբեմն զձեզ բաժնող անհամաձայնութիւնները մոռնալով, վասն զի թաղաւորն այլ ևս զձեզ իւր արժանի եղբօրորդին նկատել կ'ուզէ :

— Շիտակը իրաւունք ունի, վերջապէս չէ՞ որ մի և նոյն ընտանիքէ ենք : Եթէ երկուստեք փոքր ինչ զիջում ըլլայ, ամեն բան կարգի կը մտնէ :

— Նաև, տէ՛ր իմ, Յակօբ թաղաւորը բարձր վտահալութեան փորձ մը պիտի տայ ձեզ թէ՛ իւր և թէ՛ իւր դեռահաս որդւոյն* իրաւանց պաշտպանութիւնը ձեզ յանձնելով :

— Հօրեղբայրս դահլիճէց եղաւ, շատ դժբաղդ է, այս գէպքը շատ բան մոռցնել կու տայ, ըսաւ Քրուսթիյաք իմատասիրական ոգւով. իւր յոյսերուն համեմատ պիտի վարուիմ. անձնա՛նուիրաբար պիտի պաշտպանեմ թէ՛ իւր և թէ՛ որդւոյն իրաւունքները, եթէ սակայն պարագաները ներեն :

— Ձեր Բարձրութիւնն ամենափոքր տարակոյս մ'անդամ չալիտի ունենայ այս ձեռնարկութեան խիստ պատեհ ժամանակն ըլլալուն վրայ, երբ այս մասին իւր վաղեմի զինակցաց, իւր եռանդուն կուսակցաց շատերուն ունկնդիր ըլլալու հաճի :

— Տարակոյս չունիմ որ անոնց չափ ոչ ոք պիտի կրնայ . . . ստոյգ տեղեկութիւններ տալ ինձ : Բայց, ափսո՛ս, դժբաղդաբար

շատ ժամանակ պիտի անցնի մինչև որ այն քաջ, այն հաւատարիմ ծառաները տեսնեմ :

— Խիստ հաճելի զարմանք մը պիտի պատճառեմ Ձեր Բարձրութեան :

— Չարմանք :

— Այո՛, տէ՛ր իմ : Ձեր կուսակիցներէն շատերը ձեր կենաց ինչ զարմանալի դիպուածով մ'աղատիլն իմացած ըլլալով, ինձ ընկերանալու շնորհը ինդրեցին թաղաւորէն :

— Ձեզ ընկերանալու, զոչեց ասպեար : Ռ'ը են ուրեմն, պարոն :

— Հոս են, զիս բերող Ֆրքթթօնին մէջ, տէ՛ր իմ :

— Ձեր Ֆրքթթօնին մէջ, յարեց Քրուսթիյաք այնպիսի զարմացմամբ զոր Պ. տը Շէմրօ՝ ասպեաին սիրած յիշատակաց խիստ նպաստաւոր կերպով մեկնեց :

— Այո՛, տէ՛ր իմ, շատ իրաւացի են ձեր զարմանքը, երջանկութիւնը, ուրախութիւնը, երբ կը լսէք որ քիչ մը ետքը ձեր վաղեմի զինակիցները պիտի տեսնէք :

— Արդարև չէք կրնար երեակայել թէ ինչ անհամբերութեամբ կ'սպասեմ այն վայրկեանին յորում վերստին պիտի տեսնեմ զանոնք, պարոն, ըսաւ Քրուսթիյաք :

— Մինչև այսօր այնպէս վարուեցան, տէ՛ր իմ, որ իրաւունք ունիք այդչափ աճապարելու : Անդղիոյ մէջ ձեր ունեցած բոլոր բարեկամաց իղձերը կը բերեն ձեզ : Անդղիոյ գործերուն վրայ ընդ փոյթ տեղեկութիւններ պիտի տան ձեզ : Տըալէյի պէս, Բօչէյի պէս անձերէ սուելի ս'վ կրնայ տեղեկութիւններ հաղորդել ձեզ այս մասին :

— Ինչ կ'ըսէք, Բօչէյն ալ եկաւ, ա՛հ, սիբեյի Բօչէյս, ըսաւ Քրուսթիյաք արթնութեամբ :

— Այո՛, տէ՛ր իմ, սակայն իւր հին վէրքերէն այնքան կը տառապի, որ հազիւ թէ կրնայ քալել. բայց «Հոգս չէ մեռնիլս, ըսաւ, եթէ մեր դքսին ոտիցը ներքև մեռնիմ» վասն զի իրենց ընտանեկան անձնանուիրութեամբն այգպէս կը կոչեն զձեզ,

* Հերամուտ գահուան, Զնէալ 1688ին :

տէ՛ր իմ՛ :

— Խեղճ՝ Բօչէյ , միշտ նոյնն է , ըսաւ Գրուսթիյաք ձեռքն աչացը տանելով վղձկեալ ձայնով : Արջափ սիրելի են ինձ այս բարեկամները :

— Հասցա լորտ Մօրթիմէ՞րը , տէ՛ր իմ՛ , խեղդ դարձեր էր : Եթէ թագաւորին ամենախիստ հրամանները չըլլային , չլիտի կընայի զինքն արգիլել հետո ցամաք ելնելու :

— Այն քաջ Մօրթիմէ՞րն ալ եկաւ :

— Լորտ Տըտէյն ալ , տէ՛ր իմ՛ :

— Լորտ Տըտէյի համար զբաւ կը դնեմ որ միւսներուն չափ կատարի է :

— Ստոյգ է , տէ՛ր իմ՛ , լողալով զալ կ'ուզէր , ինչու որ նաւապետը նարաւորեալ էր իրեն մակոյլ չտալու :

— Այդպիսի բարեկամ մը հաւատարմութեան և ջուր սիրելու մասին ճշմարիտ շուն մ'է , ըսաւ մաքէն Գրուսթիյաք բաւական շփոթած :

— Ա՛հ , տէ՛ր իմ՛ , իսկ վա՛ղը :

— Է՛հ , ի՛նչ պիտի ըլլայ վաղը :

— Ի՛նչ գեղեցիկ օր մը պիտի ըլլայ ձեզի համար , տէ՛ր իմ՛ :

— Այո՛ , սքանչելի օր մը :

— Ա՛հ , տէ՛ր իմ՛ , ի՛նչ սրտաշարժ տեսակցութիւն , ի՛նչ վայրկեան թէ՛ ձեզի և թէ անոնց համար որ ա՛յնչափ անձնանուէր են ձեզ : Երանելի՛ , հաղար անգամ երանելի՛ են այն արքայազուներ որ ձախողութեան մէջ վերստին այսպիսի բարեկամներ կը դանեն :

— Այո՛ , տեսակցութիւնը խիստ սրտաշարժ պիտի ըլլայ , ըսաւ Գրուսթիյաք բարձր ձայնով : Յետոյ կամաց մը յարեց . Գետի՛նն անցնի այդ Մօրթիմէ՛րն ալ , ընկերներն ալ , ի՛նչպսո՛ւշ բարեկամներ են եղեր : Զիս պիտի ձանաչեն , և ես ալ , որ Պ. տըՇէմբոյի պետական զազանիքը զիտեմ հիմա , անպատճառ պիտի կորսուիմ :

— Այս քաջարի աւագանւոյն ներկայութիւնն ուրիշ նպատակ

մ'ալ ունի , յարեց Պ. տը Շէմբօ : Ձեր Բարձրութիւնը պետք է որ զիտնայ զայն :

— Ըսէ՛ք , պա՛րոն , կ'երեխի թէ այդ աղնիւ բարեկամներն ընտիր ընտիր խորհուրդներ յղանալու վրայ են :

— Իմ վեհապետ թագաւորը , ձեր հօրեղբայր թագաւորը զիտնալով ձեր արիւթիւնն ու հաստատման թիւնը , ինձ պատուիրեցին խօսք բանալ ձեզ ձեռնարկութեան մը մասին զոր հարկաւ պիտի ընդունիք :

— Խօսեցէ՛ք , պա՛րոն , խօսեցէ՛ք . սքանչելի՛ յայտնութիւններ :

— Նաւահանդիսոր կեցող Փրքաթիմիս մէջ ոչ միայն ձեր ամենէն անվեհեր կուսակիցները կը դանուին , տէ՛ր իմ՛ , այլ նաւը զէնքով և ուղմամթերքով լի է . Քօրնուայի ծովեղբայրները զործին տեղեակ կուսակիցներ պատրաստ կը դանուին . բոլոր այս կոմսութիւնը նշանի մը միայն կ'սպասէ ի նպատակ ձեզ ապստամբելու համար : Թո՛ղ Ձեր Բարձրութիւնը ցամաք ելնէ իւր կուսակցաց զլուսն անցած և ժողովրդեան ձեռք զէնք տայ : Խսկոյն շարժումը մինչև Անտրա պիտի տարածուի , յափշտակիչը զահընկէց պիտի ըլլայ , և թագը ձեր հօրեղբօր՝ թագաւորին պիտի յանձնէք :

— Այդ մասին շատ կարողեմ , և ստուգիւ ձեռնարկը սքանչելի է , բայց կընայ պատահիլ որ զործը ձախող ալ երթայ , և պետք է զիտնալ որ ամեն բանէ առաջ կուսակցացս կիւնքը և հօրեղբօրս ժողովրդոց փրկութիւնը շատ և շատ խնայելու պարտաւոր եմ :

— Ձեր Բարձրութեան վեհանձն բնաւորութիւնը ծանօթ է ինձ , սակայն ձախողութենէ վախնալու բան մը չունինք , ամեն բան պատրաստած է , մտքերը վրդովեալ են . եռանդաղին ընդունելութիւն մը պիտի գտնէք : Անտրայի ժողովուրդն զձեզ ա՛յնչափ մտոցած չէ , որ , կ'ըսեն , երբէ՛ք ձեր գլխատութեան հաւատալ չէ ուղած , թէն ներկայ գտնուեցաւ անոր : Ապրեցէ՛ք ուրեմն այն աղնիւ աղջին համար որ զձեզ չափազանց կը սիրէ , որ ձեզի համար այնքան դառն վիշտեր զղտայ , և ձեր զաւսեան կ'սպասէ իրբև իւր փրկութեան օրուան :

— Օ՛ն ուրեմն, այս ալ կ'ուզէ որ զլիսատուած ըլլամ, ըսաւ Քրուսթիյաք մտքէն. բայց միտէն աւելի բանաւորութեամբ կը վարուի, վասն զի նա սոյաննելի՛ ուզէր զիս յանուն այն վիշտերուն զոր մահս շատերուն պատճառած էր. դէթ սա յանուն սոյն այս վիշտերուն կը խնդրէ որ սպրիմ: Լաւագոյն կը համարիմ զայս:

— Վերջացէս, աէ՛ր իմ, կը մնայ մեզ Մարթինիբայէն առաջատար պարզել դէպ ի Քօրնուա, և եթէ՛ ինչպէս որ յայտնի կ'երևի՝ Անդղիոյ ժողովարգը յանուն ձեր ոտք ելնէ, իմ աւրս, թագաւորը մեծ զօրութեամբ պիտի օգնէ այս սպասամբութեան, որով սոյն շարժումը վճռական արգիւնք մը պիտի ունենայ:

— Ա՛հ, ա՛հ, սաստիկորդի, ըսաւ մտքէն Քրուսթիյաք, կը հասկընամ դիտաւորութիւնդ . . . : Թէև շատ խորունկ քաղաքադէտ մը չեմ, սակայն կարճ խելքովս կը գտնեմ որ երկուքնուս ալ աւելը եղող թագաւորն ինձ մով իւր թշնամոյն սուրը բռնկցընել կ'ուզէ . . . : Եթէ յաջողիմ, պիտի օգնէ ինձ, եթէ չյաջողիմ, պիտի թողու որ կորսուիմ . . . : Հոգ չէ, այս բանը զիս կը հրատարէ. փառաւորութիւնս կ'արթննայ . . . : Շուտիկը տանէր Վօրթիմէրնեքն ալ, Բօչէյնեքն ալ և միւս կատղած բարեկամներն ալ . . . : Եթէ այս անաւակները չըլլային, շատ հետաքրքիր էի տեսնել թէ ֆօլիֆէմար Քրուսթիյաք ինչպէս պիտի յեղափոխէր Քօրնուայը, ինչպէս զահընկէց պիտի ընէր Աիյօմ ա՛Օրանժը, ինչպէս սոյն զահըր վեհանձնութեամբ Յակոբ թագաւորին պիտի վերագարձընէր: Թէև չպիտի ցանկայի նստիլ այն զահը . . . : Հըմ . . . թերևս քիչ մը նստէի . . . տեսնելու համար թէ ինչպէս բան կ'ըլլայ . . . : Ա՛չ, ո՛չ, ֆօլիֆէմ, սյգ պիտի խորհուրդներ մի՛ յղանար, տո՛ւր այն ձերունայն իւր զահը . . . : Փօլիֆէմ, յանձնէ՛ իրեն իւր զահը . . . : Թօ՛ղայդ պէս ըլլայ, կը յանձնեմ, բայց ստուղիւ ժամանակէ մ'ի վեր տարօրինակ դէպքեր կը պատահին ինձ, և զիս հոս բերող Լէֆէնը թերևս կ'ախարհեալ նաւ մ'ըլլայ:

Ասպետը բարձրաձայն յարեց մատխոհ գէմքով մը.

— Գէթ խիստ ծանրակշիւ որոշում մ'է այս, պարոն. ստու-

դիւ շատ ըսելիք կայ ի նպատ . . . նոյնպէս շատ ըսելիք կայ ընդդէմ . . . : Բնաւ չեմ ուզեր չափէն աւելի ձգձգել զործը, բայց ապստամբութեան նշանը տալէ առաջ, կարծեմ, քաղաքականութիւնը կը պահանջէ որ աղէկ մտածուի ասոր վրայ:

— Տէ՛ր իմ, թողութիւն ըրէք ըսելու որ պարագաներն ստիպողական են, պէտք է գործելու փութալ. տիրոջս գաղտնի դիտումներն յայտնուեցան. Աիյօմ ա՛Օրանժ այնչափ կը վախնար զձեզ ապստամբութեան մը գլուխն անցած տեսնելէ, որ Բիթլէք գնդապետին՝ զձեզ մեռեալ կամ ողջ տանելու պաշտօն տուած էր: Տէ՛ր իմ, պէտք է որ շուտափոյթ և վճռական հարուած մը տանք, և այս ալ Քօրնուայի եզերայ կողմէն յանկարծ ցամաք ելնելով կրնայ ըլլալ: Գարձեալ կ'ըսեմ, աէ՛ր իմ, յանուն Յակոբ թագաւորին ըլլալիք այս շարժումն եռանդաղին ընդունելութիւն մը պիտի գտնէ, և Լուսովիկոս ԺԳ-ի ամենահզօր ազդիցութեամբը պիտի հաստատուի ձեր փառաւոր կերպով սկսելիք յեղափոխութիւնը. և Մեծին Բրիտանիոյ օրինաւոր թագաւորը ձեր շնորհիւ վերստին իւր զահըր պիտի բարձրանայ:

— Այդ անվրէպ կ'երևի ինձ . . . Եթէ իմ կուսակցութիւնս յաղթող ելնէ . . . :

— Պիտի ելնէ, աէ՛ր իմ, պիտի ելնէ . . . :

— Այո՛, բաւական է որ չյաղթուի . . . Եթէ յաղթուի և զիս ալ այս անգամ սպաննեն, այլ ևս վերստին կեանք չպիտի շնորհուի ինձ . . . : Այս խորհրդածութիւնը գձուձ ինքնամոլութեամբ չէ որ կ'ընեմ, պարոն. արդէն ինձ վերագրեալ իրողութեանց համեմատ կրնաք հասկընալ թէ ո՛րչափ վարժուած եմ մահուան, բայց . . . չեմ ուզեր որ կուսակցութիւնս որք մնայ . . . : Ասկէ դատ, մտածեցէք անգամ մը, պարոն. ինչ սոսկալի բան պիտի ըլլայ եթէ այն դժբաղդ երկիրը գարձեալ քաղաքային պատերազմի աղետիցը մատնուի. ա՛հ, Քրուսթիյաք ցաւաղին հառաջ մ'արձակեց:

— Անտարակոյս, աէ՛ր իմ, շատ ախտը բան մ'է այդ. բայց այս վաղանցուկ խուժութեանց խորին հանդարտութիւն մը պիտի

յաջորդէ . անտարակոյս , պատերազմի մէջ ձախողութեան հաւանս
կանուծիւն կայ , սակայն յաջողութեան ալ կայ . . . : Ասկէ
զատ , տէ՛ր իմ , զիտէ՛ք արդեօք ի՛նչ աստուայ կ'սպասէ ձեզ :
Յանձնելիք նամակներէօ պիտի տեսնէք որ Իրլանտայի և Սկովլ-
տիոյ փոխարքայութիւն պիտի արուի ձեզ , աւանց մի առ մի
թուելու այն բազմութիւ շնորհները զոր ձեզ կը վերապահեն իմ
տէրս և Յակոբ Սթուարթ , ձեր հօրեղբայրը , երբ սա բարձրա-
նայ այն դահը զոր ձեզ պիտի պարտի :

— Օ՛հ , զ՛հ , զ՛հ , Սկովտիոյ և Իրլանտայի փոխարքայու-
թիւն , ըսաւ Քրուսթիլյաք ինքնիրեն , ասոր հետ մէկտեղ կապոյտ
Մօրուքին ամուսին , ասկէ զատ՝ թագաւորի որդի և եղբորորդի
Քլլալս ալուրիչ . . . : Ա՛հ , Քրոսթիլյաք , Քրոսթիլյաք , շատ
աղէկ ըսի քեզ . . . աստղը կ'սկսի երևիլ . . . մե՛ղք որ ուրիշի
մը համար է : Բայց երթանք այսպէս և տեսնենք ծայրը ո՛ր
կը յանդի :

Պ . տը Շէմրօ , տեսնելով ասպետին վարանումը , վճռական
միջոց մը գործածեց , որպէս զի զայն ստիպէ երկու թագաւորաց
դիտուածներուն համեմատ վարուելու , և ըսաւ անոր .

— Տէ՛ր իմ , վերջին ըսելիք մ'ալ ունիմ ձեզ . . . թէ և շատ
ծանր պիտի թուի ձեզ . . . սակայն տիրոջս հրամանացը հնա-
զանգեւելու պարտաւոր եմ :

— Ըսէ՛ք , պա՛րոն . . . :

— Գրեթէ անկարելի է ձեզ , տէ՛ր իմ , ասպետութեան
գլուխը չանցնիլ . . . ձեռքերնիդ և ոտքերնիդ կապուած են :

— Ի՛նչ , ձեռքերս և ոտքերս կապուած են :

— Ա՛յո՛ , տէ՛ր իմ , փոխաբերութիւն մ'է այս . . . :

— Շատ լաւ , պա՛րոն , հասկըցայ ի՛նչ ըսել ուղերնիդ . ձեր
տէրը զիս իւր զիտուածներուն համեմատ շարժելու հարկին մէջ
գրեք է , այնպէս չէ՛ :

— Ձեր սովորական սրամտութիւնը չէր կրնար զձեզ խաբել ,
տէ՛ր իմ : Եթէ պատահի որ հարկ չհամարիք հետեւիլ տիրոջս
խրատներուն , եթէ պատահի որ այսպիսի ընթացքով մը վեհափառ

Յակոբ թագաւորին ցոյց տաք թէ՛ չէ՛ք ուղեր իրեն մոտցնելու
ցաւալի և տխուր յիշատակներ , ձեր անձը իւր դատին նուիրե-
լով , ինչպէս որ կը յուսայ . . . :

— Ե՛տքը , պա՛րոն , ըսաւ բաղախնդիրը բաւական մտահո-
գութեամբ , ինչու որ Պ . տը Շէմրօ թղթին միւս երեսը կարդա-
լու վրայ էր :

— Ետքը , տէ՛ր իմ , տէրս՝ թագաւորը՝ պետական նկատում
ներէ շարժեալ , պիտի պարտաւորի , թէ և ցաւօք սրտի , աղատու-
թիւնէ զրկել ձեր անձը . . . : Ահա այս է զինուորներով պալուս
պատճառը . . . :

— Պա՛րոն . . . բռնութիւն պիտի բանեցընէք . . . :

— Գժբաղաբար , տէ՛ր իմ , ընդունած հրամաններս ինչստ
որոշեն . . . : Բայց կանխաւ աներկրայ եմ որ Ձեր Բարձրու-
թիւնը զիս չպիտի ստիպէ զանոնք ի գործ դնելու . . . :

Այս սպառնալիքը մտմտուք պատճառեց Քրուսթիլյաքի : Պ .
տը Շէմրօ շարունակեց .

— Այս ալ պարտիմ ըսել , տէ՛ր իմ , որ ըստ պահանջման խո-
հեմութեան (ի նկատի առնելով ձեր զլխատութիւնը) հարկ ըլլա-
լով որ այսուհետեւ երեսնիդ մարդ չտեսնէ , գէմքերնիդ գիմակով
մը պիտի ծածկուի , զոր երբէք չպիտի թողուք : Աերջայէս՝
Նորին Աւհափառութեան հրամանին համեմատ , պատիւ պիտի
ունենամ զձեզ ուղղակի Սէնթ-Մարկրիթ կղզիները տանելու , ուր
յաւիտեան բանտարկեալ պիտի մնաք . . . : Ձեզ կը թողում երե-
ւակայիլ ձեր կուսակցաց վիշտերը , որք հոս եկած են այն յուսով
թէ իսկոյն զձեզ պիտի տեսնեն վերստին իրենց զլուխն անցած :

Քրուսթիլյաք՝ խորունկ խորունկ մտածող և ներհակ մտած-
մանց դէմ ներբուստ մաքառող մարդու մը գրից մէջ երկար ատեն
կենալէ ետեւ , գոռոզութեամբ գլուխը բարձրացուց և Պ . տը
Շէմրօյի ըսաւ վեհաբար .

— Մտածեցի , պա՛րոն , և կ'ընդունիմ Իրլանտայի և Սկովտիոյ
փոխարքայութիւնը , խօսք կու տամ ձեզ . Սակայն մի՛ կարծէք թէ
զիս այսպէս վարուելու ստիպողը մշտնջենաւոր բանտարկութեան

մը երկխոյն է : Ա՛չ, պարոն , ո՛չ : Այլ հասուն խորհրդածու-
թեամբ համոզուեցայ որ՝ եթէ ձեռքերնին ինձ երկընդնող հա-
րատահարեալ ժողովրդոց իղձերուն չհետեիմ . . . և անոնց պաշտ-
պանութեանը համար սուրս չքաշեմ, մեղապարտ պիտի ըլլամ,
յարեց բաղդախնդիրը զիցաղնական եղանակաւ :

— Քանի որ այսպէս է, տէ՛ր իմ, դոչեց Պ. տը Շէմբո,
կեցցէ՛ Յակոբ թագաւորը և բարձրապատիւ դուքսն Վօնմութ,
կեցցէ՛ Սկովտիոյ և Իրլանտայի թագաւորը :

— Կ'ընդունիմ ձեր բարեմաղթութիւնը, պատասխանեց ասպե-
տը ծանրութեամբ, և կամաց մը յարեց . Ինչ կեղծաւոր սատանայ
մ'է, միւսն աւելի հաճոյ կը թուէր ինձ իւր անտանելի դաշոյ-
նոցն հանդերձ . . . : Գործը շատ արուեստաւ . . . : Հոլան-
տացիին հետ իբր կալանաւոր Լոնտրայի աշտարակն երթալը զիւ-
րին բան մ'էր . . . մինչդեռ հիմա՝ Փրքաթօնին մէջ ինձ սպա-
սող կատաղի կուսակիցներս անհասարկն շփոթութեան մէջ կը ձղեն
զիս . թերևս վաղն ամեն բան յայտնուի . . . : Բայց Կապոյտ-
Վօրո՞ւքը, ես կարծէի թէ զինքը Գիւարնակ-Բլուրէն առնելու
զալովս խորամանկութիւն մ'ի գործ դրի . . . : Տէ՛ր Աս-
է-ուած, ինչ պիտի ըլլայ ասոնց հետեանքը . բէ՛հ, ըլլալիքը սա
է որ կամ պիտի բանտարկուիմ . . . կամ պիտի կախուիմ . . . :
Քանտարկութենէն կրնամ աղագայ մ'ունենալ . . . իսկ կախուիլն
ակնթարթ մ'է . . . յօրանջում մ'է . . . : Օ՛ն ուրեմն, Քրո՛ւս-
թիյաք, վատութիւն պէտք չէ . ասոր փոխարէն դու ալ ծաղրէ՛
այդ մարդիկը, և զբօսանք մ'ըրէ այս տարօրինակ արկածները
զոր սատանան կը զրկէ քեզ . . . : Հոգ չէ . . . դետի'նն անց-
նին կուսակիցներս : Եթէ ասոնք չըլլային, աւելի աղէկ պիտի
ըլլար . . . : Կրնա՞նք արդեօք այս մարդիկը ձամբելու միջոց
մը գտնել . . . որ երթան ուրիշ տեղ սիրեն զիս :

— Ըսէ՛ք ինձ, պարոն, յարեց բարձրաձայն, նաուն մէջ կու՞
սակիցներս շատ են :

— Տասնմէկ հոգի են, տէ՛ր իմ :

— Ըսե՛լէ որ կընեղուիք, անոնք ալ հանդիստ չըլլալու են . . . :

— Զինուոր են, տէ՛ր իմ, հետեաբար՝ բանակներու մէջ մեծ
նեղութեամբ կեանք անցընելու վարժուած են . ասկէ զատ՝ իրենց
առաջագրած նպատակն ա՛յնքան կարևոր և ա՛յնքան փառատոր է,
որ այդ նեղութիւններն իրենց աչքին չեն երևիր, և զձեզ տես-
նելուն պէս բոլորովին պիտի մոռնան զանոնք . . . :

— Լաւ, բայց կարելի չէ՞ ուրիշ տեղ մը տեղաւորել զանոնք .
. . . ուրիշ նաւ մը յատկացընել իրենց ուր շատ աւելի հանդիստ
պիտի ըլլան, մինչդեռ ես և կինս Փրքաթօնին մէջ կը պարտուինք
. . . : Ասկէ զատ՝ մի միայն Անգլիա ելած ասեննիս ինքզինքս
այն սիրելի և աղնիւ բարեկամաց պիտի յայտնեմ, որուն պատ-
ճառն իմ զիտնալու բանս է :

— Անկարելի է, տէ՛ր իմ : Որ նաւն որ մանէք, ձեր բա-
րեկամներն անոր յարկին վրայ պիտի պառկին վերարկունքնուն
մէջ փաթթուած :

— Այս աստիճան անձնանուիրութիւն աղղելն ալ յուսահատա-
կան բան է, ըսաւ Քրոսթիյաք ինքնիրեն : Ուրեմն ա՛լ չ'տածենք
ասոր վրայ, ըսաւ բարձր, այսքան հաւատարիմ կուսակցաց սիր-
տը կոտորելը մեծ վիշտ պիտի ըլլայ ինձ : Բայց ինչ տեսակ բնա-
կարան պիտի տաք մեզ, ինձ և կնոջս համար :

— Ձեր բնակարանը շատ համեստ պիտի ըլլայ, տէ՛ր իմ,
սակայն Ձեր Բարձրութիւնը՝ ի նկատի առնելով պարագայից սակ-
պողականութիւնը, ներողամտ պիտի հանդիսանայ : Ասկէ զատ՝
Ձեր Բարձրութեան Վօնմութ գրքուհոյն վրայ ունեցած սէրը,
յարեց Պ. տը Շէմբո ժպտելով, անշուշտ մոռցընել պիտի տայ
ձեզ բնակարանին փոքրութիւնը, որ նաւապետին սենեակն է միայն :

Այս խօսքին վրայ բաղդախնդիրն ա՛լ չ'կրցաւ ծիծաղը բռնել,
և յարեց .

— Այդ սենեակը կը բաւէ մեզ, պարոն :

— Ուրեմն Ձեր Բարձրութիւնը հաստատապէս որոշած է
տիկիներ հետը տանելու :

— Անպատճառ, պարոն : Երբ Բիւթէր գնդապետին կալա-
նաւորն էի, երբ թերևս կորստեան գատապարտեալ էի, հարկ ե-

եղաւ որ այս վտանգները կնոջ չիմացընեմ և զինքը թողում:

— Ուրեմն Կ. քսուհին չէ՞ր գիտեր . . . :

— Բան մը չէր գիտեր, պարոն . . . Խեղճը բան մը չէր գիտեր . . . : Երբ Բիւթլէր գնդապետը յանկարծ վրաս յարձակեցաւ, ինքը կը քնանար. Գիւարնակ-Բլուրէն մեկնած ատենս իրեն իմացընել տուի թէ բացակայութիւնս մէկ կամ երկու օր պիտի տևէ . . . : Բայց պարապաները յանկարծ փոխուեցան: Այն վտանգները՝ որոց հիմա ենթակայ կ'ըլլամ, ամուլ չեն: Աինս կը ճանաչեմ, պարոն. փառք ըլլայ, կորուստ ըլլայ, մաւնակցել պիտի ուզէ. հետս տանելու համար զինքն առնելու երթալովս, իւր ամենէն ջերմ բաղձանքը կատարած կ'ըլլամ:

ԳԼՈՒԽ ՔԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Ջ Ա Ր Մ Ա Ն Գ

Պահ մը Պ. տը Շէմրօ և Քրուսթիյաք լուծեամբ ճամբանին շարունակեցին՝ գէպ ի Գիւարնակ-Բլուրը: Շատ չանցաւ խումբը ժայռին բարձունքը հասաւ, ուրկէ հեռուն կը տեսնուէր Ապոյոտ-Մօրուքի բնակարանին տանիքը և բոլորտիքի պատերը:

Պ. տը Շէմրօ՝ տեսնելով որ շէնքն ամրոցի պէս բան մ'է, ասպետին ըսաւ.

— Տէ՛ր իմ, հետաքրքիր մարդիկը չմտեցընելու համար շատ աղէկ ընտրեր էք այս առանձնարանը. թողունք որ ձեր ծառայութեան մէջ գտնուող երեք չարաձճիներու միջոցաւ տարածած զրոյցներնիդ մեծ քաջալերութիւն մը չէին տար այցելուաց:

— Անշուշտ, ցլորսին, ծովասպատակին և Քարայիպին համար

կ'ըսէք, պարոն, այնպէս չէ:

— Այո՛, տէ՛ր իմ, կ'ըսեն թէ այս մարդիկը միշտ պատրաստ են անձերնին ձեզի համար զոհելու:

— Ստուգիւ, պարոն, խիստ տարօրինակ կերպով հետս կապուած են:

— Այսու ամենայնիւ, ըսաւ Քրուսթիյաք ինքնիրեն, տակաւին չգիտեմ թէ այս երեք չուառականներն ինչ իրաւամբ դքսուհւոյն մտերմութիւնը կը վայելեն, և ոչալ մանաւանդ թէ ինչպէս իւր ամուսին բարձրապատիւ Մօնմութ գուքսը կը հանդուրժէ որ այնպիսի աւազակներ այսչափ անշուքը ընտանութիւն մ'ունենան իւր կնոջը հետ, մինչև անգամ զայն դրկեն . . . : Մանաւանդ Քարայիպը, որ աւանակի մը լուրջ գէմբը կը կրէ, երբ զայն քերցուց կը քերեն, ամենէն աւելի ջիւերուս կը դպչի. . . : Գարձեալ կ'ըսեմ, ինչպէս Մօնմութ գուքսը թոյլ կու տայ որ իւր կնոջը հետ այսչափ սերտ յարաբերութիւններ ունենան . . . :

Անշուշտ այս միջոցը ամենուն շփոթութիւն կը պատճառէ . . . շխտալու բաները աչքէ կը ծածկէ . . . բայց կարծեմ թէ այս աստիճան ալ շլորնար ըլլալ . . . : Ա՛հ, Քրուսթիյաք, սէրդ փոխանակ պակսեցընելու, հետզհետէ կը սաստկանայ . . . մանաւանդ նախանձն է որ զքեզ դրդուէ այս աւազակներուն դէմ . . . : Օ՛ն, զաղտնիք մ'ալ կայ զօրյոսամ թէ հիմա պիտի կրնամ հասկընալ . . . : Առայժմ սա հասկընալու ջանանք թէ իշխանին Գիւարնակ-Բլուրը պահուած ըլլալն ինչպէս կրցեր են իմանալ:

— Պարոն, ըսաւ Քրուսթիյաք Պ. տը Շէմրօյի, ձեզ ընելք խիստ կարեոր հարցում մ'ունիմ:

— Ունկնդիր եմ, տէ՛ր իմ . . . :

— Եթէ ձեր ստացած հրամանները կը ներեն ձեզ պատասխանել, ըսէ՛ք ինձ. Աւրսայլի մէջ ինչպէս իմացուեցաւ թէ ես Մարթինիքայի մէջ ինքզինքս պահած եմ:

Պահ մը լուռ կենայէ ետև՝ Պ. տը Շէմրօ պատասխանեց.

— Եթէ իմացընեմ ձեզ ինչ որ կը փափաքիք գիտնալ, պետական գաղտնիք մը յայտնած չեմ ըլլար . . . ոչ թաղաւորը, ոչ իւր

պաշտօնեաներն այդ մասին բան մը յայտնած չեն ինձ . ո՛չ, տէ՛ր իմ, պարագայ մը՝ զոր խիստ երկար կ'ըլլայ պատմել Հոս, պատճառ եղաւ որ ինէ պահելու զածնին կրցայ իմանալ . կը յուսամ որ այս մասին ըսելիքս ձեր քովը պիտի մնայ :

— Ապահով եղիք, պա՛րոն :

— Նախ, տէ՛ր իմ, եթէ գիտցածս ճիշդ է . . . Մարթի նիքայի վերջին կուսակալ հանդուցեալ Պ. Քրիստոսասպետը Հոլանտայի մէջ ճանչցած է զձեզ, ուր իւր կեանքն աղատած էք . . . Սէն-Բրնիի ճակատամարտին ժամանակ, ուր Սթամբուտէրի* բանակին մէջ Սիւլտանական զօրաբաժնի մը հրամանատարութիւնը կ'ընէիք, մինչդեռ Քրիստոսասպետը Լիւքսէնպուրկի մարաշխատին բանակին մէջ կը ծառայէր :

— Ըսածնիդ ամեն մասամբ ստոյգ է, ըսաւ Քրուսթիյաք կատարեալ անտարբերութեամբ : Հարունակեցէ՛ք :

— Ասկէ զատ՝ եթէ գիտցածս ճիշդ է, հանդուցեալ Քրիստոսասպետը պարագայից բերմամբը կողոյս կուսակալ կարգուելով, և Ապոլոյա-Մօրուք մականուանեալ դեռահաս այրի կնոջ մը գաղտնածածուկ գոյութեանը վրայ տեղեկութիւն ստանալը պարտ համարելով Գիւարնակ-Բլուրը գնաց, բնաւ չգիտնալով ձեր հոն ապաստանած ըլլալը . . . :

— Այդ ալ ստոյգ է, պա՛րոն, բացէ ի բաց կ'ըսեմ, ինչպէս որ կը տեսնէք . . . ըսաւ Քրուսթիյաք որ գաղտնիքը քիչ քիչ իմանալուն վրայ չափազանց կ'ուրախանար :

— Աւերջապէս, տէ՛ր իմ, այս ալ ճշմարիտ կ'երևի թէ հանդուցեալ Պ. Քրիստոս տեսնելով որ գուք իւր կեանքն աղատող իշխանն էք, երդում ըրաւ ձեզ որ մարդու բան մը չյայտնէ . . . :

— Ստուգիւ, պա՛րոն, երդում ըրաւ . . . սակայն եթէ կայ բան մը որ ինձ զարմանք կը պատճառէ, այս է թէ՛ այսչափ քարի մարդ մը ինչպէս իւր խօսքը չըռնեց, ըսաւ Աստօնն անաչառութեամբ :

* Աստիտի հին հանրապետութեան Հոլանտայի :

— Մի աճապարէք մեզ պարել զպարոն Քրիստոս, տէ՛ր իմ :

— Ուրեմն կ'առկախեմ գառաստանս, պա՛րոն :

— Արդէն գիտէք, տէ՛ր իմ, որ Պ. Քրիստոսէն առելի բարեպաշտ մարդ քիչ գտնուած է, այնպէս չէ՞ :

— Իւր բարեպաշտութիւնն առած մ'եղած էր, պա՛րոն, և ահա ասոր համար է որ իւր խօսքը չըռնելը զարմանք կը պատճառէ ինձ :

— Տէ՛ր իմ, երբ Պ. Քրիստոսասպետը մահուան կը մօտենար, այս աստիճան կարեորութիւն մ'ունեցող պետական գաղտնիք մը իւր տիրոջը՝ թագաւորին՝ յայտնած չըլլալը խղճին խոյթ մ'եղաւ . ուստի բոլոր ճշմարտութիւնը վերապատուելի հայր Արիֆօնի խոստովանեցաւ :

— Այդ ամենը գիտեմ, պա՛րոն . . . ուրիշ տեղեկութեանց նայինք, ըսաւ Քրուսթիյաք, որ չէր ուզեր նշմարել տալ այն բուն հեռաքրքրութիւնը որով ունկնդիր կ'ըլլար Պ. տը Հէմբուրի :

— Միայն յիշելու համար է որ, տէ՛ր իմ, այս նախընթաց պարագայից վրայ կը խօսիմ : Հիմա կ'սկսիմ տեղեկութիւններ տալ ինչ ինչ մասնաորութեանց վրայ որք, կարծեմ, Ձեր Բարձրութեան ծանօթ չեն : Պ. Քրիստոսասպետը մեռնելու միջոցին, ուղեւորով որ կարելի եղածին չափ շարունակէ այն պաշտպանութիւնը զոր իւր կենդանութեան աստե՛ն ձեր վրայէն սակաս ըրած չէր, և վախնալով որ մի գուցէ իւր յաջորդը նոր քննութիւն մը բանայ Գիւարնակ-Բլուրին խորհրդածածուկ բնակչաց գէմ, Պ. Քրիստոս, կ'ըսեմ, նամակ մը գրեց ներկայ կուսակալին, որ այն օրերն անպատճառ կ'ստասուէր : Այս նամակին մէջ թէ՛ իւր և թէ՛ հայր Արիֆօնի երաշխաւորութեամբը կուսակալը կ'ապահովէր թէ՛ բնաւ պետք չէ Ասպոլոյա-Մօրուքի վրայ կասկածի երթալ և ոչալ նեղութիւն տալ անոր : Աւերջապէս, տէ՛ր իմ, եթէ այս ալ ստոյգ է, Պ. տը Քրիստոս ձեզ իմաց տուեր է թէ՛ իւր խղճին հանդարտութեանը համար ամեն բան խոստովանաբար հայր Արիֆօնի յայտնելու հարկադրուեր է, և չկարծեր թէ իւր

խոստումը դրժած ըլլայ :

— Եթէ այդպէս է , պարոն , այդ խեղճ կուսակալը իւր կենաց մինչև վերջին օրն այնպէս մնացեր է ինչպէս որ դիակէի զինքը , կրօնասէր և բարեփրտ ազնուական մը , ըսաւ Քրուսթի-յաք յուզեալ ձայնովմը . բայց հիմա կրնա՞նք ամբաստանել զՏայր Արիֆօն թէ սրբասլիղծ անխորհրդապահութիւն մ'ըրած է . . . : Գծնդակ բան է այս . դիւրաւ չսլիտի կրնամ ըսել թէ քահա-նայն այս բանն ըրած է , պարոն . . . :

Պահ մը լուռ կենալէ ետև՝ Պ. տը Շէմրօ ըսաւ բազմա-ինդրին .

— Տէ՛ր իմ , թունաւոր շիզ (թօղա) ըսուած խաղը գիտե՞ք : Կասքօնը զարմանօք Պ. տը Շէմրօյի երեսը նայեցաւ :

— Կատա՞կ կ'ընէք , պարոն :

— Քա՛ւ լիցի , տէ՛ր իմ , ըսաւ Գաղղիոյ նուիրակը խոնար-հերով :

— Ուրեմն ի՞նչ ըսել կ'ուզէք :

— Ներեցէ՛ք , տէ՛ր իմ , որ այս խաղին ինչ ըլլալը հասկը-ցընեմ ձեզ , և այս օրինակին միջոցաւ թերևս կարենամ սոյն սե-տական գաղտնիքին զխոռն եկածը բացատրել Ձեր Բարձրութեան :

— Տեսնե՛նք , պարոն , ի՞նչ է այդ օրինակը :

— Լաւ ուրեմն , տէ՛ր իմ , թունաւոր շիզը ըսուած խաղն այս է . այր և կին մէկտեղ գալով շրջանակ մը կը կազմեն . ասոնց մէջէն մէկը իւր բաձկոնին շիզերէն մէկը կը հանէ , և խնդիրը զայն կարելի եղածին չափ ճարտարութեամբ և արպուութեամբ իւր քովինին զրպանը մտցընելուն վրայ է , վասն զի շիզը ուրուն քով որ դանուի՝ պատիժ կը կրէ :

— Հատ լաւ , պարոն , ըսաւ Կասքօնը , այս խաղին մէջի ճարտարութիւնն այս է որ կարելի եղածին չափ յաջողակութեամբ շիզը իւր քովէն ուրիշի անցընելու է :

— Ճիշդ այդ է , տէ՛ր իմ :

— Սակայն չեմ հասկընար թէ ինձ վերաբերեալ պետական գաղտնիքն այդ խաղին հետ ի՞նչ վերաբերութիւն կրնայ ունենալ :

— Ներեցէ՛ք , տէ՛ր իմ : Կը գտնուին այնպիսի երկիւղած և փափուկ խճի տէր անձինք , որոց երբ մէկը գաղտնիք մը յայտնէ կամ խոստովանութիւն մ'ընէ , նոյն բանը կ'ըզան ինչոր այս խա-ղին մէջ շիզին տէրը կ'զայ . այսպիսի խիճ ունեցողները կրնա-յին որ գաղտնիքն իրենց մօտը գտնուող մէկուն խճին վրայ բեռ-ցընեն , որպէս զի իրենք պատասխանատուութենէն ազատ ըլլան :

— Հատ լաւ , պարոն , հիմա կ'ըմբռնեմ ձեր մէջ բերած օրի-նակին իմաստը . հաւանական է որ այն խեղճ Քրիստը ասպետին խոստովանութեան հետ թունաւոր շիզը խաղացեր են :

— Ճիշդ եղածն ալ այդ է , տէ՛ր իմ : Հայր Արիֆօն իրեն յայտնուած պետական ամենակարեւոր գաղտնիքի մը պատճառաւ անհնարին շիթութեան մէջ ինկած էր . եթէ լուռ կենար , կը վախնար որ իւր վեհասպետին դէմ մեղանչած կ'ըլլայ . եթէ յայտ-նէր , կը վախնար որ խոստովանութիւն մը երևան հանած և ձեք կորստեանը պատճառ կ'ըլլայ : Երկու սուրի մէջտեղը մնացած , ու-զելով իւր խիղճը հանգարտեցընել , որոշեց որ Գաղղիա երթայ , ամեն բան իւր կարգին ընդհանրական արբային խոստովանի , և ասով պատասխանատուութեան ծանրութիւնն անոր խիճին վրայ բեռցընէ :

— Հիմա շատ աղէկ հասկըցայ , պարոն , ձեր օրինակին նմանութիւնը . Սակայն՝ որովհետեւ գաղտնիքը հրապարակ ելած է , անչուտ այդ խաղին մէջ մէկը խարդախութիւն ըրած է :

— Հատ աղէկ գիտեմ , տէ՛ր իմ , որ քանի մ'ամիս առաջ հայր Արիֆօն ըսա իւր որոշման Գաղղիա եկաւ և ամեն բան յայտնեց . . . իւր կարգին ընդհանրական արբային . այն ատեն սա՛՛ ամեն պատասխանատուութիւն իւր վրայ առնելով , հայր Արի-ֆօնի խիղճը հանգարտեցուց պատուիրելով անոր որ գաղտնիքը բնաւ երբէք մէկու մը չյայտնէ :

— Ուրեմն արբան որի՞ քշեր է շիզը , ըսաւ Կասքօնը , որ այս պատմութենէն շատ կը զուարճանար :

— Ձեր Բարձրութեան պատասխանելէ առաջ պարտք կը համարեմ ըսել որ տօն Սանչ , ընդհանրական արբայն , որչափ ալ արտա-

քուստ խիստ սրբակրօն մէկը կ'երևի, չափազանց փառասէր ան-
մ'է, խարդաւանելու մէջ անոր հաւատարող քիչ մարդ կը գտնուի,
ամենուն պատկառելի և յարգելի եղած բանն ինք անլուր յան-
դդնութեամբ իրեն խաղալիք ու գործիք կ'ընէ: Սոյն կարևոր
խոստովանութիւնն ստանալուն պէս, խոստովանութիւն մը զոր
հայր Արիֆօն իւր խղճին հանդարտութեանը համար բրած էր
անոր, իբրև իւր մեծաւորին, տօն Սանշ այս գաղտնիքը գործիք
մ'ընել ուղեց աւելի բարձր աստիճանի մը հասնելու համար:
Խիստ մտերմական յարաբերութիւն մ'ունենալով վեհափառ Յակոբ
Թաղաւորին խոստովանահայր Պրիար քահանային հետ, որ խորա-
ղէտ ճիղճիթ մ'է և Անդղիոյ մէջ կուսակցութեանց վիճակը քաջ
գիտէ, օր մը տօն Սանշ խօսակցութիւնը այս երկրին վիճակին
վրայ բերաւ և հայր Պրիարի հարցուց թէ՝

«— Եթէ դուք դեռ կենդանի ըլլայիք, տէ՛ր իմ, շատ հա-
ւանական չէ՞ր որ Սթիւարթաց կուսակիցները դումարէիք և Օ-
րանթի իշխանին դէմ շարժման մը գլուխն անցնէիք:» Հայր Պրի-
ար տօն Սանշի պատասխանեց թէ՝

«— Եթէ դուք կենդանի ըլլայիք, ձեր աղբեցութիւնն ան-
հուն պիտի ըլլար երբ անկեղծութեամբ ինքզինքնիդ Յակոբ Թա-
ղաւորին դատը պաշտպատելու նուիրէիք. այս իշխանը շատ կ'ող-
բար ձեր մահուան վրայ, մտածելով որ կրնայիք մեծ ծառայու-
թիւններ ընել Սթիւարթաց գատին:» Ասկէ կրնաք հասկընալ,
տէ՛ր իմ, թէ տօն Սանշ ո՛րչափ ուրախացաւ. . . խոստովանու-
թեան գաղտնիքը երևան հանեց, և ձեր կենդանի ըլլալը յայտ-
նուեցաւ:

— Բայց ո՛րչափ անագործն մարդ մ'է եղեր այդ տօն Սանշ
ըսածնիդ, գուցեք Գրուսթիյաք:

— Անշուշա, տէ՛ր իմ, սակայն կարգինալութեան ատոմանին
կը ցանկար. և եթէ ձեր հօրեղբայր Յակոբ Թաղաւորը Անդղիոյ
գահը բարձրանայ, տօն Սանշ՝ իբր առաջին պատճառ ձեռնար-
կութեան՝ կարգինալ պիտի ըլլայ: Հարկ չկայ ըսելու որ, տէ՛ր
իմ, հայր Պրիար գաղտնիքն իմանալուն պէս իւր վեհափառ Խոս-

տովանորդոյն քով պարծանօք խօսեցաւ այս մասին, և ձեռք առ-
նուելիք միջոցները Լուտովիկոս ԹԻԻ և Յակոբ Սթիւարթի մէջ
կարգադրուեցան:

— Հիմա պարզուեցաւ գործը, ըսաւ ինքնիրեն Գրուսթիյաք:
Այլ ևս չեմ զարմանար թէ ինչու հայր Արիֆօն չէր ուղեր որ
Գիւարնակ-Բլուրը երթամ: Ինք այս տան բոլոր գաղտնիքը գիտ-
նալով, անշուշտ լրտես կը կարծէր զիս. հիմա կը հասկընամ նաև
այն հարցումներուն պատճառը, որոյ մովնաւուն մէջ կը նեղէր զիս,
և որք խիստ անհեղեղ կը թուէին ինձ:

Պ. տը Շէմբօ կարծելով որ Գրուսթիյաքի լուծիւնը սոյն
յայտնութեան իրեն պատճառած խորին զարմանքէն յառաջ եկած
է, ըսաւ անոր.

— Տէ՛ր իմ, հիմա ամեն բան սկսաւ մեկին և որոշ կերպով
ներկայանալ ձեր աչաց: Անտարակոյս՝ ձեռնարկութեան պատրաս-
տութիւններն այն աստիճան ծածուկ եղած շփտի ըլլան որ Աի-
յօմ տ'Օրանթ շլարեհար իմանալ իւր լրտեսներուն շնորհիւ, որք
Վէրսայլի գահընթին, և մինչև իսկ Սէն-Թէրմանի փորրիկ արբու-
նեաց մէջ մուտ կը գտնեն: Յափշտակիչը՝ բոլորովին Ձեր Բարձ-
րութեան վրայ հանդուգ առաջադրութիւններն ի դերև հանելու
համար, Բիւթլէր զնգապետին յանձնեց այն պաշտօնը որ քիչ մնաց
աղէտալի հետևանք մը պիտի ունենար ձեզ համար: Այս ամեն
բաներուն մէջ կրնաք տեսնել որ հայր Արիֆօն բոլորովին ան-
պարտ է. իւր խոստովանարար յայտնած մէկ գաղտնիքը սրբա-
պղծութեամբ երևան հանեցին. այսու ամենայնիւ, տէ՛ր իմ, նե-
րողամիտ պէտք է ըլլաք, վասն զի զՅակոբ Սթիւարթ Անդղիոյ
գահուն վրայ վերահաստատելու փառքն այս յայտնութեան շնոր-
հիւ պիտի ստանաք օր մը:

Թէպէտ այս յայտնութիւնը բաղդախնդրին հետաքրքրութիւնը
գոհ ըրաւ, սակայն յետոյ զըջաց այսպիսի գաղտնիք մը երևան
հանել տալուն վրայ, եթէ իւր ո՛վ ըլլալն իմացուէր, անտարա-
կոյս շատ սուղի պիտի նստեցընէին իրեն պետական այսպիսի
գաղտնիք մը կորզելը, թէև ակամայ. սակայն Գրուսթիյաք չէր

կրնար ետ դառնալ, բռնած վտանգաւոր ճամբուն մէջ յարաջ երթալէն ուրիշ ճար չլար: Խումբը Գիւարնակ-Բլուրի տան պատերուն ստորոտը դանուող սարահարթը հասաւ: Որոշուեցաւ որ Բիւթլէր այնպէս կաշկանդուած գուրը մնայ, և վեց զինուորսու երկու ծովաստիք Պ. տը Շէմրոյի և Քրուսթիյաքի ընկերանան: Երբ պատին տակը հասան, Ասաբօնը գոչեց համարձակ.

— Գերիներէն ո՛վ կայ հոն:

Քանի մը վայրկեան սպասելէ ետեւ սանդուղէն վար իջան: Բաղդախնդիրը և Պ. տը Շէմրօ իրենց մարդերովը տունը մտան. Միրէթ բացաւ կամարակապ դուռը, ուր Ասպոյտ-Մօրուքը կը բնակէր մասնաւորապէս: Ասպետը խնդրեց Պ. տը Շէմրօյէն որ վեց զինուորացի հրամայէ կամարին գրտի կողմը կենալու: Միրէթ՝ որուն ինչ ընելիքը, ինչ ըսելիքը և ինչ պատասխանելիքը իւր տիրուհին առաջուց պատուիրած էր իրեն, Ասաբօնը տեսնելով՝ աղչած երեւեցաւ և գոչեց:

— Ա՛հ, տէ՛ր իմ:

— Չէ՛րի սպասեր ինձ. հայր Արիֆօնն ո՛ւր է:

— Բայց ստուգիւ գո՛ւք էք, տէ՛ր իմ:

— Ստուգիւ ես եմ, բայց ո՛ւր է հայր Արիֆօնը:

— Տիկինը քիչ մ'առաջ իմանալով ձեր մի քանի օրուան համար մեկնիլը, ինձ հրամայեց որ բնաւ մարդ ներս չմտցընեմ:

— Բայց վերապատուելին որ հիմա իմ կողմէս հոս եկաւ . . . չտեսա՞ւ տիրուհիդ:

— Ո՛չ, տէ՛ր իմ, որովհետեւ տիկինն ինձ պատուիրած էր որ մարդ ներս չթողումանեմ, վերապատուելի հայրն արտաքին շէնքերուն մէկ սենեակը տարին:

— Ըսել է որ տիրուհիդ բնաւ վերադարձին չըսպասեր:

— Ո՛չ, տէ՛ր իմ, բայց . . .

— Լաւ, թո՛ղ մեղ:

— Բայց, տէ՛ր իմ, պէտք է որ երթամ տիկինը իմացընեմ. . .

— Ո՛չ, հարկ չկայ. ե՛ս կ'երթամ, ըսաւ Ասաբօնը՝ Միրէթի առջևէն անցնելով և զէս ի սրահակը երթալով:

— Հիմա, տէ՛ր իմ, բերկրառիթ զարմանք մը պիտի պատճառէք տիկինը, որ ձեր այսչափ շուտով վերադառնալուն չէր սպասեր, և հետեւաբար իւր վիշտերը մեծ ուրախութեան պիտի փոխէք, ըսաւ Պ. տը Շէմրօ, որովհետեւ հայր Արիֆօն չկրցաւ մինչև տիկինը քովը երթալ:

— Միշտ այսպէս է . . . խեղճ կինը, ըսաւ Քրուսթիյաք զորովանօք: Երբ բացակայ ըլլամ, բոլորովին կ'առանձնանայ և բնաւ չուզեր մարդու երես տեսնել. . . մինչև անգամ այս բարի կրօնաւորն ալ կը մերժէ. որչափ քիչ ժամանակի մը համար ալ քովէն հեռանամ, բացակայութիւնս իրեն վիշտ, կսկիծ կը պատճառէ, արտասուք թափել կու տայ . . . որք երբեմն անհանգիստ կ'ընեն զիս . . . : Խիստ բնական է այս . . . սոյն բաջարձակ սուանձնարանին մէջ բնակելու դատապարտուելէս ի վեր . . . բնաւ կ'ոջս քովէն չէի հեռանար, և այսօրուան բացակայութիւնս, թէև կարծէ թէ շատ քիչ պիտի տեւէ, անհնարին տաւապանք մ'է իրեն . . . խեղճ կին . . . :

— Սակայն հիմա, տէ՛ր իմ, ինչ անակնկալութիւններ մը պիտի պատճառէք անոր: Եթէ կը ներքէ որ Ձեր Բարձրութեան Խորհուրդ մը տամ, շատ լաւ կ'ըլլայ եթէ դքստհայն աղաչէք որ հաւանի ընդ փոյթ մեկնելու, մինչև անգամ այս զիշեր . . . վասն զի, տէ՛ր իմ, ինչպէս որ զիտէք, մեր գործին յաջողութեան միակ պայմանն արագութիւնն է:

— Ես ալ կը փափաքիմ որ կինս կարելի եղածին չափ շուտով տանիմ:

— Անշուշտ՝ այսչափ խուճապելէն տիկինը քիչ մը պիտի նեղուի:

— Բնաւ երբէք, պա՛րոն . . . բտական է որ զիանայ թէ հետս պիտի գայ, պատասխանեց Քրուսթիյաք յաղթական դէմքով մը:


Պ. տը Շէմրօ և բաղդախնդիրը հասան այն փոքրիկ ճեմարահը որմէ անդին Ասպոյտ-Մօրուքին սովորաբար դանուած սրահակն էր:

Ինչպէս որ արդէն ըսինք, այս ճեմատրա՛հը վարդաղայններով միայն բաժնուած էր սրահակէն. գետինը Թուրքիոյ թանձր գորգերով ծածկուած էր: Պ. տը Շէմրօ և Քրուսթիյաք անձայն կը մօտենային, մէկ մ'ալ յանկարծ երկարաձիգ քրքիջներու ձայներ լսեցին: Ասպետը երբ Անժէլի ձայնը լսեց, աշխուժիւ Պ. տը Շէմրօյի ձեռքը բռնեց և կամայ մ'ըսաւ անոր.

— Աինս է . . . : Մտիկ ընենք . . .

— Տիկինը Ձեր Բարձրութեան կարծածին չափ վշտահար չերեիր ինձ . . .

— Թերես, պա՛րօն . . . : Հեկեկանք ալ կան, կը տեսնէք, որք քրքիջ բառնալու կընմանին . . . : Մի շարժիք . . . կ'ուզեմ իւր մանկական վշտակրութեան միջոցին յանկարծ աչքին երեսիլ, յարեց Ասաբօնը՝ նշան ընելով իւր ընկերին որ անշարժ կենայ և խոր լուծիւն մը պահէ:



ԳԼՈՒԽ ԲԱԼՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Ասաբօնին վտահաթիւնը մեկնելու համար, կը պարտաւորինք ըսել թէ երբ տեսաւ որ Միրէթ վինքը Տէր իմ կը կոչէր, իրաւամբ համոզուեցաւ որ Ասպոյտ-Մօրուքը պէտք եղած զգուշութիւնը կ'ընէր, և Մօնմութ լաւ պահուրտած էր. ասիկ զատ՝ Քրուսթիյաք՝ չնայելով Միրէթի ըսածներուն, դարձեալ իրաւամբ կը հաւատար որ հայր Արիֆօն իմացուցած է Անժէլի թէ իւր ինքնակոչ ամուսինը զինքն առնելու կու գայ: Այս պարագայն ամենախի ծանրակշիւ էր, որ հայր Արիֆօն, Գիւսքնակ-Բլուրին

Քոլոր դաղտնիքներուն տեղեակ, անշուշտ Ասպոյտ-Մօրուքի՛ իմացուցած էր վերահաս նոր վտանգը: Գալով Միրէթի այն խօսքին թէ հայր Արիֆօն տեսած չէ Ասպոյտ-Մօրուքը, ասոր պատճառն այն է որ Խափուհին կ'ուզէր որ կրօնաւորը Գիւսքնակ-Բլուրին քնակչացը հետ հաղորդակցութեան մէջ եղած չերեի: Հիմա պիտի բացատրենք ինչ որ խիստ հակասական պիտի թուի Քրուսթիյաքի վարմանց մէջ, և պիտի պատասխանենք այս հարցման.

— Եթէ Քրուսթիյաք իւր ատօմ անունը միջոց մ'ընել կ'ուզէր Ասպոյտ-Մօրուքի առեւանգելու, ինչո՞ւ համար իւր զիտաւորութիւնն իմացուց անոր հայր Արիֆօնի միջոցաւ:

Քրուսթիյաք, պատուիրելով Պ. տը Շէմրօյի որ համը կենայ, ռաբին մասներուն վրայ քաշելով մօտեցաւ կիսարաց վարագորին և սրահակը զլսեց, վասն զի քրքիջներուն ձայները նորէն լսուեցան: Հազիւ ակնարկ մը ձգեց, աշխուժիւ Պ. տը Շէմրօյի կողմը դարձաւ և այլայլած դիմօք ըսաւ անոր զայրազին.

— Տեսէք, և մտիկ ըրէք, պա՛րօն, ահաւասիկ յանկարծ եկողին տեսնելիքը: Հայր Արիֆօնը հոս զրկած աստիճան կանխազգացում մ'ունէի . . . : Շիտակը զղոյշամուսինք վերադարձնին իմացընելու համար պէտք է որ իրենց առջևէն ծնծղաներով խումբ մը մարդիկ զրկեն . . . :

Թեև այս խօսքերն հեղնական էին, սակայն Քրուսթիյաք ստասիկ սյուլլած էր, իւր գէմըր միանգամայն ցաւ, բարկութիւն և ասելութիւն կ'արտայայտէր: Պ. տը Շէմրօ, սրահակին մէջ արագ ակնարկ մը ձգելէ ետև, իւր համարձակութեան հակառակ, աչքերը խոնարհեցուց, կարմրեցաւ և քանի մը վայրկեան բուլբուլին կատարած մնաց: Երեակայեցէք այն տեսարանը որ Պ. տը Շէմրօյի շիտթութեանը և Ասաբօնին ոչ թէ կեղծ, այլ անկեղծ և դժնդակ կատարութեան պատճառ կ'ըլլար, վասն զի, ինչպէս որ ըսինք, Քրուսթիյաք ետանդազին կը սիրէր Ասպոյտ-Մօրուքը, վեհանձնութեամբ իւր անձը կը նուիրէր անոր համար, և տակաւին տեղեակ չէր իշխանին ծոյտանայր: Մօնմութ՝ Խափշիկ ծով

ատգատակ փոթորիկ նաւապետին կերպարանքը մտած, նստարանի մը վրայ ընկողմանած էր. ձեռքը եղջերենիէ երկայն ձխափայտ մը կար որուն հնոցիկը (լիւլէ) ոսկեզօծ աթուակի մը վրայ դրած էր: Անձէլ աթուակին քով ծունդի վրայ եկած, ծխափայտին կրակը կը հրահրէր ոսկիէ երկայն գնդաեղով մը:

— Լաւ, ալ հիմա ծխափայտս վառեցաւ, ըսաւ Մօնմութ, զոր այս տեսարանին ասոնն փոթորիկ պիտի կոչենք: Ծխափայտս կարգին է, խմելու նայինք . . . :

Անձէլ սեղանի մը վրայէն դաւաթ մը և բիրեղեայ շիշ մը առնելով բազմոյցին մօտեցաւ, և, մինչդեռ ծովասպասակը բերնէն թանձր ծուխեր դուրս կու տար, դքսուհին նազելով գաւաթ մը տանձի ընտիր զինի լեցոց: Փոթորիկը մէկ չնչով պարտեց զայն, յետոյ աշխուժիւ Անձէլը գրկելով ըսաւ անոր.

— Գինին պատուական, կինը դեղեցիկ, գժոխքին տակն երթայ ամուսինը:

Պ. տը Շէմրօ այս խօսքերէն հասկընալով գործին ինչ ըլլալը ուղից հեռանալ: Քրուսթիյաք բռնեց զինքը և կամայ մ'ըսաւ անոր.

— Մի երթաք, պարոն, մի երթաք. տեսէ՛ք ինչ պիտի ընեմ այդ չուսուականներուն:

Քրուսթիյաքի դէմքը հեղհետէ կը մթագնէր: Երբ Գիտրենակ-Բլուրը ստ արտորանօք խնդրեց հայր Արիֆօնէն որ երթայ Կապոյտ-Մօրուքին իմացընէ թէ զինքն առնելու պիտի գայ, գաղանի զիտաւորութիւն մ'ունէր, զիտաւորութիւն մը որ խիւստ զովելի և խիստ վտեմ էր և զոր պիտի բացատրենք հիմա: Քրուսթիյաք երբ տեսաւ ծովասպասակը, իւր նախանձն այն աստիճան զրգուեցաւ, որ կատաղութիւն եկաւ վրան և իւր բարի զիտաւորութիւնները փոխեց. չկրցաւ հասկընալ մանկամարդ կնոջ յանդուզն անտարբերութեան պատճառ: Խափշիկին Անձէլի հետ մինչև այս աստիճան ընտանեկանութիւնը, զոր տեսած չէր, իրեն համար տարակրօյ չէր վերցընէր. Քարայիպին և ցլորսին անոր հետ ոչ նուազ քամնելի ընտանեկանութիւնները կը յիշէր: Վեր-

ջապէս համոզուեցաւ թէ սոսկալի կերպով ապականեալ կնոջ մը խաղալիկ եղած է. կարծեց թէ Մօնմութ, իւր ամուսինը, կամ մեռած է, կամ Գիտրենակ-Բլուրը չքնակիր, և թէ Անձէլի իւր (Քրուսթիյաքի) հնարաղիտութեան օգնելուն պատճառն ուրիշ բան չէր բայց եթէ ձանձրացուցիչ ականատեսէ մ'աղատիլ:

Քրուսթիյաք խաղալիկ ըլլալուն վրայ կատաղած, և իւր ճշմարիտ սիրոյն մէջ ցաւալի կերպով վիրաւորուած, միտքը դբաւ անողորմաբար վրէժ լուծել, և այս անգամիրօք ի շարն գործածել այն անունը և դիրքը զոր առած էր սյնպիսի պատուաւոր նշանակի մը համար: Խուլ և յուզեալ ձայնով և արգար քայրոյթով մ'ըսաւ Պ. տը Շէմրօյի.

— Լճու կեցիք, պարոն, կ'ուզեմ որ ամեն բան լսեմ, որովհետև անխնայ պիտի պատժեմ ամենքն ալ:

— Բայց, տէ՛ր իմ . . .

Քրուսթիյաքի մէկ խրոխտ շարժումը Պ. տը Շէմրօյի բերանը զոյցեց. երկուքն ալ ուշադրութեամբ ականջ կը դնէին Անձէլին և ծովասպասակին խօսակցութեանը որք, չմոռնանք ըսել, զիտէին որ զիրենք մտիկ ընող կայ:

— Վերջապէս, սիրելի իշխանուհիս, կ'ըսէր փոթորիկը, ահա գէթ քիչ մը ժամանակի համար ազատ ես:

— Եթէ ոչ ամեն ժամանակի համար, պատասխանեց Կապոյտ-Մօրուքը ժպտելով:

— Ամեն ժամանակի համար, ինչ ըսել կ'ուզես, չարաճճի, ըսաւ ծովասպասակը:

Անձէլի նայ Խափշիկին քով նստաւ և խօսակցելով ձեռքն անոր մաղերուն մէջ տարաւ այնպիսի փաղաքշահօք որ զժրաղք Քրուսթիյաք վեր ցտակեց:

— Տէ՛ր իմ . . . հրաման մը տամ և իսկոյն մարդիկս ձեզ կ'աղատեն այդ սնդղամ մարդուն ձեռքէն, ըսաւ կամայ մը Պ. տը Շէմրօ, որ կը խղճար Կասթօնին վրայ:

— Ես իմ վրէժս անձամբ կը լուծեմ, ըսաւ բաղդախնդիրը կողորդային ձայնով մը, որ ալ չկրցաւ համբերել այս տեսարանին:

երկարելուն, և Պ. ար Շէմրոյի դառնալով,

— Պարոն, ըսաւ, զիս առանձին թողէք . . . այս երկու թշուառականներուն հետ:

— Բայց, տէ՛ր իմ, այդ մարդը կորովի և աներկիւղ կ'երևի . . .

— Անհո՛գ եղիք, պարոն, ես հաշիւս կրնամ տեսնել անոր հետ:

— Եթէ իս մտիկ կ'ընէք, տէ՛ր իմ . . . հիմա կը մեկնինք, և իւր խճի խայթերուն կը թողուք այնպիսի կին մը որ իւր պարսաւորութիւններն այսպէս մոռնալու աստիճան դժբաղդ է:

— Թողում գինքը . . . : Աչ, ինչ կ'ըսէք, պարոն. կամաւ կամ բռնի հետս պիտի գայ . . . այս պիտի ըլլայ իմ վրէժիս լուծումը:

— Եթէ Ձեր Բարձրութիւնը կը ներէ՛ այս դիտողութիւնը կ'ընեմ թէ . . . այսպիսի գայթակղելի դէպքէ մը ետև . . . յախտեան չպիտի կրնար առանց զըռանաց զքսուհոյն երեսը տեսնել: Մեկնինք, մեկնինք. մոռցէ՛ք մեզապարտ ամուսին մը. . . փառքը պիտի մխիթարէ ձեզ:

— Պարոն, ըսաւ Կարծոնն անհամբերութեամբ, կնոջս հետ խօսիլ կ'ուզեմ:

— Բայց, տէ՛ր իմ, այն չուառական Խափշիկը . . .

— Պարձեալ կ'ըսեմ, պարոն, միթէ ես արիւթիւն և ոյժ չունիմ որ այդպիսի անպիտանէ մը վախնամ: Անոնց հետ առանձին մնալ կ'ուզեմ: Կան այնպիսի ընտանեկան վէճեր որք պէտք չէ որ դուրս ելնեն: Քովի սենեկին մէջ ինձ սպասեցէ՛ք. քառորդ մը չանցած կու գամ:

Քրտսթիյաք այս խօսքերն այնպիսի խրոխտանօք արտասանեց, իւր դէմքն այնքան այլայլած էր, որ Պ. ար Շէմրօ չհամարձակելով աւելի պնդել՝ հնազանդեցաւ: Մտաւ սենեակ մը որու դուռն ասպեալ բացաւ իրեն և իսկոյն վրայէն դոցեց: Արտօրնօք սրահին մէջէն անցնելէ ետև բաղդախնդիրը մտաւ այն սենեակը ուր Խափշիկն ու Կապոյտ-Մօրուքը կը գտնուէին:

— Տիկին, զօշեց Կարծոնը, որուն զիմաց վրայ միանգամայն վիշտ և զայրոյթ կը նշմարուէր, ընթացքնիւ նողկալի է:

Խափշիկը որ նստարանին վրայ պսակած էր, իսկոյն ելաւ և պատասխանելու վրայ էր . . . Անձէլ մէկ ակնարկով աղաչեց որ բան մը չընէ: Արչափ Մօնմութ մեհաննութեամբ ուղած էր թոյլ չտալ որ ասպեան իրեն համար իւր անձը զոհէ երբ կը կարծէր որ ասպեան այս զոհողութիւնն անշահասէր ոգւով է, այնչափ ալ հիմա որոշեց ինքզինք չճանչցընել երբ սկսաւ կարծել թէ բաղդախնդիրը կրնայ վատ մասնութիւն մ'ընել:

— Պարոն, ըսաւ Անձէլ Կարծոնին պաղ կերպով, Գաղղիոյ նուիրակը հոսկէ ալ կրնայ լսել մեզ. ուրիշ սենեակ մը երթանք:

Անձէլ Մօնմութի մասնաւոր սենեկին դուռը բանալով ներս մտաւ, որուն հետևեցան ծովասպասակը և Քրտսթիյաք: Գուռը գոցուելուն պէս բաղդախնդիրը զօշեց:

— Կը կրկնեմ ձեզ, տիկին, թէ դուք իմ փափուկ վարմանցս գէմ խիստ անարժան գտնուեցաք:

— Ես ալ ձեր նենդաւոր ընթացքին համարը պիտի պահանջեմ ձեռէ, պարոն, ըսաւ Անձէլ զոռողութեամբ: Բայց առաջ դո՛ւք խօսեցէք:

Այս միջոցին, Մօնմութ՝ մտածութեամբ պաշարուած, սենեկին մէջ կը պարտէր թեկերը կուրծքին դրած խաչաձև և աչքերն ալ դետինը յառած:

— Ա՛նգէք որ խօսիմ, տիկին. ըսելիքս երկար չտևեր: Նախ գիտցէ՛ք որ, գէշ ըրի, աղէկ ըրի, չլմ գիտեր, ձեզ սիրեցի, տիկին, զօշեց Քրտսթիյաք գորովոյ և զայրոյթի պայթմամբ մը:

— Այսինքն թէ դուք ձեր ուղեկիցներուն պարծնցեր էիք թէ Գիւսարնակ-Բլուրի հարուստ այրին կնութեան պիտի առնէք, պարոն:

— Թող այդպէս ըլլայ, տիկին. Ախթա՛ն նաւուն մէջ լեզուս յարատ, յաւակնութիւններս անհեթեթ և շահասէր եղան, այսպէս համարեցէք . . . : Բայց երբ այնպէս կը մտածէի, բայց երբ

այնպէս կը խօսէի, ձեզ տեսած չէի:

— Իմ տեսութիւնս աւելի պարկեշտ դազափարններ չտուածեզ, պարոն, ըսաւ Անժէլ խտութեամբ, միշտ համոզուած ըլլալով թէ Քրոսթիլայք անողորմաբար ի շարն դործածել կ'ուզէր այն գիրքն յորում կը գտնուէր:

— Մտիկ ըբէք, տիկին . . . : Ճշմարտապէս կը սիրէի ձեզ . . . : Ըսել կ'ուզեմ թէ ամեն բան կրնայի ընել այս սէրը ձեզ ապացուցանելու համար, որչափ ալ այլանդակ և յիմարական երեւի ձեզ այն . . . : Այո՛ . . . կը սիրէի ձեզ, վասն զի սիրտս կ'ըսէր ինձ թէ լաւ բան մը կ'ընէի ձեզ սիրելով, վասն զի ինքզինքս լաւագոյն կ'զգայի ձեզ սիրելով . . . : Կրնայիք ծաղրել այս սէրը . . . : անոր ինձ տուած երջանկութիւնը բաւական հատուցում մ'էր ինձ համար . . . : Երբ ինձ ըսիք .

«— Պարոն, ծաղրեցի ձեզ, իբր խաղալիկ դործածեցի ձեզ . . . : դուք խեղճ արարած մ'էք, ողորմութիւն պիտի տամ ձեզ և շատ դո՛հ պիտի ըլլաք . . . »

— Պարոն . . .

— Երբ ասոնք ըսիք ինձ . . . մի կարծէք թէ նուաստացայ, տիկին . . . : յաւեցայ, շատ ցաւեցայ, բայց շուտ մտցայ այս նախատիւրը երբ տեսայ որ դուք կը հասկընաք թէ որչափ որ ազբատ մէկն եմ՝ կրնամ ստակէն զատ ուրիշ բանի զգայուն սիրտ մ'ունենալ . . . : Այն ատեն քանի մը լաւ խօսքեր ըրիք ինձ, զիս բարեկամ անուանեցիք . . . : այդ բառը լսելէս ետև ձեզ համար ինքզինքս կրակը կընետէի, և այս ալ մի միայն՝ ինքզինքս կրակը նետած ըլլալու հաճոյքին համար. վասն զի ալ ձեռնէ յուսալու բան մը չունէի, յիմարութեան ժամանակն անցած էր . . . : ես իմ սրտիս խորն այնքան յստակ կը տեսնէի, որ խեղկատակ մուրացիկ մ'ըլլալս կ'իմանայի . . . : երբէք չէի կրնար դործ ունենալ ձեզի պէս գեղեցիկ, ձեզի պէս գեռահաս կնոջ մը հետ . . . : Իմ միակ փառասիրութիւնս, և այս ալ մարդու փնտս չունէր, ձեզ համար անձս նուիրել էր . . . : Բայց ինչպէս կրնայի այդպիսի երջանկութիւն մ'ունենալ ես, որ դատարկապէս

մ'եմ, ես որ հին սուրէս, հին գլխարկէս և հին գուլպաներու զատ ուրիշ բան չունիմ: Սակայն դիպուածով մը զոր ի սկզբան օրհնեցի, իրիկունը Վիթլէր գնդապետը զիս ձեր ամուսինն աւանուեալ անձը կարծեց, գնդապետին սխալը կրնար ձեզ օգտակար ըլլալ . . . : Երևակայեցէ՛ք ուրախութիւնս . . . : կրնամ ազատել անձ մը որուն վրայ կը խնդրեցաք . . . : Աւելի լաւ կ'ըլլար ուրիշ բան ազատել . . . : բայց ընտրութիւն ընելու ժամանակ չունէի . . . : Ամեն վտանգ աչքս առի, մինչև անգամ գնդապետին դառչոյնը: Ամեն միջոց ի գործ գնելով իւր կրկին սխալն աւելցուցի: Գուք ալ օգնեցիք ինձ, այսինքն զիս մինչև վերջ ցեխին մէջ ընկնելիք չնչին բաներով զիս համեալուղեցով . . . : Հոգ չէ . . . : ամեն բան սիրով յանձն առի . . . : տեսայ որ սիրտս գո՛հ է, և այս տունէն մեկնեցայ առանց երբէք ձեզ վերստին տեսնելու յուսոյ, նշմարելով հեռուն կախալան կամ բանտ, առանց հաշտի գնելու Հոլանտացոյն յախտնակն գառչոյնը: Աերջապէս դարձեալ կ'ըսեմ, չնայելով և ոչ մէկ բանի, գո՛հ էի . . . : Կնքնիրենս կ'ըսէի. Չեմ գիտեր թէ ինչ պատուաստուած է ինձ, չուան թէ զնգան. բայց վստահ եմ որ Կապույտ-Մօրուքը պիտի ըսէ ինքնիրեն. Շատ աղէկ եղաւ, դէթ մեզի համար շատ աղէկ եղաւ որ այս արտաուց Կապույտը հոս եկաւ . . . : խեղճ մարդ, արդեօք ինչ պիտի զայ գլխուն . . . : հիմա կը տեսնէք թէ ինչ էր իմ փառասիրութիւնս . . . : Ես ձենէ վիշտ մ'անդամ չ'ինգրեցի . . . : յիշատակ մը միայն, յիշատակ մը, ըսաւ Կապույտն ակամայ փղձկելով:

— Բայց, պարոն, ըսաւ Անժէլ, երբ ձեզ իրօք վնահանձն մէկը կարծեցի, երախտագիտութեան մասին պակասաւոր չզսնուեցայ:

Այս խօսքերը կարծես Կապույտին բարկութիւնը սաստկացուցին: — Երախտագիտութիւն, տիկին, գոչեց Կապույտը, խօսինք ասոր վրայ . . . : շատ գեղեցիկ եղաւ: Բայց շարունակեմ. Հոլանտացոյն հետ հոսկէ գորս ելանք, երբ լեռնէն վար կ'իջնէինք Կապույտն նախաձեռնութեամբ հեռուէր կառնէր Բէ մաս-

նուեր է, իսկոյն դաշուհի մուկդին հարուած մը տուաւ ինձ: Ասանք եղան անձնանուիրութեան պատգմերը: Եթէ դաշուհին երկաթը չկտորէր, սպաննուած էի: Խիտ բնական բան մ'է այս թէ՛ երբ մարդ իւր անձն այլոց կը դռնէ՝ հարկու չսպասեր որ յուերժահարսուներ իւր գլխուն վարդէ պատկներ պիտի յօրինեն կամ գինը պիտի դգուեն: Աւերջապէս դաշոյնը կտորեցաւ, Բիւթէրը կապեցին, և ես ալ դիմացս Գաղղիոյ նուիրակը գտայ . . . : Երթնու թիւնս չկորուսի, ինչիւրը ձեր և դատապարտեալ անձի մը վրայ էր որուն համար հոգի կու տար . . . : Լատագոյն կը համարէի որ ինչիւրը ձեր հօր կամ հօրեղբօր վրայ ըլլար . . . բայց ես ընտրութիւն չէի ըներ . . . : Ասկէ զատ՝ սիրաս այնպէս ուղեւոր որ երկու գեռահաս անձերու օգուտ մ'ընեմ, ետութիւնս լուեց . . . : Քանի գործը կրկնուստէր, այնչափ ալ ինքնասիրութիւնս կը պահանջէր որ զձեզ ազատեմ . . . : Աստահութիւնս, յանդիմութիւնս աւելցընել պէտք եղաւ . . . այս ալ իմ գործս էր . . . : Ձեզի համար զլորած հոյակապ սակայն պարկեշտ սուտերս զին կ'արձակէին դէշ մտօք ըրած ստախօտութեանց մեղքերէն . . . Աստուած ալ գործին մէջ մտաւ, և մտքէ չանցած ահագին սուտեր ներշնչեց ինձ. Գաղղիոյ նուիրակը երկնային մանանայի մը պէս կ'լլեց զանոնք. կըցածիս չափ խաղայի դերս: Պ. ար Շէմբօ երկու խօսքով հասկըցուց ինձ իւր պաշտօնին ինչ ըլլալը. Անգղիոյ մէջ ապստամբութիւն մը եղնելու վրայ է, որուն Գաղղիա կ'օգնէ, և եթէ Մօնմութ գութը այս ապստամբութեան գլուխն անցնի, գործն անպատճառ պիտի յաջողի եղեր:

Մօնմութ շարժում մ'ըրտ. և Անժէլի հետ ակնարկ մը փոխանակեց: Կարծոնը շարունակեց.

— Երբ Հոլանտացոցն և իւր գաշոյնին հետ Անգղիա բանտարկութեան կ'երթայի, բնաւ բերանս չբայի . . . բնաւ չուղեցի հոս գալ. բայց Պ. ար Շէմբօ ինձ այնպիսի բան մը կը յայտնէր որ իշխանին համար թերես շահաւոր էր . . . անոր կողմէն մերժելու իրաւունք չունէի . . . : Իւր անուամբն սկսայ ընդու-

նիլ տեսակ տեսակ փոխաբայութիւններ. կարելի էր որ իշխանն իրօք ուղէր մասնակցիլ այս շարժման, ինչպէս կրնայի ուրեմն իմաց ալ իրեն առանց ժամանակ կորսընցընելու: Պ. ար Շէմբօ կ'ուղէր իսկոյն առագաստ պարզել: Ինչպէս կրնայի Գաղղիոյ նուիրակին հետ հոս գալ առանց դուքսը վտանգի ենթարկելու, որ Պ. ար Շէմբօյի պատահիլս չգիտէր, և զիս միշտ Հոլանտացոցն ձեռքը կարծելով, անշուշտ ինքզինք ասպհով կը համարէր հոս: Միտքս բան մ'եկաւ. Պ. ար Շէմբօյի ըսի.

«— Գործերը կերպարանափոխ եղան, կ'ուզեմ որ կինս ալ հետս տանիմ, երթանք Գիւաթնակ-Բլուրէն առնենք զայն՝ Եսկէ զատ ուրիշ միջոց չկար ձեզի հետ տեսակցութիւն մ'ունենալու, այն կին . . . և իշխանին ալ իմացընելու իրեն եղած առաջարկութիւնը: Եթէ ընդունէր, իշխանն ըլլալէ պիտի գաղթէի, եթէ մերժէր, ես ալ առաջուան պէս պիտի մերժէի, և ինքն ալ պիտի ազատէր . . . »

— Ինչ կ'ըսէք, պարոն, գոչեց Անժէլ, այդ էր ձեր վեհանձն դիտաւորութիւնը. դուք կ'ուզէք որ . . .

— Ա՛հ, սպասեցէ՛ք, այն կին, սպասեցէ՛ք . . . զիս ո՛չ այնչափ յիմար մէկը կարծեցէք, ոչ ալ այնչափ վեհանձն, ըսաւ դառնութեամբ Կարծոնը: Հետեւ բար աղաչեցի հայր Արիֆօնի որ զայ ձեզ իմացընէ թէ ձեզ հետ տանիլ կ'ուզեմ: Պ. ար Շէմբօ ունկնդիր կ'ըլլար ինձ. քահանային ասկէ աւելի բան չէի կրնար ըսել, բայց այսչափն ալ կը բուէր: Սա երկուքին մէկը պիտի պատահէր, կամ միտքս պիտի հասկընայիք . . . կամ այսպիսի վատութիւն մը գործելու կարող մէկը պիտի կարծէիք զիս: Արն ալ պատահէր, զոչ պիտի գանուէրք . . . և իշխանն ալ պիտի ազատէր . . . վասն զի այս էր իմ բուն նպատակս . . . »

— Ուրեմն, պարոն, գոչեց Անժէլ Գրուսթիայքը դիտելով, միանգամայն զարմացմամբ և երախտապիտական զգայմամբ, ձեր դիտաւորութիւնն ստուղիւ խարէութիւն մ'ի գործ գնել չէր և . . .

Կարծոնը սաստկութեամբ ընդմիջեց զայն:

— Ա՛հ, այն կին, ո՛չ. այն ասեն բնաւ չար դիտաւորութիւն

մը չունէի, թէև ձեր կենաց ինչ ինչ հանդամանքները անմեկնելի կ'երևէին ինձ . . . : Ես կը կարծէի որ դուք անկեղծ սիրով մը կը սիրէք զժբաղդ իշխան մը, և ամեն բան աչքս առած էի դուքսը տղատելու համար :

— Ա՛հ, պարոն, ս'ըջափ սխալ դատեցի ձեզ, Գուք ամենէն վիհանն մարդն էք, զոչեց Անժէլ :

Բաղդախնդիրը ծաղրական քրքիջ մը փրցոյց որմէ մանկամարդ կ'ինն աղչեցաւ . յետոյ շարունակեց ախար զէմքով մը .

— Գոհութիւն Աստուծոյ . . . աչքերս բացուցան . հիմա կը տեսնեմ որ վիհանն ապուշ ըսել է, անձնանուէր՝ տխմար ըսել է : Այս դասն օգտակար պիտի ըլլայ ինձ : Փօլիֆէմ աղ-Քրուս-թիյաք քիչ վրէժ կը լուծէ . . . բայց երբ վրէժ լուծէ, լաւ կը լուծէ, մանաւանդ երբ վրէժն այնչափ զեղեցիկ է որչափ այն էակը . . . որ կ'սպասէ անոր :

— Արէժ պիտի լուծէք, պարոն, ըսաւ Անժէլ, և ինչ բանի :

— Ինչ բանի, միթէ կը յանդգնիք հարցնել զայդ, աիկին :

— Անաբարակոյս, ես ինչ ըրի ձեզ, ինչո՞ւ այդչափ ասելու թիւն ինձ դէմ :

Բաղդախնդիրն այնպիսի ուժգնութեամբ ոտքը դետինը զարկաւ, որ Խափշիկը մէկ երկու քայլ իրեն մօտեցաւ . բայց Քրուս-թիյաք իւր բարկութիւնը չափաւորեց և Անժէլի ըսաւ կարուկ ձայնով մը և դառն երգիծանութեամբ .

— Մտիկ բռէք, աիկին, ինձ այնպէս կը թուի որ ասանց սանդարամետական գոռողութիւն մ'ունենալու կրնայի ձեռն յիշատակ մը սպասել երբ ձեզի համար անձն ամենէն վտանգաւոր գրեց մէջ կը նեատէի ուրախ սրտիս : Ինձ այնպէս կը թուի որ, աիկին, յարեց կասքօնը շինալով իւր հեազհետէ սաստկացող զայրայթը զգտել, ինձ այնպէս կը թուի որ, աիկին, դուք ամօթխածութիւնը պէտք չէր որ մոռայիք զէթ այն պահուն երբ ես կեանքս վտանգի ենթարկելով ամեն ճիգ կը թափէի ազատելու համար այն ամուսինը որուն վրայ, կ'ըսեն թէ, կը խնդրենք :

— Պարոն . . .

— Այո՛, աիկին . . . մոռնալով ամեն համեստութիւն, մոռնալով ամեն ամօթ, չուտական Խափշիկի մը բաղկացը մէջ նետուեցաք . . . և անոր ծխափայտը վառելու դձնութիւնն ալ յանձն առիք . . . : Ստուդիւ շատ անբան մարդ մ'եմ եղեր, յարեց կասքօնը մոլեղնութեամբ . . . : Տիկնոջ համար անձն նուիրելով, մորթս վտանգի մէջ կը դնէի աիկնոջ ամուսնոյն համար . . . մինչդեռ աիկինը, որ թէ՛ իւր ամուսնոյն վրայ և թէ՛ իմ վրաս թշնամանօք կը խնդայ, հոս աւազակներու հետ անստակութեան ելեր է . . . : Սակայն թող ինձ ալ կասքօն չըսեն եթէ այս դէպքին մէջ ինձ համար խնդալու առարկայ մը չդսնեմ . . . : Արշապէս, աիկին, յարեց բաղդախնդիրը խստութեամբ, այսպէս հետեւ ամեն տեսակ չարութիւն կրնաք սպասել ինէ . . . այս մասին բնաւ կասկած մի՛ ունենաք, վասն զի ասիէ առաջ սրչափ անձնանուէր էի ձեզ, հիմա ալ այնչափ թշնամի եմ . . . : Մնաց որ այս բանն աւելի հաճոյ կը թուի ինձ . . . ազնիւ զղացումներ ունենալէ աւելի անտանելի բան չկրնար ըլլալ . . . Աստուած չընէ որ նորէն այս առտուան հովուերգութիւններս սխիւմ . հիմակուան ձեզ սիրելու կերպս առաջուանէն լաւագոյն կը համարիմ, յարեց Քրուսթիյաք Անժէլի վրայ հրացայտ ակնարկ մը ձգելով :

Գ Լ Ո Ւ Ն Բ Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ Կ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ

Յ Ա Յ Տ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Խեղճ կասքօնը որ բարկութենէն և նախանձէն ոչ ըսածը գիտէր և ոչ ըրածը, աւելի չար կ'երևէր քան զոր չէր իրօք .

դժբաղդաբար դքսուհին անոր խժգուժ էրևոյթներուն շատ հիւճնաւոր բաներ չըլլալը գուշակելու չափ լաւ չէր ճանաչեր զայն :

Անժէլ կարծեց թէ բաղդախնդիրը իւր ցոյց առած անձնանուիրութեան վրայ կրնայ ըլլալ որ զըջայ . այս կասկածով չհամարձակեցաւ Կասքօնին նախանձը հանդարտեցընել Մօնմութի ծպտանաց զաղտնիքը յայտնելով անոր . այս յայտնութիւնը կրնար կորստարեր ըլլալ եթէ ասպետն անհաւատարիմ գտնուէր . հեռուաբար խոհեմութիւն կը համարէր տակաւին զգուշութեամբ վարուիլ :

— Պարոն , ըսաւ Անժէլ , կը սխալիք . . . իմ ընթացքիս մէջ այնպիսի զաղտնիքներ կան զոր տակաւին չեմ կրնար յայտնել ձեզ :

Այս խօսքերը Գրուսթիյաքի զայրոյթը կրկնապատկեցին , վասն զի երեք օրէ ի վեր խորհրդաւոր պատահարներու մէջէն դուրս ելած չունէր . ուստի գոչեց .

— Այդպիսի զաղտնիքներ շատ կան քովս , մանաւանդ ձեր անձին վերաբերեալ զաղտնիքներ . այլ ևս ձեր խաղալիքը չեմ կրնար ըլլալ , տիկին : Չեմ գիտեր թէ ինչ վիճակ կ'սպասէ ինձ , չեմ գիտեր ինչ պիտի ըլլայ այս ամենուն վախճանը , սակայն աշխարհ կործանի , հետս պիտի գաք :

— Պարոն . . .

— Այո՛ , տիկին , ձեր սիրական ամուսնոյն դերն ստանձնած ըլլալով անոր ամեն անպատահութիւնները կը կրեմ , գոնէ պէտք է որ անոր հաճոյքներն ալ վայելեմ . գալով այս անղղամ Խափշիկին . . . որ բերանը գոցեր կեցեր է և որուն ինչ կեղծաւոր սատանորդի մ'ըլլալը կ'երկի , Պ . տը Շէմբոյի պիտի յանձնեմ զինքը , նա զիտէ ինչընելիքը . . . : Եթէ ազնուականի մը սուրը գերիի մը արեան մէջ թաթխելը զայն սղծելը ըլլար , վրէժս անձամբ կը լուծէի :

Անժէլ ակնարկ մը փոխանակեց Մօնմութի հետ , որուն անդրդուելի անտարբերութիւնը վերջին աստիճան կը կատրեցընէր զԳրուսթիյաք : Երկուքն ալ ասպետը հանդարտեցընելու պէտքը

զգացին , իւր բարկութիւնը կրնար վասնդաւոր ըլլալ . այսու ամենայնիւ պէտք էր զինքը հանդարտեցընել առանց յայտնելու իշխանին ծպտանաց գալտնիքը : Աստի մանկամարդ կինը բաղդախնդրին ըսաւ .

— Հիմա ամեն բան կը մեկնուի , պարոն : Իմ ամենէն մեծ , իմ միակ յանցանքս այս եղաւ որ ձեր վեհանախութեան , ձեր անձնանուիրութեան անկեղծութեանը վրայ տարակուսեցայ : Հայր Կրիֆօն (թէ և ձեզ համար երաշխաւորեց) ձեր բուն դիտաւորութեանց մասին ինձի պէս սխալեցաւ . մնք կարծեցինք . . . և պակասութիւն մ'էր այսպէս կարծելնիս թէ դուք ձեր առած անունը կրնաք չարաչար դորձածել . . . : Այս նոր վտանգէն ազատելու համար պէտք էր նոր միջոցի մը գիտել , որուն յաջողիլը թէ և տարակուսելի էր , սակայն կրնար ըլլալ որ յաջողէր : Չէի կրնար փախչիլ , վասն զի ո՛ւր երթայի՝ դէմս պիտի ելնէիք . ուստի պէտք եղած հրամանները տուի որ զձեզ Պ . տը Շէմբոյի հետ հոս բերեն , յուսալով որ յանկարծ վրայ կու գաք և նաւապետին հետ ունեցած գորովալիբ յարաբերութեանս ակնատես ըլլալով . . .

— Ինչ կ'ըսէք , այդ զուարճալի տեսարանը դիտմամբ պատրաստեցիք ինձ , գոչեց Կասքօնը մոլեղին . . . : Բայց , տիկին , ասկէ աւելի ապակիսութիւն , ասկէ աւելի լիտութիւն չկրնար ըլլալ . . . : Սակայն եթէ կը հաճիք , շնորհ ըրէք ըսել թէ ինչ նպասակաւ ուղեցիք ապացուցանել ինձ այն զղուելի մտերմութիւնը որով այս աւազակին հետ կապուած էք :

— Որպէս զի , պարոն , չկարենաք զիս հետերնիդ տանիլ : Պ . տը Շէմբո՛ Փոթորիկ նաւապետին հետ ունեցած մեղապարտ յարաբերութեանս ակնատես ըլլալով , դուք չպիտի կրնայիք . . . դուք որ Մօնմութ գուքը համարուած էք , չպիտի կրնայիք Գաղղիոյ նուիրակին աչքին առջև հետերնիդ առնել ինձի պէս այս աստիճան յանցաւոր երևցող . . . այս աստիճան յանցաւոր եղող կին մը . . . :

— Ար խոստովանիք , տիկին :

— Այո՛ . . . այո՛ , պարոն , կէս վեհանախ մի ըլլաք . . .

Ի՞նչ փոյթ է ձեռքերէ սիրածս . . . դերի մ'է, ինչպէս կ'ըսէք . . . :

— Ի՞նչ կ'ըսէք, տիկին, ի՞նչ փոյթ ինձ . . . միթէ երգում ըրած էք որ զիս հաւատքէ օրէնքէ հանէ՞ք: Ի՞նչ փոյթ ինձ: Աւրեմն ձեր ամուսնոյն դերը խողարս ի՞նչ բանի կը ծառայէ. կա՞յ այդպիսի անձ մը, հո՞ս է, միթէ այս սխալը, որուն համար փորձանքի հանդիպեր եմ, զիս հեռացնելու կը դործածէք. այդ ամուսինն արդէն հեռու տեղ մը աստիճանով բան մէջ չէ՞: Բայց խենդենալու բան է այս, գոչեց Աստուծոյն այլայլած գէմքով. ինձ այնպէս կը թուի որ ուղեղս զլիստս մէջ տակնուվրայ կ'ըլլայ. երկու օրէ ի վեր նողկալի մը ձաւանջի մը խաղալիք եղած եմ, ինչ ընեմ . . . : Ո՞վ էք դուք, մեր եմես, ի՞նչ եմ ես, Գրուսթիյա՞ք եմ, միլո՞րա եմ, իշխան եմ, փոխարքայ եմ, թագաւոր եմ, վիզ կտրած են թէ ոչ . . . Հիմա պէտք է ամեն բան պարզուի, ամեն բան վերջանայ. եթէ Մծնմութ դուքս անուով անձ մը կայ, ցուցու՛ր ինձ . . . գոչեց բողբոջները անսպասելի յուզեալ վիճակի մը մէջ որ կարելի չէ նկարագրել, բայց զիւրին է երևակայել:

Անձէլստրասփահար և բոլորովին անտրամագիր՝ գործը Աստուծոյն յայտնելու, վարանմամբ ըսաւ.

- Պարոն, գաղտնի պարագաներ . . .
- Գրուսթիյաք չթողուց որ Անձէլ շարունակէ, և գոչեց.
- Գարձեալ գաղտնիք . . . ես այդպիսի գաղտնիք շատ ունիմ . . . չեմ կարծեր որ ուղեղս ուրիշի մ'ուղեղէն տելի տկար ըլլայ, սակայն եթէ ժամ մ'ալ այսպէս երթայ, խելքս պիտի թուցընեմ:
- Պարոն, կ'աղաչեմ, պէտք է որ հասկընաք թէ . . .
- Տիկին, չեմ ուզեր հասկընալ, գոչեց ասպետը ոտքը դետինը զարնելով մոլեգին, ճիշդ հասկընալ ուղեղուս համար է որ զլուսս կը խանդարի . . . :
- Պարոն, յարեց Անձէլ, կը խնդրեմ, հանդարտեցէ՛ք, խորհեցէ՛ք:

— Ես ոչ հասկընալ կ'ուզեմ, ոչ խորհիլ, գոչեց ասպետը նոր պարոյթով մը. ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ, միտքս գրի որ ինձ ընկերանաք, և պիտի ընկերանաք . . . : Ձեր ամուսնոյն ուր ըլլալը չզիտեմ, զիտեալալ չեմ ուզեր . . . զիսցածս այս է որ դուք ոչ Գարայիսներուն համար անդու թ էք, ոչ ցլորաներուն, ոչ խափշիկներուն . . . ուրեմն ինձ համար ալ չպիտի ըլլաք . . . : Ար տեսնէ՞ք այս ժամացոյցը, եթէ հինգ վայրկեանն չհաւանք հետս դալու, ամեն բան պիտի ընեմ Պ. տըՇէմբոյի, ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ . . . : Որոչեցէ՛ք, մինչև այն ատեն չպիտի խօսիմ, խուլ պիտի ըլլամ, վասն զի բառ մը լսածիս պէս զլուսս ուսմբի մը նման պիտի պայթի:

Գրուսթիյաք թիկնաթուի մը վրայ ինկաւ, ձեռքերն ականջներուն վրայ դրաւ բան մը չլսելու համար, և աչքերն ալ կախուած ժամացոյցին վրայ յառեց:

Մինչև այն ատեն Մծնմութ յուզմամբ կը ստըտէր սենեկին մէջ: Ինքն ալ Անձէլի պէս սոսկալի ատաճանութեան մէջ էր:

— Յակոբ, թերևս պատուաւոր մարդ մ'է, ըսաւ Անձէլ ցած ձայնով, բայց իւր չափազանց յուզմունքէն կը զարհուրիմ, տես ի՞նչպէս աչքը զարձեւ է:

- Իրեն անձնատուր ըլլալէ ուրիշ ճար չկայ մեզ համար, ասպա թէ ոչ ամեն բան պիտի յայտնէ:
- Բայց եթէ մեզ խարէ, եթէ գործը երեսն հանէ՞:
- Անձէլ, երկուց չարեայ փոքրագոյնն է ընտրելին:
- Այո, եթէ ուզէ քու տեղդ անցիլ . . . կ'աղաթիս . . . գէթ այս անգամ:

— Բայց այն ատեն չեմ կրնար զինքը Պ. տըՇէմբոյի ձեռքը թողուլ:

- Ո՛հ, աղաւելու հնար չկայ:
- Հիմա երբէք Անգղիոյ մէջ քաղաքային սպտեբազմարուցանելու հաճութիւն չպիտի տամ . . . հազար անգամ լաւագոյն կը համարիմ բանալ . . . մահը . . . բայց ձեզ թողնուլ . . . տէ՛ր Աստուած . . . :

— Ինչ ընենք, Յակոբ. ինչ վտանգ կայ այս մարդուն համար .
 — Ահադին . . . քանի որ պետական այսպիսի դաղանիք մը
 զլիաէ :

— Հետևաբար . . . կամ սէտք է կորսուիս . . . կամ հետը
 երթաս : Ա՛հ, ինչ ընենք, Յակոբ, ժամանակը կ'անցնի :

Վայրկեան մը մտածելէ ետև Մծնմութ ըսաւ .

— Հատ տատամնիլ պէտք չէ, ըսե՛նք իրեն ամեն բան. եթէ
 քանի մը ժամ ալ դերս խաղալու հաճի, կ'աղատիմ. և զինքը
 Գաղղիոյ նուիրակին բարկութենէն զերծ պահելու միջոցն ալ ու-
 նիմ :

— Յակոբ, եթէ այս մարդը մատնիչ մ'ըլլամ : Տէ՛ր Աս-
 տուած, զգուշացի՛ր . . . :

Սոյն պահուն քաղախնդիրը, տեսնելով որ սլաքը հինգերորդ
 վայրկեանին վրայ է, ոտք ելաւ և Անձէլի ըսաւ .

— Օ՛հ ուրեմն, տիկին, ինչ որոշեցիք : Այո կամ ոչ, որով-
 հետև ուրիշ բան ոչ կը լսեմ, ոչ կը հասկընամ. կ'ուզե՛ք հետս դալ
 թէ ոչ. պատասխանեցէ՛ք :

Մծնմութ ծանր և լուրջ դէմքով մը քովը դնաց :

— Հիմա ձեզի բարձր յարգանաց ասպացոյց մը պիտի տամ և . . .

— Քեզի պէս անպատկան յարգանքն ինչ պիտի ըլլայ, գոչեց
 Բրուսթիյաք զայրազին, ընդմիջելով դուքսը, ինձ կը բանեցընես
 այդ բերանը : Բու յարգանքդ . . .

— Բայց, պարոն . . .

— Ուրիշ խօսք չեմ ուզեր, գոչեց Բրուսթիյաք՝ Անձէլի դառ-
 նալով, տիկին, կ'ուզե՞ք հետս գալ : Այո կամ ոչ :

— Բայց մտիկ ըրէք . . .

— Այո կամ ոչ, սրն է, գոչեց դէպ ի գուռը երթալով,
 պատասխանեցէ՛ք եթէ ոչ Պ. սը Շէմրօն կը կանչեմ :

— Բայց յանուն սուրբ Գեորգայ, գոչեց Մծնմութ :

Ասպետը գուռը բանալու վրայ էր, մանկամարդ կիներն անոր
 երկու ձեռքերը բռնեց այնպիսի պաղատող դէմքով մը, որ Բրուս-
 թիյաք ակամայ կանգ առաւ :

— Լաւ ուրեմն, այո՛ . . . այո՛, հետեւիդ պիտի դամ, ը-
 սաւ Անձէլ սաքսափահար :

— Վերջապէս կարգի մտաք, ըսաւ Կառքօնը : Տուէ՛ք թեկե-
 նիդ, և մեկնինք. Պ. սը Շէմրօ շատ սպասեց :

— Բայց վայրկեան մը . . . պէտք որ ամեն բան իմանաք,
 ըսաւ խեղճ կիներ շտապաւ : Քարայիպը ծովասպատակն էր . . .
 կամ մանաւանդ ցլորսը և Քարայիպը մի և նոյն . . .

— Ա՛, նորէն սիսաք. ուրեմն գուք մինչև վերջը խնդի
 տեղ գնել կ'ուզէք զիս, գոչեց Կառքօնը յուսահատ ճիգ մ'ընելով և
 Պ. սը Շէմրօն կանչելու համար դէպ ի գուռը վազելով :

Իշխանը Բրուսթիյաքի վրայ վազեց, անոր երկու գաստակ-
 ները մէկ ձեռքովը բռնեց, և միւս ձեռքն ալ բերնին վրայ
 դրաւ այն վայրկեանին երբ ասպետը կը գոչէր .

— Հասե՛ք, պարոն սը Շէմրօ :

Յետոյ ցած ձայնով ըսաւ անոր .

— Պարոն, ես եմ Մծնմութ դուքսը :

Իշխանն այս խօսքերն ըսելով կը կարծէր թէ ասպետին ամեն
 բան հասկըցօցած կ'ըլլար, սակայն Բրուսթիյաք այն աստիճան
 զայրացած էր, որ իշխանին այս յայտնութիւնը նոր խորամանկու-
 թիւն մը կամ նոր թշնամանք մը համարեց, և օձիքէն ազատելու
 համար ջանքերը կրկնապատկեց : Ասպետը թէև դուքսին չար
 ուժեղ չէր, սակայն սրտոտ էր. իւր բոլոր զօրութեամբը կը մա-
 քառէր, երբ Անձէլ, ահաբեկ, վազելով դնաց սրուակ մ'առաւ,
 մշի հեղուկէն կաթիլ մը իւր թաշկինակին վրայ կաթեցուց և
 իշխանին ձեռքը շփելով, վրայէն կուպրի դոյնը հանեց և մոր-
 թը ձերմկեցաւ :

— Հիմա հասկըցօք, պարոն, որ երեք անձերը միայն մէկ
 անձ են, ըսաւ իշխանը՝ ազատ թողլով Բրուսթիյաքի բերանը և
 իւր ձերմակ ձեռքը ցոյց տալով անոր :

Այս խօսքերն իսկոյն բաղախնդրին միտքը լուսաորեցին. ա-
 մեն բան հասկըցաւ : Գժբաղաբար այն միջոցին երբ իշխանը իւր
 ձեռքը Կառքօնին բերնին վրայէն քաշեց, նա չկրնալով ինքզինք
 9

բունել, «Հասէ՛ք, պարոն տը Շէմրօ» զոչեր էր: Առիւն յառաջ եկած աղմուկը Գաղղիոյ նախնական ուշագրութիւնը դրաւ ած էր արդէն. սա՛ Ասաքօնին աղաղակը լսելով սուր ի ձեռին սենեակը վազեց: Կարելի չէ նկարագրել այս երեք անձանց շփոթութիւնն ու սոսկումը երբ Պ. տը Շէմրօ երեւցաւ: Գուքը ձեռքը դաշունին տարաւ. Անժէլ թիկնաթուռի մը վրայ ինկաւ երեսը ձեռքերուն մէջ ծածկելով. Քրօսթիյաք վշտահար չորս զին կընաւէր զղջալով ըրած սխալին վրայ, բայց շատ ուշ:

Յակայն և այնպէս բաղդախնդիբը տակաւ առ տակաւ իւր մտաց արթնութիւնը գտաւ. ինչպէս որ արեգակին մէկ զօրաւոր ճառագայթը բառական է թանձր մէկ մը փարատելու, բարետիրաւ ասպետն ալ իշխանին երեք տեսակ ծայտանաց գաղտնիքն իմանալուն պէս սկսաւ ամեն բան պայծառութեան մէջ տեսնել. իւր միտքը, որ մինչև այն աստիճանալի կերպով յուզուած էր, հանդարտեցաւ, Կասպրօ-Վօրու քին վրայ ունեցած գէշ կասկածները զազրեցան, ա՛լ ուրիշ բան չմնաց իրեն բայց եթէ վիշա՛ զայն ամբաստանած ըլլալուն, և կոմք՝ իւր անձը թէ՛ կնձև թէ իշխանին համար նախնական: Սքանչելի հնարագիտութեամբ մը (Տիմա մեր համակրութիւնն այնչափ աւելցած է Կասքօնին վրայ որ չենք կրնար ըսել. սքանչելի ստութեամբ մը) Քրօսթիյաք իւր պատերազմի փլանը դարձուց Պ. տը Շէմրօյի գէմ, որ միշտ սուր ի ձեռին դրանը շեմին վրայ կեցած էր, և երկրորդ անգամ կը կրկնէր.

— Ի՞նչ կայ, տէ՛ր իմ. . . ի՞նչ կայ, պայքարի մը աղմուկը և ձեր օդնութեան կանչելու ձօյնը լսել կարծեցի . . .

— Չէք սխալիր, պա՛րոն . . . ըսաւ Քրօսթիյաք տխուր գէմքով:

Մօմութ և իւր կինը սոսկալի անձկութեան մը մէջ կը գտնուէին: Կասքօնին դիտաւորութիւնը չէին գիտեր. սա Մօմութի գաղտնիքը գիտնալով կրնար ուզածը ընել անոնց: Յակայն եթէ Անժէլ և իւր ամուսինը Քրօսթիյաքի գէմքը լաւ քննելու չափ անխառվ հանդարտութիւն մ՛ունենային, անոր վրայ սեռակ

մը չարտօթիւր և յաղթական ուրախութիւն պիտի նշմարէին որ իւր ճակատը մթազնուզ սպառնալից խորշերուն ներքև կ'երևէին, թէև Կասքօնը չէր ուզեր որ այս ուրախութիւնը նշմարել սայ: Պ. տը Շէմրօ երրորդ անգամ հարցուց անոր թէ ինչո՞ւ համար կանչեց զինքը:

— Չեղ կանչեցի որ, պատասխանեց Քրօսթիյաք տխրազին ձայնով մը և խորունկ մտածութիւններէ դուրս ելնող անձի մը գէմքով, ձեղ կանչեցի որ օդնութեան հասնիք ինձ . . . :

— Տէ՛ր իմ. . . արդեօք սա թշուառակա՞նն է, ըսաւ նուրակը Մօմութը ցուցնելով, որ Անժէլի նստած թիկնաթուռն քովտարի վրայ կեցած էր, ձեռքերը խաչաձև կապած, և կինը պաշտպանելու և իւր կեանքը սուղ վաճառելու պատրաստ. վասն զի, ինչպէս որ ըսիք, տակալին չղիտէր բաղդախնդրին գիտաութիւնը: Ե՛կ խօսքերնիւ բառական է, տէ՛ր իմ, որ զինքը մարդոցս ձեռքը յանձնեմ:

Կասքօնը գլուխը թոթուեց և պատասխանեց.

— Այդ մարդուն զօրձը ես վրաս կ'առնեմ, գիտեմ անոր ինչ ընելիքս . . . : Չէ թէ այդպիսի աւաղակի մը գէմ օդնութեան կանչեցի ձեզ, այլ ինձ գէմ, պա՛րոն:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, տէ՛ր իմ:

— Ըսել կ'ուզեմ թէ կը վախնամ որ այսպիսի . . . վտանգաւոր կերպով կեղծաւոր . . . յանդուգն կերպով մեղապարտ կնոջ մը արտասաք մի գուցէ սիրաս շարժէ:

— Տէ՛ր իմ, արդար ըլլալու համար պէտք է միշտ արի ըլլալ . . . շատ արի ըլլալ:

— Իրաւունք ունիք, պա՛րոն . . . ասոր համար է որ տկարութենէս կը վախնամ: Չեղ կանչելուս պատճառն այն է որ ձեր ներկայութիւնը իմ զայրոյթս արժարժէ, բարկութիւնս բորբոքէ, վասն զի իմ պատուոյս գէմ եղած թշնամանաց ականատես եղաք, պա՛րոն . . . : Ուստի . . . եկէ՛ք . . . եկէ՛ք և ըսէ՛ք ինձ թէ՛ եթէ ներեմ, վատութիւն ըրած չը՛ցիտի ըլլամ . . . այսպիսի վիճակի մ'արժանի չը՛ցիտի ըլլամ . . . :

— Տէ՛ր իմ . . . :

— Կը հասկընամ միտքդ . . . իրաւունք ունիք . . . այո՛ւ, սուրբ Գէորդ վկայ ըլլայ (Քրուսթիյաք յիշեց որ իշխանը սուրբ Գէորդայ անուան վրայ երգում ըրած էր) որ վրէժս պիտի լուծեմ . . . :

Անժէլ և դուքսը հոգի առին. հասկըցան որ ասպետը զիրենք ազատել կ'ուզէ :

— Տէ՛ր իմ, ըսաւ Պ. տը Շէմրօ ծանր դէմքով մը, առանց երկիրդի կրնամ տիկնոջ առջև կրկնել ձեզ ինչ որ մի քանի վայրկեան առաջ ըսելու պատիւն ունեցայ . . . : Ահադին պատնէշ մը այլ ևս ձեզ կը բաժնէ . . . մեղապարտ կնոջ մը, յարեց նուիրակը, մինչդեռ Անժէլ իւր շփոթութիւնը ծածկելու համար երեսը թաշ կինակին մէջ կը դնէր :

Քրուսթիյաք գլուխը բարձրացուց և սրտաձմիկ ձայնով մը գոչեց .

— Խափշիկ մը զիս խաբէ՛ . . . պա՛րօն, չուառական Խափշիկ մը . . . իւր խառն արիւնովը . . . իւր սղնձագոյն դէմքովը :

— Տէ՛ր իմ :

— Աւերջապէս, պա՛րօն, յարեց Քրուսթիյաք նուիրակին դառնալով զայրապին և վշտահար զիմօք, զիտէք արդէն թէ ինչո՛ւ եկայ հոս . . . ի՛նչ զիտաւորութիւններ ունէի . . . ի՛նչ զննել կ'ուզէի տիկնոջ գլխուն վրայ . արգ՛ բաղդին մէկ սոսկալի կատակը չէ՞ որ . . . ճիշդ այն վայրկեանին . . . ոճրագործ ամուսին մը . . .

— Տէ՛ր իմ, զոչեց Պ. տը Շէմրօ Կաթօնին խօսքն ընդմիջելով, այսուհետեւ այդ զիտաւորութիւնները պէտք է որ տիկնոջ համար զաղտնիք մ'ըլլան :

— Գիտեմ, գիտեմ . . . սակայն ի՛նչ անակնկալ պատահար : Սիրտս բերկրութեամբ լցուած իմ խողաղ ընակարանս կու գամ . . . և ինչէ՛ր կը լսեմ :

— Տէ՛ր իմ . . . :

— Գուք ալ ինձ պէս լսեցիք : Այս չէ ամենը . . . ինչ կը տեսնեմ :

— Տէ՛ր իմ, հանդարտեցէ՛ք :

— Գուք ալ ինձ պէս տեսաք, Խափշիկ սաղա՛կ մը : Սակայն սուրբ Գէորդ վկայ ըլլայ որ վրէժս պիտի լուծեմ : Այո՛ւ, շատ լաւ ըրի որ ձեզ կանչեցի, պա՛րօն : Հիմա բարկութիւնս ծայրագոյն աստիճանին հասած է, ամենադժնգակ զիտաւորութիւններ երեւակայութեանս կը ներկայանան խառն բաղմութեամբ : Այո՛ւ, պէտք է որ այսպէս ընեմ, ըսաւ Քրուսթիյաք մտածող դէմքով մը, վերջապէս դատյ, այո՛ւ, յանցանքին արժանի վրիժաւորութեան միջոց մը դատյ :

— Տէ՛ր իմ, պէտք է արհամարհել . . .

— Արհամարհե՛լ, ս'ըջափ զիւրին է ձեզ ըսել, պա՛րօն, արհամարհե՛լ : Ոչ, պա՛րօն, ուրիշ բան պէտք է ինձ . . . ես աւելի լաւ դատյ, և դուք ալ պիտի օղնէք ինձ :

— Տէ՛ր իմ, պատրաստ եմ ընելու ինչ որ իմ ջանքերէս կախում ունի, առանց ընդունած հրամաններուս և պաշտօնիս յաջողութեան մնաս պատճառելու :

— Ալ այս անարժան կինը հետս չպիտի տանիմ : Այսօրու ընէ, այս վայրկեանէս իմ և անոր մէջ ամեն բան լմրնցած է :

— Քա՛ջ է, աէ՛ր իմ, զոչեց Պ. տը Շէմրօ որուն չափազանց ուրախութիւն պատճառեց Կաթօնին այս որոշումը, ասկէ՛ աւելի իմաստութեամբ կարելի չէր վարուիլ ձեզ :

— Աա՛ղն առաւօտ կանուխ, ըսաւ Կաթօնը կարուկ ձայնով մը, կինը և իւր դարձելի մեղսակիցը պէտք է որ իմ նաւերէս մէկը նստին :

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

Ա Ն Չ Ն Ա Ն Ո Ւ Ի Բ Ո Ւ Թ Ի Ի Ն

— Այո՛, պարոն, կրկնեց Աստքօնը, վաղը պէտք է որ կինս և այս չուտականը իմ նաւերէս մէկը նստին . . . այս է ահա իմ բոլոր վրիժառու թիւնս, յարեց վայրենական հեղնութեամբ այս բաւերը շեշտելով: Այո՛, զիտեմ ըրածս, այո՛, պարոն, երկուքն ալ, կինը և իւր մեղսակիցը, իբր երկու ամուսիններ, այս երկու թշուառականները ի միատին նաւ պիտի նստին: Գալով նաւուս ո՛ւր երթալուն, յարեց ասպետը այնպիսի կատաղի նայուածքով մը, որ Պ. տը Շէմրօյի վրայ մեծ տպաւորութիւն ըրաւ, դալով այս մեղապարտներուն կրելիք պատիժին, այդ չեմ կրնար ըսել ձեզ, միայն իմ զիտնալու բանս է: Յետոյ սաստկութեամբ Անժէլի թիւնն բռնելով, Քրուսթիյաք գոչեց. Ա՛հ, Խափշիկ տարփածուներ կ'ուզէք, այնպէս չէ՞, տիկին գ. քսուհի. Է՛հ, հող մի՛ ընէք, պիտի ունենաք . . . : Խսկ դու, ա՛պիրատ, դու ալ ձերմակ կ'իներ, գ. քսուհիներ կ'ուզես, այնպէս չէ՞, դու ալ պիտի ունենաս: Այլ ևս իրարմէ չպիտի բաժնուիք, դ՛րովալիր տարփածուներ, ո՛չ, երբէք իրարմէ չպիտի բաժնուիք . . . : Բայց չէք զիտեր թէ քանի՞ն պիտի նստի ձեզ ձեր միացումը:

— Տէ՛ր իմ, ի՞նչ ընելու միտք ունիք:

— Այդ իմ զիտնալու բանս է, պարոն, դուք պատասխանատուութենէ ազատ պիտի ըլլաք. մնացածը չէզոք տեղ մը պիտի կատարուի, յարեց Աստքօնը խորհրդաւոր և միանգամայն կատաղի ժպիտով մը, այո՛, ամայի կըլի իմ մէջ. և որովհետեւ այս մատաղ ամուլը փոխադարձ սէր մ'ունի, ցմահ սէր մը, բաւական ժամանակ պիտի ունենան այդ սիրոյն փորձն իրարու տալու հա-

մար . . . մինչև ցմահ:

— Ա՛հ, տէ՛ր իմ, կարծեմ կը հասկընամ ձեր միտքը, արդարեւ շատ սոսկալի բան պիտի ըլլայ այդ, ըսաւ Պ. տը Շէմրօ որ կարծեց թէ Քրուսթիյաք անօթութենէ մեղքներ կ'ուզէր իւր կինն ու Խափշիկը:

— Այո՛, սոսկալի բան պիտի ըլլայ: Հիմա ձենէ սա միայն կը խնդրեմ, և դուք ալ ինձ եղած թշնամանայ իբրև ականատես վկայ՝ չէք կրնար մերժել, սա միայն կը խնդրեմ որ աջակից ըլլաք ինձ այս երկու մեղապարտները նաւերէս միոյն մէջ տանելու համար: Ա՛յոզեմ որ ես անձամբ զանոնք նաւապետին յանձնեմ, և իւրեն հրամաններ տամ, այնպիսի հրամաններ որոյ թերևս հնազանդելու չսիտի համարձակի եթէ զանոնք անձամբ չտամ: Գ. տը Շէմրօ՛ իւր խորագիտութեան հակառակ՝ Քրուսթիյաքի կեղծ բարկութենէն խաբուելով, հաստատ ձայնով բայց ակնածութեամբ ըսաւ անոր.

— Տէ՛ր իմ, արդարութիւնն անաչառ է, բայց պէտք չէ որ անողորմ ըլլայ:

— Ի՞նչ ըսել է, պարոն, յարեց Քրուսթիյաք դողողութեամբ, միթէ այս մեղապարտներուն արժանի եղած պատիժը որոշողը կրնայ ինձմէ ուրիշն ըլլալ. կը մերժէք ձեր աջակիցութիւնը քանի որ ուզածս ուրիշ բան չէ բայց միայն այս մարդը և իւր մեղսակիցը իմ նաւերէս մէկը տանիլ:

— Ա՛յ, տէ՛ր իմ, սակայն զիտելու տամ Ձեր Բարձրութեան թէ թերևս աւելի վեհանախական կ'ըլլար . . .

Անժէլ տեսնելով որ պէտք չէ պարագ կենալ, Քրուսթիյաքի տոքը ինկաւ շնորհք գոչելով, մինչդեռ Վօմուսթ կարծես տիտուր լուծեան մը մէջ ընկղմած էր. յետոյ Պ. տը Շէմրօյի դառնալով, մանկամարդ կ'ինը յարեց.

— Ա՛հ, պարոն, դուք որ զոյաւուն և բարի անձ մը կ'երեւիք, միջնորդեցէ՛ք ինձ համար իմ սիրելի լորտիս քով. թո՛ղ զիս ամենէն գծնդակ պատիժներու դատապարտէ, վստահ չի արժանի եմ, կը կրեմ զանոնք, բայց թո՛ղ իմ սիրելի լորտս . . .

— Ա՛րքղիւեմ՝ ձեզ զիս ձեր սիրելի լորտն անուանել, տիկին, ըսաւ Քրուսթիյաք դառնութեամբ, այլեւ ես ձեր սիրելի լորտը չեմ :

— Ա՛՛՛՛՛, տէ՛ր իմ, զիս այն նաւը մի՛ զրկէք :

— Ինչո՞ւ համար, տիկին :

— Աւան զի, տէ՛ր իմ, Քաճեղէն երկկայմն է այն, որուն հրամանատարն է Բալֆ նաւապետը. այս մարդը անդու թ է, Փոթորիկ ծովապատակին տեղն անցած է այն նաւուն մէջ :

— Ես ալ ճիշտ ազոր համար Քաճեղէնն ընտրեցի, տիկին, զիտանալովոր Բալֆ նաւապետը ձեր վատազլի տարփածուն ամենէն ռիսկիւմ թշնամին է, ըսաւ Քրուսթիյաք, որ Անժէլի միտը շատ աղէկ կը հասկընար :

— Բայց, տէ՛ր իմ, շատ աղէկ զիտէք որ այն նաւը վաղը հոս մտար, գրեթէ լերան ստորոտը Նհանգսց խորշին մէջ կենալու պիտի գայ :

— Այո՛, տիկին, զիտեմ :

— Արեմն, տէ՛ր իմ, զիս ստիպել կ'ուզէք որ այն նաւը մտնեմ, մինչդեռ մեռնիլս զիտնայի՛ այն եղբրքին մտեհալու անգամ չպիտի համարձակէի : Ար մտնա՞ք արդեօք, տէ՛ր իմ, այն սոսկալի յիշատակները որք ինձ համար այն տեղի հետ վերաբերութիւն ունին :

— Ինչ խորամանկ է, ըսաւ Քրուսթիյաք ինքնիրեն, ինձ հասկըցընել կ'ուզէ թէ իրեն յատկացեալնաւ մը կայ Քաճեղէնն կուչուած, որուն նաւապետը իրեն համար անձնանուէր մէկն է՝, թէ այս նաւը վաղն առտու հոս մտար պիտի գտնուի . . . : Ա՛րքի թէ այս այն նաւն բլլալու է զոր անապարանօք պատուաստել տուած է թէ՛ իւր և թէ՛ դուքսին փախուսան ապահովելու համար, երբ Բիւթլէր գնդապետին զիս տանիլը տեսաւ. անշուշտ սե ձկնորսներէն մին առաջուց դացած է պէտք եղած հրամանները տալու համար :

Պահ մը մտածելէ ետե Աստրօնը բարձր ձայնով ըսաւ .
— Այո՛, այն յիշատակները ձեզ համար սոսկալի են, զիտեմ,

տիկին :

— Արեմն, տէ՛ր իմ, միթէ բաւական արիութիւն պիտի ունենա՞ք զիս . . .

— Այո՛, այո՛, զոչեց ասպետը յեղակարծ մոլեղնութեամբ, այո՛, երբէք չպիտի գթամ այն վատ արարածին վրայ որ զիս այսպէս ամօթալի կերպով թշնամանեց : Իմ ուզածս ալ այդ էր, ինչու որ վրիժառութիւնս աւելի շուտ պիտի սկսի : Հիմա փորձով ցոյց պիտի տամ ձեզ որ ինէ բնաւ զթութիւն չէք կրնար ակնկալել, հիմա պիտի տեսնէք :

Քրուսթիյաք Բասի մը զարկաւ :

— Ինչ պիտի ընէք, տէ՛ր իմ,

— Չեր հաւատարիմ Միրէթը պիտի գայ, դուք ձեր բերնով հրաման պիտի տաք անոր որ մէկը զրկելով պատուիրէ Բալֆ նաւապետին որ Քամէլիօնի մէջ պէտք եղած պատրաստութիւններն ընէ առտուն կանուխ առադատս պարզելու համար :

— Ա՛՛՛՛՛, տէ՛ր իմ, այդպիսի հրաման մը ես բերնովս տամ : Բարբարոսութիւն է այդ :

— Հնազանդեցէ՛ք, տիկին, հնազանդեցէ՛ք :

Միրէթ եկաւ : Անժէլ թախածալից դէմքով հրամանը տուաւ :

— Հնազանդեցայ ձեզ, տէ՛ր իմ : Հիմա կը ինդրեմ որ վերջին շնորհք մ'ընելու գովմն ունենաք, յանուն մեր անցեալ սիրոյն :

— Ա՛՛՛՛՛, այո՛, անցեալ սէր, զոչեց Քրուսթիյաք, այո՛, բոլորովին անցեալ :

— Մէկ վայրկեան խօսակցութեան շնորհն ըրէ՛ք ինձ, տէ՛ր իմ :

— Ա՛՛՛՛՛, ո՛չ, երբէ՛ք :

— Տէ՛ր իմ, մի՛ մերժէք, անողորմ մի՛ բլլաք :

— Գնա՛՛ աչքիս առջևէն, անհաւատարիմ կին :

— Տէ՛ր իմ, ըսաւ Անժէլ ձեռքերն իրար կցելով :

— Տէ՛ր իմ, ըսաւ Պ. տըՇէմբօ, քանի որ իսպառ կը բաժնուիք տիկինէն, մի՛ զլանաք անոր այս վերջին միթարութիւնը :

— Դո՞ւք ալ, պարո՞ն տը Շէմբօ, դո՞ւք ալ . . . որ սակայն

ականատես եղաք : Օ՛ն ուրեմն , կը հաւանիմ , տի՛կին , բայց սրայմանաւ մը :

— Հրամայեցէ՛ք , տէ՛ր իմ :

— Պէտք է որ ձեր մեղսակիցը մեր խօսակցութեան ժամանակ ներկայ գտնուի :

— Արածեմ շատ աղէկ մտածեցի այս բանը , ըսաւ Քրուսթի-յաք ինքնիրեն , յուսամ որ դքսուհին միտքս հասկընալով նախ պիտի մերժէ :

— Բայց , սիրելի լորտս , ըսաւ արգարեւ Անժէլ , չեմ ուզեր որ ուրիշ մը լսէ այս վերջին խօսակցութիւնը զոր ինձ շնորհելու նիդ կը պաղատիմ :

— Սքանչելի՛ , ո՛հ , մէկ բառով ամեն բան կը հասկընայ , ըսաւ Քրուսթիյաք ինքնիրեն , և յարեց բարձր ձայնով . Կոչ պատճառաւ կ'ուզէք , տի՛կին , որ մեր խօսակցութիւնը զաղտնի ըլլայ . միթէ ձեր սիրականէն , ձեր ընտրած տարփածուէն պահելիք բան մ'ունիք :

— Ներում պիտի խնդրեմ , տէ՛ր իմ :

— Շատ լաւ , այդ ներումը կրնաք ձեր մեղսակիցին առջև խնդրել . ո՛րչափ ինքզինքնիդ ամբաստանէք , ա՛յնչափ պիտի տեսնէք որ ձեր ընթացքը դէշ , ամօթալի , անարժան եղած է , ա՛յնչափ պիտի համոզուիք թէ ի՛նչ անարգ ընտրութիւն մ'ըրած էք : Այդ ապիրատին և ձեր պատիժը պիտի ըլլայ այս :

— Բայց , տէ՛ր իմ . . .

— Աերջին խօսքս է այս , պատասխանեց Քրուսթիյաք :

— Այս մարդուն յուսահատութենէն չէ՛ք վախնար , ըսաւ Պ. տը Շէմրօ կամայ մը :

— Ո՛չ , ո՛չ , մասնիչները վատ կ'ըլլան : Տեսէ՛ք անգամ մը սա անզգամին դէմքը , ո՛րչափ ակնկոր է . գլուխը վեր առնելով երեսս նայելու անգամ համարձակութիւն չունի : Այսու ամենայնիւ կը խնդրեմ , պա՛րոն , որ ձեր պահապաններէն մի քանին այս ձեմասրահին դրսի կողմը դրկէք , և պատուիրէք որ նշան մը տալուս պէս ներս մանեն : Յետոյ մեծ վարպետութիւն մ'ըրածի

պէ՛տ , Քրուսթիյաք ըսաւ . Մնաց՝որ , պարո՛ն տը Շէմրօ , եթէ դուք ալ ներկայ գտնուիք այս խօսակցութեան , յանցաւորներուն պատիժն տելի դժնդակ պիտի ըլլայ :

— Ո՛հ , տէ՛ր իմ , զիս այս աստիճան նախատանայ մի դատարարտէք , կոչեց Անժէլ յուսահատ ձայնով մը : Իսկ դուք , պա՛րոն , կ'աղաչեմ , մի՛ ընդունիք այս առաջարկութիւնը , ըսաւ Պ. տը Շէմրօյի :

Այս վերջինը ներումն խնդրեց Ասքսօնէն թէ կարելի չէ իրեն այս հրաւերն ընդունիլ . յետոյ դուրս ելաւ առանձին թողլով Մօնմութը , իւր՝ կիկնը և Տրաղդախնդիրը :

Այն ինչ Գաղղիոյ նուիրակը դուրս ելած էր , Մօնմութ տեսնելով որ իւր խօսքերը չեն կրնար լսուիլ , ձեռքը մտերմաբար Քրուսթիյաքի՝ երկընցուց և սրտադին ձայնով մ'ըսաւ անոր .

— Պա՛րոն , դուք շատ հանձարեղ , քաջասիրտ և հաստատամիտ անձ մ'էք . շնորհակալութիւն ձեզ , ներեցէ՛ք մեզ պահ մը ձեր վրայ կասկածելուս համար :

— Ո՛հ , այո՛ , ներեցէ՛ք մեր անիրաւ անվստահութեան , ըսաւ Անժէլ որ իւր կողմանէ Ասքսօնի ձեռքը իւր ձեռքերուն մէջ կ'առնէր : Մենք չափազանց մտահոգութեան մէջ էինք , և դուք բոլորովին մոլեգին և այլայլած կ'երևէիք :

— Ամենքս ալ իրաւունք ունէինք , տիկին դքսուհի , ըսաւ Բաղդախնդիրը . դուք իրաւունք ունէիք վախալու , վասն զի իմ վերադարձս կրնար երկիւղ պատճառել . ես ալ իրաւունք ունէի կատղելու , վասն զի տէր դուքսն աւաղակ կը կարծէի . գալով դէմքիս այլայլութեան , ըսելու մեղադրանք չըլլայ , դուք ևս պիտի խոստովանիք թէ երկու օրէ ի վեր այնպիսի այլանդակ բաներ պատահեցան , որ վերջապէս ապուշ դարձայ : Բարեբաղդաբար երբ տեսայ որ ըրածս տղայութիւն է և ամեն բան պիտի կորսընցունեմ , բնական անվիհերութիւնս վերստին գտայ :

— Արի և բարեսիրտ անձ , ըսաւ Մօնմութ :

— Արի կ'ըսէք , այո՛ , Քրուսթիյաք տոհմը իւր արեան մէջ կը կրէ արիութիւնը , տէ՛ր իմ , իսկ բարեսրտութեան զալով ,

Ճշմարիտ կ'ըսեմ որ այդ չլիտեմ. եթէ իրօք բարեփրտ եմ, յան-
ցանքն իմն չէ, ձեր կնոջ գործն է, վասն զի ինքն է որ լաւա-
գոյն ըլլալու փափաք մը առաւ ինձ: Սակայն, ի՛շխան, վայր-
կեանները թանկազին են. ամեն բան պատրաստ է Անդղիոյ մէկ
գաւառն ի նպաստ ձեզ ոտք հանելու համար. Լուսովիկոս ԺՊ:
պիտի օգնէ այս ապստամբութեան: Սկովտիոյ և Իրլանտոյի փոխ-
արքայութիւնը և ուրիշ ամեն տեսակ փառքեր կ'ընծայեն ձեզ:

— Երբէք ես չպիտի հաւանիմ օդուտ քաղել այդ ինձ ընծա-
յուած բաներէն . . . : Քաղաքային պատերազմներն արդէն
շատ սուղի նստան ինձ, գոչեց Մծմուլթ: Յետոյ Անժէլը զիտե-
լով յարեց. Այլ ևս փառասիրութիւն ալ չունիմ:

— Տէ՛ր իմ, աղէ՛կ մտածեցէք . . . : Եթէ սրտերնիդ կ'ու-
զէ, ձեր երեսէն այդ պղնձագոյն ծեփը կը հանէք, Շէմրօյին
կ'ըսէք որ մասնաւոր պատճառներէ ստիպուած էք ինքզինքնիդ
մինչև այսօր ծածուկ պահելու. ո՛վ ըլլալնիդ կ'ապացուցանէք ա-
նոր, ես ալ ձեզ կը դարձընեմ ձեր դքսութիւնը, և ձենէ կը
ինգրեմ որ արտօնութիւն շնորհէք ինձ երթալ-Քօնուայ կամ այլ-
ուր ձեր քով կուուելու, որպէս զի, ինչպէս կ'ըսեն, մարդեղէն
զրահով ձեզ ծառայեմ. . . : Ստոյդ եմ որ ասի հաճոյք պիտի
պատճառէ տիկին գքուհւոյն:

— Մեր ալ մտքէն կ'անցնէր այդ, ըսաւ Անժէլամուսնոյն ե-
րեսը նայելով:

— Պէտք է որ ներէ մեզ, ըսաւ դուքոր. իրեն նման անձինք
այնքան հազուադիւր են որ . . . այս մասին մեր տարակոյսը
կրնայ ներելի ըլլալ . . . :

— Ա՛հ, տէ՛ր իմ, թողէ՛ք հիմա այդ խօսքերը. . . զիս պի-
տի շփոթեցընէք . . . : Գործին վրայ խօսինք . . . : Ա՛րնդու-
նիք փոխարքայութիւնները, այո՛ կամ ո՛չ. . . : Սակայն մի՛ կար-
ծէք թէ ձեր գերը վրայէս նետելու համար կ'ստիպեմ ձեզ այս
ըսելու, տէ՛ր իմ. այս գերը հաճելի է ինձ, զիս կ'ըբօսեցընէ:
. . . վարժուեցայ անոր: Մանաւանդ որ շատ ծանր պիտի դայ ինձ
այլ ևս Տէ՛ր իմ չկոչուիլ, թողունք որ քթիս տակէն ո՛րչափ կը

խնդամ երբ կը մտածեմ բոլոր այն սուտերուն վրայ զոր պարզա-
միտ Շէմրօյի կը կ'ընեցընեմ: Ես կը սնդեմ որ դուք, տէ՛ր իմ,
ձեր անունովն ու աստիճանովը դարձեալ երեան երնէք, վասն-զի
կրտեսնեմ որ Անդղիոյ մէջ ձեզի սաստիկ պէտք ունին և ձեզ կ'ըս-
պասեն որ երթաք բոլոր ազգը և մասնաւորապէս Քօրնուայցիներ-
ըը երջանիկ ընէք . . . ինէ աւելի աղէկ դիտնալու էք ասոնք:

— Ա՛հ, ես շատ աղէկ զիտեմ. այդ փուճ պատրուակները ո-
րով փառասիրութիւնս գրգռել կ'ուզեն:

— Բայց, տէ՛ր իմ, գործն այս անգամ աղէկ պատրաստուած
կ'երևի: Պարզամիտ Շէմրօն բերող Ֆրքաթօնը զէնքով և ուղմա-
վթերքով լեցուն է, անոր մէջ աշխարհիս բոլոր Քօրնուայցիները
զինելու և ոտք հանելու չափ բան կայ, ասիէ զատ ձեզ օգնելու
պատրաստ տասներկու քի չափ ձեր կուսակիցիները կան . . . :

— Առսակիցնե՛րս կան, ս՛ւր են, գոչեց Մծմուլթ:

— Շէմրօյի Ֆրքաթօնին մէջ: Այդ քաջերը սաստիկ անհամ-
բերութեամբ ինձ՝ այսինքն ձեզ կ'սպասեն, տէ՛ր իմ: Ատոնց մէջ
կատաղի մ'ալ կայ Մօրթիմէր անուն, զոր Շէմրօ անհնարին
դժուարութեամբ կրցեր է համոզել որ նաւէն գուրս չենէ, ին-
չու որ զիս . . . ըսել կ'ուզեմ զձեզ իւր բազկացը մէջ սեղմելու
արտաքոյ կարգի տեսչ մ'ունի եղեր:

Անժէլ իւր ամուսնոյն զէմքին վրայ սիրող անձկութիւնը տես-
նելով ըսաւ անոր:

— Տէ՛ր Աստուած, ի՛նչ ունիք, սի՛րելիս:

— Ալ պէտք չէ վարանիլ, ըսաւ Մծմուլթ, պէտք է որ բո-
լոր ճշմարտութիւնը յայտնեմ Պ. տը Շէմրօյի:

— Աստուած իմ, ի՛նչ կ'ըսես, Յակոբ:

— Փոխարքայ ըլլալ կ'ուզէք, տէ՛ր իմ, շատ լաւ:

— Ո՛չ, պարոն, թոյլ չտալ որ ինձ համար կորսուիք, այ՛ս է
ուղածս. դարձեալ յաւիտեան երախտապարտ պիտի մնամ ձեզ այն
ժառայութեան համար զոր ինձ ընել ուզեցիք . . . :

— Ի՛նչ կ'ըսէք, տէ՛ր իմ, մի՛թէ փոխարքայ ըլլալու համար
չէ՞ որ զիս իշխանական տիտղոսէս կը հանէք:

— Կուսակիցներս Ֆրքաթօնին մէջն են . եթէ ձեր վեհանաճառաջարկութիւնն ընդունիմ, վաղը պիտի ճանչցուիք, պարոն . . . և պիտի կորսուիք . . . :

— Բայց, տէ՛ր իմ . . .

— Եթէ այս պարագան չըլլար, որով, դարձեալ կ'ըսեմ, ձեր ո՛վ ըլլալը երևան պիտի ելնէ հիմա . . . Թերևս ընդունէի ձեր վեհ անձնանուիրութիւնը . Պ. տը Շէմրօյի սխալը կրնար զոնէ քանի մ'օր տեւել . . . և ես ալ կրնայի գձեղ իւր բարկութեան դէմ ապահովութեան մէջ դնել . բայց հիմա իմ կուսակիցներուն նաւուն մէջ ըլլալը զիտնալով եթէ ձեր առաջարկութիւնն ընդունիմ, գձեղ անխուսափելի վտանգի մը ենթարկած պիտի ըլլամ . . . երբէք չեմ հաւանիր ասոր :

— Տէ՛ր իմ, կը մտնա՞ք արդեօք թէ՛ եթէ այս յեղափոխութեան գլուխը չանցնիք, մշտնջենաւոր բանտարկութեան պիտի դատապարտուիք :

— Ահա ես ալ վտանգէ մը խոյս տալ ուզելուս համար է որ գձեղ զոհեմ չեմ ուզեր, պարոն : Երբ իմացայ որ Քիթլէր գնդապետին ձեռքը գերի իյնալով մեկնած էք, ձեր ետեէն վաղելու վրայ էի, որպէս զի ձեզ անոր ձեռքէն կորդեմ :

— Ո՛հ, Ատուած իմ, մտածեցէ՛ք բանտը, Յակոբ . . . մշտնջենաւոր բանտ մը, բայց ո՛չ, կարելի բան չէ, իսկ ե՛ս, ե՛ս ինչ պիտի ըլլամ եթէ թողչտան ինձ հետդ երթալ : Ո՛չ, ո՛չ, չպիտի մերժէք այս վեհանձն մարդուն անձնանուիրութիւնը :

— Անժէլ, ըսաւ իշխանը յանդիմանութեան ձայնով մը, Անժէլ . . . : Իսկ այս վեհանձն մարդը . . . պիտի լքե՞նք զինքը վատութեամբ, երբ նա մեզ համար իւր անձը պիտի զոհէ : Բանտարկութենէ ազատ մնալու համար . . . դատապարտենք զինքը յախտենական գերութեան . . . :

— Գերութեան . . . :

— Անշուշտ . . . չէ՞ որ հիմա պետական գաղտնիքի մը տեղեակ է նա : Միթէ Պ. տը Շէմրօ չը՛պիտի կատգի իւր խաբուած ըլլալն իմանալով : Պէտք է զիտնար որ սխալը երևան

ելնելուն պէս այս անձը մշտնջենաւոր բանտարկութենէ մը չպիտի կրնայ ազատիլ :

— Բայց, տէ՛ր իմ, եթէ կը հաճիք, դուք ձեզի վերաբերեալ բաները մտածեցէ՛ք, զոչեց Քրուսթիյաք, և, ինչպէս կ'ըսեն, բերնէս հացը մի առնէք . . . : Կարծեմ պետական բանտարկեալ մ'ըլլալը զգուելի բան մը կը թուի ձեզ . . . : Բայց դուք չէք զիտեր որ ինձ համար ապահով հանդստարան մ'է այն . . . իմ ձերութեան օրերուս համար ստոյգ ապաստանարան մը : Շխաղը խօսելով, բաղդախնդիր կեանքը զիս կը ձանձրացընէ, վախճան մը պէտք է, տեղական բան մը կ'ուզէի . . . : Հիմա դուք դատեցէ՛ք թէ այս բանը չը՛յարմարիր ինձ . . . : Պետական բանտարկեալ ըսելով չանցնի՛նք, ամեն ուզող չկրնար ունենալ այն վիճակը . գարձեալ կ'ըսեմ, գթացէ՛ք վրաս, իմ ձերութեան օրերուս մէջ զիս մի զրկէք այս վերջին հանդստարանէն . . . մի կործանէք ապագայս :

— Մտի՛կ ըրէք, քաջ և վեհանձն ասպետ, պատասխանեց Մօնմութ սիրալիր ձայնով մը և Քրուսթիյաքի ձեռքը սեղմելով, այդ պատճառանքները զիս չեն կրնար խաբել . . . :

— Տէ՛ր իմ, կ'երդնում որ . . .

— Մտի՛կ ըրէք, կ'աղաչեմ . երբ խօսքերս լսէք, մերժելուս վրայ չպիտի զարմանաք . . . : Պիտի տեսնէք որ եթէ ձեր անձնազոհութիւնն ընդունիմ, կրկնակի մեղապարտ պիտի ըլլամ . . . : Պիտի հասկընաք այն ցաւալի յիշատակները, չըսեմ խղճի խայթերը . . . զոր ձեր անձնանուիրութեան առաջարկութիւնը, զոր ներկայ գէպքերը սրտիս մէջ կ'արթնցընեն . . . : Իսկ դուք, ո՛վ իմ ամենասիրելի Անժէլս . . . պիտի իմանաք վերջապէս այնպիսի գաղտնիք մը զոր մինչև այսօր ձենէ պահելու պարտաւորեցայ . ներկայ պարագային նման ծանրակշիռ պարագայ մը պէտք էր որ ստիպուէի այս ցաւալի գաղտնիքը ձեզ յայտնելու :

ԳԼՈՒԽ ԲՍԱՆԵՐՈՐԴ ԵՅԹՆԵՐՈՐԴ

Ն Ա Հ Ա Տ Ա Կ

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, սի'րելի Յակոբս, զիս կըսարսափեցընէք, ըսաւ Անժէլ տեսնելով Մօնմութի յուզմունքը:

— Հարկաւ զիտէք, ըսաւ իշխանը Քրուսթիյաքին, այն քաղաքական դէպքերը որոց պատճառաւ ձերբակալ ըլլալով Աոնտրայի Աշտարակը դրուեցայ 1683ին:

— Արթնեմ զիս չէք մեղադրեր եթէ ըսեմ թէ այս մասին բնաւ բան մը չգիտեմ. ժամանակակից պատմութենէն բնաւ տեղեկութիւն չունիմ, որով՝ այս ալ ըսեմ, և ըսելս պարծանք չըլլայ, զերս սոսկալի կերպով կը դժուարանար և ձեզ համար կընար անպատուութիւն ալ ծագիլ . . . վասն զի միշտ կը վախնայի որ չըլլայ թէ անբանօրէն խօսք մ'ընեմ . . . և վտանգի ենթարկեմ, չէ թէ զիտնականի համբաւս, որովհետև չունիմ զայն, այլ ձեր բաղըը զոր անխոհեմաբար ստանձնեցի:

— Հիմա, ըսաւ Մօնմութ, հօրս մահուանէն ետև երբ հօրեղբայրս, Եօրքի դուքսը, զահը բարձրացաւ Յակոբ Բ. աշուհամբ, իրեն զէմ նիւթուած դատակցութեան մը մէջ մտայ: Ընթացքս արդարացընելու չպիտի աշխատիմ. . . այսօր տարիքս և խորհրդածութիւններս զիս լուսաւորած են. զիտեմ որ միանդամայն մեղապարտ և անմիտ էի. երիտասարդ Արկայլ կամը սոյն դատակցութեան հողին էր. ամեն բան Օրանժ իշխանին աչացն առջև կընիւթուէր, որ այն ատեն Հոլանտայի հանրապետութեան նախագահն էր և այս վայրկենիս Անդղիոյ թագաւոր . . . : Արկայլ Բողոքական կուսակցութեան վրայ ունեցած ազդեցութիւնս, փառասիրութիւնս և Յակոբ Բ.ի դէմ հակառակութիւնս

լաւ զիտէր, ուստի առանց դժուարութեան կըցաւ իւր զիտմանցը մասնակից ընել զիս. ես ալ՝ չնորհիւ իմանուան և ազդեցութեան, իսկոյն դատաձանութեան գլուխ ելայ . . . : Անդղիոյ մէջ թղթակիցներ ունէի . . . որք ինձ կ'ըսէին թէ Անդղիա ոտք կոխելուս պէս Պասպական թագաւորը զահընկէց պիտի ընեն և զիս անոր տեղ թագաւոր պիտի հրատարակեն: Թէքսէլէն մեկնեցոյ երեք նաւերով որք իմ գումարած զինուորներովս լցուած էին. Արկայլ ինէ առաջ Սկովտիա համնելով, իւրյանդուդն ձեռնարկութիւնը գլխովը վճարեց: Անդղիա ելայ մի քանի անձնանուէր կուսակցաց գլուխն անցած: Այն ատեն իմացոյ թէ ո՞րչափ խարուած էի: Առ առտեւն երեք կամ չորս հազար հողի միացան այն սակաւթիւ քաջերուն որք անձերնին ինձ նուիրած էին, և որոց մէջ էին Մօրթիմէր, Տօչէյ, Տըալէյ, Մօնքի որդին, երիտասարդ դուքսն ա' Ալլըմարը, արքայական բանակին գլուխն անցած ինձ դէմ յառաջացաւ. առանց բարակ հաշիւներ ընելու ողբիցի վճարական հարուած մը տալ. Պրայժ-Ղաթէրի մօտ Սէճ'օրի մէջ ընդհանրէն վրայարձակեցայ և յաղթուեցայ . . . թէ և փոքրիկ բանակս և մանաւանդ հեծեղազօրքս որոց կը հրամանատարէր բա՛ջն Գէորդ Սիտ'էյ, զից սղնական արիւթիւնցոյց ատին . . . :

Գէորդ Սիտնէյի անուոր արտասանած ատեն իշխանին ձայնը նուաղեցաւ, իւր դէմքէն կ'երևէր թէ ցառալի սրտայուզութեան մը մէջ ինկած էր:

— Գէորդ Սիտ'էյ, իմ երկրորդ հայրս . . . իմ բարերարս, կոչից Անժէլ, քիզի համար պատերազմելով մնուեր է: Արեմն սոյն ճակատամարտին մէջ սպաննուեր է . . . սոյն էր այն զաղտնիրը զոր ինէ կը սրահէիր . . . :

Գուքսը գլուխը խոնարհեցուց, վայրկեան մը լուռ կեցաւ և յիտոյ յարեց:

— Հիմա ամեն բան կ'իմանտա, սի'րելիս . . . : Մեր պարտութիւնը կատարեալ եղաւ: Աս վերաւորուած ըլլալով, ասղին անդին կ'իթափաւէի, զիս բռնողին ստակ խոստացուած էր: Այս

աղէտալի սարտութեան հետեւալ օրը ձերբակալեալայ, զիս Լոնտոնայի Աշտարակը տարին, քննութիւններն ըրին, և հայրենեաց դաւաճան գտտուելով ի մահ՝ դատապարտուեցայ:

— Ա՛հ, զօչեց Անժէլ սոսկման ճիշմը բառնալով և Յակոբին բազկացը մէջ նետուելով, զիս խորեր ես: Տէ՛ր Աստուած, ես քեզ միայն քսոցրեալ կարծէի:

— Հանդարտէ՛, Անժէլ, հանդարտէ՛ . . . այո՛, այս դատապարտութիւնը քննէ պահած էի, թէ՛ քեզ անհանդիստ չընելու համար և թէ . . . : Այրկեան մը վարանելէ ետև Մօնմութ յարեց. Հիմա ամեն բան պիտի իմանաս . . . արիութիւն պէտք է ինձ, այո՛, շատ արիութիւն պէտք է ինձ այս յայտնութիւնը քեզ ընելու համար:

— Ինչո՞ւ համար, ի՞նչ ունիս վախնալու, ըսաւ Անժէլ:

— Աւա՛ղ . . . խեղճ՝ կին, երբ ըսելիքներս ըսես, թերես սոսկմամբ պիտի զխտես զիս:

— Կը կարծես այդ բանը, Յակոբ, կ'սպասես ինէ այդպիսի բան մը:

— Աւերջապէս, ըսաւ Մօնմութ ճիւղ մ'ընելով, ինչ որ ալ պատահի, պէտք է որ խօսիմ . . . այս վայրկենիս յորում թերես իրարմէ իսպառ պիտի բաժնուինք:

— Երբէք, ո՛հ, երբէք, ըսաւ Անժէլ յուսահատութեամբ:

— Եթէ ինձ կը հարցընէք, ըսաւ Քրոսթիյաք, ես պարոն տը Շէմրօն բռնածիս պէս Գիսաբնակ-Քլուրեն վար կը նետեմ. այնուհետև ձեր զերիներուն հետ անոր պահնորդներուն զործը կը լմընցունենք: Կ'ուզէ՞ք այս միջոցը փորձել. զէնք առնելու կարող քանի՞ զերի ունիք, տէ՛ր իմ:

— Պ. տը Շէմրօյի պահնորդաց բազմութիւ ըլլալը կը մոռնաք դուք, ասպետ, ձկնորս սևերը մեկնեցան, չորս հինգ հոգիէն աւելի չլայ հոս . . . : Բռնութիւն կարելի չէ . . . : Նախանամութիւնն անշուշտ կ'ուզէ որ մեծ ոճիր մը քաւեմ . . . ամեն բանի յանձնառու պիտի ըլլամ:

— Աճի՛ր, ի՞նչ կ'ըսէք, Յակոբ, մեծ ոճիր մը զործած էք,

երբէք չեմ հաւատար, զօչեց Անժէլ:

— Աճի՛րս թէ և ակամայ, բայց սոսկալի եղաւ . . . : Անժէլ, այս ժամուս իմ պարտաւորութիւնս է յայտնել քեզ ինչ որ պարտիմ Սիանէյի, քու սղնիւ ազգականիդ որ տղայութեանդ ատեն քեզ այնքան խնամք տարաւ, քեզ որ որբացեալ էիր: Մինչդեռ դու ուսումը կ'աւարտէիր Գաղղիոյ մէջ ուր քեզ տարած էր նա, Սիանէյ, զոր Հոլանտայի մէջ տեսած էի, ինձ հետ սերտիւ կապուած էր. ճաշակի, սկզբանց և կարծեաց զարմանալի համակերպութիւն մը զմեզ իրարու մօտեցուցած էր, բայց ինքն այնքան զուրկ էր որ պարտաւորեցայ իրեն ներկայանալու: Որքան ուրախացայ առաջին անգամե՛ս իւր ձեռքը սեղմելուս համար . . . : Սիանէյի հողոյն զեղեցկութեանը երբէք հաւասարող եղած չէ . . . : Երբէք չպիտի ըլլայ մէկը որ անկէ աւելի աղնիւ յատկութիւններ ունենայ, անկէ աւելի եռանդուն և վեհանձն սիրտ մը ունենայ: Մտածելով ազգաց երջանկութիւնը, խաբուելով ինչպէս որ ես ալ թերես ըստուեցայ զիտաւորութեանցս միջև ուր յանդերձն նկատմամբ, մարդկութեան նուիրական գատը պաշտպանել կարծեց և ուրիշ բան չպաշտպանեց բայց եթէ մարդու մը աղէտալի փառասիրութիւնը: Մինչդեռ դաւակցութիւնը կը կազմուէր, նա իմ ամենէն ճարտար զործակատարս, ամենէն աւելի մտերիմս եղաւ: Չեմ կրնար սթամել թէ ո՛րպիսի կոյր անձնանուիրութեամբ կապուեցաւ հետս. մէկ սէր միայն կար որ իւր սրտին մէջ կը մաքաւէր ինձ նուիրած սիրոյն հետ, և այն ալ քու վրայ ունեցած զօրովն էր, քու վրայ, իւր տարաբնակ ազգականը, զոր պահեց և մեծցուց. ո՛հ, ո՛րչափ կը սիրէր զքեզ: Նա՛ իբր զինուոր և իբր դաւաղիբ, իւր կենաց բազմադիմի յուզմանց և վտանգներուն մէջ միշտ միջոց մը կը գտնէր երթալ իւր Անժէլը ողջագուրելու: Իւր վերադարձին միշտ արտասուալից աչօք կը խօսէր քու վրայ . . . : Այո՛, այսպիսի խօլ անվեհերութեան, անզուսպ զործունէութեան աէր անձ մը . . . տղու մը պէս կուլար պատմելով ինձ քու շնորհալի հանդամանքերդ, զեռահաս հասակիդ մէջ ունեցած ուսումնասիրութիւնդ և անցուցած տխուր

կեանքդ, ողորմելի և լքեալ ազջիկ, վասն զի դու աշխարհիս մէջ Սիսնէյը միայն ունէիր . . . : Պրայճ-Վաթէրի աղէտալի օրը հեծելազօրաց հրամանատարն էր. հրաշալի քաջութիւններ գործելէ ետև իբր մեռեալ պատերազմի գաշտին վրայ ձգուեցաւ . իսկ ես . . . փախտապահանաց հեղեղէ մը մղուած, և ծանրապէս վիրաւորուած չկրցայ զինքը դնել :

— Այն օրը մեռաւ, այնպէս չէ՞, ըսաւ Անժէլ արտասուքը սրբելով :

— Մտիկ ըրէ, Անժէլ, մտիկ ըրէ . . . : Գու չցիտես, այս յիշատակները ո՛րքան կսկիծ կը պատճառեն ինձ . . . :

— Ինձ ալ կսկիծ կը պատճառեն, տէր իմ, ըսաւ Քրուսթիւս յար : Քաջ Սիսնէյ . . . : Իմփրտս այնպէս կը վկայէ որ սոյն Պրայճ-Վաթէրի օրը մեռած չէ նա . . . և զինքը պիտի կրնանք գտնել . . . :

Մօնմութ սարսուեցաւ և վայրկեան մը վշտազին կէնալէ ետև յարեց :

— Օ՛ն ուրեմն, արի եղիր : Ինչպէս որ լսի, Սիսնէյ իբր մեռեալ պատերազմի գաշտին վրայ ձգուեցաւ, ես ձերբակալ եղայ, մահուան դատարարտուեցայ և 1688 յուլիս 13ին զլիսատուելու վճիռ արուեցաւ ինձ համար : Վճիռն ինձ ծանուցուած էր, հետևեալ օրը պիտի գործադրուէր, բանտին մէջ առանձին էի : Այն մահատիպ խորհրդածութեանց մէջ ուր ընկղմեալ էի զլիսատուութիւնս նախորդող սոսկալի ժամերուն մէջ . . . կ'երգնում քեզ, Անժէլ, կ'երգնում քեզ Աստուծոյ առջև որ զիս կը լսէ, թէ՛ և թէ՛ հանգարտեցօյիչ մտածումներ ունեցայ . . . այն մտածումներն եղան զոր Սիսնէյի յիշատակին նախրեցի, յիշելով մեր բարեկամութեան զեղեցիկ ժամանակները . . . : Մեռեալ կը կարծէի զինքը և ինքնիրենս կ'ըսէի . «Մի քանի ժամէն յախտեան պիտի միանամ անոր հետ . . . :» Յանկարծ զնգանիս գուռը բացուեցաւ, Սիսնէյ երևեցաւ . . . :

— Ես չըսի որ մեռած չէ, գոչեց Քրուսթիլյար :

— Ա՛չ, մեռած չէր, պատասխանեց գուքը հառաչելով : Ե՛ջ

բանի թէ իբր զինուոր պատերազմի գաշտին վրայ մեռներ :

Անժէլ և բաղախնդիրը Մօնմութը զիսեցին զարմանօք : Մօնմութ շարունակեց .

— Երբ Սիսնէյը տեսայ, կարծեցի թէ մտայուզութենէս առաջ եկած տեսլան մը խաղալիկն եղած եմ, բայց իսկոյն իւր արտասուաց կաթիլներն երեսիս վրայ զգացի, իւր բազկացը մէջ սեղմուիլս զգացի :

«— Ազատեցաք . . . ազատեցաք, ըսաւ ինձ՝ ուրախութեան արտասուք թափելով :

«— Ազատեցա՛յ, ըսի իրեն, ապշութեամբ երեսը նայելով :

«— Այո՛, ազատեցաք : Մտիկ ըրէք . . . ըսաւ, և ահա ափի ինձ պատմածը . Թագաւորն, հօրեղբայրս, կարող չէի յայտնապէս կեանքս շնորհել ինձ, քաղաքականութիւնը դեմ կը կենար ասոր, բայց չէր ուզեր որ իւր եղբորը զաւակն ի մահ մատնել տայ : Իմանալով իւր պաշտականաց մէկէն, որ իմալ բարեկամն էր, թէ ես և Սիսնէյ իրարու շատ կը նմանինք, նմանութիւն մը որ քեզալ զարմացոց երբ առաջին անգամ տեսայ քեզ, ըսաւ Մօնմութ Անժէլի, Յակոբ թագաւորը զաղանապէս Սիսնէյի միջոցներ հայթայթած էր իմ բանտս մտնելու, այս անձնանուէր բարեկամը իմ հանդերձներս պիտի հագնէր, ես ալ իրենները պիտի հագնէի և Աշտարակէն գուրս պիտի ելնէի այս հնարքով : Հետևեալ օրը՝ թագաւորը փախուստս և իմ տեղս բանտարկեալ Սիսնէյի անձնանուիրութիւնը իմանալով, արձակել պիտի տար զայն և պիտի հրամայէր որ զիս շուտով գտնեն, սակայն այս հրամանը երևութիւնս պիտի ըլլար, և գաղտնապէս պիտի զիւրայընէին իմ փախուստս ի Գաղղիա : Իսկ ես թագաւորին զրեւոյժ խոստում մը միայն պիտի ընէի իրեն՝ այլևս երբէք Անդղիա ոտք չկօխելու :

— Հետևաբար, ըսաւ Անժէլ որուն համար այս պատմութիւնը ծայրագոյն աստիճանի կարևորութիւն ունէր, Սիսնէյի առաջարկութիւնն ընդունեցար, և նա քու տեղ բանտարկուեցաւ, այնպէս չէ՞ . . . :

— Աւա՛ղ, այո՛, ընդունեցայ, վասն զի Սիանէյի բոլոր ըսածները շատ և շատ ճշմարտաման կ'երևէին ինձ. Աշտարակին մէջ այն ժամուն իւր ներկայութիւնը, հակառակ իմ վրայ եղած անաչառ հսկողութեան, կրնար հաւատացնել ինձ թէ ամենակարող կամք մը զաղանապէս ձեռնառ կ'ըլլար իմ փախստեան :

— Միթէ այնպէս չէ՞ր, կրկնեց Անժէլ :

— Ասկէ աւելի բնական կերպով կարողորեալ բան չկրնար ըլլալ, ըսաւ Քրուսթիյաք :

— Արդարև, ըսաւ Մծմամ թ գառնութեամբ ժպտելով, ասկէ աւելի բնական կերպով կարողորեալ բան չէր կրնար ըլլալ. Սիանէյի համար շատ զիւրին եղաւ զիս համոզել. . . առարկութիւններս ջրել :

— Եւ ի՞նչ առարկութիւն կրնայիր ընել, ըսաւ Անժէլ. Յակոբ թաղաւորը զաղանապէս փախուստդ զիւրացնելով, չուզեր քու արիւնդ թափել, զարմանալի՞ բան մ'է այս :

— Ասկէ զատ, Սիանէյ պիտի կրնար այնքան զիւրութեամբ բանտը մտնելով մինչև քովդ դալ, տէ՛ր իմ, եթէ զերազդն ազդեցութեան մ'աջակցութիւնը չըլլար, յարեց բազմախնդիրը :

— Ո՛չ, ո՛չ ապաքէն, զոչեց դուքսը տխուր զոհունակութեամբ մը, ո՛չ ապաքէն բոլոր ըսածները հաւանական, կարելի պիտի թուէին ինձ, և ես ալ պիտի հաւատայի անոնց :

— Անշուշտ, ըսաւ Անժէլ :

— Ո՛չ ապաքէն, շարունակեց իշխանը, ո՛չ ապաքէն կարելի էր հաւատք ընծայել այս խօսքերուն առանց մահուան երկիւղէն մոլորութելու, առանց վատ և սոսկալի եսականութենէ մը մղուելու : Մնաց որ, և կ'երգնումայս խօսքիս վրայ, Սիանէյի ըսածներուն առջի բերան անձնատուր չեղայ. կեանքս և ազատութիւնս զոր յանուն թաղաւոր հօրեղբորս ինձ ընծայելու եկած էր, ընդունելէ առաջ ինքնիրեն հարցուցի թէ ի՞նչպիտի ըլլար բարեկամիս վիճակը եթէ Յակոբ իւր խոստումը չբռնէր, ինքնիրենս ըսի որ բանտէն մարդ փախցնող մէկու մը արուելիք ամենէն մեծ պատիժը բանտարկութիւնն է . . . այն ատեն . . . ընդունելով

այս ենթադրութիւնը, աղատութիւնս դատածիս պէս, թէ և երեստ պահելու հարկադրուած, բաւական զօրութիւն ունէի Սիանէյը ըստ կարգի չազատած Անդղիայէն շմկնելու . . . : Ասկէ աւելի ի՞նչ ըսեմ ձեզ : Անտարակոյս կենաց սէրը . . . մահուան երկիւղը միտքս խանդարեցին . . . դատողութիւնս շփոթեցին . . . ընդունեցայ, վասն զի Սիանէյի բոլոր ըսածներուն հաւատացի : Աւա՛ղ, ո՛րքան անմիտ էի :

— Անմիտ, Տէ՛ր ողորմա, եթէ չընդունէիք, այն ատեն անմիտ պիտի ըլլայիք, զոչեց Քրուսթիյաք :

— Քու տեղդ ո՛վ ըլլար, պիտի վարանէր, տէ՛ր Աստուած, ըսաւ Անժէլ :

— Ո՛չ, ո՛չ, պէտք չէր որ ընդունէի. սիրտս, եթէ ոչ բանականութիւնս, այսպիսի խարեական առաջարկութիւն մը մերժելու էր : Բայց ի՞նչ յիշնամ. . . արիւնտ ճակատագիր մը. . . թերևս սոսկալի եսականութիւն մը զիս կը մղէին . . . ընդունեցայ . . . բաղկացս մէջ սեղմեցի Սիանէյը, հազայ անոր հանդերձները և ըսի իրեն .

«— Ազը կը տեսնուինք . . . » որովհետև համոզուած էի թէ հետեւեալ օրը պիտի տեսնէի զինքը : Սիրեկէս դուրս ելայ, բանտապահն ինձ կ'սպաւէր դուռը. շնորհիւ Սիանէյի նմանելուս, բան մը չնշմարեց և աճապարանօք զիս դադանի ճամբէ մը մինչև Աշտարակին մէկ դուռը տարաւ, ա՛լ ազատ էի . . . : Մոռցայ ձեզ ըսելու որ Սիանէյ քաղաքին մէջ առն մը ցոյց տուած էր ինձ, ուր ապահովութեամբ պիտի կրնայի իրեն սպասել . . . վասն զի, ինչպէս կ'ըսէր, հետեւեալ օրը զիս գտնելու պիտի դար մեր ընելիք ուղևորութեան վրայ խօսակցելու համար, վերջապէս այն ատեն մէջպիտի գտնէի զոհարեղէններս զոր Հոլանտայէն մեկնած ատենս Սիանէյի յանձնած էի, և որք ահագին արժողութիւն մ'ունէին . . . : Իւր վերարկուն մէջ փաթթութեամբ, այն վերարկուն զոր քիչ մը առաջ հագած էիք և որ ինձ համար նուիրական եղած է, նշանակեալ տանը ճամբան բռնեցի : Գուռը զարկի, սրտաւ կ'ին մը բացաւ զայն, զիս հե-

առոր սենեակ մը ստնուռ և ինձ յանձնեց երկաթէ արկղիկ մը որուն բանալին տուած էր ինձ Սիսնէյ : աղամանդներս դտայ անոր մէջ : Յոգնութենէ սպառեալ, վասն զի այն տրնութիւնները որք դատապարտութեան վճարչն գործադրութեան օրը կը նախորդեն, խիստ նոսկալի կ'ըլլան, քնացայ . . . : Ի մահ դատապարտուելէս ի վեր այս անձին անդամն էր որ պառկած ատենս շքի ինք'իբնես թէ երբ արթննամ՝ զլիստութեան բեմն ինձ կ'սպատ . . . : Երբ հետեւեալ ստտուն անկողինէս ելայ, կէսօրը մօտ էր, արեգակին ճառագոյթները վարազոյրներէս ներս կը թափանցէին, բայի դանոնք, երկինքն անամպ էր և ամառուան սրայծառ օր մը կ'ընէր . . . Ա՛հ, այն միջոցին զայս յամ երջանկութիւնս և օրախոսութիւնս կարելի չէ նկարագրել . . . : Գերեզմանս բացուած ատեւած էի, և կ'ապրէի, հոգով մարմնով կեանք կը շնչէի : Երախտադիտական զայս մեերով վասեալ, ծուկի վրայ եկայ և օրհնեցի զՆստուած, թաղաւորը և Սիսնէյ միանգամայն : Այս ազնիւ և սիրեցեալ բարեկամս կ'սպասէի ամեն վայր'իեան . . . ընաւ չէի տարակուսեր, ո՛հ, բնաւ չէի տարակուսեր թողաւորին ներողամտութեան վրայ . . . : Յանկարծ հեռուն մտնեալիներու ձայնը լսեցի, որք կարեւոր դէպքերը կ'իմացընեն . . . ինձ այնպէս թուեցաւ թէ անունս կ'արտասանեն . . . կարծեցի թէ անուրջ մ'էր այս . . . : Բայց, ո՛հ, ստուգիւ անունս կ'արտասանէին, այն ատեն սոսկալի նախազգացում մը միտքս պաշարեց, զլիստ մաղբը տնկուեցան . . . ծուկի վրայ մնացեր էի, սրտի զարհուրելի բախմամբ ունկնդիր կ'ըլլայի . . . ձայները մօտեցան . . . դարձեալ լսեցի որ անունս ուրիշ խօսքերու հետ խառնուած էր, նախազգացմանցս սոսկումներուն յաջորդեց խօսքախոսութեան փայլակ մը որ սարսափս յոյսի փոխեց . . . : Արչափ սնմիտ էի . . . կարծեցի թէ Մծմոսը դռնն փակուեան ծանրածան պարագաները կ'իմացընէին : Չկրնալով համբերել փողոց իջայ, այս գէպքին պատմութիւնը պարունակող թերթէն հատ մը գնեցի . . . դարձեալ վեր ելայ, սիրտս կըղտլար, թուղթն ալ ձեռացս մէջ սեղմած էի :

Այս խօսքերն ըսած ատեն՝ Մծմոս թի գէմքը խոնկ կարեցաւ . . . հաղիւ կրցաւ ինքզինք բռնել, պաղ քրտինք մը ճակատը սղաղկց :
 — Յետոյ, զօչեցին Անժէլ և Քրոսթիլայք որք սրտաճմլիկ անձկութիւն մը կ'զգային :
 — Ա՛հ, զօչեց զօքսն աղէխարչ պայթմամբ, Մծմոս թ գուրսին զլիստման մանրամասնութիւններն էին կարգացածս :
 — Իսկ Սիսնէյը, զօչեց Անժէլ :
 — Սիսնէյ մեռած էր . . . ինձ համար . . . մեռած էր իբր նահատակ բարեկամութեան . . . : Իւր արիւնը, իւր ազնիւ արիւնն իմարեան տեղ զլիստութեան բեմն վրայ վազած էր . . . : Հիմա, Անժէլ, թշուա՛ւ զուակ, հիմա հասկըցա՛ր թէ ինչո՛ւ այս սղետալի դաշնակրք միշտ պահեցի քննէ : *

* Ահաւասիկ այսպէս կը վերջանայ մեր արդեն յիշած շէտի հատուածը . . . «Իւր բարեգործութիւնն ետեւ, մեշր կը յուսացնէ վերստին պնէն իրենց քըլանն անցած օրանել . . . կը կարծէին թէ քրիստոսած կալանաւորը Մծմոսը դռնուը չէր, այլ անոր բարեկամներն մն որ Մծմոսին շար նմանելով, անոր օրեղ մեռելու արեւութեանն ունեցեր էր :»

Սիսնէ-Փոսա՝ Երկաթէ Կիւսկին վրայ գրած էր մեկ նամակն մեջ (Վանկերգամ 1768) կը յատելու . . . «Սորոյք է որ Լանդրայի մեջ զբոյց մ'ելու թէ Մծմոսին բանակին վերաբերող սպայ մը, որ շատ կը նմանէր անոր, յերբակուելով և ճանաչան դատապարտուեանն վտանգ ըլլալով, անոր օրեղ անցնելու առաջարկութեանն այնպէս ուրախութեամբ ընդունա՞յր էր, որպէս թէ կեանք կը շարունակէր իրեն . . . և թէ այս զբոյցն վերայ՝ երեսնէ րիկին մը շահելով այն անկէնք որք կ'ընային անոր դաճաղք բանալ, և քիտելով անոր ուլ ինքը, գուցէ . . . — Ա՛հ, Մծմոսը դռնուը այս չէ :»

Աերջապէս՝ Սիսնէ-Փոսա, որ կը ջանայ հասարակել թէ Երկաթէ Գիւսկին Մծմոսը դռնուը է, Անգլիացի ուրիշ հեղինակի մը գրքին մէջ հատուածը մեջ կը բերէ որ հետեւեալն է . . . «Տանայի կ'ուրը կանչել արտա . . .»

Այս խօսքերն ըսելով՝ իշխանը թիկնաթուռի մը վրայ ինկաւ երեսները ձեռայր մէջ պահելով: Անձէլ անոր ուքը նետուեցաւ հեղձամղձուկ հեկեկանօր:

ԳԼՈՒԽ ՔԱՆՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

Չ Ե Ր Բ Ե Կ Ե Լ Լ Ո Ւ Թ Ի Ի Կ

Ասպետը որ Մճմուծի պատմութիւնը ընելով սաստիկ սրտաշուրթեան մէջ ինկած էր, պաղսնապէս իւր արտասուքը սրբեց և ըսաւ .

— Հիմա կը հասկընամ թէ ինչ ըսել կ'ուզէր այն Բիթլէր ըստած անրանը՝ իւր անտանելի դաշտնովը, երբ զլխատուծեանս խօսքը կ'ընէր ինձ . . . :

— Անձէլ, Անձէլ, զա՛ւակս, ըսաւ դուքոր իւր արտասուա-

Ստեղծելն քնդարդեալ որ Աշտարակն նախորդ դեղակում էր, և որտէ՞ Օրբանի իշխանը այն դեղակումն անելով լորտ Լուսնի դուռն էր գնաց: — Ստեղծելն, ըսաւ անոր Տանդի կոմսը, երէկ իբրև Ռօզերի ճճութեան հետ ընկրէի ըրած արեւնիդ ընէի անոր ինչ Մճմուծի դուռն էի և Անգղիոյ դեղակումներն որոնք մեզ գնդուած է: — Ինչպէս որ ասոր վրայ, որովհետեւ այս մասին բան չե՞մ գիտեր, ըսաւ Ստեղծելն, բայց ընէ որ գիշերը Մճմուծի կարծեցեալ բնատուածներն ետեւ, Ռօզարտն երէտ հոգոյ ընկերակցութեամբ էլաւ անձամբ դուռն Աշտարակն հանեց և հետը դուռն:՝

Օ՛ւանիսնիսն Հէլենային:

Թոր վեհ երեսը բարձրացընելով և դեռահաս աղջիկը իւր բազկացը մէջ սեղմելով, սիտի կրնաս երբէք ինձ ներել Սիսնէյի, իմ բարեկամս, իմ եղբորս, քու միակ-ազդականիդ, քու միակ պաշտպանիդ սպանութիւնը:

— Աւա՛ղ, իմ քով դուք անոր սեղը չբռնեցիք . . . Յակոր . . . : Ես անոր մահաւան վրայ լացի, կարծելով թէ պատերազմի գտնտին վրայ սպանուած էր: Միթէ կը կարծէք որ վիշտերս աւելի դժուակ ըլլան հիմա որ դիտեմ թէ ձեզ համար իւր կեանքը զոհեց. թէ ըրաւ ինչ որ ես ալ սիտի ընէի քեզի համար մեծ ուրախութեամբ . . . Յակոր, սիրականս, ամուսինս:

— Ո՞վ իմ սիրեցեալ հրեշտակս, դոչեց դուքոր, քու խօսքերդ չին կրնար իմ խճի խայթերու սաստիկութիւնը մեղմել, բայց սիտի զիտնաս գէթ թէ ինչ ջերմեռանդ երախտադիտութիւն մ'ունեցայ միշտ Սիսնէյի համար, բարեկամութեան այն սուրբ նահատակին համար: Աւելի ինչ ըսեմ քեզ: Երկու օր դրեթէ խնդի մը պէս սպրեցայ. երբ ինքզինքս գտայ, Սիսնէյի մէկ նամակը ձեռքս անցաւ: Գործն այնպէս կարգադրած էր նա, որ նամակն իւր ինձ համար մեռած օրուան իրիկունը յանձնուեցաւ ինձ. իւր բարեպաշտական ստախտութիւնը կը բացատրէր, Յակոր թագաւորը տեսած չէր:

— Տեսած չէ՞ր զայն, դոչեց Անձէլ:

— Ո՛չ. ինձ բոլոր ըսածները սուտ էին . . . Հիմա դու ալ կրնաս հասկընալ թէ իրաւունք չունիմ միշտ նզովելու այն մեղապարտ դիւրութիւնը որով իւր ամեն ըսածքն համոզուեցայ: Քանի որ ինձ համար մեռաւ նա . . . այն առատակը՝ որուն հաւատացի, կարի յիմարական կը թուի ինձ . . . : Ո՛չ, տեսած չէր թագաւորը: Իմ գոհարեղէններս իւր քով ըլլալով, անոնցմէ մաս մը ծախելով գումար մը ձեռք բերիւր էր որոյ շնորհիւ Աշտարակին պաշտօնակալներէն մին շահեր էր, անիկ՝ Միայն սո շնորհը խնդրելով որ վերջին անգամ մ'ալ զիս տեսնէ . . . : Այս պաշտօնակալը Սիսնէյի հետ համաձայնած էր ի մասին

անձի փոփոխութեան որով պիտի ազատէի, ինքն ալ խաբուեցաւ մեր նմանութենէն, և շնչմարեց բան մը. չեմ գիտեր . . . : Հետեւեալ օրը եկան Սիտնէյը պոնելու, նա հետեւեցաւ իւր գտնահետնորդն, բայց չուզէր խօսիլ վախճանով որ մի գուցէ ձայնէն ձանչցուի . . . : Զոհը կատարուեցաւ, յարեց Մծմու թ սրբելով իւր արտասուքը զոր սոյն պատմութիւնն ըրած ստեն կը թափէր : Ահոյ անուամբ Լոնտրայէն գաղանայէս մեկնելով Քաղղիա գացի քեզ գտնելու համար, Անձէլ : Սիտնէյ ամեն իշխանութիւն տուած էր ինձ որ զայն իւր յանձնած մարդոց ձեռքէն առնեմ, ըսաւ իշխանը Քրոստիայքի գառնալով : Հրապարակելով իւր գեղեցկութենէն, ամբուութենէն, պաշտելի ձիւրքերէն, ինքզինքս պարծանի և կարող զգալով Սիտնէյի վերջին կապը կատարելու, այն է իւր որդեգիրը երջանիկ ընել . . . ամուսնացայ այս հրեշտակարարոյ աղջկան հետ և մեկնեցանք Սպանական գաղթականութեանց երկիրները երթալու, կը կարծէի թէ հոն ապահով պիտի ըլլայինք : Զձանչցուելու համար ամենամեծ զոհուութիւններ ընելով հանդերձ . . . զիպրոսծով Քուսայի մէջ Անդրիայի նաւակետ մը ձանչցայ, զոր Ամսթերտամի մէջ տեսած էի : Արծեղով թէ գտնուեցայ, անկէ ալ մեկնեցանք : Մի քանի ամիս ուղևորելէ ետեւ եկանք հոս հաստատուեցանք : Սկսայ փոփոխակի այն ծպտանքներն ստուղ զոր գիտէք, որպէս զի մեր վրայէն կասկածները հեռացընեմ, կնոջս վրայ հսկելու կարող ըլլամ և չստիպուիմ տեղ մը փակուած մնալու որ գառն և անասնելի պիտի ըլլար ինձ համար . . . : Հետեւաբար կարող եղայ կողոյն ամեն կողմերն երթալու . . . : Գոհարեղէններուս շնորհիւ բազմաթիւ փորձիկ նաւեր գնեցինք միջնորդութեամբ մեր գործակատաց Մօրիսի որ վստահութեան արժանի և պարկեշտ մարդ մ'է, և առանց մեր գաղանաց տեղեակ ըլլալու, գիտէր թէ ինչպէս հասկընալու է կնոջս կարծեցեալ այրիութիւնները : Մեր վաճառական նաւերը ոչ միայն տակաւ առ տակաւ մեր հարստութիւնը աւելցուցին . . . զոր կրնայինք օր մը մեր զուակաց թողուլ եթէ քանակայինք . . . այլ միշտ փախուստի պատրաստ միջոյ մ'եղան

մեր ձեռքը . . . : Քաղղիոյ ուրիշնպատակաւ չընուեցաւ . . . և մինչև անգամ իբր ծովասպասակ անոր հրամանատարութիւնն ըրի Սպանական ծովահէն նաւու մը հետ կուտելով, թէև այս բանը մեծ ստիկում պատճառեց Անձէլի . . . : Արդ՝ խիստ երջանիկ, գրեթէ խաղաղ կեանք մը կ'անցընէինք հոս, մէկ մ'ալ իմացայ որ Քրիստոս աստիտը, որուն ժամանակաւ կեանքն ազատեր էի, հոս կու գար իբր կուտակալ . . . : Թեև պատուոյ տէր անձ մ'էր նա, ինքզինքս անոր յայտնելու վախցայ . . . : Ի սկզբան միտքս գրի կնոջս հետ Մարթինիքայէն ելնել . . . բայց իմացայ որ Գաղղիա Անդրիոյ, Սպանիոյ և Հոլանտայի գէմ պատերազմ հրատարակեր է, և . . . իմալ հրաշքով մը ազատելուց վրայ զրոյցներ սկսեր են պարտիլ Անդրիոյ մէջ . . . : Առսակիցներս կը խլրտին եղեր : Այլով տ'Օրանձէն բնաւ չէի կրնար արգարութիւն սպանել . . . : Հետեւաբար ուրիշ ամեն տեղէ աւելի այս կողոյն մէջ ինքզինքս կրնայի ապահով կարծել : Հոս մնացի հակուակ Պ. տը Քրիստոսի ներկայութեան, սակայն զգուշութիւններս ալ կրկնապատկեցի : Կնոջս կարծեցեալ այրիութիւնները, ծովասպասակին, Քարայիպին և ցլորսին յաճախ այցելութիւնները մեկտեղ դալով այնքան անհասկանալի իրողութիւններ կազմեցին, որ ճշմարտութիւնը գտնելն անկարելի եղաւ . . . սակայն այս բանը որ մէկ կողմէն օգտակար կ'ըլլար մեզ, միւս կողմանէ գրեթէ ձախող եղաւ : Պ. տը Քրիստոսը հետաքրքիր ըլլալով ձանաչիլ այն տարօրինակ կինը որուն վրայ իբրարմէ տարրեր շատ խօսքեր կ'ըլլար, Գիտարնակ-Բլուրը եկաւ . . . բազմն այնպէս ուզեց որ ես ալ այն միջոցին հոս գտնուիմ ցլորսին կերպարանքովը . . . կարելի չեղաւ չորասահիլ կուտակալին զոր բնաւ չէինք սպասեր : Թէև թանձր մօրտքի մը ներքեւ գէմքս ծածկուած էր, սակայն Պ. տը Քրիստոսը զիս ույնչափ միտքը պահած էր, որ իսկոյն ձանչցաւ . . . բայց սխալած չըլլալուն աւելի ապահով ըլլալու համար յանկարծ ըսաւ ինձ :

« — Գուք չէք այն ինչպէս որ կ'երեւիք : » Ասանալով որ մի գուցէ ամեն բան յայտնուի Անձէլի որ գիտ տարադրեալ գիտէր,

բայց չլիակեր այն վստահները որոց այն ստեն են թարկուած էի եթէ իմ ապրիլս իմայուէր, Պ. տր Բրիտոսլի ըսի.

«— Յանուն անցեալ ծառայութեան մը, լուսթիւն կը խնդրեմ ձեռնէ . . . : Սակայն ամեն բան սխտի ըսեմ ձեզ. . . :» Արդարեւ բան մը չպահեցի իրմէ : Պատուոյն վրայ երգում ըրաւ ինձ գաղտնիքս երևան չհանելու. և ամեն ջանք ի դործ դնելու որ մեզի նեղութիւն չսան . . . խօսքը բռնեց . . . բայց մեռնելու տակնը . . .

— Իւր խնձին հանդարտութեանը համար ամեն բան խոտոտ վանեցաւ հայր Արիֆօնի, բոստ ասպետը :

— Գուք ո՛ր կէ գիտէք այս, հարցուց գուքը :

Այն ստեն Բրուսթիյաք պատմեց Մօմութի թէ իւր դոյութեան գաղտնիքն ինչպէս յայտնուեր է Յակոբ թաղաւորին խոտոտուանահօրը, և թէ հայր Արիֆօն ինչպէս ակամայ պատճառ եղած է այս մատնութեան :

— Հիմա, ասպետ, բոստ Մօմութ, կրցաք գիտնալ թէ ո՛ր պիտի հիանալի զոհողութեան մը գինն է իմ կեանքս զոր երգում ըրի Անժէլի նուիրելու . . . պատմեցի քեզ այն զարհուրելի խնձի խայթե՛րս զոր Սիանէլի անձնանուիրութիւնը կը պատճառէ ինձ. յուսամոր, ասպետ, կրնաք հասկընալ թէ չեմ ուզեր նոր և գոնգակ վիշտերու ենթակայ ըլլալ ձեր կորստեան պատճառ ըլլալով :

— Ա՛հ, տէ՛ր իմ, կը կարծէ՞ք թէ ձեր այս պատմածները անձս ձեզ նուիրելու համար ունեցած փափաքէս զիս ես կեցընող բաներ ըլլան : Ճշմարիտ կ'ըսեմ, սոսկալի կերպով կը սխալիք :

— Ի՞նչ կ'ըսէք, գոչեց գուքը, կը պնդէ՞ք :

— Ար պնդեմ, այո՛, կրկնակի կը պնդեմ, եթէ կը հաճիք, և պատճառս ալ խիստ պարզէ . . . : Մտիկ ըրէք, տէ՛ր իմ, ինչո՛ւ ձեռնէ պահեմ այս բանը . . . : Քիչ մը առաջ. . . աւելի տիկին գքուհոյն սիրոյն համար էր որ կ'ուզէի ծառայել ձեզ քան թէ տրամաբանեալ անձնանուիրութեամբ առ ձեզ. թող այս խօսքս ձեզ չվշտացընէ, տէ՛ր իմ, տե՛հալին չէի ճանաչեր զձեզ :

. . . : Բայց հիմա որ ինչ ըլլալնիդ կը տեսնեմ, ձեր բարեկամաց վրայ ինչպէս ցաւեւնիդ, անոնց ձեզ համար ըրածներուն փոխարէն ինչպէս երախտադէտ ըլլալնիդ կը տեսնեմ. . . : ասիէ զատ եթէ ձեր կինը իրօք Ապպոյտ-Մօրուք մ'ըլլար, եթէ նոյն ինքն սատանան ըլլար, եթէ բոլոր ցլորներուն, Անթիլեան կղզեաց բոլոր մարդակերներուն տարփածուհին ալ ըլլար, նոյնը պիտի ընէի ձեզ համար ինչ որ կ'ընէի տիկին գքուհոյն համար, տէ՛ր իմ :

— Բայց, ասպետ . . .

— Բայց, տէ՛ր իմ. . . ձեզ բոլոր ըսելիքս սա է թէ ձեզ համար երկրորդ Սիանէլ մ'ըլլալու փափաք մը յառաջ կը բերէք սրախ մէջ. . . : ահա այս է գործը . . . : Հարկա՛ւ եթէ մէկն այսպիսի անձնանուիրութիւն մը կ'ազլէ, ըսել է որ արժանի է անոր :

— Ա՛նգեմ՝ հաստալ ձեր խօսքին, ասպետ. բայց երբ մարդ կամաւ կ'ընդունի այսպիսի անձնանուիրութիւններ, արժանի չէ անոնց :

— Ա՛հ, տէ՛ր իմ, ըսելս յանդիմանութիւն չըլլայ . . . այն Հողանտացի արջը ո՛րչափ անտանելի էր իւր գաշտընովը, գուք ալ այնչափ յամառ էք ձեր վեհանձնութեամբը. . . : Տեսնե՛նք . . . քիչ մ'ալ պատճառարանեք : Ձեր ամենէն աւելի ուզած բանը զիս բանտարկութենէ ազատել է, այնպէս չէ՞ :

— Անշուշտ . . .

— Ասան զի չեմ կարծեր որ գքուհոյն թողլով մեկնելու ստիպողականութեան մէջ ըլլաք : Արեմն, ձեր ս'վ ըլլալը պարզամիտ Շէմրոյին ըսելով զիս պիտի ազատէք : Ես նորք բաները շատ չեմ հասկընար, բայց կարծեմ թէ այս է խնդիրն, այնպէ՛ս չէ՞, տիկին :

— Իրաւունք ունի, բարեկամս, բոստ Անթէլ պաղատիչ գէմքով մը իւր ամուսնոյն երեսը նայելով :

— Արշարունակեմ, յարեց Բրուսթիյաք գոռողութեամբ : Աստի, պարզամիտ Շէմրոյին պիտի ըսէք. «Պարոն, ես Մօմութ

դուքն եմ, և այս աստիճան ալ խեղճատակ մ'է . . . :» Թող այդպէս ըլլայ . . . մինչև հոս աղէկ: Եյս յայտարարութեան վրայ Շէմրոն ձեզ պիտի պատասխանէ. «Պարոն, կը հաւանի՞ք, այս կամ ոչ, Անդղից մէջ ապրտամբութեան դու խն ըլլալու:»

— Երբէ՞ք . . . երբէ՞ք, գոչեց գաքսը:

— Շատ լաւ, տէր իմ: Հիմա գիտեմ թէ քանի՞ եղաւ ձեզ ապրտամբութիւնը . . . հիմա տիկին գքուհին ճանաչելուս շատ ուրախ եմ, ես ալ ձեզի պէս «երբէք» պիտի ըսէի . . . : Միայն թէ պարզամիտ Շէմրոն ինչ պիտի պատասխանէ այս «երբէք»ին: Պարզամիտ Շէմրոն պիտի սխառասխանէ: «Գու իմ կալանաւորս ես . . . »: Եյնպէս չէ՞:

— Գժբողբար կարելի է, ըսաւ Մօնմաթ:

— Աւաղ, շատ ստոյգ է այս, ըսաւ Անժէլ:

«— Գալով այս շտախիին, գալով այս բանասերին, պիտի շարունակէ պարզամիտ Շէմրոն ինչ գառնալով, ըսաւ Քրուսթիֆօք, գալով այս խաբերոյ չուսուկանին, որովհետև դիս խաղալիկ ըրաւ իրեն, որովհետև խել մը իրարմէ կարևոր սետահան գաղտնիքներ հաղորդեցի իրեն, և մասնաւորապէս թէ ինչ պէս երկու մեծ թաղաւորներու խոստովանահայրեր իրենց խոստովանորդաց յայտնած գաղտնիքներովը Բուսաօր շէք խաղացիք են . . . իւր արժանի պատիժը պիտի կրէ . . . » Երգ՝ յիշեալ պարզամիտ Շէմրոն՝ իրեն կրկեցոյցած սուտերուս խաղորութեան չափովը կատարած՝ չպիտի խնայէ ինչ, և շատ երջանիկ պիտի համարիմ ինքզինքս եթէ դիս ստորերկրեայ գնդանի մը մէջ փակեցնէ փոխանակ կախաղան հանելու իւր լիազօր իշխանութեամբը, բոլորովին զիս լուծեան գատապարտելու մէկ կերպն ալ այս կրնայ ըլլալ:

— Ա՛հ, մի՛ ըսեր այդ խօսքերը . . . խելքի գալու բան է այդ . . . գոչեց Անժէլ:

— Ար տեսնէ՞ք հիմա, վեհանձն ասպետ, ըսաւ գուքը սրտայտղութեամբ, գուք ձեր բերնովը կը խոստովանիք այն անխոստիւղի վտանգը որուն ինքզինքով կենթարկեցիք ինչ համար:

— Նախ և առաջ, տէր իմ, ըսաւ Կասրօնն անգրգուելի հանդարտութեամբ մը, ինչպէս որ քիչ մը առաջ գքուհին կ'ըսէի երբ կը կարծէի թէ նա պղնձադոյն սատանորդի մը վրայ խելքը կը թոցընէր, նախ և առաջ յայտնի է որ երբ մէկը ուրիշի մը համար անձնանուիրութիւն ցոյց կու տայ, վարդէ պատկաներ ընդունելու կամ յաւերժահարսանց գգուանքը վայելելու նպատակաւ չէ: Չոհողութիւնը՝ կեանքը վտանգի մէջ գտնուիլը ըլլայ . . . : Բայց ինչո՞րն ասոր վրայ չէ. դարձեալ կ'ըսեմ, եթէ ինքզինքնիկ պարզամիտ Շէմրոյին ձեռքը յանձնէք իւր կալանաւոր, դիս բանաւ կամ կախաղանէ պիտի կրնա՞ք ազատել, տէր իմ:

— Բայց, ասպետ . . .

— Բայց, տէր իմ, այս պատճառարանութեամբ ձեր օձիքը չպիտի թողամ, ինչպէս որ Հոլանտային ալ իւր յախանական գաղտնիքովը իմ օձիքս չթողոյց:

— Ար խալիք, աղիւ և քաջասիրտ ասպետս, երբ կը կարծէք թէ ինքզինքս Պ. սը Շէմրոյի յանձնած ատենս ձեր վիճակն այսչափ յուսահատական պիտի ըլլայ:

— Հաստատեցէ՞ք ըսածնիկ, տէր իմ . . . :

— Հարկ չեմ տեսներ իմ աստիճանիս և գրիցս վրայ երկար խօսք ընելու, այսչափը գիտեմ որ ինչ հետ ակնածութեամբ վարուելու միշտ պարտաւորեալ են: Աստի՛ երբ Պ. սը Շէմրոյի ըսեմ որ կրփափարիմ . . . կ'ուզեմ որ ձեզի նեղութիւն չարտի անձնանուիրութեան գործի մը համար որ պատիւ կը բերէ ձեզ, տարակոյս չունիմ որ Պ. սը Շէմրօ պիտի փութայ ինչկերքս ընդունելու և զձեզ արձակելու:

— Տէր իմ, ներեցէ՞ք, չարաչար կը սխալիք:

— Բայց ասկէ աւելի ինչ կրնայ ուղել Պ. սը Շէմրօ. ո՞չ ապաքէն իւր ձեռքն անցած պիտի ըլլամ: Չեր ձերբակալութենէն ինչ օգուտ կայ իրեն:

— Տէր իմ, պիտական մարդ եղած էք, գաւակից եղած էք, մեծ իշխանազուն մ'էք, հեռաւորաբ պէտք է որ ճանաչէք զմարդիկ, սահայն՝ ներեցէ՞ք համարձակութեանս՝ այնպէս կը պատճա-

ուարանէք որպէս թէ բնաւ չէք ճանաչեր զանոնք . . . կամ մնա-
նաւանդ իմ մասին ձեր ունեցած վեհանձն հոգածութիւնը կը կու-
րայընէ զձեզ . . . :

— Ոչ . . . անպետ :

— Մտի՛կ ըրէք, տէ՛ր իմ, այս ապստամբութեան մասին
Անդղիոյ մէջ ձեռք բերուած համախոհութիւնները, Լուգովիկոս
ԺԿԻ՛ն բոլոր այս խարդաւանութեանց մասնակցիլը Շէմրոյի
պաշտօնին կարեորութիւնը կը հաստատեն, այս կ'ընդունիք, այն-
պէս չէ՞ :

— Անտարակոյս . . .

— Սա ալ կ'ընդունիք թէ, տէ՛ր իմ, Շէմրօն իւր պաշտօնին
յաջողութենէն իրեն համար ալ փառք կ'սպասէ :

— Ճշմարիտ է . . .

— Արդ, տէ՛ր իմ, ապստամբութեան մասնակցութիւնը մեր-
ժելովնիդ, միայն բանտապահի դեր մը տուած պիտի ըլլաք Շէմ-
րոյի . ձեր ձեռքբաղուածութեամբը յաջողած չըլլար այն ընդարձակ
ձեռնարկութիւնը որուն երկու թաղաւորք խիստ մեծ կարեորու-
թիւն մը տուած են : Ուստի, հաւատացէ՛ք ինձ, Շէմրոյէն շնորհ
մը խնդրեւնիդ դժպտեհ բան մը պիտի ըլլայ, մանաւանդ ա-
ռաջին անգամ երբ իւր յոյսերուն ի դերն եւնելուն վրայ պիտի
կատղի, մանաւանդ երբ պիտի իմանայ թէ այն անձը որուն հա-
մար կը միջամտէք, կէսօրին անհամար աստղեր երեցոյց իւր աչ-
քին . . . : Ուրեմն՝ հաւատացէ՛ք ինձ, տէ՛ր իմ, դուք Շէմրօ-
յի ամեն առաջարկութիւններն ընդունելով, երկու թաղաւորաց
առաջադրութեանց օգնելով հանդերձ հաղիւ կրնաք յուսալ շնորհ
ընդունելու . . . :

— Յակոր . . . ըսածներուն մէջ շատ խոհականութիւն կայ,
յարեց Անժէլ : Ես չեմ ուզեր որ եսականութենէ յառաջ եկած
վատ խրատ մը տամ ձեզ, սակայն դարձեալ կ'ըսեմ. իրաւունք ու-
նի, չես կրնար ուրանալ :

Դուքըր զլուխը խոնարհեցոյց առանց պատասխանելու :

— Շատ աղէկ դիտեմ, սիկին, իրաւունք ունենալ : Այն-

չափյաճախ ծուռ կը տրամաբանեմ, որ զարմանալի չէ որ անգամ
մ'ալ դիպուածով ուղիղ դատեմ :

— Բայց ի սէր Աստուծոյ, հիմա դուք երեակայեցէ՛ք թէ
ինչ պիտի պատահի եթէ ընդունիմ, դոչեց դուքըր Աստուծոնին եր-
կու ձեռքերն իւր ձեռացը մէջ առնելով . դուք զմեզ, կինս և
զիս, մինչև Բաբելոն նաւը պիտի տանիք, առագաստ պիտի պար-
զենք և պիտի աղատինք . . . :

— Աղկէ լաւ ճամբայ չկրնար ըլլալ, տէ՛ր իմ, ահա այս-
պէս խօսելնիդ երբ կը լսեմ, շատ ուրախ կ'ըլլամ :

— Այո՛, պիտի աղատինք, բայց դուք, ո՛ղորմելի, դուք ալ
Պ. տը Շէմրոյի հետ ֆրքաթօնը պիտի երթաք, ձեզ կուսակիցնե-
րուս պիտի ներկայացընեն, նենդութիւննիդ երեւան պիտի ենէ և
պիտի կորսուիք :

— Շատ մի վազէք, տէ՛ր իմ : Արտեսեմ որ զիս բոլորովին
ապուշի տեղ կը դնէք . քիչ մը զիւս, քիչ մը ճարտարութիւն իմ
քովս ալ կրնայ դանուիլ : Եթէ չեմ սխալիր, Նհանգաց խորշին
և Ֆօր-Բօսյալի մէջ բաւական հեռաւորութիւն կայ, այնպէս չէ :

— Երեք փարսախի չափ, ըսաւ դուքըր :

— Լաւ ուրեմն, տէ՛ր իմ, այս երկրին մէջ երեք փարսախը
երեք ժամ ըսել է . . . և երեք ժամու մէջ ինձ պէս մարդ մը
վեց հաւանականութիւն ունի փախչելու . եղջերուի մը պէս եր-
կայն և ջրոս սրունքներ ունիմ : Մեր Հողեկորդ ընկերը սովորե-
ցոյց ինձ թաւուաներուն մէջ քալել, յարեց Աստուծոնը հեղնոս
դէմքով մը ծիծաղելով : Ուստի՛ կ'երդնում որ պարզամիտ Շէմրօ-
յին պահապանները վերամբարձ ոստումներ ընելու պիտի պար-
տաւորին ետեէս հասնելու համար :

— Ինչպէս ուրեմն՝ դուք կ'ուզէք որ ձեր կեանքը տարակու-
սելի փախուստէ՞ մը կախում ունենայ, մինչդեռ այս երկրին լաւ
վարժուած երեսուն զինուորներ իսկոյն ձեր ետեէն պիտի իյնան,
ըսաւ դուքըր : Երբէք չեմ թողուր :

— Իսկ դուք ալ կ'ուզէք որ փրկութիւնս սրբազամիտ Շէմրօ-
յին անտողոյց ներողամտութենէ՞ն կախում ունենայ :

— Այս կերպով զէթ սողոյդ կորստեան չեմ մասնեը զքեզ, աղատութեան հաւանականութիւններն հաւասար են :

— Հաւասար են, կ'ըսէք, զոչեց բաղախնդիրը սրամտութեամբ, հաւասար են, ինչ կ'ըսէք, տէր իմ, կը համարձակի՞ք ինքզինքնիդ ինձ հետ բաղդատելու : Ո՞վ եմ ես : Ինչո՞ւ համար կ'ապրիմ, ո՞չ ապաքէն ետեւէս հին սուր մը քսելու և անոր ասոր բեռ ըլլալու համար . . . ես բան մը չեմ, բան մը չեմ ընեը, բանի մը կ'ապուած չեմ . . . կեանքս որո՞ւ օդուտ ունի, ո՞վ կը մտածէ զիս, ո՞վ պիտի ուզէ գիտնալ թէ Փօլիֆէմ Բրուսթիյաք ո՞ղջ է, մեռած է :

— Ասպետ, ուղիղ չես դատեր . . . և . . .

— Բայց, տէր իմ, դուք գրտահոյնն էք, Սիանէյի որդեզիր աղջկան : Եթէ նա մեռաւ ձեզ համար, իւր զաւակին պէս սիրած մէկ աղջկան համար ձեր ապրիլն ամենափոքր բանն է : Եթէ դուք յուսահատութեան մատնէք զայն, կրնայ ըլլալ որ սրտին ցաւէն մեռնի, այն ասին դուք ալ միոյն տեղերիւս զոհեցու վրայ պիտի լաք :

— Բայց, մտի՛կ ըրէք, ասպետ . . .

— Բայց, զոչեց Բրուսթիյաք համամտութեան նշան մ'ընելով Անժէլի, և դուքին ձայնը խափանելու չափ բոլոր ուժովը դոչելով, բայց դու վատ մ'ես, լիրը մ'ես որ այդպիսի խօսքեր կ'ընես ինձ . . . : Հասէ՛ք, հասէ՛ք . . . օղնութեան . . .

Յետոյ Բրուսթիյաք աճապարանօք կամոց մը դուքին ըսաւ .

— Ստիպեցի՞ք զիս այսպէս ընելու, ներեցէ՛ք, տէր իմ, ա՛լ ճարս հատաւ :

Եւ բաղախնդիրն սկսաւ իւր բոլոր զօրութեամբը դարձեալ դոչել :

Իշխանը բոլորովին ապուշդարձած անշարժ կեցեր Բրուսթիյաքի երեսը կը նայէր :

Կասրօնին ձայնէն՝ վեց պահտոյան զինուորներ, զոր Շէմրօ ճեմատարահին մէջ պահակ կեցուցեր էր Բրուսթիյաքի խնդրանօք սենեակը վաղեցին :

— Գայլ գրէք սա ապիրատին բերանը, գայլ գրէք, շուտ, շուտ, զոչեց Բրուսթիյաք, որ կը վախնար թէ այս գործողութեան միջոցին Պ. տը Շէմրօ ներս կը մտնէ :

Ջինուորներուն հրաման եղած էր ասպետին հնազանդելու ասոնք դուքսին վրայ նետուեցան, որ Հերքիլէսեան ուժով մաքառելով դոչեց .

— Ե՛ս եմ իշխանը . . . ե՛ս եմ Մօնմութը :

Բարեբաղդաբար այս վտանգուոր խօսքերն ասպետին հանած խլացոյցիչ աղաղակներէն չլսուեցան, վասն զի ասպետն այս տեսարանին սկիզբէն ի վեր սոսկալի բարկութիւն մ'ունենալ կը կեղծէր և ոտքերը գետինը կը զարնէր մոլեղին :

Ջինուորներէն մին իւր լանջակամարին միջոցաւ կրցաւ գիւրութեամբ գայլ գնել դուքսին բերանը, որ այլ ևս չէր կրնար ոչ շարժիլ, ոչ խօսիլ :

Պ. տը Շէմրօ այս սղմուկը լսելով ներս մտաւ և տեսաւ որ Անժէլ գունաթափ եղած և սոսկալի կերպով յուզուած էր : Թէպէտ Անժէլ կը դուշակէր այս տեսարանին, այս պայքարին ելքը, սակայն չէր կրցեր չափազանց որոտայուզութենէ զերծ մնալ :

— Բայց ի՞նչ կայ, տէր իմ, զոչեց Շէմրօ :

— Սա կայ որ, տէր իմ, ըսաւ Կասրօնը, այս թշուառականն համարձակեցաւ անպիտի գարշելի լրբութեամբ մը խօսիլ, որ՝ թէև արհամարհանք կ'աղդէ ինձ, ստիպուեցայ բերանը գայլ գնել տալու :

— Տէր իմ, իրաւունք ունէիք այդպէս ընելու . . . ե՛ս ալ կը դուշակէի որ այդ թշուառականը լռութիւնը պիտի խղէր :

— Տակալին կը վարանէի, պարօն, զոչեց Բրուսթիյաք, ա՛յո՛, կրխօտովանիմ որ այդ տկարութիւնն ունեցայ : Բայց հիմա՛ վճիռը տրուած է, մեղապարաններն իրենց գործած ոճիրին պատիժը պիտի կրեն : Երթանք, պարօն, երթանք Նհանդաց խորշը : հրամաններս զրկեցի Բալֆի նաւապետին . . . իրտս այն ասեն միայն պիտի հանդստանայ երբ այս երկու ոճրագործներուն նա մտնեն աչօքս անանձ, այնուհետև Գօր-Բօսյալ կը դառնանք :

— Իրօք, տէ՛ր իմ, այդ տխուր ուղևորութիւնը տեսնե՛լ կ'ուզէ՞ք :

— Այդ ալխօսք է, պարոն . մինչև անգամ Անդղիոյ գահուն հետ չեմ փոխարիներ այն անգին վայրկեանը, յորում հոն, աչքիս առջև, այս երկու ոճրագործները տանող նաւուն առագաստ պարզելը պիտի տեսնեմ, որպէս զի երթան հոն ուր վրէժխնդրութեանս շունչը կը վարէ զանոնք :

— Իրօք, տէ՛ր իմ, կը պահանջէ՞ք այդ բանը, ըսաւ Պ. սը Շէմրօ տակաւին վարանելով :

— Իրօք, պարոն սը Շէմրօ, դոչեց ֆրուսթիյաք ծանր և սպառնալից ձայնով մը որ յայտնի էր թէ իւր գերը խիստ լաւ կ'ըմբռնէր, երբ արդար բան մը կը պահանջեմ, կ'ուզեմ որ կամքս կատարուի : Կ'աղաչեմ, մեկնելու համար ամեն բան պատրաստե՛լ տուէք . եթէ այս թշուառականը չուզէ քալել, պէտք է որ վերցնելով տանին . մանաւանդ բերնին զայլը շատ ամուր ըլլալու է, վասն զի այնպիսի սոսկալի խօսքեր կ'ընէ որ բնաւ չեմ ուզեր լսել :

Ջինուորներէն մին նայեցաւ որ զայլը հաստատուն կերպով կ'ապուած էր . դուքսին թեերը ետին կ'ապեցին և պահապան զինուորները տարին զայն :

— Պատրաստ էք, պարոն սը Շէմրօ, ըսաւ ֆրուսթիյաք :

— Այո՛, տէ՛ր իմ, միայն զինուորներուն քալելու տեղերը մնաց որոշել :

— Գացէ՛ք ուրեմն, պարոն, կ'սպասեմ ձեզ, հոս քանի մը հրամաններ ունիմ տալու :

Կուսակալը սղջունեց և դուրս ելաւ :

Գ Լ Ո Ւ Ն Բ Ս Ա Ն Ե Ր Ո Ր Դ Ի Ն Ն Ե Ր Ո Ր Դ

Զ Ո Ւ

Անձէ՛ն ու ասպետն առանձին մնացին :

— Ազատեցի՞ք . . դուք ազատեցիք, դոչեց Անձէլ :

— Ուրիշ տեսակ միջոցներ կ'ուզէի դործածել, տիկին դքսուհի, սակայն կրտսնեմ որ դուքը ինձի չափ յամառ է . . . ուրիշ կերպ կարելի չէր ընել . . . : Հիմա մեք մի քանի վայրկեան միայն ունինք, Շէմրօն շատ չանցած կու գայ, ամենէն ստիպողականին նայինք . . . : Ազամանդներդ ո՛ւր են : Գնացէ՛ք շուտ մ'ա՛ուէք զանոնք որ տանիք, տիկին : Այս գործը երևան ելնելուն պէս՝ ամենքն ալ յարբուծիս կը գրաւուին :

— Գոհարեղէնները հոն են . . . դուքսին սենեկին մէկ զաղտնի պահարանին մէջ :

— Վաղեցէ՛ք, առէ՛ք զանոնք . ես հիմա Միրէթը կը կանչեմ որ ձեզի հանդերձ պատրաստէ :

— Ո՛վ վեհանձն բարեկամ, իսկ դո՛ւք, Աստուած իմ . . . իսկ դո՛ւք . . .

— Հանդարտեցէ՛ք, ձեզ ազատելուս պէս ինքզինքս պիտի հոգամ : Միրէթը պիտի կանչեմ :

Ասպետը թասի մը զարկաւ :

Անձէլ Մօնմութի սենեակը մտաւ :

Միրէթ եկաւ :

— Չա՛տախ, ըսաւ անոր ֆրուսթիյաք, շուտով ֆարայիպի մեծ կողով մը բե՛ր, այնպէս որ տիրուհւոյդ քանի մ'աւուր բացակայութեան համար պէտք եղած բաները մէջն առնէ, և մանաւանդ չմոռնաս որ զիս միշտ Տէ՛ր իմ պիտի կոչես :

Միրէթ գլխովը հաստատական նշան մ'ըրաւ :

— Ա՛հ, ըսաւ Քրուսթիյաք հանելով կարօլոս թագաւորին սուրն ու կամարը որք Վօնութիւն էին և որոյ վրայ գուքը կը գուրգուրար, նայէ՛ որ կողմին այնչափ մեծ ըլլայ որ այս սուրն ալ աւնէ :

— Այո՛, աէ՛ր իմ՛ :

— Այնուհետև երէկ զիս հոս ընդունող Խափշուհիէն ուզէ երկաթէ հին սուրս, կանաչ թիկնոցս, զոյգ մը կարմիր զուլպաներս և թաղեայ մոխրաոյն գլխարկս . . . Ես այն հին զգեստներն այն սենեակը ձգեցի ուր եկած ատենս հաղուեցայ . . . : Ասոնց մէջէն սուրը միայն բե՛ր ինձ, իսկ միւսներն ուրիշ կողովի մը մէջ գնե՛լ տուր, զոր զինուորներէն մին պիտի աւնէ :

Միրէթ դուքս ելաւ :

Աստեան ըսաւ ինքնիրեն .

— Ըրածս տղայս թիւն է, բայց սիրտս այն հին հանդերձէն չկրնար բաժնուիլ. զայն հաղած ատենս շատ պիտի ուրախանամ, որովհետև Գիւսթնակ-Բլուրին դէպքերը պիտի յիշեցնէ ինձ . . . և իմ միակ հաղուստս պիտի ըլլայ. վասն զի, ամեն բան պարզուելուն պէս, այս կարմիր լեռնաթիւղով սև թաւիչը կը հանեմ, որուն զոյնը շատ բայ է : Այրիկեան մը լուս կենալէ և խորունկ հառաչ մ'արձակելէ ետև ասպետը յարեց. Օ՛ն ուրեմն, Քրուսթիյաք . . . զործը լաւ կը քալէ . . . սիրտ առ . . . այո՛, սիրտ առ . . . : Ա՛րչափ սիրուն է այն փոքրիկ գքսուհին, մ'ըչափ սիրուն է . . . : Ա՛հ, այս անգամ կ'զգամ, բնաւ չպիտի մոռնամ . . . սէր է այս . . . այո՛, ճշմարիտ սէրն է այս : Բարեբաղդարար այս վստանդը, այս սրտայուզութիւնները զիս կը թմրեցնեն . . . : Ա՛հ, ինչն է :

Անժէլ ներս կը մտնէր արկղիկ մը բռնած :

— Այս ազամանգները միշտ այսպէս պահած էինք այս արկղին մէջ, որպէս զի աճապարանօք փախչելու ստիպուած ատենն իս պատրաստ ըլլան, ըսաւ ասպետին : Մեր հարստութիւնն ամեն կերպով սպահովեալ է : Աւա՛ղ, ինչո՞ւ համար դուք . . .

Մանկամարդ կինը խօսքը կտրեց, վախնալով որ մի գուցէ կարծողը վշտացնէ. յետոյ արտասուալից աչքերէն տխրալին .

— Զիս շատ վատ պիտի համարիք, այնպէս չէ՞, ձեր ըրած հիանալի զոհողութիւնն ատանց վարանելու ընդունելուս համար . . . բայց դուք բարի և ներողամիտ պիտի ըլլաք. որովհետև աշխարհիս մէջ ինձ ամենէն սիրելի մէկ էակը պիտի ազատէք, որուն համար հաղար անգամ կեանքս կու տայի . . . : Բայց մտի՛կ ըրէք, ըրած խօսքս սոսկալի ինքնասիրութենէ մը յառաջ կու գայ : Չեղ այսպիսի խօսքեր ընել, ձեզ, որուն ամեն բան պարտիմ . . . ձեզ, որ թերևս քիչ մը ետքը մեզ համար պիտի մեռնիք . . . խեղ եմ . . . ներեցէ՛ք ինձ . . .

— Ասոր վրայ բաւ մ'անգամ չպիտի արտասանէք, տիկին, կ'աղաչեմ, կը պաղտախիմ . . . : Ահա առիկ գուքսն սուրը, իր հօրը սուրն է այս. ահա այս ալ կենդանադրի փոքրիկ առվին է իւր մօրմէն մնացած . . . : Ասոնք թանկազին նշխարներ են. ամենքն ալ մեծ կողովին մէջը գրէ՛ք :

— Արչափ ազիւ և վեհանձն էք, զոչեց Անժէլ փշկեալ ձայնով մը, ամենքն ալ կը մտած՛ք . . . :

Քրուսթիյաք բան մը չպատասխանեց. աչքերն անդին դարձուց որպէս զի գքսուհին չտեսնէ արտասուաց այն խոշոր կաթիլները որք իւր արեակէզ այտերէն կը վազէին : Իւր մեծ և սկրուտ ձեռքերը մանկամարդ կնոջ երկընցոյց և հեղձամղձուկ ձայնով մ'ըսաւ անոր .

— Մնացէ՛ք բարեաւ . . . խոսքու մնացէ՛ք բարեաւ . . . : Պիտի մոռնաք, այնպէս չէ՞, իմ ողորմելի խեղկատակ մ'ըլլալս, և զիս երբեմն պիտի յիշէք իբրև . . .

— Իբրև մեր լաւագոյն բարեկամը . . . իբրև մեր եղբայրը, ըսաւ Անժէլ արտասուք թափելով :

Յետոյ գրպանէն իւր անուան սկզբնատուերը կրող փոքրիկ մետայլեօս մը հանեց և Քրուսթիյաքին ըսաւ .

— Ահա այն առնելու եկայ այս իրիկուն, կ'ուզէի ձեզ ընծայել զայն իբր գրատական մեր բարեկամութեան. զայն ձեզ բերած

ատենս էր որ Քիւթէր զնդապետին հետ ձեր ըրած խօսակցու-
թիւնը լսեցի . . . ընդունեցէ՛ք, սա մեր բարեկամութեան և
ձեր վեհանձնութեան կրկին յիշատակը պիտի ըլլայ . . . :

— Տուէ՛ք . . . ս'հ, տուէ՛ք, զսչեց Կասքօնը մէտայլեծնը
համբուրելով. չափէն աւելի վարձատրեցայ թէ՛ ձեզ . . . և
թէ իշխանին համար ըրածներուս փոխարէն . . . :

— Եպերախտ մի կարծէք մեզ . . . : Գուքը իւր ապահո-
վութիւնը գանելուն պէս՝ Շէմբօյի ձեռքը չպիտի թողունք ձեզ,
և . . . :

— Ահա տախի Միրէթը . . . զործերնիս նայինք, զոչեց աս-
պետը ընդմիջելով զքուհին :

Միրէթ ներս մտաւ, ետէն ալ Խափշուհին որ Քրուսթիյաքի
հին սուրը բռնած էր. զինուոր մ'ալ ասպետին հանդերձները
պարունակող կողովը կը կրէր :

Անժէլ զահարեղինաց արկղիկը և Մօնմութի սուրը Քարայի-
պի կողովին մէջ գրաւ :

Պ. տը Շէմբօ եկաւ ըսելով.

— Տէ՛ր իմ, ամեն բան պատրաստ է :

— Պարոն, կ'աղաչեմ, թե երեք տիկնոջ տուէ՛ք, ըսաւ աս-
պետը ախոր զիմօք Պ. տը Շէմբօյին :

Կարծես Անժէլի մխոքը յանկարծ բան մ'ինկաւ և ասպետին
ըսաւ .

— Տէ՛ր իմ, հայր Կրիֆօնին զազատի մէկ երկու խօսք կ'ու-
ղեմ ընել . . . այս վերջին շնորհքը կը մերժէ՛ք ինձ :

— Ճշդիւ, տէ՛ր իմ, ըսաւ Պ. տը Շէմբօ, վերապատուելին
աղմուկն իմանալով, հիմա խնդրեց որ տիկին գքուհւոյն հետ
խօսի :

— Հոս է, զոչեց Անժէլ, օրհնեալ է Եստուած :

— Թող ներս գայ, ըսաւ Կասքօնը երեսը կախած :

Պ. տը Շէմբօ նշան մ'ըբաւ, զինուոր մը դուրս ելաւ : Հայր
Կրիֆօն ներս մտաւ ծանր և ախոր զիմօք :

— Հայր, ըսաւ անոր Անժէլ, ձեզի հետ մի քանի վայր-

կեան խօսակցիլ կը խնդրեմ :

Այս ըսելով Անժէլ կրօնաւորին հետ մտակայ սենեակ մը
մտաւ .

— Տէ՛ր իմ, ըսաւ Շէմբօ թուղթ մը ցոյց տալով Կասքօնին,
այս նամակը Քիւթէր զնդապետին վրայէն ելաւ, որ բնաւ կաս-
կած չ[թողութ Կիյօմ'Օրանժի Ձեր Բարձրութեան դէմ ունեցած
առաջադրութեանց մասին . . . Փօր-Բօայալ հասնելուս պէս
Քիւթէր հրացանի պիտի բռնուի :

— Ահոր վրայ դարձեալ կը խօսինք, պարոն, սակայն ես
զնդապետին նկատմամբ ղթութեան կողմը կը միտիմ . . . չէ թէ
տկարութեամբ, այլ քաղաքական տեսութեամբ : Ետքը այս մանին
պէտք եղած բացատրութիւնները կու տամ ձեզ :

— Ձեր Բարձրութեան հրամաններուն կ'սպասեմ այս խնդրոյն
նկատմամբ, ըսաւ Պ. տը Շէմբօ : Յետոյ յարեց .

— Բան մը չը՞պիտի տանիք, տէ՛ր իմ :

— Պահապան զինուորներէն մին արդէն կը կրէ ամենէն ծան-
րաղին բաներս, ըսաւ ասպետը, թուղթերս . . . աղամանդներս
. . . : Իսկ դալով այս տան և անոր պարունակած բաներուն,
այս մասին հրահանգներս զբաւոր կերպով հայր Կրիֆօնի պիտի
տամ, ինչոր ալ ըլլայ, բնաւ երբէք չեմ ուղեր վերտախ տեսնել
այս տեղերն յիշեցընող բան մը, այս տեղերն ուր պատուոյս դէմ
սոսկալի կերպով մեղանշեցին :

— Տիկին զքուհին փոխադրուելու համար զեսպակ մ'ունե-
նալով, տէ՛ր իմ, Խափշիկը զահաւորակի մը մէջ գնել տուի և
քովն ալ սրահապաններ կեցուցի : Գուք և ես ձեռով կ'ուղեկցինք :

— Հաս լաւ, պարոն, ահաւասիկ մեղապարտ ամուսինս :

Արդարև Անժէլ արտասուտթոր աչօք դուրս կ'ենէր հայր
Կրիֆօնի հետ . . . : Ի դարմանս Պ. տը Շէմբօյի, այս կրօնա-
ւորը ծանր կերպով մը՝ դուրս ելաւ առանց բաւ մ'ուղղելու
Քրուսթիյաքի, որ կամաց մը Գաղղիոյ նուիրակին ըսաւ .

— Ընթացքս եպերելի կը թուի վերապատուելի հօր, իւր
ընտրութիւնը մեծ նշանակութիւն ունի . . . սակայն չհամարձակիր

կնոջս կողմը բռնելինձ զէմ. կ'ուզէ՞ք թեկերնիդ տիկնոջտալ, յարեց Կասքօնը :

Անժէլ, Պ. ալ Շէմբօ և Կասքօնն այսպէս դուրս ելան Գիււարնակ-Բլուրէն : Այս անձանց ամենքն ալ մինչև որ Նհանդաց խորշը հասան խորին լուռութիւն մը պահեցին : Բայ ի Պ. ալ Շէմբօյէն, միւս ամենքն ալ այս գործին ելքին վրայ կը մտածէին : Այն փոքրիկ ծովածոցն ուր Քամէլէն կեցած էր, Կասպոյտ-Մօրուքին բնակարանէն շատ հեռու չէր : Երբ հոն հասան, հորիզոնը արեղական առաջին ճառագայթներովը կը շառագունէր :

Քամէլէնը, որ աղիւիտնի մը պէս թեթև էր և սրբնթաց, ախայ վրայ շնորհալի կերպով մը կը տատանէր. այս նաւը՝ նաւաբեկելոց ազատութեան համար խարխախով ծովուն երեսը բռնուած տեսակ մը արկղի կապուած ըլլալով, կրնար արագութեամբ բացուիլ : Քամէլիօնէն քիչ մը հեռու եղերապահ նաւ մը կեցած էր որ միշտ այս պահնց մէջ կ'սպասէր հսկողութեան համար, վասն զի Քասպէսթէրի միայն այս տեղն էր ուրիշ նաւ մը կրնար եղերքին մտննալ : Քամէլիօնի մակոյկը որուն կը հրամանատարէր Բալֆ նաւապետին երկրորդը, նաւամատոյցը կ'սպասէր. մէջը չորս ծովաստի կային, որք թիակնին բարձր բռնած էին նշան տրուելուն պէս թիավարելու համար :

Քրուսթիյաքի սիրտը անհնարին ուժգնութեամբ կը տրոփէր . . . : Իւր անձնանուիրութեան պտուղը քաղելու վայրկենին, կը գողար որ անակնկալ զէպք մը իւր լարած գիւրբարեկ մեքենան չխորտակէ : Աերջպպէս այն դահաւորակը որուն մէջ փակուած էր Մօնմութ, ծովեղերք հասաւ, որուն ետեւէն խիղջն եկաւ Անժէլի գետտակը : Աղեկից զինուորները նաւամատոյցին երկայնութեանը շարուեցան. Կասքօնը յուզեալ ձայնով մը Անժէլի ըսաւ .

— Մակոյկ մտէ՞ք, տիկին, ձեր մեղակցին հետ : Այս ծրարը (մակոյկին հրամանատարին յանձնեց զայն) վերջին հրամաններս կ'իմացընէ Բալֆ նաւապետին . . . : Սակայն ըսաւ ասպետն յանկարծ . Սպասեցէ՞ք, միտքս բան մը ինկաւ . . . :

Պ. ալ Շէմբօ և Անժէլ զարմացմամբ Քրուսթիյաքի երեսը

նայեցան : Ասպետը դուքան ազատելու և միանդամայն ինքն ալ Պ. ալ Շէմբօյի ձեռքէն խոյս տալու միջոցը գտած ըլլալ կը կարծէր : Մակոյկին հինգ ծովաստիներուն արիութեան և անձնանուիրութեան վրայ տարակից չաւերէր. մտածեց որ Անժէլի և Մօնմութի հետ մակոյկին մէջնետուի և նաւաստիներուն հրամայէ բռնութի Քամէլիօնին մտննալ և անմիջապէս առագաստ պարզել . . . : Պահապան զինուորները, որք թէև երեսունի չափ էին, այս անակնկալ փախուստէն անպէս յանկարծակիի պիտի գային, որ յաջողութիւնը կարելի էր : Նոր միջադէպ մը եկաւ ասպետին այս նոր առաջադրութիւնն անգործադրելի ըրաւ : Չայն մը՝ որ ի սկզբան շատ հեռուէն կու գար, բայց խիստ ուժղին էր, զոչեց .

— Յանուն թաղաւորին, կեցէ՞ք, մարդ նաւ չպիտի մտնէ :

Քրուսթիյաք խիղջն ձայնին եկած կողմը դարձաւ և արշալոյսին լուսովը տեսաւ որ ծովային սպայ մը Նհանդաց խորշին մօտ զետեղուած մարտկոցէ մը ելնելով զէպ իրենց կը վազէր :

— Յանուն թաղաւորին, մարդ նաւ չպիտի մտնէ, գոչեց վերստին :

— Անհո՞գ եղիք, տեղակալ, պատասխանեց պահակ մը զոր մինչև այն աստն տեսած չէին, վասն զի նաւամատոյցին առջևի ցիցերէն չէր երևեր, առանց ձեր հրամանին թոյլ չպիտի սայի որ մակոյկը բացուի, տեղակալ, պատրաստ կ'սպասէ նա :

— Շատ լաւ, Թո՛վմաս, սակայն, յարեց սպայն իբր նշան հրացան մը պարպելով, եղերապահն ալ չպիտի թողուր որ երկկայմը առագաստ բանայ :

Հարկ չկայ այս տեսարանին վրայ մաս ունեցող անձանց սոսկալի անձկութիւնը նկարագրելու : Քրուսթիյաք հասկըցաւ որ իւր փախուստի առաջադրութիւնն անգործադրելի է, որովհետև եղերապահ նաւը փոքրիկ նշանի մը կը նայէր որ Քամէլիօնի մեկնելն արդիւլէ :

Սպայն սրուն խօսքն ըրինք, Քրուսթիյաքի և Պ. ալ Շէմբօյի քով հասաւ և ըսաւ անոնց .

— Յանուն թողաւորին, կ'ստիպեմ ձեզ ըսել ինձ թէ դուք ո՛վ էք, և ո՛ր կ'երթաք, պա՛րոններ: Պ. կուսակալին հրամանին համեմատ ոչ որ կրնայ հասկէ նա նստիլ առանց անոր արածուս- գրոյն:

— Պա՛րոն, ըսաւ անոր Պ. տը Շէմրօ, ինձ ուղեկցող պա- հաստան զինուորները կուսակալին մարդիկն են, ինչպէս որ կը տեսնէք, իւր կամայր համեմատ կը շարժիմ:

— Պահաստան զինուորներ ունիք, պա՛րոն, ըսաւ սպայն զար- մայմամբ:

— Հոն . . . թմբարկին մօտ, պա՛րոն, ըսաւ Քրուսթիյաք:

— Օ՛, այդ ո՛րիշ . . . պա՛րոն, քիչ մ'առաջ տակաւին այն- չափ լոյս չըլլաւուն, չկրցայ նշմարել այդ զինուորները: Թողու- թի՛նք ըրէք, պա՛րոն, թողութի՛նք ըրէք:

Այս մարդը, որ չափազանց շատախօս մը կ'երևէր, կուսա- կալին պահաստաններուն մօտեցաւ, պահ մը զննեց զանոնք և կարգէ գուրս արագախօսութեամբ շարունակեց.

— Ինձ ծառայող զինուորը միայն սա իմաց տուաւ թէ բող- մաթիւ անձինք դէպ ի նաւամատոյցը կ'երթան. և որովհետև ճշդիւ Գաթէլէճն ալ որ, չմտնանք ըսել, Կապոյտ-Վօրուքին վե- բարերող քաջ նաւ մ'է. և որ արիարար ընկղմեց Սպանիական ծովահէն նաւ մը, և որովհետև Գաթէլէճը, կ'ըսեմ, այս զիշեր եկաւ և խարսխաւոր արկղի մը կ'սպուեցաւ . . .

— Պա՛րոն, խնդրեմ, լրեցուցէ՛ք այս անտանելի շատախօսը, ըսաւ ասպետը Պ. տը Շէմրօյի, դուք հասկընալու էք թէ այս տեսարանը ո՛րքան ցաւ կը պատճառէ ինձ:

— Ինչպէս որ կը տեսնէք, պա՛րոն, ըսաւ Պ. տը Շէմրօ տե- ղակալին, այն անձինքը որ նաւ սլիտի նստին իմ անձնական պա- տասխանատուութեանս ներքև կը դանտին: Ես եմ Պ. տը Շէմրօ, թողաւորին արտաքին կարգի լիազօր նուիրակը:

— Պա՛րոն, ըսաւ տեղակալը, հարկ չկայ ձեր անտոյններն ստուգելու . . . : Այս զինուորները զոհացուցիչ երաշխաւորու- թիւն մ'են, և . . .

— Ուրեմն վերցուցէ՛ք արդեւքը, պա՛րոն:

— Իբաւունք ունիք, պա՛րոն, այս արդեւքը հիմա նպատակ մը չունենալով, հարկ չկայ զայն հաստատ բռնելու: Թո՛վմաս, զոչեց շատախօսը իւր պահակին, քեզի տուած պատուէրս նայիմ զիսե՛ս:

— Ո՞ր պատուէրը, տե՛ղակալ . . .

— Ի՞նչ խօսք է, ասպուշ:

— Բայց, պա՛րոն, վայրկեաններս համրուած են, պէտք է որ հիմա անմիջապէս Քօր-Բօայալ գառնամ, ըսաւ Պ. տը Շէմրօ: Տեղակալը շարունակեց աներկիւզ.

— Ի՞նչ ըսել է, քեզի տուած վերջին պատուէրս մտցա՞ր:

— Ահրջին պատուէրը . . . ո՛չ, տե՛ղակալ:

— Ո՛չ, տե՛ղակալ . . . ուրեմն ըսէ՛ նայիմ, ի՞նչ է այս պա- տուէրը: Յետոյ Պ. տը Շէմրօյի գառնալով, իւր զինուորը ցոյց տուաւ անոր և ըսաւ. Բնաւ յիշողութիւն չունի. ուղեցի որ ձեր ներկայութեանս այս փոքրիկ դասը տամ անոր, իրեն համար օգ- տակար է:

— Բայց, պա՛րոն, ես ձեր պահակները կը թնելու չեկայ հոս, ըսաւ Պ. տը Շէմրօ:

— Օ՛ն ուրեմն, թո՛վմաս, ի՞նչ է այն պատուէրը:

— Տե՛ղակալ, թող շտալ որ մէկը նաւ մտնէ:

— Ահա կ'ուզեմ որ այդպէս մտաք պահես . . . : Հիմա այս արդեւքը կը վերցընեմ:

— Նա՛ւ մտէք, տի՛կին, շո՛տ, զոչեց Քրուսթիյաք, չկրնա- լով իւր անհամբերութիւնը չափաւորել:

Անձէլ վերջին ակնարկի մ'ալ ձգեց անոր վրայ: Գուքսը յուսա- հատ շարժում մ'ըբաւ իւր կապերը խղելու համար, բայց ծովա- յին զինուորներն ուժդնութեամբ մակոյկին մջ լիջեցուցին զայն: Կապոյտ-Վօրուքին մէկ նշանին վրայ ծովաստիներն սկսան բռնա- թի յառաջանալ դէպ ի Գաթէլէճն:

— Տէ՛ր իմ, հիմա դո՛հ եղա՞ք, ըսաւ Պ. տը Շէմրօ:

— Ո՛չ, ո՛չ . . . տակալին, պա՛րոն, այն աստե՛ն կատարելա-

պէս գոհ պիտի ըլլամ երբ նաւուն ճամբայ ելնելը տեսնեմ, պատասխանեց Կոստանն այլայլած ձայնով մը :

— Իշխանը սրչափ անհաշտ ատելութիւն մ'ունի, ըսաւ մտքէն Պ. տը Շէմբո. տակաւին բարկութենէն կը դողայ, թէև իւր վրիժառութիւնն ապահովեալ է :

Յանկարծ երկինքը բոցավառ լուսոյ մը ճառագայթներովը բռնկեցաւ որով աւելի մթադնեցաւ այն կապուտակի դիժը զոր ծովը հորիզոնին վրայ կը ձգէր . . . արեգակն սկսաւ շքեղ կերպով բարձրանալ շառագոյն պայծառութեամբ մը ողողելով ալիքները, ժայռերը, ծովածոցը . . . :

Սոյն պահուն Բաթլէնը, որուն հասած էր մակոյկը, իւր թեթև և սպիտակ առապաստները սիւքին դէմ կը պարզէր, ծայրէն ուլորելով այն պարանր որով խարսխաւոր արկղին կապուած էր . . . : Երկկայմը շնորհալի շրջանով մը գլուխը դարձուց յուլաբար . . . քանի մը վայրկեան բոլորովին զոյցեց արեգակին սկաւառակը և լուսեղէն ակնախտիղ շրջանակով մը պատեալ երևեցաւ . . . : Յետոյ այն թեթև նաւը իւր խելաց կողմը դէպ ի Նհանդայ խորշը դարձրնելով սկսաւ յառաջանալ և բացուիլ :

Քրուսթիյաք անշարժ և վշտալին կը դիտէր այն նաւը որ իւր աճապարանօք և յիմարաբար սիրած մէկ կինը կը տանէր : Բաղդախնդիրը շնորհիւ իւր սրատեսութեան՝ կըրցաւ նշմարել ճերմակ թաշկինակ մը զոր նաւուն ետևի կողմէն արագութեամբ կը շարժէին : Կապոյտ-Մօրուքին վերջին հրածեշտն էր այս : Քիչ մը հետը համն աւելի զովացաւ . . . : Փոքրիկ նաւը, որ խիսա սքընթաց էր, իւր առադաստներուն ներքև ծռեցաւ և սկսաւ այնպիսի արագութեամբ հեռանալ, որ տակաւ առ տակաւ առաւօտեան տաք և մեղրոտ շողոցն մշկ'անհետանար . . . : Յետոյ արեգակին՝ ալեաց վրայ ձգած լուսեղէն գօտիի մը մէջ մտաւ :

Քիչ մ'առեն քրուսթիյաք չկրցաւ դիտել Բաթլէնը . . . երբ վերստին տեսաւ զայն, երկկայմը հետզհետէ ի հորիզոն կը խորասուղէր և տարածութեան մէջ կէտի մը պէս կ'երևէր :

Վերջապէս բոլորովին աներևոյթ եղաւ : Երբ խեղճ քրուսթիյաք այլևս չկրցաւ բան մը տեսնել, խիսապաւալի կերպով յուզուեցաւ և իւր սիրտը դատարկ և ուլիխանոսի նման ամայի թուեցաւ իւրեն :

— Հիմա, տէր իմ, ըսաւ անոր Պ. տը Շէմբո, երթանք ձեր կուսակիցները գտնենք որք անհամբերութեամբ ձեզ կ'սպասեն . . . : Մէկ ժամէն ֆրբաթօնին մէջ պիտի ըլլանք :

ՄԵՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

Վ Ի Շ Տ

Քանի որ Քրուսթիյաք իւր զոհողութիւնն ընելու կէտին վըայ էր, քանի որ մտաւումս վաւանդներն իւր եռանդը կը բորբոքէին և Անժէլի, Վօնմութի ներկայութիւնը հաստատ կը բռնէին զինքը, իւր անձնանուիրութեան դժնգակ հետեանքը երևակայած չէր, բայց երբ առանձին մնաց, վշտալի խորհրդածութեանց մեջ խնկաւ. չէ թէ իրեն սպառնացող վտանգներէն կը վախնար, այլ գառնապէս կը ցաւէր երբ կրտեսներ որ ներկայ չէ այն կինը որուն համար ամեն վտանգ առ ոչինչ պիտի գրէր . . . Անժէլի տկնարկին ներքև և ոչ մէկ բան պիտի կրնար իւր աչքը վախցընել, սակայն այլ ևս տեսնելու չէր զայն . . . : Այս էր ահա իւր տխուր և վհատեալ վիճակին պատճառը: Թեւերը կուրծքին վրայ խաչաձև կտպած, զլուխը խոնարհեցուցած, աչքերը կէտի մը վրայ յառած, դէմքը տխուր, բազալանդիրը համր ու անշարժ մնացեր էր . . . : Երկու անգամ Պ. տը Շէմրօ ըսաւ անոր .

— Տէր իմ, մեկնելու ժամանակ է :

Քրուսթիյաք չլսեց : Պ. տը Շէմրօ տեսնելով որ իւր խօսքերը չեն լսուիր, կամաց մը ասպետին թեկն գպաւ, աւելի բարձր ձայնով մը կըրկնելով .

— Տէր իմ, չորս փարախէն աւելի ճամբայ ունինք Քօրֆօայալ հասնելու համար :

— Մօրտիւն*², պարոն, ինչ կ'ուզէք, դուքեց կատրօնը սրանն զու թեամբ Պ. տը Շէմրօյի գառնալով :

Այս վերջինը երբ Վօնմութ գուքը համարած մարդուն բերնէն այս արաւոց բացադանչութիւնը լսեց, այն աստիճանս աղչեցաւ, որ կատրօնը իւր ըրած անխոհեմութիւնը հասկըցաւ, բայց իսկոյն իւր հանդարտութիւնը դտաւ, անտարբեր դէմքով մը Պ. տը Շէմրօյի երեսը նայեցաւ, յետոյ՝ խորին մտածութենէ մը ելնող անձի մը պէս՝ կտրուկ ձայնով մ'ըսաւ ,

— Ալ հիմա մեկնի՛ք, պարոն :

Էւ ձի հիծնելով, կատրօնը Քօրֆօայալի ճամբան բռնեց, որուն կ'ընկերանար Պ. տը Շէմրօ, և ետեէն կ'երթային պահապան զինուորները : Քրուսթիյաք թեև վշտակիր՝ բոլորովին յուսահատող մարդ չէր :

Պ. տը Շէմրօ՝ իւր ապշութենէն յիշատելով, կատրօնին տխուր լուծիւնն այնցաւալի մտածութեանց կը վերադրէր զոր Վօնմութ գքուհօյն մեղապարտ ընթացքը հարկաւ պիտի պատճառէր անոր, մինչդեռ բազալանդիրը, իւր ազատութեան համար մնացած զոյղն հասանախառութիւնները երևակայելով, իւր սրտին վիճակը կը զննէր և հետեւեալ պատճառարանութիւնը կ'ընէր .

— Կապոյտ-Վօրուքը (զայն միշտ այսպէս պիտի կոչեմ, վասն զի առաջին անգամ՝ լսեցի որ այս անունը տուին անոր, երբ առանց զինքը ճանաչելու իւր վրայ մտածեցի) Կապոյտ-Վօրուքը մեկնեցաւ . . . իրապէս մեկնեցաւ, իսպառ չպիտի տեսնեմ զինքը, այո՛, յախտեան չպիտի տեսնեմ : Այս ստոյգ է . . . : Ինչ որ ալ ընեմ, մտքես չպիտի ելնէ : Կ'զլամոր սրտիս մեջ սլաք մը մոկեցին : Անհիթեթ բան մ'է այս, յիմար բան մ'է, անմահաբերելի բան մ'է, բայց այս այսպէս է . . . ասոր ապացոյցը . . . սա է որ այն քնքուշ կինը զիս բոլորովին այլափոխեց : Երբ զինքը չէի ճանաչեր՝ անհոգ էի, շաղակրատ էի, և ոտսին վրայ

* Կատրօնական գարձրինակ բացադանչութեան մը :

կեցող թռչնոյ մը պէս զուարթ . . . դիւրազգացութիւն ալ չու-
նէի . իսկ հիմա , այսպէս տխուր եմ , բերանս չբացուիր . . .
և այնպիսի չափազանց դիւրազգածութիւն մ'ալ ունեցայ , որ կը
վախնայի թէ . . . Կասպոյտ-Վօրուքը չըլլայ որ մեկնած ատեն մէ-
տայլեօնէն զտա ուրիշ բան մը տայ ինձ իբր վարձ , սակայն կ'ինը
վեհանձնութեամբ անոր վրայի ազամանդներն ալ հաներ էր : Ա-
ւա՛ղ , այսուհետև այս յիշատակը պիտի ըլլայ իմ բոլոր ուրախու-
թիւնս , տխուր ուրախութիւն . . . : Ի՛նչ փոփոխութիւն . . .
Էս որ երբեմն հազուատ կատուստ չունէի և սակայն զարգարան-
քը կը սիրէի , ես որ այս ոսկեղէն օղակներով զարդարեալ սև թա-
ւիշէ զըեստով կրնայի երջանիկ օրեր անցընել , հիմա կը ցանկամ
այն վայրկենին յորում պիտի կրնամ դարձեալ իմ հին թիկնոցս և
կարմիր գուլպաներս հագնիլ և հպարտութեամբ ըսել . Գիւարնակ
-Բլուր ըսուած ազամանդի հանքէն այնպէս պայտուկ դուրս ելայ
ինչպէս որ մտայ : Մի՞թէ յայտնի չէ՞ որ եթէ Կասպոյտ-Վօրուքը
ձանչցած չըլլայի , կենացս մէջայս մտածումները չպիտի ունենա-
յի . . . : Հիմա ի՛նչ կը մնայ ինձ յուսալու , ըսաւ ինքնիրեն
Քրուսթիյաք որ իւր խլճին քննութիւնն ընելու համար ըստ իւր
սովորութեան հարցաքննութեան ձևը զործածեց :

— Օ՛ն ուրեմն , անկեղծ եղիր , Փօլիֆէմ , այնչափ շատ կը
սիրե՛ս կեանքը :

- Է՛Տ . . . Է՛Տ . . . :
- Կախուելո՞ւն ի՛նչ կ'ըսես :
- Օ՛ն ուրեմն , անկեղծ , համարձակ խօսէ :
- Անկեղծ , համարձակ խօսիմ : Շատ լաւ , կախողանը
կրնար ի հարկին հաճոյ թուիլ ինձ , եթէ Կասպոյտ-Վօրուքը կա-
րող ըլլար կախուելու տեսնելու : Բայց դարձեալ ո՛չ . . . զձուձ
մահ մ'է այս . մարդ լեզուն դուրս կը հանէ , սրունքները կը թո-
թուէ :
- Փօլիֆէմ , կախուելէ կը վախնամ :
- Ո՛չ , ճշմարիտ կ'ըսեմ , ո՛չ , բայց մինակ կախուել , անան-
ձին տեղ մը կախուիլ . . . կատղած շան մը պէս կախուիլ , մա-

նաւանդ երբ երկու գեղեցիկ աչեր չեն դիտեր քեզ , երբ սիրուն
բերան մը չժպտիր քեզ . . . :

— Փօլիֆէմ , դու թեթևամիտ ես , տխմար ես . . . չնո
կարծեր որ աղնուաշուք ակիկն Մօմոթի գրտահին քու վերջին
օրային պարիզ վրայ խնդալու պիտի դար : Ճշմարիտ կ'ըսեմ քեզ ,
Փօլիֆէմ , այդ քու ըսածներդ խորամանկութիւններ , փախուստի
ձամբաներ փնտուելէ . . . : Կախուելէ կը վախնամ , կ'ըսեմ քեզ :

— Թող այդպէս ըլլայ . . . այո՛ , կախուելէ կը վախնամ ,
ընդունեցայ ըսածդ , ա՛լ ատոր վրայ չխօսինք . . . : Մէկդի թո-
ղունք այս հաւանականութիւնները . . . մեր սպագային մէջ այս
չափազանց երկիւղը չընդունինք , այսչափ փոքր բանի մը համար
քեզ չեն կախեր . . . մինչդեռ բանատարկութիւնը կարելի է , ե-
թէ չըսենք հաւանական . . . : Ուրեմն բանատարկութեան վրայ
խօսինք :

— Հիմա , Փօլիֆէմ , բանատարկութիւնն ի՛նչպէս կ'երևի քեզ :

— Է՛Տ . . . Է՛Տ . . . բանատարկութիւնը մարդ խենդեցը-
նող միակերպութիւն մ'ունի՛ , զիտեմ որ Կասպոյտ-Վօրուքին վրայ
մտածելու երկար երկար ժամանակներ պիտի ունենամ , բայց ա-
նոր վրայ նոյնչափ պիտի կրնայի մտածել , և թերևս աւելի լաւ
պիտի մտածէի անտառներուն խաղաղիկ առանձնութեան մէջ ,
հայրենի հովտին հանդարտութեան մէջ . . . : Հայրենի՛ հովիտ ,
աւա՛ղ , հո՛ն կ'ուզեմ օրերս վերջացընել , երազելով Կասպոյտ-Վօ-
րուքին վրայ : Միայն թէ վերստին պիտի կրնամ գտնել այն հայ-
րենի հովիտը . աւա՛ղ , մեր կարօնի մառախուղն այնքան թանձր
է , որ անշուշտ ընդ երկար պիտի թափառիմ , առանց վերստին
գտնելու այն սիրական հովիտը :

— Փօլիֆէմ , դիտմամբ կը դատարկարանես . իմաստասիրական
մտածութեանցդ հակառակ , ինչպէս կախողանէն , նոյնպէս ալ
բանտէն խոյս տալ կ'ուզես :

— Լաւ , այո՛ , այդպէս է , խոյս տալ կ'ուզեմ , որո՞ւ պիտի
խոստովանիմ այս բանը եթէ ոչ ինձ , ո՞վ պիտի հասկընայ միտքս
եթէ ոչ ես ինքնս :

— Ազոր խօսք չունիմ, ֆօլիֆէմ, սակայն քեզ սպառնացող վտանգէն ինչպէս պիտի ազատիս :

— Մինչև հոս այս ճամբան փախուստի յարմար չէ, զիտեմ . . . աջկողմի ժայռեր, ձախ կողմի ծով. եսևս, առջևս պահաս պան զինուորներ . . . ձիս ղէշ չէ. եթէ պարզամիտ Շէմրօյին ձիէն լաւագոյն ըլլար, արագութեան կողմէն անոր հետ մրցելու փորձ մը կրնայի ընել :

— Յե՞տոյ, ֆօլիֆէմ :

— Յետոյ, պարզամիտ Շէմրօն ճամբուն վրայ կը ձգէի :

— Յե՞տոյ :

— Յետոյ, ձիս կը թողուի և քարայրի մը մէջ կը պահուրակէի, ժայռերէն վեր կը մազէի. երկայն սրունքներս շատ յարմար են ասոր . . . :

— Բայց, ֆօլիֆէմ, փախստական սևեր կը գտնուին, դու որ անոնց պէս աստանդական կենաց վարժուած չես, շատ դուրութեամբ կը գտնեն քեզ, միայն թէ վազրակատուները քեզ չուտեն, կամ օձերը չսպաննեն : Ուստի ետևէդ իյնողներուն օձիքդ ձեռք չտալու աշխատած ատենդ այս երկուքէն մէկը զլխուդ պիտի գայ :

— Այո՛ . . . բայց գոնէ փախչելու հաւանականութիւն մ'ունիմ, մինչդեռ պարզամիտ Շէմրօյին ետևէն երթալովս, ինչպէս որ ոչխարը զինքն սպանդանոց տանող մնացործին ետևէն կ'երթայ, ինքզինքս կուսակիցներուս մէջ պիտի գտնեմ. Վօրթիմէր վիզս պիտի փաթթուի, չէ թէ զիս ողջագուրելու, այլ ով ըլլալս, կամ մահաւանդ ով չըլլալս տեսնելով զիս խեղդելու համար . . . մինչդեռ փախուստ փորձելով, կրնամ յաջողիլ . . . և՛ ո՞ր զիտէ, երթալ Ասպոյտ-Վօրուքը գտնելու : Հայր չարիֆօն անոր անձնատուէր ըլլալով, եթէ ուր ըլլալը զիտէ՝ կրնամ անկէ հասկընալ :

— Բայց, ֆօլիֆէմ, դու խենդ ես, այն կինը կը սիրես առանց բան մը կարենալ յուսալու, նա չափազանց սիրահարեալ է Մօնմութի, և թէպէտ քեզ անոր տեղ համարեցին, նա այնքան

ղեղեցիկ, այնքան բարձրատիճան, այնքան կարևոր անձ մ'է, որքան դու աղեղ, ծաղրելի և աննշան մէկն ես, թէև չին տոհմէ . . . ֆօլիֆէմ :

— Կ'հ, ինչ փոյթ . . . : Ստոյգ է որ Ասպոյտ-Վօրուքը վերստին տեսնելով երջանիկ չպիտի ըլլամ . . . բայց գոհ պիտի ըլլամ . . . : Միթէ մարդս հաճոյք չըզպար զեղեցիկ վայրէ մը, սքանչելի պատկերէ մը, ընտիր քերթուածէ մը, հրապուրիչ եղանակէ մը, թէև այդ վայրը, այդ պատկերը, այդ քերթուածը, այդ եղանակը քուկդ չըլլան : Արդ՝ այն չքնաղ Ասպոյտ-Վօրուքին քով այսպէս պիտի ըլլայ իմ գոհունակութիւնս :

— Աերջին գիտողութիւն մ'ալ ունիմ, ֆօլիֆէմ : Բու փախուստդ յաջողի կամ ոչ, Պ. տը Շէմրօյի կատկածները չըսկիտի արթընցընէ : Ասով վտանգի ենթարկած չըսկիտի ըլլաս այն անձինքը զոր, չեմ ուրանար, բաւական ճարտիկութեամբ ազատեցիր :

— Այս եղերքէն վախնալու բան մը չկայ. Բամշիծըր թաշունի մը պէս կը սրանայ. հիմա ո՞վ զիտէ ո՛ւր է, եթէ կողոյն բոլոր եղերապահ նաւերն ետևէն իյնան, չպիտի զիսման թէ ո՛ւր փնտռեն զայն : Այսպէս ուրեմն՝ բնաւ անպատահութիւն մը չեմ տեսներ փորձելու թէ իմ ձիս պարզամիտ Շէմրօյի ձիէն աւելի արագ կ'երթայ . . . խեղճն այս միջոցին զլուրը շատ կախած կ'երևի, ծովեղերքը շատ լաւ է և ուղիդ : Մեկնիմ, կ'ըսես . . .

— Փորձէ՛ . . . մեկնէ՛ . . . ֆօլիֆէմ :

Բաղլախնդիրը մտաւոր կերպով այս հրամանն ինքզինքին տալուն պէս՝ ձին մտրակեց և մեծ արագութեամբ մեկնեցաւ : Պ. տը Շէմրօ՛ պահ մ'ապշած՝ ասպետին փախչիլը զիտեց. յետոյ՝ իշխանին ըրած այս տարօրինակ բանին խելքը չհասնելով սկսաւ ետևէն վազել : Պ. տը Շէմրօ երկար ատեն պատերազմներու մէջ գտնուած ըլլալով, լաւ ձի հեծնող մ'էր . . . : Իւր ձին թէև Բրուսթիպքի ձիէն լաւ չէր, բայց աւելի լաւ վարեալ ըլլալով, խելոյն Բրուսթիպքի մօտեցաւ :

Պ. ար Շէմբո բաղրախնդրին հետքը բռնեց գոչելով.

— Տէ՛ր իմ . . . տէ՛ր իմ . . . մե՛ր կ'երթաք այդպէս :

Աստուծոյ տեսնելով որ ետեւէն հասած են, իւր բոլոր զօրութեամբը ձին կը բռնէր : Քիչ մը ետքը աստեան ստիպուեցաւ կանգ աւանուլ, ինչու որ եղբօրն այն տեղ անկին մը կը ձեպցնէր և Կասթօնը տեսաւ որ իւր առջև ահագին ժայսերու կոյտ մը կը բարձրանար, սոյն ժայսերը նեղ և վտանգաւոր անցք մը միայն կը թողուին :

Պ. ար Շէմբո իւր ընկերին քովը գնաց :

— Տէ՛ր իմ, այս ի՞նչ պարմանալի բան է, գոչեց, ո՞ր ճանձը խոյթեց Ձեր Բարձրութիւնը, ինչու համար այսպէս յանկարծ և մոլեգնաբար վաղեցիք :

Կասթօնը պաղ և համարձակ կերպով մը ստատախանեց :

— Շատ կ'աճապարեմ կուտակիցներուս քովը երթալու, պարն . . . : Մանտանգ այն խեղճ Վօրթիմէրին որ մեծ անհամբերութեամբ ինձ կ'սպասէ . . . : Ասկէ վատ . . . որչափ ալ չեմ ուզեր . . . կնռն ունկարմար ցաւալի գաղափարներ միտքս պաշարած են, և կ'ուզէի այս գաղափարներէն խոյս տալ . . . այժ, խոյս տալ բոլոր զօրութեամբս . . . ըսաւ Կասթօնը հառաչելով ցաւագին :

— Կարծեմ, տէ՛ր իմ, արդէն բարոյսայէս և նիւթապէս աննոցմէ խոյս կու տաք արչաւակի. դժբաղդարար ճամբան արդելք կ'ըլլայ աւելի արագութեամբ խոյս տալու :

Պ. ար Շէմբո ուղեցոյցը կանչեց.

— Գեո ս'ըչափ կայ Քօր-Քօյալին, ըսաւ անոր :

— Մէկ փարսախ առ առտելն, պարն :

Պ. ար Շէմբո ժամացոյցը հանելով ըսաւ Քրուսթիյաբին .

— Եթէ հոյն յաջող ըլլայ, ժամը տասնմէկին կրնանք առաջատար պարզել և մեկնիլ դէպ ի Քօրնուայ, ուր փառքը ձեզ կ'ըստատէ, տէ՛ր իմ :

— Ես ալ այնպէս կը յուսամ, պարն, եթէ այդ չըլլար, ինձ համար շատ անհեթեթ բան մ'էր հոն երթալ : Սակայն մեր

ձեռնարկած դործին զալով, կարծեմ դէ՛ռ բան մ'ըրած պիտի ըլլանք եթէ մարգաստանութեամբ մը սկսինք զայն :

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, տէ՛ր իմ :

— Բիւթէր գնդապետին հրացանի բռնուիլը շատ ծանր պիտի գայ ինձ : Ես նախագաշարեալ անձ մ'եմ, պարն. այդ մահը չարապուշակ պիտի թուի ինձ . . . : Ձիս սպաննելու համար ըրած փորձը բոլորովին անձնական բան մ'էր : Աւտի բացորոշ կերպով կ'ուզեմ որ կեանքը շնորհէք իրեն :

— Տէ՛ր իմ, ո՞՞՞՞ զործելու միջոցին բռնուեցաւ, և . . .

— Բայց, պարն, այդ ո՞՞՞ զործուեցաւ. կը սնուիմ որ գնդապետը հրացանի չբռնուի :

— Գոնէ, տէ՛ր իմ, մշտնադարձ բանտարկութեամբ մը քաւէ իւր եղեռնագործութեան փորձը :

— Բանտարկութիւն . . . թող այդպէս ըլլայ . . . մարդ կրնայ անկէ ելնել, դոհութիւն Աստուծոյ . . . կամ միշտ կը յուսայ ելնել, ասով ժամանակը շատ կը կարճանայ : Սակայն գնդապետը կրնայ Քօրնուայ ոտք կոխելուս լուրը տարածել, և ասկէ ստուգիլ մնաս յառաջ կու գայ :

— Այս մասին ձեր բաղձանայ համեմատ պէտք եղածը կը տնօրինուի, տէ՛ր իմ :

— Ուրիշ բան ալ կայ, պարն . . . : Արդէն ըսի ձեզ որ ես նախագաշարեալ անձ մ'եմ . . . : Ահնայս մէջ բարի և չար օրեր նշմարած եմ. այսօրուան օրս բարի է, ինչպէս որ բարի մարդիկ կ'ըսեն . . . : Աւտի՛ ինչոր ալ ըլլայ, չեմ ուզեր այս աստիճան կարևոր ձեռնարկութիւն մը սկսիլ ինձ համար աղէտալի համարած օրուանս աղցեցութեան ներքէ : Ասկէ վատ՝ յոյնածեմ, դուք ալ կրնաք հասկընալ երբ մտածէք անգամ մ'այն բաղձագիծի յովմուրները որք երէկուին ի վեր զիս կը պաշարեն :

— Ի՞նչ է ուրեմն ձեր դիտաւորութիւնը, տէ՛ր իմ :

— Թերևս ձերինին հակառակ ըլլայ, սակայն շատ ուրախ կ'ըլլամ եթէ բաղձանքս կատարէք . . . այսինքն վաղն առտու արևը ելնելու ատեն առաջատար պարզենք :

— Տէր իմ . . .

— Գիտեմ ձեր ըսելիքը, պարոն . . . բայց բանն չորս ժամ առաջ կամ քսան չորս ժամ ետքը, այնչափ կարևոր բան մը չէ այս . . . և ասկէ զատ՝ որոշած եմ ստքս ծովը չգնել այսօր . . . կարելի է որ մեծ ձախողութիւններ բերեմ ձեզ, արեւադարձի բոլոր փոթորիկները ձեր ֆրեաթմոնին վրայ հրակրեմ . . . : Այս օրը կուսակալին սուունը կ'անցընեմ՝ բացարձակ առանձնութեան մէջ . . . առանձին ըլլալու պէտք ունիմ, յարեց Կասթօնը տխուր դէմքով մը, այո՛, առանձին ըլլալու, միշտ առանձին ըլլալու : Ես պէտք է որ առանձնութեան ուսումը սկսիմ :

— Առանձնութիւն, կ'ըսէք, տէր իմ, բայց ձեզ սպասող յուզմանց մէջ չպիտի կրնաք գտնել զայն :

— Է՛հ, պարոն, պատասխանեց Քրուսթիյաք իմաստասիրաբար, թշուառ մարդը ամբոխին մէջ անդամ կրնայ առանձնութիւն գտնել, երբ իւր վիշտերուն մէջ կ'առանձնանայ . . . : Ա՛հ, ո՛րչափ կը սիրէի այն կիներ, յարեց խորին հառաչանքով մը :

— Ա՛հ, տէր իմ, ըսաւ Պ. ար Շէմրօ նոյնպէս հառաչելով որպէս զի Քրուսթիյաքի յարմարի, սոսկալի բան է այս, բայց ժամանակն ասկէ տուելի ծանր վէրքերն ալ կը կոտորէ :

— Իրաւունք ունիք, պարոն, ժամանակը ասկէ աւելի ծանր վէրքերն ալ կը կոտորէ, արի պիտի ըլլամ : Բաւական է որ լաւ հանդատանամ, յոգնութիւնս առնեմ, դժնդակ սրտայուզութիւններս փարատին, վաղը կը միտնաբարոյս, կուսակիցներս ողջագուրելով ամեն բան կը մոռնամ :

— Ա՛հ, տէր իմ, վաղը ամենուս համար ալ դեղեցիկ օր մը պիտի ըլլայ :

Ատպետին վիճակն այնքան ակնածութիւն կը սրահանջէր, որ Պ. ար Շէմրօ պարտաորեալ էր իւր ընկերին ղիտողութեանց դէմ առարկութիւն չընելու : Հետեւաբար ընդունեց Քրուսթիյաքի կամբը տեղը տանիլ, թէև ակամայ : Քրուսթիյաք կը յուսար որ իւր խաբէութեան երեւան ելնելու ժամը ուշացընելով փախչելու

առիթ մը կրնայ գտնել : Յիշեց Կասթոյտ-Մօրուքին իրեն ըսած սախօսքը . «Ապերախտ չպիտի ըլլանք, իշխանը իւր ապահովութիւնը գտնելուն պէս, ձեզ Պ. ար Շէմրօյի ձեռքը չպիտի թողունք . միայն ջանացէք որ ժամանակ վատարիկք : »

Թէպէտ ասպետը իւր բարեկամներուն խոստմանը վրայ չէր կրնար մեծ յոյս մը դնել, գիտնալով բոլոր այն դժուարութիւնները որոց յաղթելու և դիմագրաւելու էին իրեն օգնելու համար . սակայն ազատութեան այս հաւանականութիւնը զոհել չէր ուզէր, թէև անստոյգ էր : Ինչպէս որ ուղեցոյցն իմացուցած էր, մէկ ժամ քալելէ ետև Փօր-Բօայալ հասան :

Կուսակալին պալատը քաղաքին ծայրը դաշտին կողմը կը գտնուէր . առանց մէկու մը պատահելու հոն հասնելը դիւրին եղաւ : Պ. ար Շէմրօ իւր սրահապաններէն մէկը զրկեց իմացընել կուսակալին որ իւր երկու հիւրերը կու գան :

Սեպուհը իւր երկնայն կեղծամը դրած և ծանր թիկնոցը հագեր էր Պ. ար Շէմրօն և ասպետն ընդունելու համար : Կատաղի հետաքրքրութեամբ ասպետը կը դիտէր, և մանաւանդ կարմիր թեղանիքով սև թափէ թիկնոցը տեսնելով բոլորովին շիտթեր էր : Բայց մտածելով որ Պ. ար Շէմրօ պետական գաղտնիքի մը խօսքն ըրած էր իրեն, որուն մէջ Գիւարնակ-Բլուրին բնակիչները մաս ունէին, խորին ակնածութեամբ մը կը դիտէր զՔրուսթիյաք : Այն միջոցին երբ այս վերջինը տխուր ակնարկ մը կը ձգէր պատուհանին վրայ, տեսնելու համար թէ կրնայ իւր փախստեան ծառայել, սեպուհը Պ. ար Շէմրօյի ըսաւ կամաց մը .

— Ես տիկին մը կ'սպասէի, պարոն : Գահաւորակ մը չտարիք հետերնիդ . . . :

— Գժբաղբար տիկինը չցիտեր եղեր ձեր սպասելը :

— Առաւօտեան արևը շատ նեղած ըլլալու է ձեզ, յարեց սեպուհը արթնութեամբ, թէև Պ. ար Շէմրօյի պատասխանը շատ ծանր եկաւ իրեն :

— Շատ նեղացայ, պարոն, նոյնպէս ձեր հիւրը : Եթէ իրեն զովացուցիչ բան մը հրամայեմք դէռ չըլլար :

— Մտածած եմ արդէն, պարոն, ըսաւ սեպուհը. երեք սպաս դնել տուի:

— Չեմ դիտեր թէ, պարոն սեպուհ, պարոնը (ասպետը ցոյց տալով) արժան պիտի համարի մեզ իւր սեղանն ընդունելու:

Առսակալը բոլորովին ապուշ դարձած՝ Բրուսթիյաքի երեսը նայեցաւ աւելի սաստիկ հետաքրքրութեամբ մը: — Բայց, պարոն, շատ մեծ մարդ մ'է ուրեմն:

— Պարոն սեպուհ, դարձեալ ձեզ կրկնելու դժբաղդութիւնն ունիմ թէ պաշտօնս ձեզ հարցում ընել է և ոչ պատ . . .

— Բաւական է, բաւական է, պարոն: Ար հաճիք հարցընել մեր հիւրին զոր ընդունելու պատիւ ունեցայ թէ այս նախաձաշն ընդունելու շնորհը կ'ընէ՞ ինձ:

Պ. տը Շէմրօ՝ սեպուհին հարցումը Բրուսթիյաքի հաղորդեց. Բրուսթիյաք՝ իւր յոգնութիւնը պատճառ բռնելով, ուզեց որ իւր սենեակին մէջ առանձին ճաշէ: Պ. տը Շէմրօ՝ սեպուհին ականջն ի վար բան մ'ըսաւ, սեպուհն իսկոյն իւր ամենէն գեղեցիկ սենեակն առաջարկեց բաղդախնդիրին: Բրուսթիյաք խնդրեց սեպուհէն որ քարայիպի կողովը բերել տայ, զոր իւր պահապաններէն մէկը կրած էր, և որուն մէջ, ինչպէս որ գիտենք, Ասքօնին հին հանգերձները կային: Պ. տը Շէմրօ Ասքօնին սենեակը կը գտնուէր երբ այս կողովը յանձնեցին անոր:

— Այս գեղջուկ կողովը տեսնողին մտքէն կ'անցնէր որ մէջը երեք միլիօնէն աւելի գումարի մ'արժողութեամբ աղամանդ կայ, ըսաւ Բրուսթիյաք անտարբեր կերպով մը:

— Բայց մեծ անխոհեմութիւն է ըրածնիդ, տէ՛ր իմ, գոչեց Պ. տը Շէմրօ: Այս պահապանները վստահութեան արժանի մարդիկ են, բայց . . .

— Արած գանձերնին չէին դիտեր, հետեաբար վախնալու բան մը չկար:

— Տէ՛ր իմ, պարտ կը համարիմ ըսել որ թագաւորին գետաւորութիւնն այն չէ թէ դուք ձեր անձնական հարստութիւնը գործածէք այս ձեռնարկն ի դուրս հանելու համար: Ֆրքաթոնէն

եւնենուս պէս՝ մէջը դանուող զօրաց և ուրիշ հարկ եղած ծախուց վճարման յատկացեալ մեծ գումար մը կայ ֆրքաթոնին գանձակետին քով:

— Հոյ չէ, ըսաւ Բրուսթիյաք: Ստակը պատերազմին ջիղն է: Մեծ թագաւորին սոյն տրամադրութիւնը նախատեսած չէի, և կ'ուզէի իմ թագաւոր հօրեղբորս օգտին յատկացընել մնացած արիւնս, հարստութիւնս և աղեցութիւնս:

Բրուսթիյաքի այս փբալից եզրակացութենէն ետև, Պ. տը Շէմրօ դուրս ելաւ:

Փ Լ Ա Ի Խ Ե Ր Ե Ս Ն Ե Ր Ո Ր Դ Ա Ռ Ա Ջ Ն Ե Ր Ո Ր Դ

Բրուսթիյաք իրեն համար պատրաստուած սեղանը նստաւ, քիչ բան կերաւ և պառկեցաւ, յուսալով որ քունը զինքը կը հանդարտեցընէ և թերևս փախուստի լաւ հնարք մը միտքը կը ձգէ. արդէնցաւօք սրտի տեսեր էր որ իւր գտնուած սենեկին պատուհանէն փախչիլն անկարելի էր. կուսակալին պալատին երկու պահակները միշտ կը պտըտէին չէնքին ստորոտը:

Պ. տը Շէմրօ մինակ մնալուն պէս սկսաւ մտածել այն այլալակ տեսարաններուն վրայ որոց ակնատես եղած էր: Թէպէտ Ասքօնին՝ ճմարիտ Մօմուլթ դուքսն ըլլալուն վրայ չտարակուսեցաւ, սակայն դքսուհոյն ընթացքն այնքան տարօրինակ թուեցաւ իրեն, Բրուսթիյաքի ձևերը և լեզուն, թէև բաւական ճարտարութեամբ իւր խաղացած դերին յարմարեցուցած, երբեմն այնպէս բաղդախնդրի հոտ կը բուրէին, որ՝ եթէ ասպետին անձին նոյնութիւնը հաստատող յայտնի ապացոյցները չըլլային, Պ.

տը Շէմրո քիչ մը կասկածի սխտի երթար : Սակայն և այնպէս միտքը դրաւ որ , քանի որ ժամանակ ունի ֆոր-թայալի մէջ , նորէն կուսակալը հարցաքննէ Կապոյտ-Մօրուքին վրայօք , և Բիւթ-լէր գնդապետը Մծնութ գութին վրայօք :

Սեպուհը դարձեալ միեւնոյն հասարակաց զրոյցները կրկնեց անոր , օրինակի համար . թէ այրի կինը խիստ մտերմութեան մէջ էր Գիւարնակ-Բլուրը յաճախող այն երեք աւաղակներուն հետ : Պ. տը Շէմրո վերջապէս սկսաւ ողբալ այն մանկամարդ կնոջ բարուց ապականութեան և դժբաղդ իշխանին կուրուծեան վրայ , կուրուծիւն մը որ անշուշտ մինչև այն ատեն տեսած ըլլալու էր :

Բիւթլէրի գալով , իւր Շէմրոյէն ձերբակալուիլը , սոյն գաղ-դիական նուիրակին Գիւարնակ-Բլուր գալը , Գրուսթիյաքի մասին իւր համոզումն աւելի ևս հաստատեր էին . նաև երբ Պ. տը Շէմրո զինքն հարցաքննելու եկաւ և իմացուց թէ հրացանի չտի-տի բռնուի , գնդապետը իւր կողմէն և յանգէտս՝ բաղդախորին խաբէութեան աւելի ևս հեղինակութիւն մը տրուելուն օգնած եղաւ :

Արեւ մարը մտնելու վրայ էր . Պ. տը Շէմրո իւր պաշտօ-նին զոհացուցիչ արգեանցը վրայ վտահ ըլլալով , ասկէ իրեն գալիք օգուտներուն վրայ կը մտածէր կուսակալին ապարանայ տանիքին վրայ պարտելով : Այս միջոցին սեպուհը որուն շունչն՝ այնչափ բարձրը ելնելուն համար կտրեր էր , եկաւ և Գաղղիոյ նուիրակին փառասիրական խոկումներուն վերջ տուաւ :

— Պարոն , ըսաւ անոր կուսակալը , Լէօնը ըսուած եռակայմ վաճառական նաւու մը Գանիէլ անուն նաւապետը իւր նաւովը Սէն-Բիէրէն եկաւ և խիստ ստիպողական դործերու համար վայր-կեան մը ձեզի հետ տեսակցիլ կ'ուզէ :

— Կրնամ այս տանիքին վրայ ընդունիլ զինքը , սպրոն սե-պուհ :

— Ինչո՞ւ չէ , պարոն , հոս վարէն աւելի զով է : Յետոյ մօտենալով այն սանդուխին ուրկէ վեր ելեր էր , սեպուհը իւր պահնորդներէն մէկուն ըսաւ . Ա՛յր հանեցէք Գանիէլ նաւապետը :

Մոռցանք ըսելու որ Փրքաթծոն նաւահանգստին ծայրը կե-նալու հրաման ընդուներ էր երբ ասպետը գիշերը ցամաքն ան-ցընելու փափաք յայտնած էր : Քանի մը վայրկեանէն մեր վաղա-ծանօթ Գանիէլ նաւապետը կուսակալին ապարանայ տանիքին վը-րայ երեցաւ : Նաւապետին սովորաբար զուարթ և համարձակ դէմ-քին վրայ բաւական մեծ շփոթութիւն մը կը նշմարուէր :

Իւր նաւուն մէջ կատարեալ վեհապետական դիրք մ'ունեցող այս քաջ նաւապետը անհանդիսա կ'երևէր . իւր կարմիր այտերը քիչ մը գունամափ եղած էին . վերի շրթունքին զրեթէ աննշմա-րելի կերպով սարսուէլէն իւր թանձր ու գորշ պիտը կ'երերար , և այս ալ Գանիէլ նաւապետին մտահոգութեան մէջ ըլլալուն մէկ նշանն էր . կապոյտ և սպիտակ շերտերով կտուէ վարտիք մը և տառատոկ մը հագած էր , իւր կարմիր բամպակէ պօտոյն մէջ խօթած էր հոլանդական երկայն դանակ մը , նաւաստեաց ձեով վիզը կապած էր շնդկաստանի թաշկինակ մը կղմնտրի գունով , վերջապէս մեքենաբար այլանդակ ձևեր կու տար իւր յարդէ լայն և դիւրաթեք գլխարկին զոր ձեռացը մէջ կը դալարէր :

Նաւապետը մէկմէկու ետև խոնարհութիւններ ընելով Պ. տը Շէմրոյի մօտեցաւ , որուն չոր և կարծր դէմքը և թափանցող նայուածքը կարծես շատ կը վախշտէին զԳանիէլ :

— Տարակոյս չունիմ որ այս խեղճ մարդը բոլորովին ջուր կտրեր է , ըսաւ կուսակալը կամայ մը Պ. տը Շէմրոյի :

Արդարև նաւապետին կունդ և արեակէղ ճակտին գուրս ցցուած երակները քրտինքի խոշոր կաթիլներով ծածկուած էին :

— Ի՞նչ կ'ուզէք , ըսաւ անոր Պ. տը Շէմրո խստութեամբ :

— Խօսե՛ նայիմ , պարոն Գանիէլ , յարեց սեպուհը ձայնը քաղցրացընելով , վասն զի կը տեսնէր որ նաւապետին երկիւղը հետզհետէ կ'աւելնար :

Աւերջապէս այս վերջինը սրտին գողէն խեղճուկ ձայնով մը ըսաւ Պ. տը Շէմրոյի . — Տէ՛ր իմ . . .

— Ես տէ՛ր իմ չեմ , պարոն եմ , ըսաւ Պ. տը Շէմրո , խօ-սեցէ՛ք , ձեզ մտիկ կ'ընեմ :

— Շատ լաւ, ուրեմն իմ աղնիւ պարոնս, ես հիմա Սէն-Բիէրէն եկայ ծանրաղին վաճառքներով, շաքար, խահուէ, պղպեղ, մեխակ, շաքարօղի:

— Ես չեմ ուղեր հասկընալ ձեր վաճառքին ինչ ըլլալը, ինչ կ'ուղէք գուք:

— Օն ուրեմն, Պարոն Գանիէլ, քեզ տեսնեմ, զաւակս, խօսէ', ճակատդ ալ սրբէ', ջուրէն ելածի պէս եղեր ես, ըսաւ սեպուհը:

— Հիմա, տէր իմ. . . ներեցէք. . . հիմա, աղնիւ պարոն, թէպէտ նաւուս մէջ տասներկու հատ ութնոց փոքրիկ թնդանոթներ ունիմ, սակայն բեռս այնքան ծանրաղին է, որ, աղնիւ պարոն, ծովահէններուն վախէն եկայ. . .

— Է՛յ, ետքը. . .

— Բայց, շուտ ըրէ, նաւապետ: Քեզ բնաւ այսպէս տեսած չէի:

— Եկայ որ, աղնիւ պարոն, թոյլառութիւն խնդրեմ ձեռք քիչ մ'առաջ նաւահանդատին բացը եկող ֆրքաթօնին հետ ընկերութեամբ նաւարկելու:

— Վա՛շ, հասկըցայ, այսպիսի բան մը խնդրելուդ համար է որ շիոթեր մնացեր էիր, նաւապետ, ըսաւ սեպուհը. Նորին Վեհափառութեան ֆրքաթօնները քեզի ասն որ նաւուդ բեռին պահպանութիւնն ընեն, շատ բան:

Պ. ար Շէմրօ սուր ակնարկ մը ձգեց Գանիէլի վրայ, ուսերը թօթուեց, և պատասխանեց. — Անկարելի է, ֆրքաթօնն արագ կը քալէ, չլինար առապաստները պակսեցընել ձեր նաւուն սպասելու համար. խեղճ էք, ինչ էք:

— Ո՛հ, պարոն, եթէ ամենն այդ է, հոգ մի ընէք: Ես Նորին Վեհափառութեան ֆրքաթօնը վար զարնելու համար չեմ ըսեր, մանաւանդ որ ծանօթ չէ ինձ այն, բայց կը խոստանամ որ ո՛րչափ ալ առաջատու բանայ, ինչ հով կամ ծով անոր առաջատուն կամ յառաջքին ներկայանայ, կրնամ հետևիլ:

— Ալ տեսնեմ որ խենդ էք, Գիւլիանի արագութիւնն առաջին է:

— Աղնիւ պարոն, մի մերժէք, ըսաւ Գանիէլ պաղատական ձայնով մը: Եթէ այն գուռը ֆրքաթօնը Լէֆօնէն աւելի արագ քալէ. . . թօղ իմ նաւս թողու, բայց գտնէ ես ալ բաւական տեղ արքայական դրօշին պահպանութեան ներքեւ եղած կ'ըլլամ, մանաւանդ որ աւելի երկու ցամաքներու մէջ տեղերը կը վախշուի ծովահէններէն. . . : Ա՛հ, պարոն, մեր թաղաւորին թշնամիները մէկ միլիոնէն աւելի արժուութիւն ունեցող վաճառք ձեռք պիտի անցընեն եթէ Լէֆօնը բռնեն. . . :

— Բայց դարձեալ կ'ըսեմ ձեզ թէ ֆրքաթօնը, թէև պատերազմական նաւ, ձեզ պաշտպանելու ժամանակ չպիտի ունենայ եթէ յարձակում կրէք. նա այնպիսի պաշտօն մ'ունի որ բնաւ չլինար բանի մը դրողիլ:

— Ո՛հ, իմ աղնիւ պարոնս, յարեց Գանիէլ նաւապետը ձեռքերն իրար կցելով, ես երբէք չեմ դբաղեցըներ ձեզ. եթէ զիս ձեր թնդանոթին ներքեւ տեսնեն, հաւանական չէ որ վրաս յարձակին. . . չլինար գանուիլ ծովասպատակ մ'որ միայն համարձակի ինձ մօտենալ երբ տեսնէ որ այսպիսի զօրաւոր ուղեկից մը ունիմ. օրինակս թող յամցանք չհամարուի, դայլերն այն աստի միայն կը յարձակին ոչխարայ վրայ, երբ շուները քովերնին չեն. . . :

— Ինչ խեղճ ոչխար մ'եո, ըսաւ կուտակալը:

— Ա՛հ, աղնիւ պարոն, թող չըսուի թէ մեր վեհափառ թաղաւորին սրտեղբայրական նաւերէն մէկը մերժեր է խեղճ վաճառական նաւ մը որ ուրիշ բան չէր խնդրեր այլ միայն ապառտանիլ անոր դրօշին ներքեւ որչափ որ կարենայ հետևիլ այն դրօշին:

Պ. ար Շէմրօյի գծուար էր մերժել այս խնդիրը, քանի որ ֆրքաթօնին աղատ ընթացքին բնաւ նեղութիւն չպիտի տրուեր, և Գանիէլ նաւապետը յանձն կ'առնուր Գիւլիանի ընթացքին հետևիլ կամ լքուիլ: Սակայն և այնպէս Պ. ար Շէմրօ մերժեց: — Դուք շատ տղէկ պիտէք որ, ըսաւ Գանիէլ նաւապետին, եթէ մեր ուղեկիցութեան չնայելով, ծովահէն մը ձեր վրայ յարձակի, թաղաւորին մէկ նաւը չլինար զձեզ չպաշտպանել: Գար-

ձեալ կ'ըսեմ, Գրքաթօնին նեղութիւն պիտի պատճառէք . . . այս բանը չկրնար ըլլալ :

— Բայց, պարոն, բեռս ծանրագին է :

— Թողանօթներ ունիք, պաշտպանեցէք զայն . . . Զեմ կրնար ընկերանալ ձեզ, անկարելի է . . . :

— Աւաղ, յատկապէս այս խնդիրս ձեզ մատուցանելու համար եկայ Սէն-Բիէրէն, ըսաւ Դանիէլ վշտագին ձայնով մը :

— Ուրեմն ուրիշ առթի մը սպասեցէք . . . իմ նաւս չպիտի պաշտպանէ ձեզ :

— Սակայն, աղնիւ պարոն . . .

— Բաւաղան է, ըսաւ Պ. տը Շէմրօ խիստ ձայնով մը : Դանիէլ նաւապետը վերջին խոնարհութիւն մ'ալ ըրաւ, և մինչև սանդուխին դուռը ետ ետ երթալով աներևոյթ եղաւ :

— Այս վաճառականներուն խօսքին նայելու ըլլանք, աշխարհիս մէջ իրանց վաճառքէն զատ ուրիշ բանի մէջ շահ չկրնար ըլլալ :

— Սակայն, պարոն, խիստ քիչ պարապաներ կան, որոց մէջ սյահապան ուղեկցութիւն կրնայ մերժուիլ, ըսաւ կուսակալը զարմացած :

— Արդարև, խիստ քիչ պարապաներ կան, պարոն սեպուհ, բայց կան, ըսաւ խստութեամբ Պ. տը Շէմրօ և գնաց :

Քրուսթիյաք ապարանքին ամենէն ղեղեցիկ սենեակներէն մէկը տարուած էր : Երբ արթցաւ, գիշեր ելած էր, լուսինն այնպիսի պայծառութեամբ կը փայլէր, որ իւր սենեակը բոլորովին լուսաորուած էր :

Քրուսթիյաք գնաց պատուհաններէն դուրս նայեցաւ . երկու սյահապանները լռիկ մնչիկ կը պտրուէին պատին տակ : — Չա՛ր սատանայ, ըսաւ ասպետն ինքնիրեն . երբէք կարելի չէ ինձ այս կողմէն փակչիլ, առ նուազն քսան ոտք իջնել պէտք է պահնորդներուն վրայ իյնալու համար . որոց տարօրինակ բան մը պիտի երէկ կուսակալին պաշտօնէն այս կերպով մեկնիլը : Ուրեմն ուրիշ կողմ նայինք :

Քրուսթիյաք թեթևաբայ մինչև դուռը դնաց, բայց տակտակամօն վրայ լուսոյ մը ցոյացմանէն հասկրցաւ որ քովի նեակը ճրագ վառած էր և հաւանականաբար մարդ կար :

Արակարանին վրայ դրուած հրահան մը գտնելով ճրագ վառեց և իւր հին հանդերձները հագաւ տխուր գօհունակութեամբ : Քրուսթիյաք Դիւաբնակ-Բյուրը գացած ժամանակ անուշահոտ սուրկերու և խոտերու մէջէն անցած ըլլալով, իւր հանդերձները համեմաւոր հոտ մը կը սփռէին :

— Զարմանալի բան, գիպուածին անունը շատ սքանչելի կերպով գիպուած դրուեր է, կ'ըսէր Կասքօնն ինքնիրեն : Մասնաւոր համակրութիւն մ'ունի ինձ համար, եթէ երանեւեաց կարգն անցած ըլլար . . . իմ սուրբս և պաշտպանս կ'ընէի զայն . . . : Երբ Լէթըն նաւուն մէջ գրաւ գրի Կապոյտ-Մօրուքին հետ ամուսնանալու, ո՛վ կըշար գուշակել թէ այսպէս յիմարաբար գրուած գրաւ մը գրեթէ պիտի շահէի, վասն զի վերջապէս, դաշունաւոր մարդուն և Պ. տը Շէմրօյի համար Դիւաբնակ-Բյուրին կնոջը հետ ամուսնացեալ կը համարուիմ . . . : Բաղին ինչպէս ամեն բան իրար կը կցէ : Երբ հայր Արիֆօնի տունէն մեկնեցայ, գլուխս տնկած, սրունքներս ձգտած, օձերը վանելու համար ձողո՞ր ձեռքս բռնած, ո՛վ կ'ըսէր թէ կը մեկնէի (յիրաւի ոչ ուղակի կերպով) երթալ Մօնմութ գուբսի անուամբ Քօրնուայցիները ոտք հանելու համար, յօպուտ Յակոբ թագաւորին և Լուգոմվիլիս ԺԳԻ . . . : Արդարև, շատ իրաւունք ունին երբ կ'ըսեն թէ Նախախնամութեան կարգադրութիւններն անթափանցելի են : Ո՛վ կարող էր թափանցել ասոր : Բայց տապանապալից վայրկեանը կը մօտենայ . . . : Երբեմն ինձ այնպէս կու դայ որ ամեն բան յայտնեմ պարզամիտ Շէմրօյին : Այո՛, բայց կը մտածեմ որ վատրկած ամեն մէկ ժամն Մարթինիքայէն երեք չորս փարախէն աւելի կը հեռացընէ դուքսը և իւր կինը : Ար մտածեմ նաև որ հոս ցամաքի վրայ դատաստանս կրնան ամօթապէս տեսնել և կախաղանս մէկ ակնթարթի մէջ կանդսել, միւշգեւ ձողու վրայ կարելի է որ զիս դատելու յարմար մարդիկ չգտնուին :

վերջապէս կը մտածեմ որ եթէ Աստուծոյ Տօրութիւնը հայր կրկնօնի աղաչած է զիս պարզամիտ Շէմրոյի ճիրաններէն աղատելու ջանալ, իմ կողմանէս տարածամ յայտնութիւն մը կրնայ ամեն բան տրել . . . : Ուստի աւելի աղէկ է լուսութիւն պահել : Այո՛, ամեն բան լաւ նկատողութեան առնելով, յարեց Քրուսթիյաք վայրկեան մը խորհելէ ետեւ, պէտք է ջանամ որ Շէմրոյի սխալը կարելի եղածին չափ երկար ժամանակ տեւէ . . . ամենէն լաւ ճամբան այս է ինձ համար :

Քրուսթիյաք այս խորհրդածութիւններն ըրած աստե՛ն հանդերձներն հաղած էր . . . : — Հիմա, ըսաւ, տեսնեմ, ասկէ դադանապէս գուրս երնելու ճամբայ կայ :

Այս խօսքերն ըսելով, ասպետը կամաց մը գուրս բացաւ, և դարմանօք տեսաւ կուսակալին երկու սպասաորները որոնք զինքը տեսնելուն պէս ոտք ելան : Մէկը վաղեց սեպուհը կանչելու միտք Քրուսթիյաքին ըսաւ . — Պարոն կուսակալը մեզ պատուիրեց որ՝ մինչև որ չկանչէք՝ ձեր սենեակը չմտնեք : Պարոն սեպուհը հիմա կու գայ :

— Հարկ չկայ, աղաս, պարտեղին գուրս միայն ցոյց աուր ինձ, շատ տաք կ'ընէ, քիչ մը դովանալ կ'ուզեմ . . . ասկէ դատ, ս'չ . . . : Անշուշտ պարտեղին մէջ ծառ կայ, դաշտը . . . բաց օդը աւելի սիրելի է ինձ . . . :

— Գիւրին բան է այս, պարոն, եթէ ճեմասրահէն վար իջնէք, պարտեղը կը հասնիք, որուն մէկ գոնն զաշտը կ'երթուի :

— Շատ լաւ, ուրեմն, աղաս, շուտ մը տար զիս կը ցանկամ գաշտերուն ինչպէս վանդակին մէջ գտնուող թռչուն մը . . . :

— Օ՛հ, հարկ չկայ, պարոն, ահա ասով պարոն սեպուհը, ինքն անձամբ կը տանի զձեզ, ըսաւ սպասաորը :

— Գետինն անցնի սեպուհը, ըսաւ մտքէն Քրուսթիյաք :

Կուսակալն առանձին չէր, Պ. տը Շէմրո անոր հետ էր : — Բարեբաղդաբար ելէր էք, պարոն, ըսաւ Շէմրո, ձեզ արթնցրնելու կու գայինք :

— Զիս արթնցրնելու . . . ինչո՞ւ համար :

— Հովն ու մակընթացութիւնը մարդու չեն սպասեր, մակընթացութիւնը առաւօտեան ժամը երեքին կ'ընէ . . . հիմա ժամը երկուքուկէան է, կէս ժամէն պիտի կրնանք հասնիլ թմբարկին ուր մակոյկը մեզ կ'սպասէ, հիմա ճիշդ մեկնելու ժամանակ է, պարոն :

— Ըլլալէքն այս է, ըսաւ ինքնիրեն Քրուսթիյաք, միայն թէ կատաղի կուսակիցներուս ներկայանալէ առաջ ջանանք քանի մը ժամ ալ վատըրիլու : Պարոն, սպասաորս եմ ձեր հրամանացը, յարեց ասպետը փաթթուելով թխադոյն վերարկուի մը մէջ զոր իւր հանդերձներուն մէջ գտած էր :

Սեպուհը պարտք համարեց պահապան զինուորներով ընկերանալ Պ. տը Շէմրոյի և խորհրդաւոր անձանցին մինչև նաւահանդիսին թմբարկը : այս կերպով կարծին վաստուտը բացարձակապէս անկարելի եղաւ : Պ. տը Շէմրո՛ կուսակալէն բաժնուելու ատեն ըսաւ անոր . — Պարոն սեպուհ, ձեր ինձ առած աջակցութեան մասին պէտք եղածը պիտի խօսիմ թագաւորին : հիմա կրնամ ըսել ձեզ թէ ինձ արուած տեղեկութիւնները շատ ճիշդ ելան, ասոնց վրայ դադանիքը լաւ պահուած էր :

— Քայց, պարոն, կրնամ դիմադրել թէ ի՞նչ տեղեկութիւններ են ազնիք, դոչեց սեպուհը որ այսչափով բան մը հասկըցած չէր ըլլար :

— Հաւաստի եղիք, պարոն սեպուհ որ, յարեց Պ. տը Շէմրո մտերմաբար անոր ձեռքը սեղմելով, թագաւորն ամեն բանի տեղեկի պիտի ըլլայ . . . և եթէ ձեր արժանեաց համեմատ չվարձատրուիք, յանցանքն իմն չպիտի ըլլայ :

Այս ըսելով Պ. տը Շէմրո հրամայեց որ մակոյկը բացուի :

— Եթէ թագաւորն ամեն բան գիտնայ, ինչ շատ աւելի բան դիպցած պիտի ըլլայ, ըսաւ սեպուհը յամրաքայլ իւր տարանքն երթալով : Ուղեկից պահապաններէն իմացածներս հետաքրքրութիւնս աւելցրնելէ դատ ուրիշ արդիւնք մը չունեցան : Արդարեւ կարծէր այսչափ արիւն քրտինք թափել, բոլոր գիշերը ոտքի վրայ մնալ վերջին աստիճան կարեւորութիւն ունեցող բաներու վր-

բայ այսքան պակաս տեւելութիւն ստանալու համար . թողունք որ այս բաներն իմ կուսակալութեանս մէջ կը պատահին :

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

Ֆ Ի Բ Ե Թ Օ Ն

Լուսինը պայծառ լոյս մը կը սփռէր Փօր-Րօսայի նաւահան սպին ջուրերուն վրայ : Քրուսթիյաք և իւր հարստութիւնը կրող մակոյկը արագութեամբ ֆելսիտալի մօտեցաւ որ ծովածոցին բացը կեցած էր : Կապօնը իւր վերարկուն մէջ փաթթած մակոյկին պատուոյ տեղը նստած էր . մակոյկը կարծես ջուրերուն վրայ կը թռչէր . — Պա՛րոն , ըսաւ Պ . տր Ըէմրօյի , կ'ուզեմ որ կուսակցացս առջև խօսելիք ճառիս վրայ լաւ մտածեմ , վասն զի միտք ունիմ ճառ մը խօսելու . ինչպէս որ կրնաք հասկընալ . . . պէտք է որ տեսալ մը յայտարարութիւն ընեմ իւրենց , որով իմ քաղաքական սիզբուհներս յայտնեմ , ահնկալութիւններս իմացրեմ իրենց որպէս զի անոնք ալ մասնակցին անոնց , վերջապէս պէտք է որ պատերազմական յատակազծի պէս բան մը տամ իրենց . ուստի ասոնց համար հասուն և երկար խորհրդածութիւններ պէտք է : Ասոնք մեր ձեռնարկութեան խորհրդներն են : Ասկէ զատ պ տք է որ իրենց բացատրեմ Անգղիոյ , կամ մանաւանդ Գաղղիոյ մեզ շնորհած դաշնակցութեան , կամ մանաւանդ բարոյական աջակցութեան . այինքն նիթական աջակցութեան բոլոր . . . հետեանքները : Աւերջապէս , ըսաւ Քրուսթիյաք որ իւր քաղաքականութեան ուղղութիւնը կորսըցընելու վրայ էր , կ'ուզեմ որ կուսակիցներս վաղը , կէսօրէն առաջ ըն-

դունիմ . . . ասկէ զատ փափաքելի է ինձ որ նաւը հասած անոնիս շատ ալմուկ չեյնէ :

— Ըստ հաւանական է որ , տ'ը իմ , բոլոր այն քաջ ազնուականները պատկած են , վասն զի Ձեր Բարձրութեան երբ զալը շեն գիտեր :

— Այն կատաղի . . . այսինքն քաջ Մօրթիմէրը մինչև լոյս ինձ սպասող մարդ է , ըսաւ Քրուսթիյաք մնահոյութեամբ :

— Արդարև , տէ՛ր իմ , բաւական է որ մարդ գիտնայ թէ ինչ սաստիկ անհամբերութեամբ ձեր վերադարձին կը փափաքի նա , որպէս զի այս մասին չարենայ տարակուսիլ :

— Մտի՛կ ըրէք , պա՛րոն , ըսաւ Կապօնը , ես իմ Մօրթիմէրիս ինչ մարդ ըլլալը գիտեմ , շատ ջղային է , շատ զգայուն է , կը վախնամ որ . . . եթէ յանկարծ աչքին երևիմ , յուզմունքէն , որախութեանէն խելքը թռցունէ : Ուստի , նաև ելնելու ասանս գլուխ պիտի գոցեմ որպէս զի զիս չտեսնէ . . . ասկէ զատ , եթէ ձեզ հարցրնէ թէ շուտ պիտի գամ , շնորհ ըրէք անորոշ կերպով պատասխա ելու . . . այս կերպով զիքը պատրաստած կ'ըլլանք այնտիտե տե ակցութեան մը , որ առանց այս զգուշութեաց կրնայ աղետալի ըլլալ այն անձնանուէր բարեկամիս :

— Մի՛ վախնաք , տէ՛ր իմ , չափազանց ուրախութիւնը երբեք աղետալի չկրնար ըլլալ . . .

— Կը սխալիք , պարոն . թողունք որ կրնամ հազարաւոր հանրական իրողութիւններ հաշուել ի հաստատութիւն իմ կարծեացս , այս մասին իրողութիւն մը պիտի յիշեմ ձեզ , իրողութիւն մը որ բոլորովին անձնական է և յասուկ այն մարդուն որու վրայ կը խօսինք :

— Լորտ Մօրթիմէրի՛ :

— Ճիշդ անոր , պարոն . . . : Երբեք չպիտի կրնամ մոռնալ որ զինքն անգամ մը գրեթէ նմանօրինակ պարագայի մը մէջ զարհուրելի ջղաձգութեան բռնուած տեսայ . . . : Մերթ կը Դողդար . . . մերթ կը մարէր . . . :

— Սակայն, տէ՛ր իմ, լորտ Վօրթիմէ՛ր հերբիւլեան կազմու-
թիւն մ'ունի:

— Հէրբիւլեան կազմութիւնն: Կատաղի բարեկամիս այդ սոս-
կալի ուժն էր սրկաս, ըսաւ Քրուսթիյաք մաքէն: Յետոյ յարեց
բարձրաձայն: — Հարկաւ զիտէք, սյա՛րոն, որ այսպիսի ցնցում-
ներն ամենէն աւելի սածտիւթեամբ զպայտղներն արտաքոյ կարգի
զօրութեան տէր անձերը կ'ըլլան, մինչև անգամ ձեզ կ'ըսեմ որ
. . . բայց իօսքը մէջերնիս մնայ . . .

— Տէ՛ր իմ, վտահ եղէք իմ խորհրդարարհոթեանս վրայ:
— Զդու շանալուս սրտածառը սիտի հասկընաք, սյարոն . . .
ձեզ կ'ըսեմ որ, յիշած սյարադայիս մէջ, . . . ին՛ղճ Վօրթիմէ՛ր
երկար ժամանակէ ի վեր շտեսած մէկ անձը յանկարծ տեսնե-
լով, ա՛յն աստիճան զարմայաւ որ . . . (եթէ իրարու սերտ բա-
րեկամ չըլլայինք, ապու զարձաւ սիտի ըսէի) զլուխը . . . կը
հասկընաք . . .

— Ի՞նչ կ'ըսէք, տէ՛ր իմ, բանահանութիւնը . . .
— Աւա՛ղ, այո՛, այն սյարադային մէջ միայն . . . : Հիմա
հասկըցա՛ք զաղանի պահել ուղեւուս սրտածառը:

— Այո՛, այո՛, տէր իմ:
— Բայց ամենն այս չէր, այն գէտքը ին՛ղճ Վօրթիմէ՛րի ջիւղերն
ա՛յնպիսի ուժգնութեամբ ցնցեց, որ սրահ մը զարմանքէն սրակու-
ցեալ մնալէ ետեւ, այլ ևս չկրցաւ այն անձը ճանչնալ . . . :
Ո՛չ, սյարոն, այլ ևս չճանչցաւ զայն, թէ և հաղար անգամ տե-
սաւ:

— Միթէ կարելի՞ բան է այդ, տէ՛ր իմ, ըսաւ Պ. ար Շէմ-
րօ տարակուսական ձայնով մը:

— Ըսածս շատ ստոյգ է, սյարոն, վասն զի այն տղուն յուզ-
մունքը բնաւ չէք զիտեր գուք . . . : Աստի ես իւր բարեկամն
ըլլալով կը սյարտիմ հօգ տանիլ որ ցաւալի բան մը չարտահի
իրեն . . . : Մտածեցէք անգամ մը . . . եթէ զիս չճանչնա-
լու վտանդին ետթարկեմ զինքը, ի՞նչ կ'ըլլայ հետեանքը . . . :
Աշխարհիս մէջ հիմա ամենէն աւելի սիրած անձս Վօրթիմէ՛րն է,

և գուք ալ զիտէք, սյա՛րոն, թէ բարեկամի մը վստիմարութեանց
ո՛րչափ պէտք ունիմ:

— Գարձեալ այն արեւտալի դէ՛պքը կը յիշէք, տէ՛ր իմ . . . :
— Այո՛, սիւար եմ, կը խոստովանիմ . . . չեմ կրնար յաշ-
թել . . . :

— Ի՞նչ նաւ է այն որ Փրքաթծին մօտ կեցեր է, հարցայ
Պ. ար Շէմրօ մակուկայեան, որպէս զի իշխանին վիշտ սյաս-
ձառող խօսակցութիւնը փոխէ:

— Աւճառարարձ նաւ մ'է որ երէկ իրկուն Սէն-Բիէրէն ե-
կաւ, ըսաւ մակուկայեալը յարգանքով իտարիւր վար առնելով:

— Ե՛՛հ, հասկըցայ . . . յարեց Պ. ար Շէմրօ, մեր ուրե-
կցութիւնը ինդրող ապու շատապետին նաւն ըլլալու է . . . :
Բայց հասանք մեր նաւուն, տէ՛ր իմ . . . : Բոլոր լոյսերը մա-
րած են . . . : Չեզ չեն սպաներ . . . :

— Բարեբաղդարար . . . : Միայն թէ Վօրթիմէ՛ր հոս չըլ-
լայ:

— Կարծեմ յարկին վրայ տեսածս ինքն է, տէ՛ր իմ:
Քրուսթիյաք իւր վերաբրկուն գրեթէ մինչև աչքերուն վրայ
բարձրացոց:

— Ա՛հ, ահա ասիկ հսկող պաշտօնակալը սանդուխին վրայ
է: Շատ ցաւալի բան է որ այչափ ուշ հասանք, տէ՛ր իմ . . .
: Չէ՛ր վայրեր որ բոլոր գինուրենները գէն ի ձեռին թմրուկ-
ներու ձայնով ընդունեն զձեզ:

— Պատիւը վազը . . . ըսաւ Քրուսթիյաք, տղայական բա-
ներու ժամանակը միշտ շուտ կը հասնի . . . :

Պ. ար Շէմրօ մէկ կողմ քաշտեցաւ որպէս զի նախ կաս-
քօնը սանդուխն երէկ: Սա՛ յարկին վրայ ծովային պաշտօնակալէ
մը զատ ուրիշ մարդ չանտելով, բիշ մը շունչ առաւ. պաշտօ-
նակալը զլիտարի ի ձեռին պատահամօր ընդունեց զայն: Քրուս-
թիյաք վե՛հ և կարձ կերպով պատասխանեց, բոլոր ուժով վե-
րաբրկուին մէջ փաթթուելով և գող ի սիրտ բոլորտիքը զիտե-
լով, փանն զի կը վախնար որ սոսկալի Վօրթիմէ՛ր կ'երևի:
48

րեքազարքար նաւաստիներ միայն տեսաւ, որոց ոմանք կը խօսասկսէին, ոմանք ալ թնդանթններուն երկայնութեանը կէս մը պառկած էին: Պաշտօնակալը որ ցած ձայնով Պ. սը Շէմրօյի հետ խօսակցիւր էր, վերտին ողջունեց զՔրօսթիյաք և ըսաւ: — Տէ՛ր իմ, նաւապետը չպիտի արթնցընեմ, որովհետեւ այսպէս կը պահանջէք, և զձեզ ձեր սենեակը պիտի տանիմ:

Քրօսթիյաք զլուխը խոնարհեցուց:

— Բարի գիշեր կը մտղթեմ ձեզ, տէ՛ր իմ, ըսաւ Պ. սը Շէմրօ:

— Գիշեր բարի, սպասախանեց բաղդախնդիրը:

Պաշտօնակալը միւս կողմէն մարտկոյն իջաւ, գեղեցիկ և ընդարձակ սենեկի մը դուռը բացաւ, որ լաւ կերպով լուսաւորուած էր, և կատրօնին ըսաւ: — Տէ՛ր իմ, ահա առիկ ձեր սենեակը, երկու խուցեր ալ կան, մին աջ կողմը, միւսը ձախ կողմը:

— Սքանչելի է, սպարոն. կ'աղաչեմ, շնորհ ըրէք խստիւ պատուիրել որ վաղը մարդ քովս չգայ մինչև որ ես չլանչեմ. . . կ'իմանաք. . . ըսաւ մէկը քովս գալու չէ. . . ամենակարևոր բան է այս:

— Հատ լաւ, տէ՛ր իմ. . . Ձեր Բարձրութիւնը կ'ուզէ որդեօք որ ձեր մարդոց մէկուն իմաց տրուի ձեզ հանուեցընելու համար:

— Ես զինուոր եմ, սպարոն, ըսաւ Քրօսթիյաք գոռողութեամբ, և կրնամ ինքնիրենս հանուիլ:

Երիտասարդ պաշտօնակալը զլուխը խոնարհեցուց, և սոյն սպասախանը խոտամբերութեան դաս մը համարելով դուրս ելաւ և իրեն ծառայող զինուորներէն մէկուն հրամայեց որ իշխանին սենեակը մարդ չմտցընեն, յետոյ յարկին վրայ ելնելով Պ. սը Շէմրօյի քովը գնաց: — Ձեր իշխանը ճշմարիտ Սպարտացի մ'է եղեր, սիրելիք իմ Պ. Շէմրօ, ըսաւ անոր. զարմանալի բան, հետը սպասաւոր մ'անգամ չբերաւ:

— Ելլովէս է, սպասախանեց Պ. սը Շէմրօ. ցամաքին վերայ այնպիսի տարօրինակ բաներ պատահեցան, որ ոչ ինքը ոչ ես

չմտածեցինք, սակայն իմ սպասաւորներէս մէկը կու տամ իրեն: Եյս վայրկեանս ամենէն կարևորը առաջատար պարզել է:

— Նաւապետին կարծիքն ալ այս է: Ինձ հրաման տուաւ որ զինքն արթնցընեմ եթէ շուտով մեկնին արժան դատէք:

— Հիմա անմիջապէս ճամբայ պիտի ելնենք, վասն զի հոգի յաջող է, այնպէս չէ, պատասխանեց Շէմրօ:

— Ենչչափ յաջող որ, ըսաւ պաշտօնակալը, եթէ այսպէս շարունակէ, վաղը արևուն ելնելու ատենը Մարթինիքայի եզերքները չպիտի տեսնենք:

Կատրօնին նաւը հասնելէն կէս ժամ ետըր Ֆիլիպաթի արևմտեան հարաւային պատուական հողմով մը կը բացուէր: Երբ Պ. սը Շէմրօ ֆրքաթօնին նաւահանգստէն դուրս ելնելը տեսաւ, ձեռքերն իրարու մէջ շփելով ըսաւ ինքնիրեն. — Շիտակը. . . անպարծութիւնը սիրող մարդ չեմ, բայց ամեն մարդու գործ չէր. . . անզգիացի նուիրակին առաջադրութիւններն ի դերև հանել. . . իշխանին խղճահարութեանցը յաղթել, օգնել իրեն որ մեղապարտ կնոջմէ մը վրէժ առնէ, պերճախօսութեան ուժով հեռացընել իւր մտքէն այն տառապեցուցիչ գաղափարները որով իւր միտքը պաշարուեցաւ սոյն ամուսնական գէպքին պատճառաւ. զինքն Անդղիա տանիլ իւր կուսակցաց զլուին անցընելով. . . Շիտակը, Շէմրօ, բարեկամս, քու գործդ է այս: Արգէն բաղդ ճամբան շտկած էր, ալ հիմա բոլորովին ապահովեալ է. այս յաջողութիւնը որչափ անպատու ուրախութիւն կը պատճառէ ինձ մանաւանդ երբ կը մտածեմ թէ թաղաւորը մեծ կարևորութիւն մը տուած է այս գործին: Գարձեալ, կ'ըսեմ, ապրիս, Շէմրօ. . . :

Շէմրօ ուրախ զուարթ պառկեցաւ և քնացաւ հրապուրիչ և փառասէր յոյսեր տածելով. . . :

Առաւօտեան ժամը տասնուկէսն էր, հովը պաղ, ծովը քիչ մը յուզեալ բայց գեղեցիկ էր: Ֆիլիպաթի իւր ետին հրացայտ և արագ հետք մը կը թողուր: Աթիլեան կողեաց և ոչ մէկ ցամաքը կ'երևէր, նաև Ովկիանոսին մէջ տեղն էր: Ըսկող սպայն

ձեռքը դիտակ մը բռնած ուշադրութեամբ կը գնէր երկու ումբը՝ կեց հեռուն զանուոզ եռակայմ նաւ մը որ ճշիւ ֆրբաթծնին բռնած ճամբէն կ'երթար և անոր շափ արագ կը քալէր, թէպէտ և քանի մը փոքր առադաստ պակաս կը կրէր:

Սպայն հորիզոնին ամենէն հեռաւոր մէկ կէտին վրայ ուրիշ նաւ մ'ալ կը նշմարէր, զոր հագիւ կ'որոշէր, և որ կը թուէր թէ տեսնուած եռակայմ նաւուն ուղլութեանը կը հեռեւէր: Սպայն ուղից հասկընալ թէ եռակայմը միշտ սրոշած էր ֆիւլթիւմի շարժումներուն համակերպիլ, և հրամայեց ղեկավարին որ քիչ մը աւելի դէպ ի հիւսիս զարնէ: . . . : Եռակայմն ալ նոյնպէս դէպ ի հիւսիս զարկաւ: Սպայն դրեթէ բոլորովին դէպ յարեմուտք ուղից ֆրբաթծնը, եռակայմն ալ նոյնպէս դրեթէ բոլորովին դէպ յարեմուտք ուղից իւր ընթացքը:

Սպայն այս բանէն աւելի նեղացած քան թէ զարհուրած, վասն զի եռակայմը ֆրբաթծնին հետ մաքասելու շափ զօրութիւն չունէր, նաւապետին հրամանաւ, ֆիւլթիւմը զարձընել և ուղ դակի եռակայմին վրայ քալել տուաւ: . . . : Այս ալ նոյնպէս ճամբան դարձայ և ֆրբաթծնին շարժումներուն կատարեայ ճշդութեամբ համակերպելով սկսաւ անոր հետ մի և նոյն ճամբէն ելլալ, բայց միշտ թնդանօթի հարուածէ ազատ մնալու հեռաւորութեամբ: Նաւապետը կատարելով, առադաստներուն ուժ տուաւ և սկսաւ եռակայմին վրայ վազել: Եռակայմն ալ փորձով ցոյց տուաւ որ եթէ ֆրբաթծնէն լաւ չէր, դէթ անոր շափ սրնթաց էր, ինչու որ ֆրբաթծնը բնաւ չկրցաւ զիրենք բաժնող հեռաւորութիւնը կարել:

Նաւապետը սոյն անօրուտ հարձանքով թանկագին ժամանակը կորսնցընել չուզելով, նաւուն զլուխը դարձընել տուաւ և սկսաւ ճամբան շարունակել: Գլխացաւ եռակայմն ալ նոյնպէս զլուխը դարձայ և ճամբան բռնեց: Այս խորհրդաւոր նաւը խաչաւէր Ախթըն էր: . . . : Գանիէլ նաւապետը Շէմիջի մեքժումներուն հակառակ յարմար դատած էր յամառութեամբ ֆիւլթիւմէն չբաժնուիլ մինչև որ վտանգաւոր եղիքներէն բոլորովին հեռանայ:

Ֆրբաթծնին յարկին վրայ նոր անձ մ'ալ երեցաւ . . . այս մարդը յիսուն տարեկան մը կար, շատ դէր և խոշոր. հագած էր գոմէշի մորթէ վերարկու մը, ծիրանեղոյն լայն տոփաւ մը, ուշխարի կաշիէ կօշիկներ: Մաղեղն ու պիխերը կարմիր էին. իւր գունաւոր դէմքը, բայց կապոյտ աչքերը որուն մէջ տեսնուած նուրբ երակներէն կ'երևէր թէ ամենափոքր յուղմամբ մ'արիւն պիտի ցայտէին, կը ցուցնէին թէ այս մարդը ցատկաւ և դիւրաբար բնաւորութիւն մ'ունէր: . . . :

Ար փութանք իմացընել ընթերցողին թէ այս հուժկու անձը Մօմմաթի մոլեռանդ կուսակցաց ամենէն մոլեռանդն էր, և եթէ Ախմէյի գլխուն եկածն իրեն պատասէր, քիւր անգամ երջանիկ պիտի ըլլար. վերջապէս այս անձը լորտ Բէրքի Վօրթիմէրն էր: Իւր անհանգստութիւնը, յուղմունքը, անհամբերութիւնն անբացատրելի էին, փայրկեան մը չ'ը կրնար տեղ մը կենալ:

Բասն անգամ լորտը Բրուսթիյաքի սենեկին դուռն լջած էր հասկընալու համար թէ միլորտ-գուքը զինքը ուղած է: Ի զուր աղաչեր էր սյաշտօնակալին որ դուքսին խնայքնէ թէ Մօթիմէր, իւր անձնանուէր բարեկամը, վաշիմը ղինակիցը կը վափաքի իւր ոտքը նետուիլ: Արտին փափայնէր փոքր մնացեր էին, խեղճ Բրուսթիյաքի հրամանները խստութեամբ ի գործ կը դրուէին, և Ասսքօնը վատարկած մէն մի վայրկեանն անցին գանձ մը կը համարէր: Պ. տը Շէմիջ ալ յարկին վրայ ելաւ, գեղեցիկ թիկնոց մը հագած, դէմքը զուարթ և յողթական. կարծես ամենուն ըսել կ'ուզէր. — Եթէ իշխանը հոս է, իմ ճարտիլութեանս, արիւթեանս չնորհին է: Վօրթիմէր զայն տեսնելուն պէս քովը գնաց: — Պա՛րօն, բաւ, վերջապէս ժամը քանիին միլորտ-գուքը մեզ պիտի ընդունի:

— Իշխանն առանց իւր հրամանին քօնէ երթալն արգիլեց:
— Բայց այլ ևս չեմ կրնար ինքզինքս բռնել, յարեց Վօրթիմէր. իսպառ աննրելի յանցանք մը գործած պիտի համարիմ ինքզինքս անոր համար որ այս զիշեր պտակեցայ, առաջին անգամ մեր Յակոբը բազկացս մէջ սեղմողը, իւր ոտքը նետուողը:

. . . իւր արքայական ձեռքը համբուրողը միայն ես չեղայ :

— Ա՛հ, լորտ Վօրթիմէր, շատ կը սիրէք մեր քաջ դուքսը, ըսաւ Շէմրօ, ձեզի պէս կուսակիցներ հազուագիւտ են :

— Կը սիրէք ըսելն ալ խօսք է, գոչեց Վօրթիմէր կասկարօ միջ կտրելով : Մտիկ ըրէք, ես և Տիք Տըտլէյ, իմ սերտ բարեկամս, որ դուքսը կը սիրէ, թէև ոչ ինչ չափ (անգամ մը մենամարտեցանք վասն զի յիմարարար կը սիրէր թէ ինչ չափ կը սիրէ), ես և Տըտլէյ, կ'ըսեմ, քիչ մ'առաջ իրարու կը հարցընէինք թէ առանց փափուկ կանանց պէս տկարանալու՝ բաւական զօրութիւն պիտի ունենայինք դուքսը տեսնելու :

— Գուքսն իրաւունք ունի եղեր, ըսաւ Շէմրօ մտքէն : Ինչ աւելն : Սէր չէ այս, այլ կատաղութիւն :

Վօրթիմէր խիտ ձայնով մը յարեց . — Այս առաւօտ ելած տեսննիս իբրար զրկեցինք, հազար տեսակ այլանդակութիւններ գործեցինք մտածելով որ զինքն այսօր պիտի տեսնենք : Լաւատալնիս չէր գար, և տակաւին այս վայրկեանիս կը տարակուսիմ . . . : Ա՛հ, ինչ օր է այս . . . : Իւր մարմնովն ու ոսկորներովը վերստին տեսնել այնպիսի զինակից մը որ հինգ տարի մտուեալ կարծուեցաւ, որուն վրայ հինգ տարի ամեն մարդ լայցաւ : Ա՛հ, դուք չէք գիտեր ս'ըչափ կը սիրէին, ս'ըչափ կը մեզքնային մեր Յակոբը : Իւր քաջութիւնը, դուարթութիւնը մէկուն մտքէն չէր ելներ : Ո՛րչափ մեծ երջանկութիւն մ'է մեզ համար որ փախանակ թաղաւորի սիրտ մ'առնէք ըսելու, թագաւորի սիրտ մը, ճշմարիտ սիրտ մ'առնէ մեր դուքսը կ'ըսենք :

— Ասածնիդ շատ ճշմարիտ պէտք է ըլլայ, միլորտ, վասն զի բաց ի ձեռն, լորտ Տըտլէյէ, խեղճ լորտ Բոչէյէ որ իւր հին վէրքերուն պատճառաւ ունեցած հիւանդութեամբն հանդերձ ուզեց ձեզ ընկերանալ, միւս ազնուականները որ իրենց բազուկը կեանքն ու հարստութիւնը մեր դուքսին նուիրելու եկած են, անոր համբաւը միայն լսած են և զինքը տեսած չեն . . . :

— Ես ալ կը փոփաքիմ տեսնել որ . . . անոնք լոկ իւր համբաւը լսած և մեր միացութեանը վստահած ըլլալով, մեր սի-

րածին չափ չսիրեն զինքը . այս առթիւ կը յիշեմ որ ժամանակաւ Տիք Բոչէյ բարեկամս հետ մենամարտեցայ, վասն զի կ'ըսէր թէ քիչ մ'առաջ կը սիրէր զիս քան մեր Յակոբը :

— Ամենէն կարեւորն այս է որ, միլորտ, ըսաւ Շէմրօ, քիչ իշխաններ կրնան այսպիսի եռանդ մ'ազդել լոկ իրենց համբաւովը :

— Քիչ իշխաններ, ինչ կ'ըսէք, պարոն, գոչեց Վօրթիմէր ահագին ձայնով մը, քիչ իշխաններ : Ասէ՛ք ընաւ իշխան մը . . . Հարցուցէ՛ք Տըտլէյի :

Այս միջոցին լորտ Տըտլէյ յարկին վրայ կ'երեւէր : Այս լորտին մաշեմն ու պիտերը սև էին և նոր կ'սկսէին ձերմկիլ . հասակաւ, զիրութեամբ և ուժով շատ կը նմանէր Վօրթիմէրի : — Ինչ կայ, Բէ՛րսի, ըսաւ լորտ Տըտլէյ իւր բարեկամին :

— Չկայ իշխան մը որ կարենայ բաղլատուիլ մեր Յակոբին հետ, այնպէս չէ՞, Տէ՛ք :

— Ի բաց առեալ այս նաւուն մէջ գտնուող մեր աղնիւ բարեկամներն ու գաշակիցները, ո՛ր շունն որ համարձակի սնդեւ թէ Յակոբ աշխարհիս ամենէն լաւ անձը չէ, խարազանով կը դրոշմէմ զայն և յետոյ չորս կտոր կ'ընեմ, ըսաւ հաստաբազուկ լորտը իւր մազոտ ձեռքովը նաւուն եզրին կռուփի հարուածներ տալով : Յետոյ Պ, տը Շէմրօյի դառնալով .

— Բայց հիմա դուք ալ զինքը մեզի պէս կը ձանչէք, դուք որ զինքն առաջին անգամ տեսնելու երանութիւնն ունիք . . . : Տու՛ք ձեռքերնիդ, Պարոն տը Շէմրօ, քաջ և աղնիւ ձեռքերնիդ, որ մեր դուքին ձեռաց դպչելն ի վեր քաջ և աւելի ազնիւ եղած են ելձէ կարելի է :

Տըտլէյ ուժով մը թոթուեց Պ, տը Շէմրօյի աջ ձեռքը, մինչդեռ Վօրթիմէր ոչ նուազ ուժով անոր ձախ ձեռքը կը թոթուէր : Խանդէն աւելի տարափոխիկ բան չկրնար ըլլալ . դուքսին կուսակիցները քիչ քիչ յարկին վրայ ելեր և երկու լորտերուն շուրջը դուռնաբուր էին . ամենքն ալ կ'աղէին ըստ կարգի սեղմել այն ձեռքը որ իշխանին ձեռացը գպեր էր : — Ա՛հ, պարոնայր, կարծեմ իշխանը ձեզ տեսնելու ժամը կը յապաղէ, ը-

սաւ Շէմբո, վասն զի այնպիսի ժամու մը մէջ անսխառնաւ պա-
տասնելիք սրտայուզող թեմէն կը վախնայ:

— Նոյնպէս և մենք, գոչեց Տըտլէյ: Ահա քառասուն օր ե-
ղաւ Բօշէլէն մեկնելիս, այնպէս չէ՞. արդ՝ թո՛ղ մեռնիմ եթէ
խրաբանչիւր դիչեր երեք չորս ժամէն աւելի քուն քիացած եմ,
և այն ալ՝ միանգամայն հաճելի և յուզնալ քուն մը նման այն
քունին զոր մարդ մենամարտութեան մ'առջի իրիկունը կը քնա-
նայ . . . ապահով ըլլալով որ իւր հակառակորդը պիտի սպան-
նէ . . . : Գէթ այս եղաւ անհամարձակութեան իմ վրայ ըրած
ներգործութիւնը. իսկ դո՛ւ, Բէրսի, ըսաւ ուժեղ սուսերամարտը
Մօրթիմէրի:

— Ե՛ս, Տիք, պատասխանեց Մօրթիմէր, իմ վրայ բոլորու-
մին հակառակ ներգործութիւն մ'ըբաւ, ամեն վայրկեան քունիս
մէջն յանկարծ կ'արթնայի . . . : Ինձ այնպէս կը թուի որ
հրացանի բռնուելիք օբոսանս առջի դիչերն այսպէս պիտի քնա-
նամ:

— Ես, ըսաւ ուրիշ աղետական մը, դուքոր իւր կենդանա-
ցիւր պատկերէն կը ճանչեմ:

— Ես իւր համբաւէն:

— Ես երբ իմացայ որ իւր հրամանաց ներքե՛ Օրանժեաննե-
րուն դէմ պիտի քաշեմք, ամեն բան թողացի, բարեկամ . . .
կին . . . զաւակ . . . :

— Մենք ալ այնպէս ըրինք . . . :

— Ա՛հ, պարսն, ադոր սխառնաւն այն է որ, ըսաւ ուրիշ
մը, Յակոբ ար Վօնմոթ նաև այնպիսի անուն մ'է որ պատե-
րազմական փողի մը պէս կը հնչէ:

— Բաւական է որ սոյն անունն Անգլիոյ մէջ անգամ մ'ար-
տասանուի, յարեց ուրիշ մ'ալ, Հոլանտայի բոլոր մուկերն ի-
րենց ճահիճներուն մէջ կը հալածուին:

— Սկսելով Կիլիբոսն . . . :

— Արդարև, միլլորտք, ըսաւ օ. որ Շէմբո, ձեր խօսքե-
րուն նայելով պարծանք պիտի հանուրիմ ինձ սրտիսի, կը հա-

մարձակիմ ըսել, բաւական փափուկ ձեռնարկ մը յաջողութեամբ
ի զլուս հանելս . . . : Ես չեմ ուզեր իմ սխառնաբանու-
թեանցս, ազդեցութեանս վերագրել իշխանին որոշումը . . . բայց
գէթ հաւատացէք, միլլորտք, որ կրցայ անոր քով արգիւնաւոր
կերպով բայատրել այն եռանդը զոր իւր յիշատակը ձեզ ազդած
է:

— Ուստի մենք ալ, բարեկամ, . . . երբէք ձեր ըրածը չպի-
տի մոռնանք . . . : Գուք հոս բերիք զինքը . . . մեր դուքոր,
գոչեց Մօրթիմէր մտերմական ձայնով մը:

— Այս բաւական է որ ձեզ յախտեան Հնորհապարտ մնանք,
յարեց Տըտլէյ . . . :

— Զինքը պիտի տեսնե՛մ, ո՛հ, պիտի տեսնե՛մ, գոչեց Մօր-
թիմէր նոր աւիւնով մը, դարձեալ պիտի տեսնեմ, զինքը որ մե-
ռեալ կարծեցինք . . . երես առ երես պիտի տեսնեմ, աչայս
առջև պիտի գտնեմ այն աղնիւ, այն վեհ, այն գեղեցիկ գէմքը.
դարձեալ պիտի տեսնեմ զինքը կրակին մէջ տեղը . . . դարձեալ
պիտի տեսնեմ զինքը . . . ա՛հ, զինքը . . . զինքը . . . ա՛հ,
այո՛ւ, լալս եկաւ . . . կուլամ, գոչեց քաջ Մօրթիմէր իւր սրտա-
յուզութիւնը շրտնելով: Այո՛, աղու մը պէս կուլամ, և շտն թա-
հար ըլլան անոնք որ հին զինուորի մ'այսպէս լալուն խելքերնին
չհասնիր . . . :

Սրտայուզութիւնն ալ խանդին պէս տարափոխիկ է: Տիք սկսաւ
իւր բարեկամ Բէրսիի պէս լալ, և միւս աղետականք ալ Տիքի և
իւր բարեկամ Բէրսիի պէս սկսան նոյն բանն ընել . . . :

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն

Նոր անձ մ'ալ գալով, Մծնմութի զարմացողներուն թիւն աւելցուց: Տակաւին երիտասարդ՝ բայց բազմաթիւ վէրքերու պատճառաւ վաղահաս խօթութեանց դատասպարտուած մարդ մ'եկաւ երկու ծառաներու կրթնած: Լորտ ճօսլին Բոչէյ՝ իւր հիւանդութեան հակառակ, իշխանին կուսակցաց հետ միանալ ուղած էր, եթէ ոչ Մծնմութի սլաշտպանելիք գատին համար կուտելու, գէթ դուքսը զիմաւորելու, և անոր յարութիւնը շնորհաւորողներուն առաջիններէն մէկն ըլլալու համար:

Լորտ Բոչէյի մագերը ճերմկեղ եին, թէև իւր զեղնած դէմքը տակաւին թարմ էր և պէտքերը իւր փայլուն և յանդուգն աչաց չափ սև էին: Երկայն դիշերազգեստի մը մէջ փաթթուած, բաւական դժուարութեամբ յառաջ եկաւ երկու սպասաւորաց ուսերուն կրթնած: — Ահա առիկ քաջն Բոչէյ, որ ա՛յ չափ վէրք ունի որչափ պէտք մաղ, գոչեց լորտ Տըսլէյ:

— Գոնէ մեր դուքսը չտեսած չպիտի մոռնիմ, ըսաւ Բոչէյ, ես ալ ձեզ պէս անոր ձեռքը սեղմողներուն առաջիններէն պիտի ըլլամ: Միթէ թարմ երիտասարդութեանս ասնն սիրահարական ժամադրութիւն մը մէկ քառորդ ժամ փութացրնելու համար կեանքս վտանդի մէջ չը պիտի դնէի: Ինչո՞ւ ուրեմն զայն վտանդի մէջ չպիտի դնեմ մեր դուքսը քառորդ մ'աւելի կանուխ տեսնելու համար:

Լորտ Բոչէյէն քիչ մը ետքը անհանդիստ դէմքով մարդ մը երեցաւ յարկին վրայ: — Միւրտ, ըսաւ, աղերսական ձայնով մը, միւրտ, կեանքերնիդ վտանդի կ'ենթարկէք ձեր ըրած այդ անխոհեմութեամբը: Քիչ մը սաստիկ շարժումէ մը կ'ընայ նորէն արխն վաղել ա՛յն հին վէրքէն զոր . . .

— Գնա՛ բանդ, սօքթմէր, միթէ կայ դեղ մը՝ ուր իմ արիւնս աւելի արժանապէս և աղնուապէս հոսի քան յոտս Յակոբ Մծնմութի, ըսաւ Բոչէյ ախնով մը:

— Բայց, միւրտ, վտանգը . . .

— Բայց, սօքթմէր, դժոխք երթալս զիտնամ, մեր դուքսը ողջագործողներուն յետինը չեմ ըլլար: Ես այս ուղևորութիւնն ուրիշ բանի համար չըրի: Տիք մէկ ուսը պիտի տայ ինձ, Բէրսի նոյնպէս իւր ուսը. ես ալ այս երկու շահատակներուն կրթնելով պիտի ներկայանամ Յակոբ Մծնմութի և պիտի ըսեմ:

— Ահա առիկ Պրայճ-Վաթէրի քու երեք հաւատարիմ զինուորներդ . . .

Այս ըսելով, երիտասարդը իւր երկու սպասաւորները լողուց և երկու ուժեղ լորտերուն կրթնեցաւ:

Թմբուկներու, փողերու ձայներէ իմացուեցաւ որ Փրքաթմօնին ծովաստիներն և հետեակ զօրքերը կը դուժարուին. շատ չանցաւ, ասոնք իրենց ճիւղ համազղեստովը յարկին վրայ ելան և իրենց տեղերը շարուեցան, որոց զլուխն անցած էին սպայք:

— Ինչո՞ւ համար է այս պատրաստութիւնը, հարցուց Մօրթիմէր պ. տը Շէմրօյի:

— Գուքսին յարգանք մատուցանելու և զինքը զինուորական պատուով յարկին վրայ ընդունելու համար, երբ հիմա զօրքերն աչքէ անցնելու գայ:

Փրքաթմօնին նաւապետն եկաւ և աղնուականաց խմբին մօտենալով ըսաւ.

— Պարոնայք, հիմա Նորին Բարձրութեան հրամաններն ստացայ:

— Ինչ հրաման, ըսին ամենքը միաձայն:

— Նորին Բարձրութիւնը ճիշդ ժամը տասնևմէկին այսինքն հինգ վայրկեանէն զմեզ պիտի ընդունի:

Պարելի չէ նկարագրել աղնուականաց ուրախութեան և ցնծութեան ազդակները: — Ինձ նայէ, Տիք, դէ՛շ կ'ըլլամ, ըսաւ Մօրթիմէր:

— Բայց ուշադրութիւն ըրէ՛, Բէ՛րսի, ըսաւ Բո՛ւէյ, շըլլայ որ իյնաս, սրունքներէս մին դու ես :

— Ի՞մ ալ կարծես գլուխս կը դառնայ . . .

— Մտիկ ըրէ, Տի՛ք, մտիկ ըրէ, ճօ՛ւլին, ըսաւ Մօրթիմէր, այս ընկերները երբէք տեսած չեն մեր դուքսը . վեհանձն ըլլանք, թողունք որ առաջ անոնք անցնին, նախ հեռուէն կը տեսնենք զինքը . ասով ժամանակ կ'ունենանք իւր տեսութեան վարժուելու . . . : Այնպէս չէ՛ :

— Այո՛, պատասխանեցին Տիք և ճօւլին :

Ժամը տասնմէկ զարկու : Պահ մը Փրքաթօնին յարկը իրապէս հոյակապ և դեղծիկ տեսարան մ'ընծայեց : Զինուորք և ծովաստիք զէն ի ձեռնին շարուած էին : Սպայք գլուխնին բաց աղնուականաց խմբին առջևէն երթալով, կամայ կամայ վար իջան նեղ սանդուխէն որ Մօնմութ գքսին յատկացեալ սենեակը կը տանէր : Վերջապէս այս առաջին խմբին ետևէն կու դային Մօրթիմէր և Տրտլէյ որոնք երիտասարդ լըրտ ճօւլինը մէջ տեղերնին առնելով բռնած էին . այս վերջնոյն հասակին կորութիւնը, հիւանդոտ շարժումը իւր երկու նեցուկներուն բարձր հասակին և առնական շարժումներուն հետ հակապատկեր մը կը ներկայացընէին :

Մինչդեռ միւս աղնուականները նեղ սանդուխին վրայ կը խոնէին, երեք լըրտերը, որոնք ասպետական հաւատարմութեան երեք աղնու տխարներ էին, պահ մը յարկին վրայ կեցան :

— Մտիկ ընենք . . . մտիկ ընենք, ըսաւ Տրտլէյ, թերևս Յակորին ձայնը լսենք . . . :

Արդարև՝ ի սկզբան խոր լուծիւն մը տիրեց, բայց շատ չանցաւ անձնանուիրութեան սրտաշարժ յայտարարութիւններով խառն ցնծութեան աղաղակներ լուծիւնը խզեցին : Վերջապէս սանդուխին վրայ մարդ չմնաց : Երկու լըրտերը հազիւ կրցան չափաւորել իրենց անհամբերութիւնը՝ ի նկատի առնելով լըրտ ճօւլինի տխարութիւնը որ մեծ գժուարութիւն կը կրէր իջնելու համար . ասոնք ալ մարտկոյրը հասան և ըստ կարգի Փրքաթօնին մեծ սե-

նեակը մտան, որ Քրուսթիյաք իւր կուսակիցները կ'ընդունէր : Պահ մը երեք լըրտերն առջած մնացին իրենց աչաց ներկայացող պատկերին առջև : Խեղաք կողմի հինգ պատահաններով լուսաւորեալ մեծ սենեկին խորք, Քրուսթիյաք՝ իւր կանաչ թիկնոցն ու կարմիր դուլպանները հաղած՝ դռող գէմքով կանգուն կեցած էր Պ. տը Շէմրօյի քով : Այս վերջինը՝ իւր յաջողութենէն հպարտացած՝ կարծես յաղթական դիմօք ասպետը կը ներկայացընէր սնդղիացի աղնուականաց : Պ. տը Շէմրօյի ետօքը կեցած էին Փրքաթօնին նաւաստիք և իւր սպայակոյտը :

Մօնմութի կուսակիցները Ասքօնի շուրջը պատած էին : Բաղդախնդիրը, որուն գրչիւր թէպէտ քիչ մը նետած էր, յանդիմութիւնը ձեռքէ չէր ձգեր . տեսնելով որ զինքը ճանչցող չկայ, տակաւ առ տակաւ իւր սովորական վստահութիւնը դտաւ և ինքնիրեն ըսաւ . — Ա՛րեւի թէ սա Մօրթիմէր ըսածնին զիս մտէն ճանչցողի մը պէս պարծնցեր է որպէս զի ինքզինք ինձ նման իշխանի մը հետ ընտանեկան յարաբերութիւն ունեցող ցոյց տայ . . . : Ըարունակեմք այսպէս, ինչ կ'ուզէ թող ըլլայ :

Պատրանքն այնպիսի զօրութիւն մ'ունի, որ բաղդախնդիրին բոլորտիքը խոնող աղնուականաց մէջէն ոմանք Ասքօնին շարժմանց մէջ կարողու Բ.ի հետ ընտանեկան որոշ նմանութիւն մը տեսնել կը կարծէին, այլք գէմքերուն մէջ զարմանալի նմանութիւն մը կը գտնէին :

— Միւրտք և պարոնայք, ըսաւ Քրուսթիյաք Շէմրօն ցոյց տալով, պարոնը ձեր իղձերը բերաւ ինձ և զիս համոզեց որ ձեր մէջ գամ :

— Մի լըրտ-դուքս, պատրաստ եմք կենսերնիս զոհելու, գօչեցին ամենէն կատաղիները :

— Ես ալ այնպէս կը յուսամ, մի լըրտք . իսկ գալով ինձ, նշանաբանս պիտի ըլլայ . Ամեն բան ի սէր Անդղիոյ և . . .

— Բաւական է այդչափ աներեսութիւն, նզովից արմատ, դօչեց լըրտ Մօրթիմէր որոտացող ձայնով մը, ընդմիջելով ասպետը և վրան յարձակելով արիւնացոյտ աչօք և բուռնք բարձրա-

ցուցած, մինչդեռ Տըալէյ՝ ճօսլինը կը բռնէր որ չիյնայ:

Մօրթիմէրի սաստը շանթահարիչ տպաւորութիւն մ'ըրաւ բոլոր հանդիսականաց վրայ:

Անդղիացի աղնուականք աշխուժիւ Մօրթիմէրի կողմը դարձան: Շէմբօ և սպայք զարմայցամբ իրարու երես նայեցան, լորտին խօսքերէն տակաւին չկրնալով բան մը հասկընալ:

— Չա՛ր սատանայ, օձիքնիս ձեռք տուինք, ըսաւ Քրոսթիյար մտքէն, այդ արբած դաղանը մէկ փարսախ հեռուէն Մօրթիմէր կը հօտի:

Լորտը եկաւ այն տեղը զոր աղնուականք եա քաշուած ատեննին պարագ թողուցին իրենց և կարծոնին մէջ, անոր դիմացը կանդնեցաւ, ձեռքերը խաչաձև կապած, աչքերը դարձած, և երեսն ի վեր նայելով մոլեղնութենէ գողցող ձայնով մը զոչեց.

— Ա՛հ, դու Յակոբ Մօնմո՛ւթն ես . . . դո՛ւ . . . ինձ . . . Մօրթիմէրի կը հասկըցընես այդ բանը:

Այն ատեն Քրոսթիյար լըբութիւնն ու անսարքբութիւնը ծայրագոյն աստիճանին հացոց և տխրալին ձայնով մը պատասխանեց. — Կ'երեթ թէ աքսորն ու ձախողութիւնները զիս շո՛տ փոխեր են . . . որ իմ լուսալոյն բարեկամս զիս չկրնար ճանչել: Յետոյ ասպետը կէս մը Պ. տը Շէմբօյի գառնալով կամաց մը յարեց. — Արդէն չըսի՞ ձեզ, ինչպէս որ կը տեսնէք, յուզմունքը շատ սաստիկ եղաւ . . . տակաւին խելքը տուն չեկաւ: Մե՛զք, խեղճը զիս չճանչեր:

Քրոսթիյար այնպիսի բնական եղանակաւ մը խօսեցաւ, որ Պ. տը Շէմբօ տակաւին չէր կրնար հաւատալ թէ ահազին խաբէութեամբ մը քթէն բռնուած է: Այս մասին իւր տարակոյսը շատ երկար չտեսց: Լորտ Տըալէյ և լորտ Բոչէյ Մօրթիմէրի և միւս աղնուականաց հետ միացան և սկսան խեղճ կարծոնին դէմ նախատինք արձակել մոլեղնութեամբ:

— Այս չուտականը կը համարձակի ինքզինք Յակոբ Մօնմոթ անուանել:

— Վա՛տ խարերայ:

— Այս ափերտը դոյն ինչպէ՛ս ըլլալու է, որպէս զի ինք անոր տեղ անցնի:

— Կիլյոմի գաղտնի գործակատարն ըլլալու է:

— Այսպիսի պատուկ մը մեր Յակոբ Մօնմոթ գուքն ըլլա՛յ:

— Ի՛նչ յանդգնութիւն:

— Այս աստիճան ստախօսութիւն կ'ըլլա՛յ:

— Լեզուն քաշելու է:

— Այսչափ անամօթութեամբ մեզ խալէ՛, մե՛զ որ բնաւ գուքուր տեսած չէինք:

— Անպատճառ վրէժ առնելու ենք:

— Քանի որ անոր անունն սուած է, ո՛ւր ըլլալը զիտնալու է:

— Այո՛, մեր գուքն իրմէ կ'ուզենք:

— Եթէ Յակոբնիս մեզ չյանձնէ՛, զինքը ծովը կը նետենք:

— Եղունդները կը հանենք որ ստիպուի խօսիլ:

— Այսպիսի նուիրական բան մը խաղալի ընել կ'ըլլա՞յ:

— Բայց Պ. տը Շէմբօ ինչպէս այսպիսի կոշտ ծուղակի մը մէջ ինկաւ:

— Այս թշուտականը վատաբար զիս խաբեց, պա՛րոնայք, դոչեց Պ. տը Շէմբօ որ չէր կրնար ձայնը լսել ընել:

— Իւր յանդգնութիւնը շատ սուղի պիտի նստի իրեն, պա՛րոնայք:

— Ի՛նչ կերպով, ըսէք նայինք, պա՛րոն:

— Նախ շղթայի զարնել տուէք այս անդգամը:

— Ամենադարձելի սուտերով իմ վտահաթիւնս չարաչար գործածեց, պա՛րոնայք: Իմ տեղս ո՛վ ալ ըլլար պիտի խաբուէր:

— Ինքզինքնին արդար գատի մը նուիրող քաջ աղնուականաց վտահաթիւնն այսպէս խաղալի ընել չըլլա՛ր:

— Պարոն տը Շէմբօ, գուք այս անորէն խաբեացին չափ յանցաւոր էք:

— Բայց, միլըրտը, Անդղիոյ նուիրակն ալ ինձ պէս խաբուեցաւ:

- Այդ անկարելի է, գուք անոր մեղսակիցն էք :
- Մի լորար, զիս կը թշնամանէք :
- Չեղի պէս փորձառու անձ մը անկարելի է որ այսպէս քթէն բռնուած ըլլայ, պարոն :
- Պէտք է որ վրէժնիս լուծենք :
- Այո՛, վրէժ . . . վրէժ :

Ամեն կողմէն այնքան արագութեամբ այսպիսի ամբաստանութեանց և յանդիմանութեանց ձայներ բարձրացան և այնպիսի աղճմուկ մը պատճառեցին, որ Պ. տը Շէմրօյի անկարելի եղաւ իր ձայնը լսելի ընել այս մուկոյին տպադրանքներուն մէջ : Անդղիացի ազնուականաց զիքքն Շէմրօյի նկատմամբ այնքան սպառնալից եղաւ, զանդասներնին այնքան սաստիկ եղան որ սա Ֆրքաթօնին սպայներուն մօտ դնաց կանդնեցաւ, և ամենքն ալ ձեռքերնին սուրբնուն տարին : Քրուսթիյաք, որ երկու խումբերուն մէջ տեղը մինակ մնացած էր, երկու կողմանց նախատանաց, յարձակմանց և անիծից նշտակ եղաւ :

Յանդուզն, անվեհեր, ձեռքերը կործքին վրայ խաչաձև կապած, զլուխը բարձրացուցած, նայածքն համարձակ, բողբոսինդիրն այս սոսկալի մերկին որոտալն ու պայթիլը մտիկ կ'ընէր զարմանալի անտարբերութեամբ և ինքնիրեն կ'ըսէր. — Գործը շատ դէշ կ'արուի. կրնան զիս պատուհանէն վար նետել, այսինքն Ավիլիանոսին մէջ տեղը, անկումը վտանգաւոր է, թէև տրիտոնի մը պէս կրնամ լողալ, բայց այլ ևս բան մը չեմ կարող տոնի մը պէս կրնամ լողալ, բայց այլ ևս բան մը չեմ կարող ընել . . . ուշ կամ կանուխ այս բանը պիտի գար զլիսուս, և ասկէ զատ, ինչպէս որ այս առտու ալ կ'ըսէի, իւր անձն այլոց նուիրող մարդ մը հարկաւ չտպասեր որ յաւերժահարունք վարդէ պտակ յօբինեն իւր զլիսուն և զինքը զգուեն :

Այս սոսկալի աղմուկին մէջէն Վօրթիմէրի ահարկու ձայնը լսուեցաւ որ կը զօչէր. — Պարոն տը Շէմրօ, նախ և առաջ կախել տուէք այս շուռուականը, պարտաւոր էք այս փոխարինութիւնն ընել մեզ :

- Այո՛, այո, թող անդամ մը մեծ սուղաստակալէն կա-

խուի, կրկնեցին անդղիացի ազնուականք, յետոյ կը խօսինք :
 — Եթէ առաջ խօսիք, շատ շնորհապարտ պիտի ըլլամ ձեզ, զոչեց Քրուսթիյաք :

- Գեւ կը համարձակի խօսիլ, զոչեցին :
- — Բայց, ո՛վ պիտի խօսի ի նպատ ինձ, եթէ ես չխօսիմ, յարեց Ասքօծնր, գուք չպիտի խօսիք ա՛, ազնուական :

— Պարոնայք, զոչեց Պ. տը Շէմրօ, լորտ Վօրթիմէր իրաւունք ունի երբ կ'ըսէ թէ այս անպարտոյն խարեբան պէտք է պատմել :

— Իրաւունք չունի, կը սնդեմ որ իրաւունք չունի, բնաւ երբէք իրաւունք չունի, զոչեց Քրուսթիյաք . . . հինցած, հերքուած, գռեհիկ միջոց մ'է այդ . . . :

— Ար լուես, թշուառական, զոչեց հաստաբաղուկ Վօրթիմէր Ասքօծնին երկու ձեռքերը բռնելով :

— Մի՛ դպչիք ազնուականի մը, ապա թէ ոչ, վիսյ Աստուած, շատ սուղ կը վճարէք այդ թշնամանքը, զոչեց Քրուսթիյաք զայրանալով :

— Սուրբ յանձնէ՛, թշուառական իտերայ, ըսաւ Պ. տը Շէմրօ մինչդեռ քսան վերամբարձ բաղուկներ բաղլախնդրին կ'սպառնային :

— Արդարեւ առիւծ մը բան մը չկրնար ընել հարիւր գայլի գէմ, ըսաւ Քրուսթիյաք սրանձանօք և սուրը յանձնեց :

— Հինա, պարոնայք, յարեց Պ. տը Շէմրօ, պատուարժան լորտ Վօրթիմէր իրաւունք ունի երբ կ'ուզէ որ այս շուտիկը կախուի :

— Իրաւունք չունի, որչափ կարենամ ձայնս բարձրացնել, կը բողբոսեմ, իրաւունք չունի. անպատեհ, անհեթեթ միջոց մ'է այդ . . . ձիու զլիսու վայել մտածութիւն մ'է այդ : Ասխաղան, ինչ աղոր պատճառաբանութիւն, զոչեց Քրուսթիյաք մաքառելով երկու ազնուականաց գէմ որոնք իւր օձիքէն բունք էին :

— Բայց կախելէ առաջ պէտք է ստիպել զինքը որ իւր նիւթած դառը յայտնէ մեզ . . . պէտք է որ խոստովանի այն ծած-

կախորհուրդ պարագաները որոց միջոցաւ անպատկառ կերպով զիս խարէց :

— Ազկէ ի՞նչ կ'երէնէ, գաղանը սատկելուն պէս՝ թոյնն ալ հետը կը սատկի, ըսաւ Մօրթիմէր խոտութեամբ :

— Ձեզ կ'ըսեմ որ ցուլի մը վիզը ցատկոզ գայլի մը պէս իմաստութեամբ կը տրամաբանէք, գոչեց Քրուսթիյաք :

— Համբերէ՛, համբերէ՛ . . . ընտիր կանեփէ վզնոց մը հիմա քու քարողիզ վախճան կու տայ, պատասխանեց Մօրթիմէր :

— Մտիկ ըրէք, մի՛ լորտք, ըսաւ Պ. տը Շէմրօ, հիմա ժողով մը կը կազմուի . . . այս խարերան կը հարցաքննուի, եթէ չպատասխանէ, զի՛նք ստիպելու միջոցներ կրնանք դսնել. հազար տեսակ տանջանք կայ :

— Ա՛, այս մասին ձեզի հետ համամիտ կ'ըլլամ, ըսաւ Մօրթիմէր, կը հաւանիմ որ չկախուի . . . մինչև որ տանջանաց չենթարկուի, ասով մէկին տեղ երկու բան ըրած կ'ըլլանք :

— Հատ վեհասաճն էք, մի՛ լորտ, ըսաւ Կարօնը :

Պ. տը Շէմրօ, որ պահ մը յառաջ կը կարծէր թէ իւր ձեռնարկը մեծ ճարտարութեամբ ի գլուխ հանած է, և հիմա անոր բոլորովին ի դերև ելնելը կը տեսնէր, հարկաւ պիտի կատղէր և Քրուսթիյաքի նկատմամբ դժնդակ որոշումներ ընէր, որոնք սակայն ներելի չէին :

Մօնմութի կուսակցաց մեծ մասին գլուխներն այնքան տաքցած էին, պարաս պ տեղն ուրախացած ըլլալին զիրենք այնքան կատրեցուցած և մինչև անդամ վշտոցուցած էր, որ այս ազնուականները՝ գթասիրտ անձինք ըլլալովն հանդերձ՝ այս պարագայիս մէջ իրենց կոյր բարկութեան անձնատուր եղան, և քիչ մնաց որ խեղճ Քրուսթիյաք տեսակ մը պատերազմական ատենի առաջ ալ չպիտի կոչուէր, որոյ գումարումը գէթ օրինաւորութեան կերպարանք մը պիտի տար այն բանութեան որուն զո՛հ կ'երթար :

Հինգ լորտ և հինգ սպայ անմիջապէս ժողով կազմեցին Փրքթիմի նաւապետին նախադասութեամբ : Պ. տը Շէմրօ ալ կողմը կեցաւ, սասկեւ ձախ կողմը ոտքի վրայ կեցաւ : Ատենը բացուեցաւ :

Պ. տը Շէմրօ կտրուկ և տակաւին բարկութենէն դողացող ձայնով մ'ըսաւ . — Հոս ներկայ եղող մարդը կ'ամբաստանեմ իբր անզգամ խարերայ մը՝ բարձրապատիւ Մօնմութ գոյքսին անունն ու տիտղոսներն առած ըլլալուն և ասով իմ սիրովս՝ թաղաւորիս դիտումներն ի դերև հանելուն համար, և այս ալ՝ այնպիսի պարագայից մէջ, որ այս մարդուն յանցանքը պէտք է նկատուի դաւադրութիւն պեսական ստահովութեան դէմ : Հետեւաբար՝ կը պահանջեմ որ ներկայ ամբաստանեալը հայրենեաց դաւաճան հրատարակուի և մահուամբ պատժուի :

— Բայց, պարոն, շատ արագ և լաւ կ'եղբակացընէք, ասկէ աւելի յստակ և կարճ վճիռ չկրնար ըլլալ, ըսաւ Քրուսթիյաք որուն բնական արիութիւնը պարագային ծանրակշռութեան կը համապատասխանէր :

— Այո՛, այո՛, այս խարերան մահուան արժանի է. բայց առաջ պէտք է որ խօսի և իսկոյն տանջանաց ենթարկուի, յարեջին լորտերը :

Փրքթիմի նաւապետը որ ժողովին կը նախագահէր, Պ. տը Շէմրօյի պէս անձնական ոխ մը չունենալով ասպետին դէմ, Անգղիացոց ըսաւ . — Մի՛ լորտք, տակաւին պատիժ մը քուէարկելու ժամանակը չէ : Նախ և յառաջ պէտք է ամբաստանեալը հարցաքննել, իւր պաշտպանութիւնը լսել, եթէ կրնայ ինքզինք պաշտպանել, այնուհետև իրեն տրուելիք պատիժը կ'որոշենք : Չմոռնանք որ դատաւոր ենք և ինքն ալ տակաւին յանցաւոր ճանչցուած չէ :

Այս լուրջ և իմաստուն խօսքերն այնչափ հաճելի չեղան լորտերուն որչափ Պ. տը Շէմրօյի վճռական եղանակը հաճելի եղած էր իրենց : Աորտերը չկրնալով առարկութիւն մը հանել, լուեցին :

— Ամբաստանեալ, տնունիդ ի՞նչ է, ըսաւ նաւապետը ասպետին :

— Փօլիֆէմ Քրուսթիյաք ասպետ :

— Կտաքօն է եղեր, ըսաւ Պ. տը Շէմրօ. իւր անպատկառ .

ընթացքէն հասկընալու էի : Ինչպէս այսպիսի թշուառականի մը խաղալիկ եղայ :

— Արհեստնիդ ինչ է , շարունակեց նաւապետը :

— Առ այժմ՝ ամբաստանեալ ձեր արժանապէս նախագահած մէկ ատեանին առջև , նաւապետ , վասն զի դուք իրաւամբ չէք ուզեր որ մարդ մը առանց խօսեցընելու կախեն :

— Գուք ամբաստանեալ էք զիտութեամբ և չարամտութեամբ Պ. տը Շէմրօն խաբած ըլլալնուդ համար , որուն պետական պաշտօն մը յանձնուած էր ի ծառայութիւն մեր Վեհափառ Թագաւորին :

— Ես Պ. տը Շէմրօն չխաբեցի , նա ինքզինք խաբեց . զիս տէր իմ անուանեց և ես ալ այս անուան անմեղութեամբ պատասխանեցի :

— Անմեղութեամբ , գոչեց Պ. տը Շէմրօ մոլեղին . ինչ ըսել կ'ուզես , թշուառական , դու չէիր որ սոսկալի սուտերով վստահութիւնս շարաշար դորձածեցիր , դու չէիր որ աներեսութեամբ և խաբէութեամբ ամենակարևոր զաղանիքներ խլեցիր ինձ :

— Գուք խօսեցաք , ես մտիկ ըրի . . . : Ինքզինքս արդարացընելու համար մինչև անգամ կը պարտիմ ըսել որ բաւական շատութօս անձ մը երևցաք ինձ . . . : Եթէ ձեր խօսքերը լսած ըլլալս յանցանք մ'է , դուք այս յանցանքը մեծցուցիք . . . :

Նաւապետը նշան ըրաւ Պ. տը Շէմրօյի որ իւր բարկութիւնը զսպէ , և Վասքօնին ըսաւ . — Յակոբ Մօնմութ դուքսին նկատմամբ գիտցածնիդ կ'ուզէք յայտնել , կ'ուզէք մեզ իմացընել թէ ինչ դէպքեր պատահեցան որ իւր անունն ու պիտղոսներն ստանձնեցիք :

Քրուսթիյաք տեսնելով որ իւր վիճակը հետզհետէ կը ծանրանար , ուզեց ամեն բան յայտնել . կրնար իշխանին անձնանուէր կուսակիցներուն դիմել , անոնցմէ օգնութիւն գտնել իմացընելով թէ դուքսը իւր շնորհիւն ազատած է : Բայց պատուաւոր զգացում մը զինքը բռնեց . այս զաղանիքն իրենք չէր և իրեն չէր իյնար երևան հասնել այն ծածուկ պարագաները , որով իշխանին

գոյու թիւնը գաղտնի պահուած և պաշտպանուած էր և տակաւին կրնար պաշտպանուիլ :

Գ Լ Ո Ւ Ն Ե Բ Ե Ս Ն Ե Ր Ո Ր Դ Չ Ո Ր Ր Ո Ր Դ

Հ Ե Լ Ե Ծ Ո Ւ Մ

Երբ նաւապետը վերստին հրամայեց Քրուսթիյաքի որ դուքսին վրայօք բոլոր զիտցածները յայտնէ , բաղդախնդիրն այս անգամ հաստատ ձայնով մը պատասխանեց . — Այս մասին բան մը չունիմ ըսելիք , նաւապետ , այն զաղանիքն իմն չէ :

— Նզովից արմատ , տանջանքը հիմա քեզ խօսիլ կու տայ , գոչեց Մօրթիմէր : Թող երկու ծծմբոտ լուցիկ վառեն . եթէ հարկ ըլլայ ես ինքնս զանոնք խոր թուշին ներքև կը դնեմ , ասով լեզուն կը բացուի . . . և մենք ալ մեր Յակոբին ուր ըլլալը կ'իմանանք . . . : Ա՛հ , հոգիս կը վկայէր որ զինքը չափաբի տեսնեմ :

— Պարտ կը համարիմ ձեզ դէտել տալ որ , ըսաւ նաւապետը Վասքօնին , եթէ յամառիք մեղապարտ լուծեան մը մէջ մնալ , ասով խիստ ծանր վտանգներու կ'ենթարկէք թագաւորին և Պետութեան շահերը , և այն ատեն հարկ սիտի ըլլայ զժնդակ միջոցներու դիմել ձեզ խօսեցընելու համար :

Նաւապետին պէս պատկառելի դէմքով անձի մը , որ այս տեսարանին սկիզբէն ի վեր կը ջանար Քրուսթիյաքի հակառակորդաց խստութիւնն ամոքել , հանդարտութեամբ արտասանած այս խօսքերն ասպետին վրայ այնպիսի սաստիկ տպաւորութիւն մ'ըրին , որ թեթև կերպով մը սարսուեցաւ , բայց իւր որոշման մէջ անդրդուելի մնաց և հաստատ ձայնով մը պատասխանեց . — Թողու-

արտաքոյ կարգի բարձրութիւն մ'ունէին, առաջատաները շատ լայն և շատ բարձր էին. մարմինը սև, նեղ, նուրբ և երկայն ըլլալով, կարծես ծովին հետ հաւասար էր. վերջապէս տեսան որ ծովահէն նաւու մ'ամեն երեւոյթներն ունի:

Երկկայմին երեցած ատեն, Լէօբնը անոր մէկ նշանին վրայ մտար դնաց: Արդէն պատերազմ կար. մէկ վայրկենի մէջ Ֆրքաթօնը կռուելու պատրաստութիւնն ըրաւ: Նաւապետը երկու նաւերուն տարօրինակ շարժումները աննկելով, յեղակարծ յարձակման մ'առջև կազմ և պատրաստ դռնուիլ ուզած էր: Թեթևաշարժ նաւն առաջատաները կիսով չափ ամփոփած, զլխուն կողմն ալ բանակցութեան դրօշակ մը պարզած մտնեցաւ:

— Պարոն տը Սէնվալ, ըսաւ նաւապետը իւր սպայներէն մէկուն, հրաման ըրէք ուժաւոր գինուորաց որ իրենց թնդանութեանն զլուխը պատրաստ դռնուին պատրոյդնին վառած . . . : Եթէ սոյն բանակցութեան դրօշին ներքև խորամանկութիւն մը կայ, պէտք է ընկղմել այն նաւը:

Պ. տը Շէմրոյի և Գրուսթիլաքի ղարմանքը միօրինակ եղաւ, երբ տեսան որ այն նաւը Բաթլէճն էր, ուր խափշիկը և Ասպոյտ-Վօրուքը մտեր էին: Գրուսթիլաքի սիրտն անհնարին սաստկութեամբ կը արոկէր. իւր բարեկամները զինքը չէին լքեր, իրենն օղնութեան կու գային, բայց ինչ միջոցաւ: Շատ չանցաւ, Բաթլէճն այնքան մտնեցաւ Ֆրքաթօնին, որ կրնային իրարու խօսք լսել: Շքեղ կերպով հաղուած բարձրահասակ մարդ մը երկկայմին խելաց կողմը կանգնած էր. երկկայմն ալ Ֆիլիպպին պէս կանդ առաւ:

— Ահաասիկ Յակոբը . . . մեր դուքսը . . . գոչեցին երեք լորտերն ախնով մը, որոնք Ֆրքաթօնին յետնակողմն եզերքէն վար ձուելով Մօնմութ դուքսը ճանչցեր էին:

Այն ատեն երկկայմն ալ առաջատաներուն հովը պարպեց, և երկու նաւերն անշարժ կեցան: Աորա Վօրթիմէր, լորա Տըալէյ և լորա Բոչէյ Մօնմութ դուքսը տեսնելուն պէս ուրախութեան աղալակներով սկսեր էին օղը լմնդացընել: -- Յակոբ, ո՛վ մեր

քաջ դուքսը, վերջապէս կը տեսնենք զձեզ, կը տեսնենք . . . :
— Միթէ կարելի է. իրօք դուք Մօնմութ դուքսն էք, տէր իմ, գոչեց Պ. տը Շէմրո:

— Այո, պարոն, ես Յակոբ Մօնմութն եմ, ըսաւ դուքսը, ինչպէս որ բարեկամներուս ցնծութեան աղաղակները կը հաստատեն ըսածս:

— Այո, ահաասիկ մեր Յակոբը:
— Այս անգամ իրօք ինքն է:
— Այո, նոյն ինքն է, մեր ճշմարիտ դուքսն է, յարեցին լորտերը:

— Տէր իմ, ըսաւ Շէմրո, ձեր անունն ստանձնող թշուառականին մէկը երէկու ընէ ի վեր չարաչար խաբեց զիս:

— Այո, մենք ալ ի պատիւ ձեր կախել պիտի տանք զինքը, գոչեց Տըալէյ:

— Չըլլայ որ այդպէս բան մ'ընէք, ըսաւ Մօնմութ, այն անձը զոր դուք թշուառական կ'անուանէք, ղարմանալի անձնանուիրութեամբ զիս ազատեց . . . և ես ալ ահա կու գամ, Պ. տը Շէմրո, ձեր նաւուն մէջ իւր տեղը բռնելու, եթէ նա իմ տեղս բռնած ըլլալուն համար վտանդի մէջ կը գտնուի:

— Ստուգիւ, տէր իմ, պատասխանեց Պ. տը Շէմրո, տեսնելով որ իշխանին անձը ձեռք անցընելու լաւ առիթ մ'է այս, պէտք է որ Ձեր Բարձրութիւնը նաւ գայ, ասկէ զատ ուրիշ միջոց չունիք այն խաբերան ազատելու:

— Միայն թէ այն խաբերան ինքը չաղատէ իւր անձը, գոչեց Գրուսթիլաք նաւուն յետնակողմն եզերաց վրայ կանգնելով և ծովը ցատկելով:

Այս շարժումն այնչափ արագ եղաւ, որ մէկը չիրցաւ արգիլել զայն: Ասքօնն ալեաց ներքև սուզեցաւ և երկկայմն քիչ հեռու երևան ելաւ, որուն կը մտնեար լողալով: Երկու նաւերն իրարմէ շատ հեռու չէին: Բաթլէճնը դրեթէ ջուրին հետ հաւասար էր. Մօնմութ դուքսը և մի քանի նաւաստիք ասպետին օչնելով զինքը նաւուն յարկին վրայ հանեցին, մինչդեռ Ֆրքաթօնը

Թժճին նաւորդները տակաւին զարմացեր մնացեր էին : — Ահաւասիկ իմ աղատարարս , աշխարհիս ամենէն վեհանձն մարդը , ըստաւ Մծմու թ Գրուսթիլաքը իւր բազկիայը մէջ սեղմելով :

Յետոյ Յակոբ Ասարծնին ախանջն ի վար քանի մը խօսք ըստաւ , և Ասարծնը Բալֆ նաւապետին հետ աներևոյթ եղաւ : Գուքսը իւր նաւուն խելաց կողմի ծայրը դալով Պ . տը Շէմրոյի ըստաւ . — Պարոն , հօրեղբօրս Յակոբ Սթիւարթի և ձեր թաղաւորին դիտաւորութեանցը տեղեակ եմ . . . : Գիտեմ նաև որ այս քաջ աղնուականներն իրենց բաղուկն ինձ նուիրելու եկած են որպէս զի Ալլոյոմ ա՛Օրանժը Անդղիոյ դահէն վանելու համար օգնեն ինձ :

— Այո , այո , երբ դու մեր գլուխն անցնիս , պիտի վանենք այն հոլանտացի մուկերը , դոչեց Մօրթիմէր :

— Եկու , եկու , սիրելի դուքս , քեզի համար աշխարհիս մինչև միւս ծայրը կ'երթանք , ըստաւ Տըտէյ :

— Տէր իմ , վատահ եղէք որ իմ թաղաւորս պիտի օղնէ ձեզ : Մեր նաւը գալերնուդ պէս , իմ լիազօր իշխանութիւններս պիտի ցոյց տամ ձեզ , դոչեց Շէմրօ , որ շատ կ'ուրախանար տեսնելով որ իւր պաշտօնը որմէ յոյսը կտրեր էր յաջողելու երես կը բռնէր : Տէր իմ , կ'ուզէք որ մակոյկ զրկենք ձեզ , կամ դուք ձեր մակոյկներէն մէկովը պիտի գաք , յարեց Շէմրօ , և որովհետև Ձեր Բարձրութիւնը հոգածութիւն ցոյց կու տայ այն չուտական խարբային , կեանքը պիտի չորհուրի իրեն :

— Փութմս , աղնիւ դուքս . . .

— Ինչ կերպով որ կ'ուզես այնպէս եկու , Յակոբ , սիրելի Յակոբ , բայց շուտ եկու :

— Այո , եկու , դոչեց Մօրթիմէր , ապա թէ ոչ մնք ալ այն շուտիկին պէս ծովը կը ցատկինք վայրկեան մ'առաջ քովդ դալու համար :

— Անխոհեմութիւն մի ընէք , վաղեմի բարեկամք , անխոհեմութիւն մի ընէք , դոչեց Մծմու թ որ Ասարծնին անհետ ըլլալէն ի վեր ժամանակ վատրկելու կ'աշխատէր :

Աերջայէս Բալֆ նաւապետը եկաւ իշխանին ախանջն ի վար քան մ'ըստաւ . իշխանը ցած ձայնով և ուրախ գիմօք նոր հրաման մ'ալ տուաւ : — Տէր իմ , մակոյկը ծովը պիտի իջեցնենք , ըստաւ Շէմրօ որ դուքսը վայրկեան մ'առաջ իւր նաւուն մէջ տեսնելու համար ինչ ընելը չէր դիտեր :

— Հարկ չկայ , պարոն , ըստաւ իշխանը : Յետոյ յուրեւալ ձայնով մը լորտերուն դառնալով . — Աղեմի բարեկամք իմ , հաւատարիմ ընկերակիցք իմ , մնայք բարեաւ , ընդ միշտ մնայք բարեաւ . . . : Բարեկամութեան ամենէն սքանչելի : Նահատակին վրայ երգում ըրի որ այսուհետեւ երբէք չպիտի մանակցիմ քաղաքային վրդովմանց որք կրնան բոլոր Անդղեալ արիւնլուսոյ ընել . ես երգումս չպիտի գրժեմ : Մնաս բարեաւ , քաջ Մօրթիմէր . մնաս բարեաւ , բարի Տըտէյ . մնաս բարեաւ , արի Բոչէյ . վերջին անգամ մ'ալ զձեզ չկարենալ ողջագործելուս համար սիրտս կտոր կտոր կ'ըլլայ . . . : Բնաւ զիս տեսած մի ըլլաք : Թող այսուհետև Յակոբ Մծմու թ ձեզի համար մեռած ըլլայ ինչպէս որ աշխարհի համար այնպէս եղաւ շարունակ հինգ տարի . . . : Գարձեալ մնայք բարեաւ . . . ընդ միշտ մնայք բարեաւ . . . :

Յետոյ իւր նաւապետին դառնալով , դուքսը հզօր ձայնով մը ըստաւ .

— Բալֆ , բոլոր առադաստները պարզէ . . . :

Իսկոյն Բալֆ զեկը ձեռք առաւ . երկկայմին առադաստները որոնք առաջոց պատրաստուած էին զարմանալի արադութեամբ պարզուեցան . . . : Հովին և իւր ցուկանալի թիակներուն շորհիւ , Գառլէձն արդէն ճամբայ կ'առնէր , մինչդեռ Փրքաթծնին մէջ դանուողները բերաննին բաց մնացեր էին : Երկկայմը հեռանալու ատեն Փրքաթծնին խելաց կողման ուղղութեանը մէջ մնաց որպէս զի անոր թնդանթներուն ենթակայ չըլլայ : Արեւել չէ նկարագրել Պ . տը Շէմրոյի ժնլեղնութիւնը , լորտերուն յուսահատութիւնը , երբ թեթևաշարժ նաւուն արադութեամբ հեռանալը կը տեսնէին :

— Կուտայեա , դոչեց Պ . տը Շէմրօ , Փրքաթծնին բոլոր ա-

ուսուցաստները բայէք, պէտք է որ երկկայմին հասնինք, Քիւլէ-նանի չափ սրնթաց նաւ չկայ :

- Այո՛, այո՛, գոչեցին լորտերը, վրան երթանք :
- Դուքսերնիս առնենք :
- Եբք զինքը ձեռք անցրնենք, ստիպենք որ գլուխնիս անցնի :
- Իւր վաղեմի զինակիցները չմերժեր :
- Չաւակներս, Յակոբ Մօնմութի կենայր խմելու համար երկու հարիւր լուի պարգև պիտի ստանաք եթէ այն փոքրիկ նաւուն հասնինք, գոչեց Մօրթիմէր նաւաստիներուն դառնալով և նաւը ցոյց տալով :

Շատ չանցաւ, Բաթելէմն այնչափ հեռացաւ որ Ֆրքաթօնին թնդանթները չէին կրնար հասնիլ անոր. իւր բռնած ուղղութիւնը փոխեց, որով Լիթօրնը երևան ելաւ. այս վերջինը դուքսին և Պ. տը Շէմրօյի խօսակցութեան միջոցին Բաթելէմի ջուրերէն բաժնուած չէր և անոր գծին վրայ կը գտնուէր :

Հիմա ընթերցողը Լիթօրնի մէջ պիտի տանինք ուրկէ Ֆրքաթօնին կողմէն երկկայմին հալածուիլը պիտի տեսնէ : Փօրթիմ տը Բրուսթիյաք Լիթօրնի յարկին վրայ կեցեր էր. քովը կը դրանուէին իւր վաղեմի հիւրընկալ Գանիէլ նաւապետը, և հայր Արիֆօն որ առջի իրիկուրնէ այս նաւը մտած էր :

Արդէն տեսանք որ ասպետը Մօնմութի քով երթալու համար Ֆրքաթօնին խելաց կողմի եղերքէն ծովը ցատկելով խորասոյղեղած էր : Մինչդեռ Ասքօնը կը թօթուրուէր, աչքերը կը շփէր, դուքսը զինքը ողջագուրելով ըսած էր. — Շուտ դացէք Լիթօրնի մէջ ինձ սպասեցէք : Բալֆ հոն պիտի տանի ձեզ :

Բրուսթիյաք տակաւին թմրած և Պ. տը Շէմրօյի ձեռքէն փախչելուն չափազանց ուրախացած, Բալֆ նաւապետին հետևեցաւ. Սա զինքը փոքրիկ նաւակի մը մէջ իջեցուց, զոր նաւաստի մը միայն կը վարէր ամբիկեան լայն ու կարճ թիակով : Բաղդախնդիրն այս կերպով Լիթօրն ելաւ : Ժամանակ չկորսորցրնելու համար Բալֆ հրաման տուած որ նաւաստիին որ ասպետին հետ նաւն ելնէ և նաւակը թողու. ասով Ասքօնին փոխադրութիւնը

խիստ շուտ կատարուեցաւ : Դուքսն այն ատեն միայն հրաման տուած էր երկկայմին աւազաստները պարզելու երբ իմացած էր որ Բրուսթիյաք ապահովութեան մէջ է, վասն զի զիտէր որ Պ. տը Շէմրօ այնուհետև ստուերին տեղ մարմինը, սուտ Մօնմութին տեղ ճշմարիտը, Լիթօրնի տեղ Բաթելէմը պիտի հալածէր :

Գանիէլ նաւապետը Ասքօնը տեսնելուն պէս գոչեց. — Դուք ալ միշտ տարօրինակ եղանակներով նաւս պիտի դաք եղեր : Գաղղիայէն մեկնած ատեննիս երկինքէն ինկաք. Անթիլեան կղզիներէն բաժնուած ատեննիս ծովուն մէջէն կ'ելնէք իբր ծովային աստուած մը, իբր Պոսիթոն անձամբ :

Ասպետը շատ զարմացաւ սոյն պատահման վրայ, մանաւանդ հայր Արիֆօնը վերստին տեսնելուն, որ խելաց կողմի բարձրաւանդակին վրայ կանգնած երկու նաւերուն շարժումները կը զիտէր, և նաւապետին ըսաւ. — Բայց այս ինչպէս բան է որ դուք ճիշտ այս միջոցին հոս կը գտնուիք սա վաղը ալեաց վրայ ըստ զիպաց ծածանող ընկուզի կեղևին մէջէն ելած ատենս զիս ձեր նաւն առնելու համար :

- Շիտակը կ'ողէ՞ք, ես ալ չեմ գիտեր :
- Ի՞նչպէս կրնայ ըլլալ, նաւապետ :
- Երէկ առաւօտ Բօշէլի նաւայարդարիս թղթակիցը ինձ հարցուց թէ բեռս ամբողջ է : Այո՛, ըսի. այն ատեն հրամայեց որ Ֆօր-Բօայալ երթամ, ուր մեկնելու մօտ Ֆրքաթօն մը կայ, և անկէ թախանձանօք խնդրեմ ուղեկից ըլլալ նաւուս ապահովութեան համար. եթէ մերժէ դարձեալ ուղեկցիմ անոր, զայն միշտ տեսնելու չափ հեռաւորութեան մէջ կենալով և անոր ընդդիմութեանն ականջ չկատելով : Վերջապէս այն կերպով պիտի վարուէի անոր հետ ինչպէս քոստա շուն մը՝ որ անցորդին քղանցքէն չբաժնուիր. անցորդն ի զուր կ'աշխատի զայն վանելու, շունը միշտ ոտքի կամ քարի հարուածէ մ'ազատ մնալու չափ հեռուն կը կենայ, երբ անցորդը վաղէ՛ ինքն ալ կը վաղէ, երբ քալէ՛ ինքն ալ կը քալէ, երբ ետևէն վաղէ՛ կը փախչի. . . . երբ կանգ առնէ՛ ինքն ալ կանգ կ'առնէ, վերջապէս ինչ կ'ընէ

չընէր, անցորդին ոտքին տակէն չհեռանար . . . : Ահա ես ալ այսպէս վարուեցայ Ֆրքաթօնին հետ . . . : Ամենը չըսի . . . թղթակիցս ըսած էր ինձ նաև . Գրքաթօնին ետեւէն պիտի երթար մինչև որ երկկայմ մը ձեղ մօտենայ, այն ատեն կանց կ'առնէք . կարելի է որ այն երկկայմը ձեզ նաւորդ մը զրկէ (հիմա կը տեսնեմ որ այն նաւորդը դուք էք) . այն ատեն կ'առնէք զայն և անմիջապէս ճամբայ կ'եղնէք Գաղղիա երթալու համար, երկկայմն ու Ֆրքաթօնը չէք մտածեր . . . ապա թէ ոչ՝ երկկայմը ձեզ ուրիշ հրամաններ պիտի զրկէ և դուք զանոնք պիտի պործագրէք : Ես իմ նաւայարդարներուս կամքէն զատ ուրիշ բան չեմ ճանչեր : Գործօայտէն սկսելով Ֆրքաթօնին հետեւեցայ : Այս առաւօտ երկկայմը հասաւ ինձ, քիչ մ'առաջ ձեզ նաւուս մէջ առի և ահա Գաղղիա կ'երթանք :

— Բայց դուքսը մեր նաւը չը պիտի դայ, հարցուց Բրուսթիլայք :

— Գո՛ւքսը, դուքսը ո՞վ է : Ես իմ նաւայարդարէս կամ իւր թղթակիցէն զատ ուրիշ դուքս չեմ ճանչեր և այս ալ . . . : Այս ինչ է, դիտեցէք, Ֆրքաթօնը բոլոր զօրութեամբ փոքրիկ նաւուն ետեւէն ինկեր է :

— Բայց պիտի լքէք այսպէս Բաթլէօնը, դուչեց Բրուսթիլայք, եթէ Ֆրքաթօնը հասնի անոր, օգնութեան չը պիտի վազէք :

— Ե՛ս, ո՛չ, թէև հոս տասներկու հատ ութնոց փոքրիկ ընտիր թնդանօթներ ունիմ որոնք դորձ տեսնելու մասին խոշորներէն վար չեն մնար, և քսանուչորս առոյգ նաւաստիներ, որոնք թաղաւորին ծովային զինուորներէն ոչ նուազ քաջասիրտ են . . .

. . . : Բայց խնդիրն ասոր վրայ չէ . . . : Ես իմ նաւայարդարիս հրամաններէն զատ ուրիշ բան չեմ ճանչեր . . . : Բայց հիմա ալ երկկայմը դիտեցէք, որ ուղածին պէս կը պտրտըրնէ Ֆրքաթօնը, ըստ Գանիէլ :

Գ Լ Ո Ւ Խ Ե Բ Ե Ս Ն Ե Բ Ո Ր Դ Կ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ

Վ Ե Բ Ը Գ Ը Բ Զ

Ֆիլիպանը մուկնութեամբ կը հալածէր զԲաթլէօն : Երկկայմը կամ հաշուով, կամ իւր ընթացքին մէջ յամրանալու ստիպուելով, քանի մ'անդամ քիչ մնայ որ պիտի բռնուէր Ֆրքաթօնէն . բայց այն ատեն անտարակոյս իւր շինուածքին աւելի յարմար ընթացք մը բնելով կորուսած միջոցը վերստին կը շահէր :

Յանկարծ տաստիկ շարժմամբ մը երկկայմը ուղղութիւնը փոխեց, շխտակ Լէթօնին գնաց, և քանի մը վայրկենի մէջ սյնչափ մօտեցաւ անոր, որ իրարու ձայն կրնային լսել :

Կարելի չէ նկարագրել բաղբախնդրին ուրախութիւնը երբ Բաթլէօնի յարկին վրայ, որ խեղայ կողմէն եռակայմին մօտեցեր էր, Կապոյա-Մօրուքը տեսաւ սպիտակ զգեստ հագած և Մօնմութի թեկն կրթնած, և մանկամարդ կնոջ յուզեալ ձայնով մը իրեն դռնը լսեց . — Մնայք բարեաւ, վեհանձն աղատարար . . . մնայք բարեաւ . . . երկինք հսկէ՛ ձեր վրայ . . . : Ձեզ երբէք չպիտի մոռնանք :

— Մնայք բարեաւ, աղնիւ բարեկամ . . . ըսաւ Մօնմութ : մնայք բարեաւ, քաջասիրտ աստիտ :

Եւ Բաթլէօն հեռացաւ . . . մինչեւ Ընմէլ իւր թաշկինալիով և դուքսը իւր ձեռքովը հրամեշտի վերջին նշան մը կուտային բաղբախնդրին :

Աւա՛ղ, այս տեսքն այնչափ կարճ որչափ յափշտակիչ եղաւ . . . :

Երկկայմը ետ դառնալով իւր ընթացքը շխտակ Ֆրքաթօնին վրայ ուղղեց, և զարմանալի յանդիմութեամբ մը զրեթէ ուղեկեցի մը չափ մօտեցաւ անոր :

Ֆրքթօնն ալ ըստ կարգի ճամբան դարձուց : Անշուշտ նա-
ւապետն այս անօգուտ հալածութեն կատողելով ինչ որ ալ ըլլայ
զործին վախճան տալ ուղեց :

Փայլակ մը երևցաւ , խուլ ու երկարաձիգ որոտում մը լսուե-
ցաւ հեռուն , և Ֆրքթօնը իւր ետեւը կապտապոյն ծուխերու ամպ
մը ձղեց :

Այս նշանակութեան արժանի ցոյցին վրայ , Քօֆէճօնը Ֆրքթ-
թօնին առջև այլ ևս չուղեց խորամանկութիւններ բանեցնելով
զուարճանալ , և հովին առջև իրեն ամենէն յարմար դրից մէջ
մանեց լու սկսաւ իրապէս խոյս տալ :

Ֆիւլօնանի կը հալածէր զայն , երկուքն ալ ընթացքին դէպ
ի հարաւ ուղեցին :

Լէօբն դէպ ի հիւսիսային արևելք կ'երթար և միւսներէն ա-
ւելի արագ կը քալէր , հետևարար շատ շանցաւ իւր ետեւը խիստ
հեռուն թողուց երկու նաւերը որոնք հետզհետէ ի հորիզոն կը
խորասուզէին : Քրուսթիլայք աչերը կապոյտ-Մօրուքը տանող նա-
ւուն վրայ յառած մնացեր էր : Իւր անյագ և թախծալից հա-
յեացքն այն ատեն դարձուց երբ երկկայմը բոլորովին աներևոյթ
եղաւ : Այն ատեն արտասուաց երկու խոշոր կաթիլներ բողբոջ-
անդրին այտերէն վար սահեցան . գլուխը երկու ձեռացը մէջ
ձղելով երեսը գոցեց :

Գանիէլ նաւապետը եկաւ յանկարծ ընդմիջեց ասպետին ցա-
ւալի մտածութիւնը . զուարթութեամբ ուսին զարկաւ և գոչեց .

— Կը տեսնէք , բարեկամ , Լէօբն ճամբան շտկեց . մինչև
որ ընթրիք ընելու ժամանակը գայ լաւ չըլլար որ վար իջնենք և
մէյ մէկ հատ խմենք : Կը յուսամ որ դարձեալ զիս խնդացնող
բաներ պիտի ընէք , գիտէք , պատառաքաղը քիթերնուդ վրայ կը
կանգնեցընէիք : Օ՛ն , երթանք մէյ մէկ հատ խմենք :

— Ծարաւ չեմ , պարոն նաւապետ , ըսաւ կասթօնը տխրապին :

— Աղէկն ալ այդ է , աւելի հաճութեամբ պիտի խմէք . մի-
թէ չե՛ն ըսիր որ մարդս անասունէն որոշող բանը ծարաւ չըլ-
լալով խմելն է :

— Շնորհակալ եմ , պարոն նաւապետ , բայց չպիտի կրնամ
.

— Բայց ինչ եղեր էք , կերպարանքնիդ բոլորովին փոխուե-
ր է , արդեօք չկոցաք հարստանալ , անո՛ր համար է , վասն զի կը
պարծենայիք թէ ամիս մը չեղած կապոյտ-Մօրուքին հետ պիտի
ամուսնանայիք , մաքերնիդ կու գայ , դրանիդ կորուսած ըլլալու
էք . աներկբայ եմ որ միայն Դիւարնակ-Բլուրն երթալու անդամ
համարձակած չէք :

— Երաւունք ունիք , պարոն նաւապետ , դրաւս կոթարնցուցի :

— Որովե՛տեալ ստակ դրած չէիք , բարեբաղդարար վճարելու
բան մը չունիք : Բայց աղէկ ըսիք , քառորդէ մը ի վեր ձեզ
հարցընելիք բանի մը բան ունիմ . ինչպէս եղաւ որ Ֆրքթթօնին
մէջն էիք , ինչպէս եղաւ որ երկկայմին նաւապետը ձեզ առաւ ,
կը ճանչէիք զինքը , ասկէ զատ քիչ մը առաջ ձեզ հրաժեշտ
տուող այն կինն ու պարօնը , ինչ կը նշանակեն ասոնք : Բայց
այս ալ ըսեմ որ եթէ ձեզ նեղութիւն կու տամ , մի պատաս-
խանէք . հարցընելուս պատճառը միայն զիտնալ ուղեւս է , եթէ
ասոնց մէջ գաղտնիք մը կայ , ալ չենք խօսիր :

— Այս մասին քննա բան մը չեմ կրնար ըսել , պարոն նա-
ւապետ :

— Ուրեմն այնպէս համարեցէք որ բան մը չհարցուցի ձեզ .
կեցցէ՛ ուրախութիւն : Օ՛ն , խնդացէ՛ք , խնդացէ՛ք կ'ըսեմ
Կնչո՛ւ այդպէս ախրեր էք , կը տեսնեմ որ աակալին ձեր կանաչ
թիկնոցն ու կարմիր գուլպաներն հատած էք որոնք ծովին ջու-
րէն դոյներնին նետեր են , արդեօք ասո՛ր համար է , բայց ըսա-
ծես չվշտանաք : Ես ձեզի հիմա ուրիշ հագուստ կու տամ . թէև
բաղնիքի ներսին չափ տաք է , բայց թաց զգեստները վրան չոր-
ցընելը փաստակար բան է : Օ՛ն ուրեմն , մտմտուք մէկդի թո-
ղէք . միթէ նաւայարգարիս հրամանաւը հոս գտնուելուփնիդ լո՛ւ
հիւրս եղած չ'իք ըլլար : Եւ եթէ այսպէս ալ չըլլար , ձեզի
չըսի՛ որ երբ ուղէք կրնաք Լէօբնի մէջ մնալ . վասն զի , ճշմա-
րիւս է Տէր , շատ կը սիրեմ ձեր խօսակցութիւնը , պատմու-

թխաները, և մանաւանդ ճարտար խաղերը: Գլխէ՛ք, արմաւենոյ կեղեկ թեւէ շինուած տեսակ մը խժուժ ունիմ, որ խայծի պէս կը վառի, ինչ աղուոր բան պիտի ըլլայ, պիտի կլլէք զայն և ճշմարիտ սատանայի մը պէս ծուխ ու բոց պիտի լքենէք, այնպէս չէ՛:

— Ասոյեալ ձեզ շատ զուարճացընելու արամազիր շերերի, պտրնն նստպետ, ըստ մէկը ծանր ձայնով մը:

Քրուսթիյաքն ու նաւասեալը դառնալով տեսան որ խօսողը հայր Արիֆօնն էր, որ բարձրաւանդակէն երկիկայմին հալածուիլը զիտեր էր և յարկին վրայ կ'իջնէր:

— Ճշմարիտ է, հայր, տխրութիւն մը կայ վրաս, ըստ Քրուսթիյաքի:

— Բայց ինչ որ ալ ըլլայ, այդ տխրութիւնը շատ շտեկեր, կ'անցնի, ինչու որ մեղամաղձոտ բնաւորութեան տէր մէկը չէ . . . : Ես դարձեալ երթամ խմելիք պատրաստեմ, ըստ Գանիէլ և զոսոյ:

Պահ մը լուռ կենալէ ետև, կրօնաորը Քրուսթիյաքի ըստ .

— Ահա դարձեալ Գանիէլ նաւասեալին հիւրն եղար . . . : Ահա այսօր ալ ախչափ աղքատ ես, որչափ էիր տասն օր առաջ:

— Ինչո՞ւ համար այսօր առեղի հարուստ ըլլայի քան տասն օր առաջ, հայր, հարցոյց կարծոնը:

Ի գոյնստ Քրուսթիյաքի, պէտք է ըսել որ իւր դառն վիշտերուն մէջ բնաւ ընչտարիական մտածում չկար. թէպէտ աղքատ, սակայն սրբախոթութեամբ կը մտածէր որ, ի բաց առեալ կոպոյտ-Մօրուքին մէտայլեծնը, իւր անձնուիրութեան մէջ բնաւ չա՛հանդրութիւն մտած չէր:

— Կարծեմ թէ, ըստ հայր Արիֆօն, Մօնմութ դուքսը պիտի վշտանայ ձեր անձնուիրութիւնը պէտք եղածին պէս չկարենալ վարձատրելուն համար: Բայց յանցանքը բոլորովին երբ չէ, զէպրերն ախչափ արագութեամբ սլատահեցան որ . . .

— Արջօրէն չէք խօսիր, հայր: Ինչո՞ւ համար իշխանն ուղէ

նուստուցընել անձ մը — որ ձեռքէն կ'իսկան ըրտ. ծառայութիւն մը մատուցանելու համար:

— Կոք իշխանին համար ըրիք ինչ որ եզրայր մը պիտի բնէր. ինչո՞ւ համար ուրեմն նա ձեր աղքատ ըլլալը զխնայուլ իրբև եղբայր չօղնէ ձեզ:

— Եթէ այդպիսի բան մ'ընէր, շատ պիտի վշտանայի, այսօր համար շատ պատճառներ ունիմ: Այս դէպքերը մոռնալու համար մինչև անգամ մտաք գրած եմ այսուհետև. Դսելքիս փչածն ընել և առեղի անհանգարտ կեանք մ'անցընել, և կը յուսամ որ . . .

Կարծոնը չաւարտեց խօսքը և գարձեալ գլուխը ձեռայր մէջ ծածկեց:

Արծնաորը յարկեց անոր լուսթիւնը և հեռացաւ . . . :

Արիզէ ըստած կանոնաւոր հովերուն և զեղեցիկ նաւարկութեան մը շնորհիւ, զրիթէ քառասուն օրէն ետև Գաղղիոյ ծովեղերքներն սկսան երևիլ:

Ասպետին լուռ տխրութիւնը տակաւ առ տակաւ փարստած էր:

Իւր սրտին մէջ իրեն համար նոր և խիստ փափուկ զրացումներ ծնունդ առած ըլլալով, ասպետը միշտ ուղած էր ինքզինքն առանձնութեան մէջ տալ այն տխուր և քաղցր մտածութեանց որոց աւարկան էր Կոպոյտ-Մօրուքը. վասն զի չէր ուղեր որ այս զեղեցիկ մտածութիւնները Գանիէլ նաւասեալին կողմ կատակներուն կամ հայր Արիֆօնի մեկնութեանց ենթակայ ըլլան:

Ութ օրէն ետև ասպետը նաւորդաց համար նոյնը եղած էր, ինչ որ էր առաջին նաւարկութեան ժամանակ: Գլխաւորով որ նաւորչէրը զուարթութեամբը պիտի վճարէր, սկսաւ առաջուան պէս Գանիէլ նաւասեալը զուարճացընել. ախչափ զո՛հ եղան իրմէ, որ բարի նաւասեալը ցաւօք սրտի կը տեսներ որ նաւարկութեան վախճանը կը մօտենար:

Քրուսթիյաք յայտնապէս ըսած էր որ Ռուսիա պիտի երթայ, կայսեր բանակին մէջ ծառայութիւն մը խնդրելու համար, փասն

զի այն ատեն Պետրոս կայսրը այս կարգի զինուորաց լաւ ընդու-
նելութիւն կ'ընէր :

Արևը մարը մտնելու վրայ էր երբ Գաղղիոյ եկեղեցներն սկսան
երևիլ :

Գանիէլ նաւապետը խոհեմութիւն համարեց հետևեալ օրուան
սպասիլ նաւահանգիստ մտնելու համար :

Մեղան նստելէ քիչ մ'առաջ, հայր Արիֆօն խնդրեց Ասաբօ-
նէն որ իրեն հետ իւր սենեակը գայ :

Արօնաւորն այնպիսի ծանր կերտարանք մ'առած էր, որ քրուս-
թիյաք զարմացաւ :

Գուռը գոցելէ ետև, հայր Արիֆօն արտասուածոր աչօք թե-
ւերը Ասաբօնին երկնցընելով ըսաւ .

— Եկէ՛ք, եկէ՛ք, աղնիւ արարած, եկէ՛ք, բարի և սիրելի
զաւակս :

Ասպետը, որ միանդամայն յուզուած և զարմացած էր, իւր
բազկացը մէջ սեղմեց կրօնաւորը և ըսաւ .

— Ի՞նչ կայ, հայր իմ :

— Ի՞նչ կայ, կը զարմանամ որ կը հարցընէք թէ ի՞նչ կայ .
դուք, խեղճ բաղդախնդիր, դուք որ, ձեր անցուցած կեանքին
նայելով, այնչափ խղճամիտ մէկն ըլլալու չէիք, թագաւորի մը
որդոյն կեանքն ազատեցիք, ինքզինքնիդ զարմանալի առձնօրա-
ցութեամբ և իմաստութեամբ նուիրեցիք. այս ամենն ընելէ, ձեր
բարեկամներն ասպահովութեան մէջ դնելէ ետև կը վերադառնաք
ձեր աննշան և թշուառ կեանց, այս ժամուս մինչև սողամ չէք
դիտեր թէ վաղը Գաղղիա վերադարձած ասենիկ ո՛ւր պիտի
պառկիք, ասկէ զատ ամենափոքր տրտունջ մ'անդամ չէք յայտ-
ներ թէ ապերախ գանուեցան կամ գէթ ձեզ մոռցան անոնք որ
դրեթէ ամեն բան ձեզ կը պարտաւորին :

— Բայց, հայր իմ . . .

— Ո՛հ, այս նաւարկութեան ժամանակ շատ լաւ դիտեցի ձեզ .
եթէ՛ք պառն փօսք մը, երբէ՛ք մեղադրանաց ստուերը միայն . ա-
ռաջուան պէս անհոյք և զուարթ եղաք : Ասկէ զատ . . . ո՛չ .

. . . ո՛չ . . . : Ո՛հ, շատ լաւ նշմարեցի որ ձեր ուրախութիւնը
կեղծ էր . այս ուղևորութեան մէջ մինչև անդամ կորսնցուցիք
ձեր միակ ինչքը . . . այն անհոյք զուարթութիւնը որուն օղնու-
թեամբը թշուառութեան կը հանդուրժէիք :

— Հայր, կը հաւաստեմ ձեզ թէ սյդպէս չէ :

— Ո՛հ, չեմ սխալիր կ'ըսեմ ձեզ : Գիշերը ձեզ տեսայ որ
յարկին վրայ անկիւն մը առանձին նստած վշտագին կը մտա-
ծէիք : Աւրիշ անդամ այսպէս կը մտածէիք :

— Ընդ հասիւտակն՝ նաւարկութեան ժամանակ Գանիէլ նաւա-
պետը չզուարճացուցի՞ կատակարանութիւններով, հայր :

— Ո՛հ, շատ լաւ դիտեցի ձեզ, և թէ հաճեցոք զուարճացը-
նել Գանիէլ նաւապետը, ասոր պատճառը ձեզ ըրած հիւրընկա-
լութեան փխարինութիւն մ'ընել էր . . . : Մտիկ ըրէք, զա-
ւակս, ես ձեր եմ, կրնամ ամեն բան ըսել առանց ձեզ նեղա-
ցընելու, արդ, դուք այնպիսի ընթացք մը բռնեցիք, որ մեծ
պատիւ պիտի բերէր արդէն իւր անցեալովը, իւր սկզբունքներու-
վը փափուկ դրացումներու աէր եղած անձի մը . սակայն ձեր կող-
մանէ այսպիսի ընթացք մը, ձեզի պէս անձի մը կողմանէ, զոր
դատարկագորտ, թերևս մեղապարտ երիտասարդութիւն մը կրնար
ամեն աղնիւ զյացումներէ զրկել, այսպիսի ընթացք մը, կ'ըսեմ,
կրկնակի վսեմ և պելեցիկ է, միանդամայն անցելոյն քառութիւնն
և ներկային փառաւորումն է : Ուստի այսպիսի զյացումներ չէին
կրնար առանց վարձատրութեան մնալ . . . արդէն համբերու-
թիւնիդ չափէն աւելի տեսց. ես զձեզ այս աստիճան համբե-
րութեան ստիպելուս համար ինքզինքս գրեթէ պակասաւոր կը հո-
մարիմ :

— Ի՞նչ համբերութիւն, հայր :

— Տակաւին կը ժխտէք . . . այդ համբերութեամբ աղնիւ
և սրտաշարժ փափկասրտութիւն մը ցոյց տուիք :

Հայր Արիֆօնի գրան զարկին :

— Ի՞նչ կայ :

— Ընթրիքը պատրաստ է, հայր :

— Օ՛ն , եկո՛ւ , տղաս , ըսաւ հայր Արիֆօն անսովոր կերպով մը Բրուսթիյաբի երեսը նայելով , չեմ գիտեր ինչո՛ւ համար ինձ այնպէս կը թափ որ այս օրս ձեզի համար խիստ երջանիկ վախճան մը պիտի ունենայ :

Ասպետը , որ շատ զարմայեր էր թէ ինչո՛ւ հայր Արիֆօն գինքը իւր սենեակն իջեցընելով այն խօսքերն ըսաւ , Բերօնաւորին ետեէն գնաց :

Ո՛րչափ մեծ եղաւ Բրուսթիյաբի զարմանքը , երբ տեսաւ որ բոլոր ծովատիրք տօնի օրուան զղեստներ հաղած էին , կայմերէն և անոնց պարաններէն վառուած լսողներն եր կախուած էին :

Երբ բաղդախնդիրը յարկին վրայ երեցաւ , ետակայմին տանն երկու թնդանօթները որոտալով ողջունեցին զինքը :

— Բայց , ի՛նչ է այս , հայր , վրանիս յարձակո՛ւմ կայ , ըսաւ Բրուսթիյաբ :

Կրօնաւորը բաղդախնդրին պատասխանելու միջոց չունեցաւ . նաւասպետը հանդէսի զղեստներ հաղած , իւր Ետեէն տեղակալը , պաշտօնակալը , թնդանօթասպետը , տակառասպետը իրենց փոխանորդներովն եկան յարգանք Բրուսթիյաբը ողջունեցին , Նաւասպետը քիչ մը շփոթ դէմքով ըսաւ անոր .

— Պարոն ասպետ , այս նաւը և պարունակած բեռը ձերն են :

— Աստուած խելք տոյ բեղ , եղբայր Գանիէլ , պատասխանեց Բրուսթիյաբ , եթէ սեղան չնստած այսպէս էր , ի՛նչ պիտի ըլլար երբ խմբէր :

— Թողութիւն կը խնդրեմ , պարոն ասպետ , շարունակեց Գանիէլ , ձեր քթին վրայ պատառաքաղներ կանդնեցընել տալուս , և կրակ թքնելու համար զձեզ խմուծ ծամելու ստիպած ըլլալուս համար : Հիմա ո՛րչափ ստոյգ է որ Գաղղիոյ ցամաքները կը տեսնուին , այնչափ ստոյգ է որ ձեր Ախթի տէրն ըլլալը չի գիտեր :

— Բայց , հայր իմ , կը բացատրե՞ք ինձ . . . ըսաւ Բրուսթիյաբ :

— Արտապատուելի հայրն տեղի լու պիտի բացատրէ ձեզ :

այս գործը , պարոն , ըսաւ Գանիէլ , վաճառ զի քիչ մը առաջ ինքը յանձնեց ինձ Գոր-Բօսյալի թղթակիցէս նամակ մը , որով ինձ կ'իմացընէ թէ Բօշէլի մէջ գտնուող նաւայարգարիս կողմէն իրեն տրուած փոխանորդագրին զօրութեամբը Ախթի նաւը և իւր բեռը Պ . Փօլիֆէմ ալ Բրուսթիյաբ ասպետին ներկայացուցիչներուն ծախած է : Հետեւաբար նաւը և իւր բեռը ձերն են , պարոն ասպետ , և ասոնց համար ստացագիր մը պիտի տաք ինձ երբ մանկեք Գաղղիոյ կամ օտար երկրի մը նաւահանգիստներէն մկկը , ո՛րն որ յարմար պիտի դատէք ջրոյ տալ . յիշեալ ստացագիրը նաւայարգարիս պիտի յանձնեմ որպէս զի ես ալ թէ՛ նաւուան և թէ՛ բեռին համար ամեն պատասխանատու լինեմ : ազատ ըլլամ :

Գանիէլ նաւասպետն այս օրինակն բանաձեւը մկկ չնչով արտասանելէ ետեւ , երբ տեսաւ որ Բրուսթիյաբ արտաւ անտր կիցեր է , կարծեց թէ ասպետն իրեն դէմ քէն պահեր է , ուստի նոր շփոթութեամբ մը յարեց .

— Պարոն ասպետ , կ'երգնում որ երբ ձեզ կ'առաջարկել խմուծ կլլել և բոյ թքնել , չէի գիտեր որ զիմացինս նաւայարգարս և Ախթի տէրն էր . հայր Արիֆօն , որ զիս երկար տարիներէ ի վեր կը ձանչէ , թմու հաւատաւէ այս ըսածս և դուք ալ պիտի հաւատար : Ո՛չ , ո՛չ , պարոն ասպետ , չէի գիտեր որ այնպիսի անձ մ'է որուն ունեցած նաւն իւր բեռովը հանդերձ առ նուազն երկու հարիւր հազար սկուտ կ'արժէ . . . :

— Այս նաւն և իւր բեռն սյղչափ կ'արժեն , ըսաւ բաղդախնդիրը :

— Ամենէն վար գինն է այս , պարոն ասպետ . . . միահողոյն և անմիջապէս ծախուելու գինն է , սակայն եթէ չ'աճապարէք , յիսուն հազար սկուտ առելի կրնաք առնել :

— Հասկըցա՞ք հիմա , տղաս , ըսաւ հայր Արիֆօն : Գիտաբնակ-Բլուրի բարեկամներն իմանալով որ ծանրակշիռ պարպայից համար առանց վայրկեան մը կորսընցընելու Գաղղիա երթալու պարտաւորած եմ , իրենց կողմէն այս ընծայն ձեզ ընդունել տա-

լու պաշտօնն ինձ յանձնեցին : Ներեցէք ինձ , կամ մանաւանդ չորհարեցէք զիս որ իշխանին բարեբարութիւնն այս ժամուս միայն յայտնելով ձեզ , ձեր բնաւորութեան աղնութիւնն այսչափ լու կերպով փորձեցի :

— Ա՛հ , հայր իմ , ըսաւ Բրուսթիյաք դառնութեամբ և ծոցէն հանեց դքսուհւոյն տուած մէտայլեծնը զոր պարզ կաշիէ ժապաւէնով մը վեղը կախած էր , ասով ես իբր աղնուական վարձատրեցայ . . . : Ինչո՞ւ համար հիմա այս փառաւոր ողորմութիւնը տալով զիս թափառայած մարդու մը տեղ կը դնեն . . . :

Հետեւեալ օրը Լէւեքնը նաւահանգիստ մտաւ :

Բրուսթիյաք իւր նոր իրաւունքներն ի կիր արկանելով Գանիէլ նաւապետէն քսան և հինգ լուի փոխ առաւ իբր ապահովութիւն բեռէն մաս մը ցոյց տալով , և քսան ու չորս ժամէ առաջ ցամաք իջնելն արդիւնեց անոր :

Հայր Արիֆօն կղերանոցը դնաց բնակելու :

Բրուսթիյաք հեռեւեալ օրը կէսօրին անոր հետ տեսնուելու համար ժամադիր եղաւ :

Կէսօրին ասպետը չքնաց , բայց Աօշէլի նօտարներէն մէկուն ձեռքով այս սոմսակը յանձնեց անոր :

« Հայր իմ , ձեր ըրած ընծայն չեմ կրնար ընդունիլ : Օրինաւոր մուրհակ մը կը զրկեմ ձեզ , որով նաւուն և իւր բեռին վրայ ունեցած բոլոր իրաւունքներս ձեզի կ'անցնին : Եմենքն ալ բարեգործական նպատակներու պիտի գործածէք ձեր հասկըցած կերպովը : Այս սոմսակը ձեզ յանձնող նօտարը ձեակերպութեանց մասին ձեզի հետ պիտի խորհրդակցի , ամեն կարողութիւն տուած եմ իրեն :

« Մոռոյք բարեաւ , բարի հայր , երբեմն յիշեցէք Կասթօնը , և ձեր աղօթից մէջ մի մոռնաք զայն :

« ԲՐՈՒՍԹԻՅԱՔ ԱՍՊԵՏ . »

Հայր Արիֆօն այլ ևս բարդախնդրին վրայօք խօսք մը չընեց :

Վ Ե Ր Գ Լ Ե Բ Ե Ն

Գ Լ ՈՒ Ն ԱՌ Ա Զ Ի Ն

Ա Բ Ի Ե Յ Ե Ր Ե Ն Ը

Ապօլիլ քաղաքին մօտ և զրեթէ Սուրբ գետաբերանը գտնուող Յէն-Բէնթէնի արքայաբանը Բիքարտի դաւառին ամենէն գեղեցիկ կալուածներուն տէր եղած էր . իւր բազմաթիւ վարձակաւններն ամեն շաքար իրենց տրոց մկ մասը բերքով կը վճարէին :

Առատութիւնը ներկայացընել ուղղ պատկերհասն մը կրնար ընտրել այն վայրիճանը յարում այս ահագին տաւանորդը վանք կը բերուէր :

1708 տարուոյն նոյեմբերի վերջը , մեր պատմած դէպքերէն իբր տասնութը տարի ետքը , վարձակաւնները աշնան մէկոտ և ցուրտ առաւօտ մը արքայաբանին գրօի կողմը և դռնապանին խուշին մօտ գտնուող փոքրիկ բակի մը մէջ դռնաբուներ էին :

Գուրսը կը տեսնուէին ձիեր , էշեր , սայլեր , որոնք վանքին նպարտորման յատկացեալ մեծաբանակ արմախքը փոխադրելու ծառայած էին :

Չանդակ մը զարկաւ , խիղջն բոլոր զլուղայիները քանի մը աստիճաններէ բաղկացեալ փոքրիկ սանդուխի մը ստորտը վաղեցին , այս սանդուխը կայանք մը կը հանէր , որ բակին խորը շինուած էր : Սանդուխին վերի կողմը կամար մը կար ուրիշ վանքին ներսի կողմէն դուրս կ'ընուէր :

Մատակարար հայրը երկու վանական սղախաւորներով այս կամարին ներքեւ երեցաւ :

Այս եկեղեցականն անցքին ծայրը կեցած էր . իւր գէր , սղնձադոյն և վառվառն գէմքը կեցած տեղին մթութեան մէջ աւելի ևս աչքի կը զարնէր . ցուրտէն վախնալուն կնդուղը գլուխն անցուցած էր :

Սպասաւոր եղբայրներէն մին որ մէջքն ունէր գրչաման մը , ախանջին ետեը զրիչ մը և թեկն տակ խոշոր տօմար մը , սանդուխին աստիճաններէն մէկուն վրայ նստաւ վարձակալներուն բերած տուրքերն արձանագրելու համար :

Միւս սպասաւորն արմտիքը մէկ կողմէն առնելով կայանքին մէջ կը շարէր , մինչդեռ մատակարար հայրը սանդուխին գլուխէն հանդիսաւոր կերպով կը նախագահէր անոնց ընդունելութեան , ձեռքերը իւր լայն թեզանիքներուն մէջը ծածկուած :

Կարելի չէ թուել և նկարագրել սանդուխին ստորոտը գրուած պաշարներուն ահագին կոյտը :

Ասդին ծովու , լճի կամ գետի խոշոր ձուկեր տակալին կը խոյտային բակին քարերուն վրայ . անդին դիրցած կուրտ արագաղններ , ահագին սաղեր և հնդկահաններ զոյգ զոյգ թափերէն կապուած գետնին վրայ կը թապլտկէին թարմ կարագներու , ձուով , բանջարեղէններով , ձմրան պտուղներով լեցուն խոշոր կողմերու լեռնանման կոյտերուն մէջ տեղը : Աւելի հեռուն կեցած էին երկու կաշկանդեալ ոչխարներ որոնք իրենց մին սքանչելի համեղութիւն տուող աղային խոտերով պարարտացեալ էին . ձկնորսք օտարէներով լեցուն փոքրիկ տակաւներ կը գլորէին . աւելի հեռուն կային ամեն տեսակ խեցեղէններ , խեչեփարներ , խեցեղեպներ որոնք անդադար կը շարժէին այն ուռիէ կողմները որոնց մէջ փակուած էին :

Արքայտարանին պահապաններէն մէկը դեռ առջի օրը զարնուած մէկ տարեկան պարարտ այծեամի մը առջև ծունկի վրայ եկած դայն մէկ կողմէն վեր վերցրնելու փորձ կ'ընէր որպէս զի անօր ծանրութիւնը մատակարար հօր ցոյց տայ . այծեամին մօտ գետինը փռուած էին նապաստակներ , կաքաւու ձագեր , մինչդեռ սրիշ պահապան մը սակառններէն դուրս հանելու կ'ըրայէր տե-

տակ տեսակ որսի կենդանիներ , ինչպէս վայրի բադեր , կտցարներ , քարադրներ և այլն :

Վերջապէս բակին մէկ ուրիշ անկիւնը կը տեսնուէին տաւրի պարզ , բայց ոչ նուազ օդտակար ընծայներ , օրինակի համար , տոպրակներով ամենէն ընտիր տեսակէ ցորեն , ընդեղէններ , խոզի ապուխաններ և այլն :

Պահ մը տոյն որովայնապարար ճոխութիւններն այն աստիճան գիղուեցան , որ մինչև մատակարար հօր կեցած սանդուխին հասարակ բարձրացան :

Եթէ մէկը այս չափազանց գէր , փայլուն դէմքով , ընդարձակ որովայնով այսպէս պաշարէ պատուանդանի մը վրայ կեցող կրօնաւորը տեսնէր , որ պորտաբոյծ ակնարկ մը ձգած էր այս կոյտերուն վրայ , պիտի ըսէր թէ նոյն ինքն փափկակերութեան ողին է :

Իւրաքանչիւր վարձակալ իւր տրոյց տեսակին կամ ընտրութեանը համեմատ մատակարար հօրմէն պարսաւ մը կամ գովեստ մը լսելէ ետև ծնրապրութիւն մ'ընելով ետ կը քաշուէր :

Վերապատուելին մինչև անգամ կը զիջանէր երբեմն իւր երկայն թեզանիքին մէջէն կարմիր և գէր ձեռքը դուրս հանել ամենէն աւելի աչքը մտնողներուն համարել տալու համար :

Սպասաւոր եղբոր ըրած կոչումն աւարտելու մօտ էր . . . :

Մատակարար հօր պատուական թան մը բերին որ գինիով և ձուով շինուած էր . այս թանը լցուած էր արծաթէ տաշտակի մը մէջ որ նոյնպէս արծաթէ սկաւառակի մը վրայ գրուած էր : Վերապատուելին խմեց այս արգանակը , որ սուսօտեան պաղին և մէգին գէմ խիստ զօրաւոր կերպով կը պահպանէր զմարդ : Այս միջոցին սպասաւոր եղբայրն ըսաւ թէ ի զուր երկու անգամ կանչեց Պլավիլի ազարակին վարձակալ Յակոբը , որ կը պարտէր վեց հատ պարարտ վառեակ , երեք տոպրակ ցորեն և հարիւր սկիտ փոխարէն իւր վարձակալութեան պայմանաժամին լրանալուն :

— Լաւ ուրեմն , ըսաւ մատակարար հայրը , ո՞ր է Յակոբը : Սովորաբար ճշդութիւն պահող մէկն է այն : Տասն և հինգ տա-

բիւ է ի վեր է որ Պլավիլի աղարակը բռնած է նա, սակայն բնապատահած չէ որ պայմանաժամին իւր պարտքը չկատարէ :

Գիւղացիք տակաւին Յակոբը կը կանչէին :

Յակոբ երևան չելաւ :

Արձակախներուն բազմութեանը մէջէն երկու տղայք դուրս ելան, մին մանչ մը և մուսն տղջիկ մը տաններէք, տաննչորս տարեկան, երկուքն ալ շիթթութենէ գողցողալով յառաջ եկան մինչև սանդուխին ստորոտը, որ սարսափելի շտեման մը դարձած էր, իրարու ձեռքէ բռնած և արտասուածոր աչքերնին ալ խոնարհեցուցած էին :

Փոքրիկ աղջիկը վրան սև ու լայն դիմերով սպիտակ բուրդէ կարճ շրջազգեստ մը հագած և վրայէն սև ու թանձր կտակէ գոգնոց մը կապած էր, որուն ծայրերը կը գլորէր. տղան իւր թուխ բուրդէ գլխարկը ձեռացր մէջ կը սեղմէր :

Սանդուխին ստորոտը կեցան :

— Ատնք վարձակալ Յակոբին տղաքն են, ըսաւ ձայն մը :

— Լաւ, ո՛ւր է նայիմ վեց փառեակները, երեք տոպրակ ցորենը և հարիւր սկոտր, զոր ձեր հայրը կը պարտի, ըսաւ վերապատուելին խիստ ձայնով մը :

Խեղճ աղաքն իրարու կցուելով արմուկովնին մեկգմէկ մղեցին որով իրար իրարուսել կ'ուզէին պատասխանելու համար :

Վերջապէս մանչն աւելի համարձակ ըլլալով, իւր աղնիւ և գեղեցիկ դէմքը բարձրացուց, և տխրութեամբ կրծնաորին ըսաւ .

— Հայրերնիս երկու ամիսէ ի վեր շատ հիւանդ է, մայրերնիս կը խնամէ զինքը . . . տունը ստանկ չկայ . . . պարտաւորեցանք տուրքին ցորենը ծախել աղարակին մէջ հօրս տեղ աշխատող գործաւորն ու կիներ սնուցանելու համար . ասկէ զատ հարկ եղաւ վառեակներն ալ ծախել բժշկին վարձքը վճարելու համար :

— Պարտքերնին չկատարող վարձակախներուն սովորական խօսքն է այս, ըսաւ կրծնաորը խտտութեամբ : Յակոբը քարի և ճշդութիւնը սիրող մարդ մ'էր, այն ալ տրուեցաւ . սակայն թէ՛ ար-

բայարանի և թէ իւր օդտին համար չլիտի թողունք որ յոսի ձամբուն մէջ մուրի :

Յետոյ խօսքը տղոց ուղղելով անաչառ դէմքով մը յարեց .

— Գանձապետ հայրը պէտք եղածը կը խօսի ձեզ . . . սպասեց'ք հոն :

Տղաքը կայանքին մէկ մտթ անկիւնը քաշուեցան :

Աղջիկը քարի մը վրայ նստաւ լալով, եղբայրն ալ պատին կրթնած անոր քով ոտքի վրայ կեցաւ և տխրութեամբ քրոջը երեսը կը նայէր :

Անտեղանք դորձերնին աւարտելով՝ արբայարանը մտան, զիւղացիք իրենց ձիերուն և սայլերուն քով գացին, իսկ երկու տղաքը բակին մէջ առանձին մնացին . . . և անհանդուրձութեամբ կ'սպասէին թէ գանձապետն ի՞նչ պիտի ըսէր իրենց հօրը համար :

Բակին փոքրիկ դրանը մէջ նոր անձ մ'երեցաւ :

Այս անձը սպիտակ և լայն պիսերով, երկայն և թանձր մօբուքով բարձրահասակ ծերունի մ'էր . մէկ սրունքը փայտէ ըլլալով շատ նեղութեամբ կը քալէր, նարնջազոյն օձիքով կանաչ թիկնոց մը հագած էր . կրնակը կապած էր կաշիէ պարկ մը որ իւր աղքատիկ իրերը կը պարունակէր, ձեռքը մեծ դաւազան մը ունէր, և զլուխը գրած էր սև բուրդէ մաշած խոշոր գլխարկ մը, որ մինչև յօնքերն իջած ըլլալով վայրենական կերպարանք մը տուած էին իրեն . պիսերուն չափ սպիտակ մազերը կաշիէ կապիչով մը կապուած ըլլալով երկայն պոչ մը կը ձեւադնէին, որ մինչև ուսերուն մէջ անզր կ'իջնէր . դէմքն արեակեղ էր, աչքերը վառվառն, և տարիքէն իւր բարձր հասակը ծոած էր :

Այս ծերը բակը մտաւ, բայց առաջ տղաքը չսեւսաւ . ուր ըլլալը հասկընալ ուղղը մարդու մը պէս չբոս կողմը կը դիտէր . երկու փոքրիկ զիւղացիները տեսնելով շիտակ անոնց քովը գնաց :

Աղջիկն այս այլանդակ դէմքէն, կամ մանաւանդ ցից մազերէ ահազին գլխարկէն սոսկալով ճիշ մ'արձակեց, եղբայրն անոր ձեռքէն բռնեց որ չլսիմայ, և թէպէտ խեղճ աղջիկը ձեռ-

քը քաշել ուզեց, սակայն մանչը մտիկ չընելով, աներկիւղ մօտեցաւ ծերունւոյն :

Այս վերջինը կանոց առած էր, զարմանալով տղոց դեղեցկութեան և մանաւանդ դեռահաս աղջկան դիմաց գծերուն փափկութեան և կատարելութեան վրայ, որուն խարտեաշ մազերը թխագոյն պարզ կտաւէ գտակի մը ներքե կիսով չափ ծածկուած էին. աղջիկն ալ իւր եղբորը պէս փայտէ կօշիկներ և բուրդէ գուլպաներ հագած էր :

— Ինչ կը վախնասք, ճերտէ՛ս, չէք ուզեր ինձ ըսել թէ Սէն—բէնթէնի աբբայարանը որ կողմն է, ըսաւ ծեր զինուորը :

Թէև ծերունւոյն մաքէն բնաւ չէր անցներ սղաքը վախցընել, սակայն իւր խօսուածքին կերպէն դեռահաս աղջիկն աւելի սոսկաց և կամաց մը եղբորն ըսաւ .

— Պատասխան տուր, Յակոբ, պատասխան տուր, չար մարդ մը կ'երևի :

— Մի վախնար, Անժէլ, մի վախնար, ըսաւ մանչը, յետոյ զինուորին ըսաւ .

— Այո՛, պարոն, Սէն—բէնթէնի աբբայարանը հոս է . եթէ ներս մտնել կ'ուզէք, դռնապան եղբոր խուցը միւս կողմն է, այս բակէն դուրս :

Տղան որչափ աւելի ալ խօսէր, զինուորն ուշադրութիւն չպիտի ընէր :

Երբ դեռահաս աղջիկը իւր եղբայրը Յակոբ կոչեր էր, ծերունին զարմացման շարժում մ'ըրած էր . բայց երբ Յակոբ իւր քոյրը Անժէլ կոչեց, ծերունին սարսուեցաւ, ձեռքէն դաւազանն կնակով, ստիպուեցաւ կրնակը պատին տալ :

— Չեր անունը Յակոբ և Անժէլ է, տղաքս, ըսաւ դողդոջուն ձայնով մը :

— Այո՛, պարոն, պատասխանեց պատանակը, որ ալ չէր վախնար, սակայն սոյն հարցման վրայ կը զարմանար :

— Ծնողքնիդ :

— Ծնողքնիս աբբայարանին վարձակալներէն են, պարոն :

— Ես ալ խեղդ եմ ինչ եմ, ըսաւ զինուորն ինքնիրեն, զոր ընթերցողն անտուտ ճանչցած է, բայց եկու սես որ . . . մէկուն անունը Յակոբ . . . միւսինը Անժէլ է . . . : Գնա՛ բանդ, Փօլիֆէ՛մ, ցնդեր ես դու . ինչու որ փայտէ կօշիկներ հագած երկու տղոց պատահելով կը կարծես . . . և ուսերը բարձրացուց : Բայց, Փօլիֆէ՛մ, եթէ այսպիսի գիտեր ընելու համար է որ Ռուսիայէն եկար, շատ լաւ կ'ընէիր . . . եթէ . . .

Քրուսթիյաք այսպէս ինքնիրեն խօսած ատեն սաստիկ հետաքրքրութեամբ աղջիկը դիտած էր, աւելի ևս աչքին կը զարնէր այնպիսի նմանութիւն մը որ անիմանալի կը թուէր իրեն և իւր հրացայտ աչքերն Անժէլի վրայէն չէր բաժներ :

Դեռահաս աղջիկը նորէն վախաւով, գլուխը իւր եղբորն ուսին ետեը պահեց և ըսաւ անոր .

— Տէր Աստուած, շատ կը վախցընէ զիս այս մարդը :

— Սակայն և այնպէս այս գէմքը, կ'ընէր Քրուսթիյաք որուն սիրտը միանշարժայն տարակոյտէ, անձկութենէ, երկիւղէ և յոյսէ կը արտփէր . այս չքնաղ դէմքը կը յիշեցընէ ինձ . . . բայց ո՛չ . . . անկարելի է . . . անկարելի է . . . : Ինչ հաւանականութիւն կրնայ ըլլալ . արդարև ցնդեր եմ . . . վարձակալներ . . . : Գնա՛ բանդ, Աղօֆի պաշարման ատեն գլխուս կերած սուրի հարուածն ուղեղս խանգարեց : Ասկէ գատ, խիստ տարօրինակ դիպուածներ կրնան ըլլալ (և ստուգիւ ինձի չափ ո՛վ իրաւունք կրնայ ունենալ տարօրինակ դիպուածոց հաւատալու, արդարև ապերախտութիւն մ'ըրած կ'ըլլամ եթէ չհաւատամ) : Այո՛, դիպուածը կրնայ այնպէս բերել որ գիւղացիք իրենց որդւոց այսինչ անունը դնելու տեղ այնինչը դնեն, բայց այս նմանութիւնները դիպուածի գործ չեն կրնար ըլլալ . . . : Բայց կարելի չէ . . . : Մնաց որ կրնամ հարցընել իրենց . շիտակը խօսելով, առանց ինքզինքիս վրայ խնդալու չպիտի կրնամ հարցընել . . . տխմարութիւն է ըրածս . . . : Տղաքս, ըսէք նախիմ, ձեր հօր անունն ի՞նչ է :

— Յակոբ է, պարոն :

- Այո՛ . . . Յակոբ . . . բայց . . . Յակոբ ի՛նչ :
- Յակոբ , պարոն :
- Յակոբ , ամենն ա՛յսչափ :
- Այո՛ , պարոն , պատասխանեց տղան որ զարմայմամբ Բրուսփիյաքի երեսը կը նայեր :
- Այս աեւլի սարօրինակ կ'երևի , ըսաւ Բրուսփիյաք մտա՛ծելով :
- Երկար ատեն կա՛յ որ Գաղղիա եկած է :
- Միշտ Գաղղիոյ մէջ է , պարոն :
- Արդարեւ խեհագութիւն էր ըրածս : Արդեօք ձեր հայրը զինուո՛ր էր , աղա՛քս :
- Անձէլ և Յակոբ զարմայմամբ իրարու երես նայեցան :
- Պատանեակը պատասխանեց .
- Ո՛չ , պարոն , միշտ վարձակալ եղած է :
- Այս միջոցիս արբայարանի հաղորդող դուռը բացուեցաւ , և սպասաւոր եղբայրներէն մին սանդուխին զլուխը երեցաւ :
- Այս եղբայրը գձուձ , մարմնասէր և կոպիտ վանականի մը տիպարն էր : Տղոց նշան մ'ըրաւ , որոնք գողալով մտնեցան :
- Հոս եկու , աղջիկ , ըսաւ :
- Խեղճ աղջիկը սոսկմամբ իւր եղբօրը երեսը նայեցաւ , որմէ չէր համարձակեր բաժնուիլ , և գող ի սիրտ սանդուխէն վեր ելաւ :
- Վանականը ամարդութեամբ աղջկան թուշը իւր խոշոր ձեռքին մէջ առնելով զլուխը վեր բարձրացուց , որովհետեւ խեղճը չէր համարձակեր զլուխը բարձր բռնելու , և ըսաւ .
- Գեղեցիկ աղջիկ , հօրդ ըսէ՛ որ եթէ սյսօրուրնէ մինչև ութ օր թէ՛ որոշեալ բերբը և թէ՛ հարիւր սկուտը չհատուցանէ , վճարելու աեւլի կարող ուրիշ վարձակալ մը կայ որ այն ազարակը բռնել կ'ուզէ և պիտի արտի իրեն : Հայրդ գէշմարդ մը չըլլալուն համար է՛ որ ութ օր պոյմանածամ կը արտի իրեն . . . ապա թէ ոչ այսօր ազարակէն դուրս պիտի հանուէր :
- Տէ՛ր Աստուած , տէ՛ր Աստուած , ըսին աղաբը լալով և

- ձեռքերնին իրար կցելով , ստակ չունինք : Հայրերնիս հիւանդ է , ինչ պիտի ընենք արդեօք :
- Ի՛նչ կ'ուզէք այն ըրէք , ըսաւ վանականը , մեծաւորին հրամանն այս է , և աղջկան նշան ըրաւ որ վար իջնէ :
- Երկու աղաբը իրարու բաղկաց մէջ նետուեցան լալով և ըսելով . — Այս բանէն հայրերնիս պիտի մեռնի . . . Տէ՛ր Աստուած , չպիտի զիմանայ . . . պիտի մեռնի :
- Բրուսփիյաք սիւնի մը ետևը կէս մը պահուրտած ըլլալով , այս տեսարանէն սիրտը շարժած և միանդամայն զայրացած էր :
- Արծնազրը դուռը գոցելու վրայ էր , Կասթօն ըսաւ անոր .
- Վերապատուելիս , ձեզի խօսք մ'ունիմ . . . : Սէն-Քէնթէնի արբայարանն ա՛յս է :
- Այո՛ , ինչ կայ , ըսաւ վանականը վայրագութեամբ :
- Մինչև վաղը պառկելու տեղ մը կը շնորհէք ինձ , այնպէս չէ՛ :
- Ի՛մ . . . մուրացկաններէն զլուխ առած չունինք , ըսաւ վանականը . . . : Գնա՛ գոնապանին դրան զանդակը հնչեցուր , քեզի քիչ մը յարգ կու տան վրան պառկելու և քիչ մ'ալ ապուր : Յետոյ յարեց . — Այս դատարկագորաններն ալ վանքերուն պատահան են :
- Բազմախնդիրը կասկարմիր կտրեցաւ , զլուխը բարձրացուց , բռնցի հարուածով մը իւր բրդէ ահագին զլխարկը մինչև աչքերն իջեցուց , դաւազանովը գեանին զարկաւ , և սպառնալից ձայնով մը գոչեց .
- Վերապատուելի , գէթ ձեր զիմացինը քիչ մը լաւ ճանչցէք :
- Այս ձեր պապուկն ս'իլ կ'ըլլայ , ըսաւ վանականը զայրացած :
- Վերապատուելի , կրնակա տուրակ մ'ունենալէս չհետևիր թէ՛ ձեռէ ողորմութիւն խնդրելու եկած եմ , զսչեց Բրուսփիյաք :
- Ի՛նչ կ'ուզես , ուրեմն :
- Ընթրիք մը և պատուարան մը , վասն զի ձեր հարուստ

վանքը կրնայ հայ և պատսպարան տալ աղքատ ճամբորդներուն ։
Գթութիւնն այսպէս կը պահանջէ ձեր արբայէն ։ Ասկէ զտու երբ
քրիստոնէայնները կ'աստիճականէք . . . չէ թէ բան մը տուած ,
այլ ետ տուած կ'ըլլաք ։ Տասանորդներն աղէկ պարարտեցուցին
ձեր արբայարանը ։

— Աը լուս , հե՛րետիկոս , լի՛րբ ։

— Զիս լի՛րբ կ'անուանէք ։ Գիտցէ՛ք ուրեմն , տէ՛ր Նեղսիրտ ,
որ պայուսակիս մէջ դեռ սկուտ մ'ալ ունիմ , և կրնամ պէտք
չունենալ ձեր յարգին և ապուրին , տէ՛ր Անառակ ։

— Ի՞նչ ըսել կ'ուզես տէ՛ր Անառակ ըսելով , սա՛տանորդի ,
ըստ վանականը յառաջ գալով ։ Հիմա կու գամ մօտէն քեզի
գտտ մը տալու ։

— Եկո՛ւ , եկո՛ւ , տէ՛ր Արբշիտ , եկո՛ւ որ սա չումէ գաւա-
ղանս քիչ մը շօշափել տամ քեզ , տէ՛ր Մեծ-Փոք , տկարու-
թեամբս հանդերձ , տէ՛ր Վայրադ ։

Ուժեղ վանականը վայրկեան մը մտածեց որ երթայ Ասաբօնը
պատժէ , բայց ուսերը թօթուեց և ֆրուսթիլաքի ըստ .

— Եթէ երբէք յանդգնիս գոնապան եղբօր ներկայանալու ,
դիպցած ըլլատ որ մորթդ հոն կը ձկես ։ Ահա այսուհետև այս
պիտի ըլլայ Սէն-Քէնթլէնի արբայարանին մէջ քու գանձիք հիւր-
ընկալութիւնդ ։

Յետոյ տղայ գառնալով ,

— Իսկ դուք , ըսէ՛ք ձեր հօրը , մինչև ութ օր կամ պիտի
վճարէ կամ ազարակէն պիտի ելնէ , վասն զի , դարձեալ կ'ը-
սեմ , ուրիշ վարձակալ մը կայ որ զայն կ'ուզէ , և վճարելու
կարող մարդ է ։

Այս խօսքերն ըսելէ ետև վանականը սաստկութեամբ դուռը
գոցեց ։

— Այս բանը չեմ կրնար ըսել այս տղոյ , ըստ Ասաբօնն
ինքնիրեն խօսելով , դէշ օրինակ մը կ'ըլլայ այս փոքրիկ տղոյ .
ժամանակաւ Մօրավիոյ սպանբազմին մէջ վանք մը խորովելու գոր-
ծին ետ ալ մամուկցեցայ , այս բանը ետքը քիչ մը խիղճս ան-

հանդիստ կ'ընէր , բայց ա՛լ հօդս չէ . . . ։ Ե.ն խորովածնե-
րը ս'ըջափ կը նմանէին այս պարարակ եզին . . . ։ Շուտի՛կը .
. . . այս խեղճ տղոյ հետ այսչափ խստութեամբ վարուի՛ : Բայց
ինչո՞ւ համար այսչափ համակրութիւնս կը դրուեն ասոնք . . . ։
Եթէ քիչ մը պակաս մտածէի , պիտի կրնայի յոյսեր տածել ։
Այսու հանդերձ ինչո՞ւ տարակոյսներս չփարատեմ ։ Ի՞նչ պիտի
կորսնցընեմ . . . ։ Այս միջոց մ'ունիմ ։ — Ինձ նայեցէ՛ք , տղա՛քս ,
ըստ սղտիկներուն , հայրերնիդ հիւանդ և աղքատ է ։ Հարկաւ
կ'ուզէ որ ձեռքը քիչ մը ստակ անցնի . թէպէտ կրնաիս մու-
րացկանի տոսլրակ մը կայ , բայց ծոցս քսակ ալ ունիմ . . . ։
Հիմա ճաշելու և պառկելու համար փոխանակ պանդոկը երթա-
լու . . . (թող կայծակը զիս զարնէ եթէ անգամ մ'ալ ոտք
կոխեմ այս արբայարանը) , ձեր տունը կուգամ ։ Ես մարդու նե-
ղութիւն չեմ տար , զինուոր եղած եմ , բարակին չեմ նայիր .
կրակին քով աթոռակ մը , կտոր մը խոզի խղ , դաւամ մը դի-
նի , և դիշերուան համար քիչ մը թարմ յարդէ անկողին մը ,
ասկէ աւելի բան պէտք չէ ինձ . . . ասով քիչէն շատ քսան
չորս սաւնոց մը կը մանէ ձեր հօր քսակը . . . ։ Ի՞նչ կ'ըսէք
ասոր ։

— Հայրս պանդոկապետ չէ , պարոն , պատասխանեց մանչը ։

— Այդ ալ խօսք է , տղաս , եթէ խեղճ մարդը քիչ մը
խեղք ունի , եթէ մայրերնիդ ալ անարար է , ինչպէս որ այնպէս
ըլլալ պէտք է , իմ դալուս չպիտի նեղանան , այս ստակով դոնէ
ձեր մէկ օրուան պարէնը կ'ելնէ . . . ։ Օ՛ն ուրեմն , զիս ա-
զարակ տարէ՛ք , մի՛ վախնաք որ հայրերնիդ ձեզ յանդիմանէ ձեր
զինուոր մը տանելուդ համար ։

Ասպետին վրայ երեցած կոշտութեան և խր այլանդակ դէմ-
քին հակառակ , Յակոբ և Անժէլ քիչ մը սիրտ առին , և իրա-
րու ձեռքէ բռնելով խեղ զինուորին առջևէն սկսան քալել , որ
խորին մտածութեան մէջ ինկած կը հետևէր անոնց ։

Ժամ մը քալելէ ետև խնձորենեաց երկայն ծառուղիի մը բե-
րանը հասան , որ ողջակի աղարակ կը տանէր ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

Մ Ի Ա Յ Ո Ւ Մ

Յակոբ և Անժէլ աղարակը մտան հասկընալու համար թէ հայրերնին կ'ուզէր հիւրընկալել ծեր զինուորը :

Բաղդախնդիբը տղոց վերադարձին սպասած ատեն աղարակին դրսի կողմը կը դնէր :

Ամեն բան մեծ խնամքով և մաքուր պահուած կ'երևէր . աղարակը բանեցընելու համար հարկ եղած շէնքերուն քով շինուած էր վարձակալին տունը . տանիքը խողանէ էր , որուն վրայի կանաչ մամուռը թաւիշի նման կը փայլէր . երկու բարձրաբերձ ընկուզենիներ տանը դրան և տանիքին վրայ շուք կը ձգէին . աղիւսէ ծխնելոյզէն թեթև մուխ մը դուրս կ'երնէր . հետուն Ովկիանոսին մուշիւնը կը լսուէր , վասն զի աղարակը գրեթէ եղբւրաց ապառաժներուն վրայ կը բարձրանար :

Անձրեր կ'սկսէր տեղալ , հովը կը մրմնջէր . փոքրիկ հովիւ մը դաշտերէն երկու գեղեցիկ թխաֆոյն կովեր կը բերէր որոնք իրենց տաք գոմը կ'երթային իրենց դանակիկներուն մեղամաղձոտ ձայնը հնչեցընելով :

Այս խաղաղիկ տեսարանէն բաղդախնդիբին սիրտը թունդ ելաւ . այս աղարակին բնակչաց վիճակին կը ցանկար , թէև գիտէր որ վայրկենական նեղութեան մէջ էին :

Բաղդախնդիբը տեսաւ որ գունատ գէմքով , փոքրիկ հասակով , հասուն տարիքով կին մը կու գար գէտ իրեն . այս կինը Քիբարտիի գեղջիւհեաց պէս հաղուած էր , բայց չափազանց մաքրութիւն մը կ'երևէր վրան . մանչը հեան էր , իսկ աղջիկը դրանք շէմին վրայ կեցած էր :

— Շատ կը ցաւինք , պարոն . . .

Հազիւ թէ կինն այս խօսքերն ըսած էր , Բրուսթիյաք խունկ կտրեցաւ , թևերն անոր երկնցուց առանց բառ մ'արտասանելու , դաւաղանը ձգեց , հաւասարակշռութիւնը կորսնցուց , և կրնակին վրայ ինկաւ չորցած տերևներու զէզի մը վրայ որ բարեբաղդաքար իւր ետևը կը դանուէր :

Բաղդախնդիբը մարած էր :

Մծումութ գքսուհին (ինքն էր) ի սկզբան շճանչելով ասպետը , կարծեց թէ անոր տկարութիւնը յոգնութենէ կամ անօթութենէ յառաջ եկած է , և իւր երկու որդոց աջակցութեամբը փութաց անձանօթին օղնէլ :

Յակոբ որ այն տարիքին մէջ ուժեղ տղայ մ'էր , ծերունին ընկուզենիներէն մէկուն կոճղին կրթնցուց , մինչդեռ մայրն ուքոյրը կազուրիչ ըմպելի մը բերելու պային :

Յակոբ երբ ասպետին համադրեստը բացաւ շնչառութիւնը զիւրացընելու համար , կաշիէ ժապաւէնով ծանրադին մէտայլեօնը տեսաւ զոր բաղդախնդիբը կուրծքին վրայ կը կրէր :

— Մայրիկ , ան'ս , ինչ գեղեցիկ մէտայլեօն է , ըսաւ պատանեակը :

Գքսուհին մօտենալով ըստ կարգի աղչեցաւ մնաց երբ ճանչցաւ այն մէտայլեօնը զոր ժամանակաւ Բրուսթիյաքի տուած էր : Յետոյ աւելի մեծ ուշադրութեամբ դիտեց ասպետը և զօչեց .

— Նոյն ինքն է , մեղ ազատող վեհանձն մարդն է :

Ասպետը ինզլինք գտաւ :

Երբ աչքերը բացաւ , արտասուօք լցուած էին :

Կարելի չէ նկարագրել բարեսիրտ Բրուսթիյաքին երջանկութիւնն և ուրախութիւնը :

— Գո՛ւք էք , տիկին , այսպիսի հանդերձներով , գո՛ւք , զոր այնքան տարններէ ետև վերատին կը սեսնեմ : Երբ քիչ մը առաջ լեցի որ այս տղայն իրար Յակոբ և Անժէլ կ'անուանէին , սիրտս այսպիսի ուժղին բացախեց որ . . . : Բայց չէի կրնար հաւատալ . . . յուսալ . . . : Իշխանն մ'ւր է :

Մօմմութ գբուհին մատը շրթանցը վրայ դրաւ, դուրսը երեցուց տխրադին և ըսաւ .

— Հիմա կը տեսնէք զինքը: Ա՛՛ա՛ղ, ինչո՞ւ այսպէս ձեզ տեսնելու ուրախութիւննիս Յակոբին հիւանդութեանը պատճառաւ արտմութեան հետ խառնուէր: Եթէ հիւանդ չըլլար, այս օրս շատ զեղեցիկ պիտի ըլլար մեզի համար:

— Գեո. կը զարմանամ, տիկին, ձեզ այս հաղուսաներով տեսնելուս, ինչ անտանելի վիճակ է այդ:

— Ատղաչեմ, լոկեցէ՛ք, տղաքս կը լսէն . . . վայրկեան մը սպասեցէ՛ք հոս, երթամ ամուսինս ձեզ ընդունելու պատրաստեմ:

Քանի մը վայրկեանէ ետեւ բաղլախնդիրը Մօմմութի սենեակը մտաւ. այս վերջինը բրդէ կանաչ կտաւէ հօլմանի ունեցող անկողնոյ մը մէջ պառկած էր:

Թէև իշխանը քաջած նեղութիւններէն նիհարցած և տարիքն ալ այն ատեն յիսունն անցած էր, սակայն իւր դէմքին վրայ մի և նոյն աղնութիւնը կը փայլէր:

Մօմմութ համակրանօք ձեռքերը Գրուսթիյաքի երկնցուց, և իւր բարձին մօտ թիկնաթուռ մը ցոյց տալով ըսաւ .

— Նստէ՛ք, վաղեմի բարեկամս: Ինչ հրաշալի զիպուածի մը կ'պարտինք այս երջանիկ պատահումը: Չեմ' կրնար հաւատալաչքերուս . . . : Աւերջապէս, ասպետ, տասնութ տարուան բաժանումէ մը ետեւ տհաւասիկ նորէն միացանք: Ո՛հ, շատ անգամ Անժէլ և ես ձեր վրայ կը խօսէինք, ձեր շնորհալի անձնութեան վրայ . . . : Մեր վիշտն այն էր, որ մեր զաւակայ չէինք կրնար ըսել թէ ինչերախտագիտութիւն կը պարտինք ձեզ . . . և իրենք ևս կը պարտին:

— Հիմա մէկդի թողունք այդ, տէ՛ր իմ, ստիպողականին նաշինք, ըսաւ Ասաբօնը, իւրաքանչիւր ըստ կարգի:

Այս ըսելով զրպանէն դանակը հանեց, թիկնոցին կոճակները քակեց, և մէջի աստաղը ձեղքեց:

— Ինչ ընէլ կ'ուզէք, հարցուց գուքսը:

Ասպետը իւր դաշտնի զրպանէն կաշիէ քսակ մը հանեց և շուքսին ըսաւ .

— Մէջը երկու հարիւր հատ կրկին լուի կայ, տէր իմ, այնչափ մ'ալ միտ աստաղին մէջ պահած եմ: Այս ստակն իմ խնայողութեանցս պտուղը և սրունքիս դինն է, զոր անցեալ տարի Մոհիլոփի ճակատամարտին մէջ կորսնցուցի, Պէրէզինայէն անցնելէ ետեւ. վաճառ զի շիտակը պէտք է խօսինք, Սեճն Պետրոս, որ իրաւ այս անուան արժանի է, առատաձեւութեամբ կը վարձատրէ իւր բնակիւն մէջ ծառայող օտար կամաւոր ղինուորները, մանաւանդ երբ իրենց անդամներէն մին նուիրեն անոր:

— Բայց, բարեկամս, չեմ' հասկընար, ինչ ըսել կ'ուզէք, ըսաւ Մօմմութ կամաց մը ետ մղելով քսակը զոր բաղլախնդիրը կ'երկնցընէր իրեն:

— Հիմա կը հասկընաք, տէ՛ր իմ. սուրբի ստակէն հարիւր սիւստ պարքք ունիք, եթէ մինչև ութ օր չվճարէք, այս աղաւակէն պիտի հանեն ձեզ: Այս սպառնալիքը, քիչ մ'առաջ, իմ առջևս, վանքին դրանը մէջ ձեր զաւակայ ընողը վանականի հանդերձով կերուխումէ եղ զարձած անասուն մ'է:

— Ա՛հ, Յակոբ, շատ հաւանական է այս, ըսաւ Անժէլ տխրութեամբ իւր ամուսնոյն:

— Ար վախնամ այդ բանէն, ըսաւ Մօմմութ. բայց, բարեկամս, ատոր համար կրնամ' ընդունիլ:

— Բայց, տէ՛ր իմ, կարծեմ ասկէ տասնութ տարիի մը չափ առաջ այնպիսի զեղեցիկ պարզեւ մ'ըրիք ինձ, որ այսօր ես սլ կրնամ' իմ քսակս ձեզի հետ բաժնել, և որովհետեւ խօսքերնիս անցելոյն վրայ է, իմ պատմութիւնս հիմա երկու խօսքով կ'ընեմ' ձեզ, ետքը երկար բարակ ձեր դործին վրայ կը խօսինք, տէր իմ: Ահաւասիկ. երբ Ռօշէլ հասանք, հայր Արիֆօն ինձ ըսաւ թէ Աիշօն նաը իւր բեռովն հանդերձ ինձ կու տաք:

— Բայց, բարեկամս, ձեր մեղ ըրած բարեբին քով զիտէ՛ք թէ ո՛չափ փոքր բան մ'էր այն:

— Ձեր երախտիւն սոյնքան մեծ էր որ մեր ըրածը չէր կրնար

փոխարինութիւն համարուիլ :

— Անշուշտ, քիչ բան մ'էր, բան մը չէր, ոչինչ մ'էր . . . դատաթ մը խահուէ շաքարով, մէջն ալ քիչ մը շաքարօղի գրուած, այնպէս չէ, միայն թէ դատաթը նաւ մ'էր. և զայն լեցընելու համար, այնչափ խահուէ, շաքար և շաքարօղի կար մէջը, որչափ 800 տակառաչափնոց նաւ մը կրնար պարունակել, ընդ տմենը իբր 200,000 սկուտ արժողութիւն ունեցող բան մը. իրաւունք ունիք, ոչինչէն ալ չնչին բան մ'էր այն : Բայց մէկի թողունք այս անտեղի խօսքերը, տէր իմ, և անկեղծութեամբ կ'ըսեմ որ այդ ընծայն զիս վերաւորեց :

— Բա՛րեհամն . . .

— Ես այս մէտայլեօնով վարձատրուած էի, ա՛լ չխօսինք ասոնց վրայ : Ասիկէ դատ սիրոսս հանդարտ է, ևս ամենը մէկէն հայր Արիֆօնին տուի, որպէս զի ինքն ալ ըստ կարգի աղքատներուն կամ վանքերուն կամ սասանաներուն տոյ կ'ըլէ կ'ուղէ :

— Իրօք մերժեցիք, դռնեցին երկու ամուսինք :

— Այո՛, մերժեցի . . . և վտաս էմ, տէ՛ր իմ, որ դուք ալ ինձ պէս պիտի ընէիք, թէ և զարմանք կը ձեռացը՛էք : Ես՝ որ այն ատեն առաջին անգամ բարի դործ մը կը կատարէի, զայն վաճառած պիտի ըլլայի ձեր պարզան ընդունելով, և չափաի կրնայի անաղարտ պահել Գիւաբնակ-Բլուրին յիշատակը . . . : Արդարև ձեր ահագին ընծայն աննելով ուրիշին տալու չափ առատածեան ըլլալու մարդ չէի, բայց քսան չորս ժամ Յակոբ Մօնմութ եղած ըլլալով, քովս մեծ մարդու յատկութիւն մնացեր էր քիչ մը :

— Ի՛նչ աղնիւ սիրտ, ըստ Անձէլ :

— Բայց շատ աղքատ էիք, ըստ Մօնմութ :

— Ահա ճշդիւ աղքատութեան սովորութիւն և բաղդախնդիր կեանք ունենալու համար էր որ չքստ որութիւնը հոգս չէր ըլլար . . . : Ինքնիքենս ըսի. Փօ՛լիֆէմ. . . այնպէս ենթադրէ՛ թէ դու այս զիշեր երազիդ մէջ 200,000 սկուտի տէր հարուստ մ'եղեր էիր : Այսպէս ենթադրեցի . . . դործը կարողադրեցի .

. . . և շատ աչէկ եղաւ ինձ համար : Այո՛, շատ անգամ Ռուսիոյ մէջ . . . երբ առանց ստակի կը մնայի . . . երբ վիշտ մը վի՛ռնենայի . . . կամ վէրք մ'առնելով խշտեակիս մէջ զամուած կ'ըլլայի . . . քիչ մը զուարթանալու համար ինքնիրենս կ'ըսէի. Այսու հանդերձ, Փօ՛լիֆէմ, կենացդ մէջ մի անգամ աղնիւ և վեհանձնական գործ մ'ըրիր . . . արդ, հատուցեք ինձ, այս խորհրդածութիւնը սիրտ կու տար ինձ : Բայց ահա կը պարծենամ, և աւելի դէշն այն է որ սիրոսս թունգ կ'ենէ . . . հիմա գանք Ռօ՛չէլէն մեկնելու . . . : Կը խոստովանիմ ձեզ և միանգամայն շնորհակալ կ'ըլլամ . . . որ ձեր առատածեանութենէն փոքր ինչ օգուտ քաղեցի : Ռովհետև քովս զրեթէ ստակ մնացած չէր, և Ռոսաստան երթալու միտք ունէի, Գանիէլ նաւապետէն 23 լուի փոխ առի նաւուն վաճառքէն զբաւ տալով, նաւողչէքս Համպուրկցիի մը վճարեցի, Համպուրկէն Քալլօ. Շուէտական նաւ մը նստայ Պէվէլ երթալու համար, Պէվէլէն Մոսքուա գացի. Լըֆու ծովապետը կորուսեալ տղայքը կը գումարէր 2արին քօլէշէն ստուարացընելու համար, այսինքն Ռուսիոյ մէջ այն առաջին դունդը որ գերմանական ռորաց պէս հողուած և զինուած ըլլալով, անոնց նման վարժութիւն կ'ընէր : Հեծելազօրաց հետ Քլանտրիոյ պատերազմին մէջ գսնուած ըլլալով զինուորական ծառայութեան անդեակ էի, հետևաբար Ասյսեր քօլէշէին մէջ մտայ :

«Ռուսական բանակին մէջ մտնելուս պէս բոլոր պատերազմներուն մասնակցեցայ : Հիմա չպիտի պատմեմ այս պատերազմները, օրինակի համար Աղօֆի պաշարումը, որուն մէջ զխուս սուրի հարուած մը կերայ. Շէրէ մէթօֆի հրամանատարութեան ներքև Աժաերխանի առումը, ուր կողէս նիզակով վիրաւորեցայ, Նարվայի պաշարումը, որուն մէջ Արարուս ԺԲ վեհափառ թաղաւորին նշան առնելու պատիւը և չիրնալ զարնելու բաղդաւորութիւնն ունեցայ, վերջապէս Տորբաաի մեծ ճակատամարտը :

«Ք՛չ, ս՛չ, մի վախնաք տէր իմ, այս զեղեցիկ պատմութիւնները ձմեռ զիշերները, կրակին քով, ձեր տղայք քնացընելու

կը պահեմ, երբ ծովին բռնաշունչ հովերը ձեր հինաուրց ըն-
կողենիներուն ոտերն իրար պիտի անցընեն: Միայն սա է բե-
լիքս որ ձեզմէ բաժնուելէս ի վեր միշտ պատերազմներու մ. ջ
զանուցայ, նախ իբր ստորին սպայ, յետոյ իբր սեղակալ. տա-
կաւն թերևս պիտի շարունակէի կռուիլ, եթէ անցեալ տարի
սրունքներէս մէկը Մոհիլովի մ. ջ չմոռնայի: Չարը վեհանձնու-
թեամբ թողակիս դրամադուրը տուաւ ինձ, և եկայ որ Գաղղիոյ
մէջ մեռնիմ. վասն զի, ինչ որ ալ ըլլայ, հոս ամենէն աւելի
աղէկ կը մեռնի մարդ. . . . քանի որ հոս ծնած է. քալելով.
պարտելով հայրենի հովիտս կ'երթայի, ինայոգու թեան համար
աբբայարաններուն մէջ պառկելով, մէկ մ'ալ գիպուածը . . .
այս անգամ, ո՛չ, ըսաւ ասպետը ծանր և զիպածեալ ձայնով մը,
ո՛հ, այս անգամ, ո՛չ, զիպուած չէր այս . . . այլ աստուա-
ծային նախախնամութիւնն էր որ ձեր որդիքը դէմն հանեց, տէր
իմ, անոնք զիս մինչև հոս բերին . . . և տիկին գքսուհին ճան-
չելուս պէս կրնակիս վրայ ինկայ . . . և ահա հոս եմ:

« Հիմա առաջարկութիւնս սա է, եթէ դուք ալ կը հաւանիք
ատոր, լա՛ւ, տէր իմ: Հայրենի հովիտս ամայի դարձած է,
հայրս և մայրս երկար ժամանակէ ի վեր մեռած են, եռանդուն
փափաք մ'ունիմ ձեր քովը բնակելու . . . : Թէև սակաւ
ինչ կը կաղամ, բայց կրնամ բանի մը ծառայել. բաւական է
որ խրտուիլակութեան պաշտօն տաք ինձ, թոյլ չեմ տար որ
թուղանները ձեր ծառերուն խնձորները կամ կեռասներն ուտեն.
այլ ևս կը մոռնամ ձեր ա՛նք ի՞նչ ըլլալը և զձեզ եղբայր Յակոբ
կը կոչեմ, և դքսուհին ալ տիկին Անժէլ. ձեր տղաքը զիս հայր
Փօլիֆէմ պիտի կոչեն, պատերազմներս կը պատմեմ անոնց, և
այսպէս կ'երթանք մինչև ցմահ: »

— Այո՛ . . . այո՛, կ'ընդունիմք, այլ ևս մենէ չպիտի բաժ-
նուիք դուք, ըսին Յակոբ և Անժէլ միանգամայն, որոց աչքերն
արտասուօք լեցուած էին:

— Բայց պայմանաւ մը, ըսաւ ասպետը որ ինքն ալ աչքերը
կը սրբէր, վասն զի՝ ես սիրամարդի մը պէս դուող մարդ մը

ըլլալով, թողակս կանխիկ պիտի վճարեմ և այս երկու հարիւր
սկաւոր ըր մերժեցիք, պիտի ընդունիք. այս ստակը 6000 ֆրանք
կ'ընէ և թողակս տարին 500 ֆրանք հաշուելով, տասն երկու
տարուանը վճարած կ'ըլլամ, այնուհետև ուրիշ դաշնադիր մը
կը շինենք:

— Բայց, բա՛րեկամս . . .
— Բայց, տէ՛ր իմ, այո՛ կամ ո՛չ պատասխան մը կ'ուզեմ:
Եթէ այո՛ ըսէք, կը կենամ, և երջանկութիւնս շատ մեծ կ'ըլլ-
այ, որուն այնչափ արժանի չեմ: Եթէ ո՛չ ըսէք, դաւադանս և
մախաղս կ'առնեմ և հայրենի հովին ճամբան կը բռնեմ, ուր
առանձնութեան մէջ արտում տխուր կը մեռնիմ անկիւն մը՝ տէ՛-
րը կորսնցընող ձեր շան մը պէս:

Ասպետն այս արտասուց խօսքն այնպիսի յուզեալ ձայնով մը
արտասանեց, որ դուքսը և իւր կինը չկրցան մերժել անոր ա-
ռաջարկութիւնը. — Լաւ ուրեմն, կ'ընդունիմ:

— Հո՛ւռա, գուցեց ասպետը որոտացող ձայնով մը, սոյն մոս-
կովեան բացազանչութիւնն ըրած ատեն իւր գլխարկն ալ օղը
նետելով:

— Այո՛, յօժար սրտով կ'ընդունիմ, վաղեմի բարեկամս, ը-
սաւ Մօնմութ. և ինչո՛ւ պահեմ ձենէ, այս անակնկալ օգնու-
թիւնը զոր վեհանձնութեամբ կ'ընէք մեզ, թերևս իմ կեանքս
կ'ազատէ . . . թերևս կինս և տղաքս թշուառութենէ կ'ազատէ,
վասն զի այս գումարով գործերնիս նորէն կը շտկուի, և եթէ
մեր այս նեղութեան առաջին պատճառն եղող այնչափ տարւոյն
պէս երկու տարիներ ալ ունենանք, չենք վախնար: Յօգնութիւ-
նը, վիշտը, ապաղային նկատմամբ մտահոգութիւնը զիս հիւանդ
ըրին . . . : Իսկ հի՛մա՛ գիտնալով որ ընտանիքս հանգիստ պի-
տի ըլլայ . . . զիտնալով որ ինձ օգնական պիտի ունենամ ձե-
զի պէս բարեկամ մը . . . վստահ եմ որ առողջութիւնս պիտի
վերահաստատուի:

— Բայց ալէկ միտքս ինկաւ, տէր իմ, ի՞նչպէս եղաւ որ ձեր
այն մեծաքանակ աղամանդներովն այս աստիճան չքաւորութեան

մէջ ինկար . . . :

— Հիմա Անժէլ կը պատմէ ձեզ, բարեկամս, որովհետեւ զդա-
ցած քաղցը և միանդամայն բուռն յուզմունքս յողնեցուց զիս .
. . . :

— Չեզ Լէօօրի մէջ թողելնէս ետեւ, ըստ Անժէլ, առա-
դաստ պարզեցինք փութանակի Պոէզիլը երթալու համար. հոն
հասնելով ժամանակ մը կեցանք, բայց աւելի խոհեմութեան հա-
մար որոշեցինք Փորթուկալցի նաւով մը Հնդկաստան երթալ:
Այս անձանօթ, երջանիկ և խաղաղ երկրին մէջ երեք տարի բնա-
կեցնէս ետեւ ծանր հիւանդութեամբ մ'անկողին ինկայ: Պոմպոյի
ճարտար բժիշկներէն մէկն ըստ թէ Հնդկաստանի կլիման մահա-
բեր պիտի ըլլար ինձ և թէ ծնած երկրիս օդը միայն կրնար զիս
փրկել: Արդէն զիտէք թէ Յակոբ ո՛րչափ կը սիրէ զիս. անկա-
րելի եղաւ ինձ իւր որոշման յաղթել. ուղեց անմիջապէս Եւրո-
պա, Գաղղիա վերադառնալ, չնայելով իրեն սպառնայող վտանգ-
ներուն: Հոլանտական նաւով մը Բարեյուսոյ Գլուխէն մեկնելով
առագաստ պարզեցինք դէպ ի թէքսէլ: Գոհարեղէններնիս ծախած
ըլլալով, քովերնիս ահագին գումարներ ունէինք: Յաջողութեամբ
նաւեցինք մինչև Գաղղիոյ եղերքները, բայց հոն սոսկալի փոթո-
րիկի մը պատահեցանք: Մեր նաւը կայմերը կորսնցընելէ և երեք
օր շարունակ ալեկոծ ըլլալէ ետեւ, ասկէ քառորդ փարսախ հե-
ռուն եղերքն ինկաւ: Երկնային հրաշքով մը ես և Յակոբ զրե-
թէ անխուսափելի մահէ մ'ազատեցանք: Մեզի հետ բազմաթիւ
նաւորներ եղերքը նետուեցան այն սարսափելի գիշերը: Ամենքն
ալ կորսուեցան, և դարձեալ կ'ըսեմ, ես և Յակոբ հրաշքով մի-
այն կրնայինք աղատիլ, մանաւանդ ես՝ որ հիւանդ էի: Այն վար-
ձակալները որոց տեղ անցանք այս աղարակին մէջ, մեզ եղերքին
վրայ մահամբձ վիճակի մէջ դտան և հոս փոխադրեցին: Նաւը
մեր բոլոր հարստութեամբը ընկղմը էր. Յակոբ ինէ զտու ու-
րիշ բան չհոգալուն ամեն բան մոռցեր էր. ա՛լ բան մը չունէ-
ինք. ես որք էի և հարստութենէ զտրի. եթէ Յակոբ մէկուն
գիւմէր, պիտի ճանչցուէր: Տարակոյս չունէինք որ Մարթինիքայի

մէջ մեր բոլոր ունեցածնիս յարբունիս զբաւուած են . . . և
ինչպէս կրնայինք պահածը պահել: Ընդ ամենը մատանի
մը միայն մնացած էր մեզ, որ նաւարեկութեան ատեն մատու էր:
Այս աղարակին վարձակալներուն ձեռքով մատանին Ապօլիի մէջ
ծախել տուինք, որ չորս հազար Փրանք բունեց, և այս էր բո-
լոր ունեցածնիս: Առողջութիւնս այնչափ աւրուած էր, որ սոխ-
պուեցանք հոս մնալ, որով միանդամայն խոհեմութիւն և խնա-
յութիւն ըրած կ'ըլլայինք. աղարակիս վարձակալները մեզ ինչ-
պէս նայելնին չէին զիտեր:

«Տակաւ առ տակաւ բոլորովին առողջացայ: Գրեթէ չքա-
ւոր, մեր ապագային վրայ սոսկալով կը մտածէիք. սակայն և
այնպէս երիտասարդ էինք, թշուառութիւնը մեր ոէրը կրկնապատ-
կած էր. . . մեր հիւրընկալներուն վարած պարզ, աննշան և խա-
ղաղիկ կեանքը սիրելի երեցաւ մեզ. ձեր էին, և զուտ չու-
նէին. իրենց առաջարկեցինք սր աղարակին կէսը մենք առնենք,
և իրենց մնեցութեան ներքեւ արուեստը սորվելու աշխատինք,
խոտովանելով որ այն չորս հազար Փրանքէն զատ ուրիշ բան
չունէինք և կ'ուզենք այս գումարը իրենց հետ բաժնել: Բարի
մարդիկը արդահատելով մեր վիճակին վրայ, նախ և յառաջայս
գիտաւորութենէն մեզ ետ կեցընել ուզեցին, այս կեանքին որչափ
խիստ և բազմաշխատ ըլլալը բայատրելով: Պնդեցի, ինքզինքս
զօրացած և քաջալերուած կ'զգայի. Յակոբ արդէն երկար ժա-
մանակներ տաժանելի կեանք մը վարած ըլլալով, երկրագործա-
կան կեանքին կրնար վարժուիլ: Գիտաւորութիւննիս ի գործ դրինք,
Յակոբին համար ապահով էի. ո՛վ պիտի փնտուէր Մծնմութ գուք-
սը Բիքարտիի մէկ անձանօթ աղարակին մէջ: Երկու տարիէն ար-
հեստը սորվեցանք շնորհիւ մեր նախորդաց դասերուն, իրենց փոք-
րիկ հարստութեան վրայ մեր երկու հազար Փրանքն ալ աւելնա-
լով, բաւական բան մը կ'ըլլար: Զմեզ իբր իրենց յաջորդ ըն-
դունել տուին Աբբայարանի Գանձապետին, և բոլոր աղարակը
մենք վարձեցինք:

— Ա՛հ, տիկին, ինչ համբերութիւն, ինչ հաստատմու-

Թիւն, գոչեց ասպետը :

— Ա՛Տ, եթէ զխնայիք, բա՛րեկամս, ըսաւ Մծմուծ, թէ Անծէլ ո՛րպիսի զուարթ հոգւով այս ամեն խստութեանց կը հանդուրժէր, ինքն՝ որ պերճանաց մէջ ապրելու սովորած էր, եթէ զխնայիք թէ ինչպէս միշտ գիտէր շնորհալի և սիրուն ըլլալ, զարմանալի դործունէութեամբ մը առանին գործոց վրայ հսկելով հանդերձ, վերջուպէս եթէ զխնայիք թէ ես ինչ զօրութիւն կը քաղէի այն արի և անձնուէր սրտէն, այն քաղցրիկ ակնարկէն որ երջանկութեան և զոհունակութեան սքանչելի արտայայտութեամբ վրայէս անբաժան էր, և այս ալ այնպիսի ժամանակի մը մէջ, որ վիճակնիս շատ խախուտ էր : Ա՛Տ, ս՛վ պիտի վարձատրէ երբէք այսպիսի հիանալի վարք մը :

— Բա՛րեկամս, ըսաւ Անծէլ խանդաղատանօք, միթէ Աստուած չօրհնեց ձեր բաղմաշխատ և խաղաղ կեանքը, մեզ երկու փոքրիկ հրեշտակներ չըրկե՛ց մեր պարտականութիւնները վաշելքի փոխելու համար : Ա՛լ ինչ ըսեմ ձեզ, յարեց Անծէլ ասպետին դառնալով. քիչ ատենէն տանձեց տարի պիտի ըլլայ որ այսպիսի միակերպ կեանք մը կը վարենք, իւրաքանչիւր օր իւր հացը կը բերէ, ինչպէս կ'ըսեն բարի մարդիկ, և բնաւ վիշտ մը վրդոված չէր այս կեանքը, երբ անցեալ տարի հունձքերուն գեշութենէն շատ նեղուեցանք : Խնայողութեան համար պարտաւորեցանք ազարակին մարդոցմէ երկուքը ձամբել. Յակոբ սկսաւ կրկին զօրութեամբ աշխատել, սակայն տկարանալով անկողին ինկաւ. ունեցած զոյգն ինչքերնիս սպառեցաւ : Ահա, ինչպէս որ կը տեսնէք, խեղճ վարձակահրերուն համար ձախորդ տարի մը շատ սոսկալի բան է : Վերջուպէս, եթէ դուք չըլլայիք չեմ գիտեր թէ ինչպէս պիտի ազատէիք այն վիճակէն որով կ'սպառնան մեզ. վասն զի Սէն-Քէնթէնի արքայն ժամանակին չվճարող վարձակալաց համար անողբքելի է. և սակայն մենք միշտ նուաստութիւն կը համարէինք մէկ վարձք կանխիկ չվճարելը : Հարիւր սկուտ . . . ճիշդ այսչափ . . . և հարիւր սկուտն, անպետ, զիւրաւ չհաւաքուէր :

— Հարիւր սկուտ, մշքի կամարի մը վրայի բանուածքին ստա՛ն անդամ չէր այս, ըսաւ Յակոբ Խուր ժպիտով մը : Ա՛Տ, քա՛նի քանի անդամ. . . երբ կը տեսնէի որ իմ խեղճ Անծէլս և աղջիկս այս գումարը լրացընելու համար գիշերուան մէկ մասը տանթէլա շինելով կ'անցընէին . . . քանի՛ քանի անգամ ինքնիւրենս կ'ըսէի թէ ինչ բարիքներ կարող էի ընել եթէ թշուառութեան ինչ ըլլալն այսպէս զյայի :

— Մտի՛կ բրէք, տէր իմ, ըսաւ Քրոսթիյայք ծանրութեամբ, ես կեղծ բարեպաշտներէն չեմ. քիչ մ'առաջ մաղ մնաց որ վանական մը պիտի գրողմէի. Մօրավիոյ պատերազմին մէջ անկարգութիւններ գործեցի, սակայն աներկիւրջ եմ որ վերը կայ թէկը որուն աչքէն բնաւ չեն վրիպիր պարկեշտ անձինք : Աստի անկարելի է որ դուք տանութ տարի համբերութեամբ աշխատելէ ետեւ, հիմա որ երկու աննման զուակներով ձերացած էք, աղահ վանականի մը կամ ձախորդ տարիի մը զո՛Տ ըլլաք : Երբ ձեզ մտիկ կ'ընէի, միտքս բան մ'ինկաւ : Եթէ առաջուան պէս պոռտախօս մ'ըլլայի, երկնային գաղափար մ'է այս կ'ըսէի . . . բայց հիմա պարզուպէս կը հաւատամ թէ զեպքը յիշեցուց ինձ այս : Ի՞նչ եղաւ հայր Արիֆօն :

— Չենք գիտեր, Մարթինիքա չվերադարձանք :

— Քարոզիչ Եղբարց միաբանութենէն ըլլալով, աշխարհիս ծայրն ըլլալու է նա, ըսաւ Մծմուծ :

— Ես սլ տանութ տարիէ ի վեր Գաղղիայէն բնաւ լուր առած չըլլալով. ձեզի պէս այս մասին բան մը չեմ գիտեր, տէր իմ, բայց հասկընալ ուղելուս պատճառը սա է : Ախօքն նաւը իրեն ձրեցի. բարեսիրտ և պատուաւոր կրօնական մ'է ինքը, եթէ տակաին կենդանի է, այն նաւուն ստակէն իրեն քով բան մը մնացած ըլլալու է, ինչու որ հարկաւ ողորմութիւնները խոհեմութեամբ և խնայողութեամբ բաշխած է : Իմ կարծիքս այն է թէ պէտք է այս անձին ուր ըլլալը փնտուել գտնալ, ինչու որ եթէ Աստուած կամեցեր է որ Ախօքնի մէկ կտորը պահած ըլլայ, հարկաւ դուք ալ կը խոստովանիք, տէր իմ, որ այս ժա-

մուս շատ չնչին օգնութիւն մը չըլլար, եթէ ոչ ձեզի՝ դէմ այս երկու տղոց համար, ինչու որ իրենց ոտքերուն փայտէ կօշիկները և հաստ բուրդէ գուլպաները քանի կը տեսնեմ, սիրտս կտոր կտոր կ'ըլլայ, թէ և դիտեմ որ ասոնք ոսկեզօծ մաքարնեքով բարակ կաշիէ կօշիկներէ և մետաքսէ գուլպաններէ աւելի տաք կը սլահեն անոնց ոտքը, կ'ուզէ նէ այդ գուլպաները վարդադո՛ջն ըլլան, ինչպէս որ խմբներս էին 1690ին, յարեց ասպետը հառաչելով: Յետոյ ըսաւ. Լա՛ւ ուրեմն, տէր իմ, աղէկ միտքս չինկա՛ւ հայր Արիֆօնը, դուք ի՞նչ կ'ըսէք:

— Ըստ իս, խօլ յոյս մ'է այդ, բարեկամս: Հայր Արիֆօն անշուշտ մեռած է: Ձեր հարստութիւնը կրօնական միաբանութեան մը կտակած ըլլալու է:

— Թերեւս Սէն-Քէնթինի արքայաբանին, ըսաւ Անժէլ:

— Տէ՛ր Աստուած, այդ պակաս էր, ըսաւ Քրուսթիյաք: Եթէ դիտանամ այդպէս ըլլալը, հիմա կ'երթամ վանքը կրակի կուտամ:

— Ա՛հ, ասպետ, պարզ արհամարհանք մը բուսական է, ըսաւ Անժէլ:

— Աւելի կատղելու պատճառն այն է թէ ինչո՞ւ ձեր երկու հարիւր հազար սկուտին համար ժամանակաւ այնպիսի սնօրէնութիւն մ'ըրի. բայց այն ատեն կրնայի՞ երեւակայել թէ ազարակի վարձակալ եղած պիտի տեսնէի թիերով ադամանգ խառնող արքայազուն մը: Բայց հիմա փիլիսոփայութիւնը մէկ գի թողունք, հայր Արիֆօնը գանհնք, եթէ կենդանի է:

— Ի՞նչպէս կարելի է գանհնլ:

— Փնտտելով, տէր իմ: Քանի որ ես ինքզինքս պահելու պատճառ մը չունիմ, վաղու ընէ սկսելով կաղն ի կաղն չորս դին կ'իյնամ, կը հարցընեմ, կը փնտտեմ. . . : Բայց ասոր դիւրին ճամբան կայ, շատ ապուշ եմ որ քիչ մ'առաջ չկրցայ մտածել. ուղղակի Բարիզի մէջ Օտտօր Առաքելութեանց մեծաւորին կը դիմեմ, այս կերպով կրնանք ինչ ընելիքիս հասկընալ. . . : Մեծաւորը գէթ պիտի իմացընէ մեզ թէ այն բարի հայրը ո՞րչ է

թէ մեռած: ասկէ զատ՝ վաղը այս բանիս համար ձեր դրացի Սէն-Քէնթինի արքային այցելութիւն մը կու տամ, և անկէ կը հասկընամ թէ ի՞նչ ճամբայ պէտք է բռնել այս տեղեկութիւններն ստանալու համար: Ձեր հարիւր սկուտը կը տանիմ անոր, և այս լաւ միջոց մը կ'ըլլայ խօսք բանալու:

Երեք բարեկամներն այն օրն այսպէս անցուցին անցեալ դէպքերը յիշելով մերթ տխրազին մերթ զուարթ:

Հետեւեալ օրը Քրուսթիյաք փոքրիկ Յակոբին հետ արքայաբանը գնաց: Տուրքին կակուղ ոսկիները ընտիր անցազիր մ'եղան դիւրութեամբ մինչև Գանձապետ հօր քով երթալու. . . :

— Հայր, ըսաւ Քրուսթիյաք, խիստ կարեւոր նամակ մ'ունիմ Քարողիչ Եղբարց կարգէն բարի եկեղեցականի մը յանձնելիք, չեմ դիտեր թէ ո՞րչ է, մեռած է, Եւրոպայի մէջ է, թէ ոչ աշխարհիս մէկ ծայրը, այս մասին տեղեկութիւն մ'առնելու համար որո՞ւ պէտք է դիմել:

— Մեր կանոնիկոսներէն մէկուն, զաւակս, որ երկար ատեն քարողչութեան տաժանելի պաշտօնը վարելէ ետև, վեց ամիս կայ որ եկաւ մեր կանոնիկոսարաններէն մէկուն մէջ հանգչելու:

— Ե՞րբ կրնամ տեսնել այդ վերապատուելին, հայր:

— Հիմա: Ղանքին բակը կ'իջնէք և կ'ըսէք որ ձեզ հայր Արիֆօնի քով տանին, և. . .

Քրուսթիյաք ձեռքի գաւազանով այնպիսի մոլեգնութեամբ տախտակամածին զարկաւ և երեք անգամ իւր ուսական բացաղանջութիւնն արձակեց. — Հո՛ւռա, հո՛ւռա, հո՛ւռա, որ Գանձապետ հայրը սարսափելով աճապարանօք զանդակը հնչեցուց, կարծելով թէ դիմացինը խենդ է:

Ղանական մը ներս մտաւ:

— Ներեցէ՛ք, բարի հայր, ըսաւ Քրուսթիյաք, վայրենական աղաղակներս և ասոնցմէ ոչ նուազ վայրենական գաւազանի հարուածս սրտիս վիճակը. . . զարմանքս. . . ուրախութիւնս. . . կը նկարագրեն ձեզ: Ես ալ ճիշդ հայր Արիֆօնը կը փնտտեմ:

— Ուրեմն պարոնը հայր Արիֆօնին տարէք, ըսաւ գանձապետը: Հարկ չենք համարիր ասոնց իրար ձանաչելուն նկարագրու-

Թիւնն ընել, ճանաչում մը, որ խիստ կարևոր է Աստուծոյն ան-
կէ սպասած արդեանց համար:

Այսչափ միայն կ'ըսենք որ բարի քահանայն, իբր պայմանաւ-
ժաւանգ Աստուծոյն կողմէն իրեն թողուած ընչից, և վախնալով
որ գուցէ օր մը աւագեալ զայ և այնչափ հարստութիւնը ձեռքէ
հանելուն վրայ զզջայ, սակայն և այնպէս մինչև այն ատեն ու-
զեցով ի գործ դնել անոր բարեսէր գիտաորութիւնները, և
թուաւունքն այսպիսի առատ ողորմութենէ մը չզրկել, ամեն տա-
րի դրամագլխին եկամուտը ազքատներուն բաժնած էր, և միտքը
դրած էր որ՝ եթէ Աստուծոյն երևան չենէ՝ սոյն դրամագլխը
բարեսպաշտական հիմնարկութեան մը գործածէ:

Արիւնի վաճառումը խոհեմութեամբ ի գործ դրուելով, իբր
եօթը հարիւր հազար Փրանք բերած էր: Հայր Արիֆօն պատահ-
մամբ տեսնելով որ Սէն-Քէնթէնի աքրայարանին մօտ, Ապվի-
լի շրջակայները, ժառանգի մը ձեռքէ Հաթովիէօ կոչուած դե-
ղեցիկ կալուած մը կը ծախուի, զայն շահաւոր կերպով գնել
էր: Իւր երկայն ուղևորութենէն վերադարձին՝ այսինքն ասպետին
զալէն իբր վեց ամիս առաջ, հայր Արիֆօն լաւագոյն համարած
էր Բիքարտիի մէջ կանոնիկոսութիւն մը խնդրել, որպէս զի իւր
գնած կալուածոց մօտ զանուկելով լաւ հսկէ անոնց վրայ, և չէր
զիտեր թէ Աստուծոյն դեռ կենդանի էր թէ մեռած, սակայն տասն-
ութ տարիներէ ի վեր անոր վրայ բնաւ լուր մը չառնելուն՝ մե-
ռած կը կարծէր զայն:

Հայր Արիֆօն արդէն խիստ ծերացած և տկար ըլլալով, միայն
Հաթովիէօի կալուածն այցելելու համար կը մեկնէր արքայարանէն:

Վեց ամիսէն ի վեր որ Սէն-Քէնթէնի մէջ կը բնակէր,
բնաւ զացած չէր Յակոբ Մօնմութի վարձած աղարակին կողմը:

Խիստ սրտաշարժ եղաւ այն տեսարանը, երբ հայր Արիֆօն,
դուքսը և իւր կինը վերստին մէկգմէկ գտան:

Խել մը վիճաբանութիւններէ ետև որոշուեցաւ որ կալուածին
կէսը Յակոբ Մօնմութի ըլլայ, և կէսը Քրուսթիյաքի, կալուածն
այս վերջնոյն անուան տակ մնալով: Աստուծոյն անմիջապէս Մօն-

մութի երկու զուակաց կտակեց, սա պայմանաւ որ տղան Յակոբ
աը Հաթովիէօ անունը կրէ:

Վիճակի այս յեղակարծ փոփոխութիւնը վաճառքին մարդոց և
մօտակայ բնակչաց մեկնելու համար, որոշուեցաւ ըսել թէ Քրուս-
թիյաք Ամերիկայէն եկող հօրեղայր մ'է, որ ծպտեալ կերպա-
բանքով եկած է իւր եղբորդիքը փորձելու համար, որոնք աղ-
քատ երկրագործներ են:

Յակոբ՝ աղարակը իւր տեղը բռնելու համար որոշուած վար-
ձակալին յանձնեց, և իւր կնոջը, որդւոյն և Քրուսթիյաք հօր-
եղբորը հետ Հաթովիէօ գնաց:

Երեք բարեկամներն երկար տարիներ երջանիկ ասպետեան ի-
րենց կալուածին մէջ, և իրենցմէ ետև զաւակներնին, թուներ-
նին ասպետեան հօն:

Ասպետը երբէք Մօնմութէն և անոր կնոջմէն չբաժնուեցաւ:
Տարին անգամ մը հայր Արիֆօն Հաթովիէօ կու դար քանի մը
չարաթ կենալու:

Ամեն տարի օր մը միայն կար յորում այս անձանց երջան-
կութիւնը տխրութեան կը փոխուէր: Այս ալ 1685 յուլիսի 13ի
տարեդարձն էր, քաջասիրտ Սիսնէյի նահատակութեան տարե-
դարձը: Յակոբ Մօնմութի որդին երբէք չգիտցաւ իւր հօրն ար-
քայալուն մ'ըլլալը: Մօնմութ, իւր կինը, Քրուսթիյաք և հայր
Արիֆօն միշտ պահեցին այս զաղանկը:

Տարիքն այնչափ փոխած էր դուքսը, Մարթինիքայի դէպ-
քերուն վրայ այնքան տարիներ անցած էին, որ երբէք զինքն ան-
հանգիստ ընող չեղաւ:

Միայն երբեմն Յակոբ Մօնմութի որդիքն ու թուները զար-
մանալով աչքերնին կը բանային երբ իրենց բարի և վաղեմի բա-
րեկամը, Քրուսթիյաք ասպետը, Մօնմութ դքսուհւոյն կը դառ-
նար և աչքերը լեցուելով իրօք մողական երևոյթ մ'ունեցող սա
բառերը կ'ըսէր անոր:

ԱՆՊՈՅՏ-ՄՕՐՈՒՔ, ՓՈՅՈՐԻԿ, ՀՈԳԵԿՈՐԶ, ԵՈՒՄԱԼԷ, ԳԻԻԱԲՆԱԿ-
ՅԱՌԻ:

Մ. Ե. Բ. Գ. Ի. Ի. Ա. Բ. Ն. Ա. Կ. - Բ. Լ. Ո. Ւ. Բ.



2466
2467

ՅԱՆԿ ԳԼԽՈՅ

	Երէ՞		Երէ՞
Ի. Ձու	3	ՄԱՍՆ ՁՈՐՐՈՐԳ	
ԻԱ. Մատնութիւն	13	Լ. Վիշտ	114
ՄԱՍՆ ԵՐՐՈՐԳ		ԼԱ. Ձու	125
ԻԲ. Իրլանտայի և Սկոտլանդի փոխարքայն	26	ԼԲ. Ֆրքաթօն	134
ԻԳ. Չարմանք	38	ԼԳ. Դատաստան	146
ԻԴ. Խօսակցութիւն	48	ԼԴ. Հալածումն	157
ԻԵ. Յայտնութիւն	59	ԼԵ. Վերադարձ	167
ԻԶ. Անձնանուիրութիւն	70	ՎԵՐՋԱԲԱՆ	
ԻԷ. Նահատակ	80	Ա. Աբբայարանը	177
ԻԸ. Չերբակալութիւն	90	Բ. Միայում	188
ԻԹ. Ձու	103		

2843



